ՄԱՍ III-Բ

ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրավորվել է շուրջ 1,377,0 մլրդ դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի 90.7 %-ը կամ 1,249.0 մլրդ դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, 9.3 %-ը կամ 128.0 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի ծախսային մասը ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի հաստատված մակարդակի համեմատ ավելացել է շուրջ 71.4 մլրդ դրամով:

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալները, կազմն ու կառուցվածքը ձևավորվել են ելնելով 2016 թվականի մակրոտնտեսական կանխատեսումներից, գների և սակագների կանխատեսվող ցուցանիշներից, հանրապետությունում տնտեսական հարաբերությունների բնականոն ընթացքը խաթարող նոր բյուջետային պարտքերի չառաջացման անհրաժեշտությունից ու առանձին ծախսատեսակների գծով մշակված բյուջետային նորմատիվներից:

Սոցիալական բնագավառի ծախսերի (կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն) տեսակարար կշիռը բյուջետային ծախսերի ամբողջ ծավալում կազմում է 45.2 %, պաշտպանության, հասարակական կարգի պահպանության և ազգային անվտանգության ապահովման և կալանավայրերի ոլորտներինը՝ 20.7 %, տնտեսության ճյուղերինը՝ 10.7 %, պետական պարտքի սպասարկմանը՝ 7.3 %, համայնքների բյուջեներին ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման դոտացիաների և այլ դոտացիաների տրամադրմանը՝ 3.6 %, ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի ձևավորմանը՝ 0.58 % :

Հարկ է նշել, որ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում ծախսային ծրագրերը հիմնականում դասավորված են ծրագրային բյուջետավորման սկզբունքներին համապատասխան: Միաժամանակ, մոտակա տարիներին պետական բյուջեն ամբողջությամբ ծրագրային դասակարգմամբ Ազգային ժողով ներկայացնելու և անցումային շրջանում դրա կատարման հետ կապված ռիսկերի կառավարումն ապահովելու նպատակով ներկայումս մշակվում է մի մոտեցում, որը մի կողմից պետք է ապահովի պետական բյուջեի կատարման գործող համակարգի կայունությունը, իսկ մյուս կողմից՝ աջակցի կառավարման, մոնիտորինգի, հաշվետվողականության և վերահսկողության համակարգերի զարգացմանը:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով ծախսային ծրագրերի ոչ ֆինանսական ցուցանիշները և ծրագրային դասակարգումը ներկայացված են համապատասխանաբար սույն բացատրագրի NN 13 և 14 հավելվածներում:

Ստորև ներկայացվում են ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծվող ծախսերի ծրագրավորման հիմքում դրվող հիմնական սկզբունքները և առանձնահատկությունները:

<u>Պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերը</u> ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում ծրագրավորվել են հիմնականում հիմնվելով ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 8-ի N 755-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի ցուցանիշների վրա, հաշվի առնելով ՀՀ գործող օրենսդրության պահանջները, ինչպես նաև պետական կառավարման ոլորտում ՀՀ կառավարության կողմից բարեփոխումների իրականացման միտումներն ու առաջադրված գործողությունների ծրագիրը:

<u>Ա. Պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերի ծրագրավորման քաղաքականությունը.</u>

Պետական իշխանության մարմինների պահպանման գծով ծախսերի ծրագրավորման վրա զգալի ազդեցություն է ունեցել պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառութային բարեփոխումները:

Դեռևս 2014 թվականից ներդրված հանրային ծառայության վարձատրության միասնական համակարգի հետ կապված շարունակվեցին համապատասխան օրենսդրական փոփոխությունները հանրային ծառայության ոլորտում աշխատանքի վարձատրության հարցերը կարգավորող դրույթներ պարունակող իրավական ակտերում:

Ընդհանուր առմամբ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերի ծրագրավորումը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով:

1. Պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառութային բարեփոխումներ

Վերջին տարիներին ՀՀ կառավարությունն իրականացնում է պետական կառավարման համակարգի բարեփոխումների լայնածավալ ծրագիր, որն ուղղված է համակարգի արդյունավետության, ծառայությունների որակի և մատչելիության, թափանցիկության և հաշվետվելիության, վերահսկելիության բարձրացմանը, և իրականացվում է հիմնականում պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառութային փոփոխությունների ճանապարհով:

ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը՝ որպես ՀՀ Կառավարության գործունեության առաջնային ուղեցույց, սահմանել է ծրագրային չորս հիմնական գերակայություն, որոնցից մեկը կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացումն է (կետ 38):

Պետական կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացման գործողությունները՝ ապահովելով որդեգրած հիմնարար քաղաքականությունների շարունակականությունը, միտված են լինելու պետության տրամադրության տակ գտնվող ռեսուրսների ընդլայնմանն ու նպատակային օգտագործմանը, տրամադրվող ծառայությունների որակի և մատչելիության ավելացմանը, կոռուպցիայի նվազեցմանը, որոշումների ընդունման թափանցիկության և այդ գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության աստիճանի մեծացմանը (կետ 42):

Ինստիտուցիոնալ բարեփոխումների արդյունքում հստակեցվել են նախարարությունների կանոնադրական խնդիրները, հնարավորինս միասնականացվել են նրանց աշխատակազմերի կառուցվածքները: Այսպես՝

Արտաքին տնտեսական հարաբերությունների ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականությունը համակարգելու նպատակով 2014 թվականի նոյեմբերի 17-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն ստեղծվեց Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունը, որից հետո 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1531-Ն որոշմամբ ստեղծվեց «Հայաստանի Հանրապետության Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը:

ՀՀ կառավարությունը արմատական բարեփոխումներ է նախաձեռնել տեսչական համակարգում՝ 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1135-Ն որոշմամբ հավանություն տալով Տեսչական բարեփոխումների հայեցակարգին, նպատակ ունենալով բարելավել գործող տեսչական համակարգը, որը ենթադրում է վերացնել հաճախակի և ոչ տեղին ստուգումները, ոչ թափանցիկ տեսչական գործընթացները, վարչական կոռուպցիան և տեսչական գործընթացում գործառույթների կրկնորդումները՝ անցում կատարելով ռիսկի գնահատման վրա հիմնված ստուգումների համակարգի:

ՀՀ տեսչական համակարգի օպտիմալացման նպատակով ՀՀ կառավարությունը 2014 թվականի սեպտեմբերի 25-ի նիստի N 40-59 արձանագրային որոշմամբ հավանություն է տվել Հայաստանի Հանրապետության տեսչական համակարգի օպտիմալացման հայեցակարգին և

գործողությունների համառոտ ծրագրին, և ինչպես նախատեսված էր գործողությունների ծրագրի 1-ին կետով, 2014 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունվել և 2015 թվականի հունվարի 9-ից գործում է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքը: Օրենքը կարգավորում է ՀՀ գործադիր իշխանության համակարգում գործող տեսչական մարմինների իրավական վիճակը, դրանց ստեղծման, գործունեության կազմակերպման առանձնահատկությունները, վերակազմակերպման և գործունեության դադարեցման կարգը, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ: Առաջնային կարևորություն ունի նաև ստուգում իրականացնող մարմինների համար կառավարման նոր համակարգի ներդրումը, համաձայն որի տեսչական մարմինը ղեկավարվում է ինչպես տեսչական մարմնի ղեկավարի, այնպես էլ տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից:

2015 թվականի հունիսի 4-ին ընդունվել է ՀՀ կառավարության N 632-Ն որոշումը, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում նոր տեսչական համակարգին անցնելու ծրագիրը:

ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի նիստի N 40 արձանագրության 12-րդ կետով հավանություն է տրվել Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության համակարգում գործող տեսչական մարմինների օրինակելի կանոնադրությանը և կառուցվածքին, որին էլ պետք է համապատասխանեցվեն հետագայում հանրապետական գործադիր մարմինների կազմում ստեղծվող տեսչական մարմինների կանոնադրությունները և կառուցվածքները:

Այս գործընթացի շրջանակներում ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1063-Ն որոշմամբ ստեղծվեց Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմինը և հաստատվեց նորաստեղծ տեսչական մարմնի կանոնադրությունն ու կառուցվածքը:

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ տեսչական մարմնի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ֆինանսավորումն արտացոլվում է բյուջետային հայտում և պետական բյուջեում՝ առանձին տողով:

Այս կապակցությամբ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում առանձին տողով արտացոլվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության առանձնացված ստորաբաժանում հանդիսացող Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի պահպանման ծախսերը:

ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 18-ի N 678-Ն որոշմամբ սահմանվել է տեսչական մարմինների էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծման, օգտագործման և վերահսկողություն իրականացնող մարմինների միջև տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև հանրությանը տեղեկատվություն տրամադրելու կարգը: Տեղեկատվական համակարգի ստեղծման նպատակը տեսչական մարմինների միջև տեղեկատվության փոխանակման

արդյունավետության ապահովման և վերահսկողության հետ կապված տեղեկատվությունը հանրությանը և տնտեսավարող սուբյեկտներին մեկ տեղում հասանելի դարձնելն է:

«Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան տեղեկատվություն հավաքելու միջոցով շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների հետ կապված տեղեկատվության հասանելիությանը նպաստելու, շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների էլեկտրոնային տվյալների միասնական գրանցամատյանի անխափան աշխատանքը, շարժական գույքի հետ կապված իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքների գրանցման և տեղեկատվության պահպանումն ապահովելու, ինչպես նաև վիճակագրական տվյալների հավաքմանը նպաստելու նպատակով ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 5-ի N 210-Ն որոշմամբ ստեղծվել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի շարժական գույքի նկատմամբ ապահով-ված իրավունքների գրանցման գործակալությունը:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատաս-խան՝ անձնական տվյալների մշակողների ռեեստրի վարման աշխատանքների, անձնական տվյալների պաշտպանության հետ կապված հարաբերությունների սուբյեկտների իրավունքների պաշտպանության և անձնական տվյալների մշակման օրինականության ապահովման նպատա-կով ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 2-ի N 734-Ն որոշմամբ ՀՀ արդարադատության նախարարության համակարգում ստեղծվել է անձնական տվյալների պաշտպանության գործա-կալությունը:

2. Էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացում.

Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում, որպես գերակայություն, առան-ձին ուշադրություն է դարձվում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմանն ու զարգացմանը, ինչը պետական կառավարման համակարգի բարեփոխման ու արդիականացման կարևորագույն բաղկացուցիչ է: Պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման գրավականներից է էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրումը և մեկ պատուհանի սկզբունքով բնակչությանը ծառայությունների մատուցումը:

Էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման շրջանակներում ներդրվել են մի շարք լայնամասշտաբ էլեկտրոնային կառավարման ծրագրեր, ներառյալ e-visa (էլեկտրոնային եղանակով վիզայի համար դիմումների ընդունում և վիզայի տրամադրում), e-register (իրավա-բանական անձանց գրանցման պետական ռեգիստր), e-cadaster (անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե), e-licensing (էլեկտրոնային եղանակով արտոնագրերի և թույլտվությունների տրամադրում) և այլն:

Ներկայումս մշակվում են մի շարք այլ էլեկտրոնային կառավարման ծրագրեր, այդ թվում՝ e-police, e-population (բնակչության ռեգիստր՝ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության տվյալների բազայի հիման վրա), mail Armenia («պաշտոնական» էլեկտրոնային փոստի հասցե բոլոր քաղաքացիների համար), ID cards (Էլեկտրոնային նույնականացման քարտերի ներդրում, ինչպես նաև կենսաչափական անձնագրերի տրամադրում), էլեկտրոնային առողջապահություն, էլեկտրոնային նոտար (e-notary) և նմանատիպ այլ ծրագրեր:

Նշված ծրագրերի իրականացումը հնարավորություն ընձեռեց շրջանառության մեջ դնել «մեկ պատուհանի» սկզբունքը, որը զգալիորեն կրճատեց ծառայությունների մատուցման ժամկետները, նպաստեց ծառայությունների մատուցման որակի բարձրացմանը, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:

Այս ուղղությամբ պետական կառավարման մարմիններում արդեն իսկ ներդրվել ու արդյունավետորեն գործում են բազմաթիվ էլեկտրոնային ծրագրեր ու համակարգեր, որոնք թե ժամանակային և թե աշխատանքային իմաստով առավել արդյունավետ են դարձնում պետական կառավարման համակարգի աշխատանքը, իսկ ընդհանուր առմամբ՝ ավելի մատչելի ու հրապարակային են դարձնում պետական կառավարմանն առնչվող տեղեկատվությունը հանրության համար:

Այս կապակցությամբ պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերում նախատեսվում են նաև միջոցներ ներդրված համակարգերի ընթացիկ սպասարկման համար:

3. Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումը

Սոցիալական քաղաքականության ոլորտում ՀՀ կառավարությունը, ի թիվս այլ միջոցառումների, շարունակում է իրականացնել սոցիալական ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովման նպատակով ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ամբողջական և լիարժեք ներդրում՝ սոցիալական համալիր ծառայությունների տրամադրում «Մեկ պատուհանի» սկզբունքով: ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 952-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգ ներդնելու ծրագիրը: Ծրագրի ընդլայնման արդյունքում Համալիր սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների աշխատողների՝ շահառուների բնակավայրեր այցելությունների ծախսերը փոխհատուցելու համար ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում համապատասխան միջոցների հատկացումը սահմանվել է առանձին ծրագրի տեսքով:

Բ. Պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերի ծրագրավորումը

Ընդհանուր առմամբ, ՀՀ պետական բյուջեում պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերի ծրագրավորվող մակարդակի վրա ազդող գործոններն են՝

ա) պետական կառավարման համակարգի բարեփոխումներից բխող օրենսդրական փոփոխությունները,

բ) պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառութային փոփոխությունները,

գ) պետական իշխանության մարմինների աշխատողների թվաքանակի փոփոխությունը:

1. ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերի ծրագրավորումը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով:

1.1. 2015 թվականի ընթացքում շարունակվեցին պետական կառավարման համակարգի բնագավառում վերջին տարիներին իրականացվող բարեփոխումները, հստակեցվեցին նախարարությունների կողմից իրականացվող քաղաքականության ձևավորման, մոնիտորինգի և համակարգման գործառույթները, ինչպես նաև պետական կառավարման առանձին մարմինների կանոնադրություններն ու կառուցվածքները:

1.2. ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում պահպանվել է ՀՀ նախարարությունների աշխատակազմերի և այդ մարմինների ղեկավարների աշխատակազմերի պահպանման ծախսերը պետական բյուջեում իրարից տարանջատված ձևով (առանձին ծրագրերով) նախատեսելու սկզբունքը:

1.3. «ՀՀ դատական օրենսգրքի», «Սահմանադրական դատարանի մասին», «Դատախազության մասին», «Վերահսկիչ պալատի մասին», «ՀՀ հատուկ քննչական ծառայության մասին» և «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան ՀՀ դատարանների, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ դատախազության, ՀՀ վերահսկիչ պալատի, ՀՀ հատուկ քննչական ծառայության և ՀՀ քննչական կոմիտեի բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում են պահուստային ֆոնդեր: Յուրաքանչյուր վերը նշված մարմնի պահուստային ֆոնդը ներկայացվում է պետական բյուջեի առանձին տողով, ընդ որում ֆոնդի մեծությունը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով տվյալ մարմնի գծով նախատեսված աշխատավարձի ֆոնդի կամ ծախսերի երկու տոկոսին:

1.4. «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի (09.06.2010թ. ՀՕ-63-Ն) պահանջներից ել-

նելով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) ոլորտում կիրառվելիք ապահովագրության վճարների նվազագույն և առավելագույն չափերը՝ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են հատկացումներ ծառայողական ավտոմեքենաների ապահովագրության համապատասխան վճարներ կատարելու համար:

1.5. ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերը հաշվարկվել են հիմք ընդունելով 18265 հաստիքային միավորների քանակը, որը 2015 թվականի համեմատ ավելացել է 65 միավորով: Թվաքանակի փոփոխությունը հիմնականում պայմանավորված է պետական կառավարման առանձին մարմիններում կառուցվածքային փոփոխությունների հետևանքով աշխատողների թվաքանակի կարգավորմամբ:

ՀՀ պետական կառավարման մարմինների աշխատողների թվաքանակի փոփոխությունը արտացոլված է սույն բացատրագրի N 2ա աղյուսակում:

2. Ծախսերի ծրագրավորման սկզբունքները ըստ առանձին ծախսային ուղղությունների

2.1. Աշխատավարձի ֆոնդ

Պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերում աշխատավարձի ֆոնդում ներառվում են ինչպես աշխատողներին վճարվող հիմնական աշխատավարձերը, հավելումներն ու հավելավճարները, այնպես էլ պարգևատրման և դրամական խրախուսման համար օրենսդրությամբ նախատեսված միջոցները:

2014 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ է մտել «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքը, ինչի շնորհիվ միասնականացվեց պետական իշխանության մարմիններում աշխատողների վարձատրության համակարգը:

Աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է նշված օրենքի և ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N 737-Ն որոշման պահանջներին համապատասխան:

2016 թվականի համար աշխատավարձի ֆոնդի հաշվարկման հիմքում բազային աշխատավարձի չափ է ընդունվել 66140.0 դրամը:

Աշխատավարձի ֆոնդը ծրագրավորվել է հաշվի առնելով պետական պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ գործող օրենսդրությամբ նախատեսված հավելավճարները (դասային, դիվանագիտական աստիճանների, կոչման, աշխատանքային

ստաժի և այլն), հավելումները (բարձր լեռնային, ծանր, վնասակար աշխատանքների համար և այլն) և պետական ծառայողների հիմնական աշխատավարձի բնականոն աճերը:

Աշխատավարձի ֆոնդում ներառվել են նաև հանրային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու դեպքում քաղաքացիական ծառայողի հիմնական աշխատավարձի նկատմամբ 5%-ի չափով սահմանվող հավելավճարները:

Աշխատավարձի ֆոնդում նախատեսվել է նաև պետական ծառայողների պարգևատրման ֆոնդ՝ նրանց 2015 թվականի աշխատավարձի ֆոնդի 10 տոկոսի չափով:

Միաժամանակ, ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերից ամբողջությամբ հանվել են ՀՀ կառավարության 2010թ. ապրիլի 24-ի N 16 արձանագրային որոշման պահանջներին համապատասխան աշխատողների թվաքանակի կրճատումների հաշվին գոյացած և համապատասխան մարմինների պահպանման ծախսերում տնտեսագիտական դասակարգման «Այլ վարձատրություններ» հոդվածով նախատեսվող միջոցները, որոնք թողնվել էին պետական մարմինների աշխատավարձերի ֆոնդերում և ուղղվում էին լավագույն աշխատողների պարգևատրմանը:

2.2. Էներգետիկ ծառայությունների՝ էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսերը ծրագրավորվել են ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում Հայաստանի Հանրապետության պետական մարմինների գծով բյուջետային ծախսերի առանձին տեսակների ջեռուցման, վառելիքի և էլեկտրաէներգիայի ձեռքբերման ծավալների հաշվարկման հիմքում դրվող նորմաները հաստատելու մասին» N 629-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով գործող սակագները (բնական գազի 1 մ^3 սակագինը՝ 156 դրամ, իսկ ամսական 10.0 հազար մ^3 և ավելի օգտագործելու դեպքում՝ յուրաքանչյուր հազար մ^3 սակագինը 276.98 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, էլեկտրաէներգիայինը՝ 1 կվտ/ժ-ը 48.78 դրամ՝ 2015 թվականի 41.85 դրամի փոխարեն), սակայն էլեկտրաէներգիայի ծախսերը ծրագրավորվել են սահմանված նորմաներով հաշվարկվածի 65%-ի չափով:

2.3. Ջրմուղ - կոյուղուց օգտվելու վարձի վճարման ծախսերը ծրագրավորվել են հաստատված սակագներին համապատասխան: ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններից օգտվելու վարձի վճարման ծախսերը հաշվարկվել են հիմք ընդունելով յուրաքանչյուր հաստիքային միավորի համար սահմանված նորմատիվը՝ օրական 30 լիտր (հիմք ՀՀ կառավարության 23.09.2004թ N 1536-Ն որոշում), բացի այդ ՀՀ դատարանների համար ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 12-ի N 732-Ա

որոշման պահանջներին համապատասխան նախատեսվել է նաև լրացուցիչ ծախս՝ ելնելով դատական նիստերի դահլիճների ընդհանուր մակերեսի մեծությունից:

2.4. Կապի ծառայությունների վճարները ծրագրավորվել են ՀՀ կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կապի և կոմունալ ծախսերի նորմաներ սահմանելու մասին» N 1536-Ն և ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում կապի ծառայությունների նորմաները և հեռախոսակապից օգտվելու օրինակելի ներքին կանոնները հաստատելու մասին» N 1956-Ն որոշումների պահանջներին համապատասխան, սակայն հեռախոսային խոսակցությունների տարեկան սահմանաչափը ծրագրավորվել է սահմանված նորմայի 30 %-ի չափով, իսկ ՀՀ դատարանների կապի ծառայությունների ծախսերը հաշվարկվել են ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության դատարանների կապի միջոցների տեսակների, քանակի և կապի ծառայությունների, ինչպես նաև կոմունալ ծախսերի նորմաների մասին» N 732-Ա որոշման պահանջներին համապատասխան: Կապի ծախսերը հաշվարկվել են հաշվի առնելով նաև ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 24-ի «Արմենտել» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագների սահմանման մասին» N 340-Ն որոշումը, ինչպես նաև ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ 2014 թվականի հուլիսի 29-ին կայացած նիստում վերանայված «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող սակագնային կարգավորման ենթակա հանրային էլեկտրոնային հաղորդակցության որոշ ծառայությունների սակագները: Բացի այդ, հաշվի է առնվել այն հանգամանքը, որ պետական կառավարման մարմիններն օգտվում են նաև հանրապետությունում կապի ծառայություններ մատուցող այլ օպերատորների ծառայություններից:

2.5. Գործուղումների և ծառայողական ուղևորությունների ծախսերը ծրագրավորվել են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմաներով:

Ներքին գործուղումների գծով Համալիր սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների աշխատողների՝ շահառուների բնակավայրեր այցելությունների ծախսերը փոխհատուցելու համար ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում համապատասխան միջոցների հատկացումը սահմանվել է առանձին ծրագրի տեսքով՝ 115.2 մլն դրամի չափով:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում պահպանվել է արտասահմանյան պաշտոնական գործուղումների հետ կապված ծախսերի գծով հատկացումները ՀՀ պետական բյուջեում առանձին տողով արտացոլվող կենտրոնացված ֆոնդում ներառելու սկզբունքը:

2.6. Ծառայողական ավտոմեքենաների պահպանման ծախսերը ծրագրավորվել են ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշմամբ հաստատված ծառայողական ավտոմեքենաների (բացառությամբ հարկային, մաքսային և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մարմինների սպասարկման համար նախատեսված ծառայողական ավտոմեքենաների) սահմանաքանակին համապատասխան 1071 ավտոմեքենայի համար, ընդ որում 1 մեքենայի պահպանման տարեկան ծախսը՝ հաշվարկվել է 1200.0 հազ. դրամի չափով (պահպանվել է 2015 թվականի մակարդակը):

ՀՀ պետական կառավարման մարմինների ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակի փոփոխությունը արտացոլված է սույն բացատրագրի N 2բ աղյուսակում:

2.7. ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերը 2016 թվականի համար ծրագրավորվել են 9587.6 մլն դրամի չափով, որը 2015 թվականի մակարդակը գերազանցում է 1017.0 մլն դրամով: Ծախսերի աճը պայմանավորված է Սուրբ Աթոռում (Վատիկան) ՀՀ դեսպանության պահպանման ծախսերի (բացառությամբ վարձատրության ծախսերի) նախատեսմամբ՝ 102.7 մլն դրամ, որոնք նախկինում կատարվել են արտաբյուջետային միջոցների հաշվին, օտարերկրյա պետություններում բնակելի տարածության վարձավճարի բարձրացման հետ կապված դիվանագետների բնակարանների վարձակալության ծախսերի աճով՝ 71.6 մլն դրամ և վարչատեխնիկական անձնակազմի վարձատրությանն ուղղվող ծախսերի աճով՝ 84.6 մլն դրամ, ինչպես նաև 2015 թվականի համեմատությամբ 2016 թվականի հաշվարկներում կիրառվող տարադրամի փոխարժեքի փոփոխման հետ կապված ծախսերի ավելացմամբ՝ 804.4 մլն դրամ: Միևնույն ժամանակ, ծախսերը նվազել են 46.3 մլն դրամով, որը 2015 թվականի պետական բյուջեով նախատեսվել էր 3 ծառայողական ավտոմեքենայի ձեռքբերման համար:

ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի նիստի N 29.6/[332096]-15 (40) արձանագրության 10-րդ կետով ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև առևտրական ներկայացուցչությունների փոխադարձ հիմնման մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Այս կապակցությամբ սահմանված կարգով հաշվարկվել և ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում ՀՀ առևտրական ներկայացուցչության պահպանման ծախսերը՝ 41.6 մլն դրամի չափով:

2.8. ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են նաև ծախսեր պետական իշխանության մարմինների շենքային պայմանների բարելավման նպատակով: Մասնավորապես նախատեսվել է 590.0 մլն դրամի ծախս՝ ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, և

ՀՀ կառավարության աշխատակազմերին ամրագրված վարչական շենքերի շինվերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով:

ՆԱՏՕ-ի նոր կենտրոնակայանի շենքի վերակառուցման աշխատանքների ծախսերի փոխհատուցման Հայաստանի Հանրապետության մասնաբաժնի մարման նպատակով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 8.5 մլն դրամ:

2.9. 2016 թվականին նախատեսվում է անցկացնել տեղական ինքնակառավարման մարմինների ՀՀ սահմանադրության 107-րդ հոդվածով ամրագրված հերթական ընտրությունները: Բացի այդ, 2016 թվականի պետական բյուջեում միջոցներ են նախատեսվել նաև ընթացիկ տարվա տեղական ինքնակառավարման մարմինների եռամսյակային հերթական ընտրությունների համար, որոնք մինչ այս ֆինանսավորվել են ՀՀ պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին: Այդ նպատակով ծախսերը ծրագրավորվել են 1,254.7 մլն դրամի չափով:

3. Ծրագրավորված ծախսերի համեմատական վերլուծությունը

ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերի ընդհանուր գումարը (առանց այս ոլորտում իրականացվող նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերի) ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում ծրագրավորված է 92283.4 մլն դրամի չափով, որը 2014 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2015 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների նկատմամբ կազմում է համապատասխանաբար 128.6 և 101.4 տոկոս: Նշված ցուցանիշների համեմատությունը արտացոլված է սույն բացատրագրի N 2 աղյուսակում: Ստորև ներկայացվում է վերը նշված ծախսերի վերծանումն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հիմնական հոդվածների:

3.1. **Աշխատավարձի ֆոնդ** - օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների աշխատողների աշխատավարձի ֆոնդը 2016 թվականի համար ծրագրավորվել է 64036.9 մլն դրամի չափով, որը 2015 թվականի ծրագրավորվածից ավելի է 649.8 մլն դրամով:

Աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N 737-Ն որոշման պահանջներին համապատասխան (բազային աշխատավարձը 2016 թվականի համար սահմանվում է 66140.0 դրամ):

Աշխատավարձի ֆոնդի աճը պայմանավորված է ՀՀ դատական օրենսգրքի համաձայն դատավորների թվի (4 դատավոր) ավելացման հետ կապված աշխատավարձի ֆոնդի նախատեսմամբ, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում դատախազների վարձատրության գործակիցների ավելացման հետ կապված դատախազների աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ (311.5 մլն դրամով), «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան աշխատավարձերի բնականոն աճերի հաշվարկմամբ և աշխատողների թվաքանակի փոփոխությամբ՝ 671.1 մլն դրամով, պետական ծառայողների պարգևատրման ֆոնդի ավելացմամբ՝ 607.0 մլն դրամ:

Միաժամանակ կրճատվել է նախորդ տարիներին աշխատողների թվաքանակի կրճատումների արդյունքում գոյացած միջոցները, որոնք ներառված էին համապատասխան մարմինների աշխատավարձի ֆոնդերում՝ աշխատողների խրախուսման համար, շուրջ 911.6 մլն դրամ:

3.2. **Էներգետիկ ծառայությունների** ծախսերը (ներառում է էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը) ծրագրավորվել են 2,395.0 մլն դրամի չափով, որը 2015 թվականի ծրագրավորվածից ավելի է 319.9 մլն դրամով: Ավելացումը հիմնականում պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ, ամսական 10.0 հազար մ^3 և ավելի գազ սպառողների՝ 2015 թվականի համեմատությամբ 2016 թվականի հաշվարկներում կիրառվող տարադրամի փոխարժեքի փոփոխման հետ կապված ծախսերի ավելացմամբ՝ շուրջ 39.0 մլն դրամ, ինչպես նաև ՀՀ քննչական կոմիտեին նոր ամրացված շենքերի ջեռուցման ծախսերի նախատեսմամբ:

3.3. **Կոմունալ ծառայությունների** վճարները ներառում է ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև միջատազերծման հետ կապված ծախսերը: Նշված ծախսերը ծրագրավորվել են 101.5 մլն դրամի չափով, որը 2015 թվականի ծրագրավորվածից պակաս է 0.9 մլն դրամով:

3.4. **Կապի ծառայությունների** գծով ծախսերը ծրագրավորվել են 1,741.0 մլն դրամի չափով, այն 2015թ. ծրագրավորվածից ավելի է 6.2 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է վերը նշված մարմինների ստեղծման կապակցությամբ համապատասխան միջոցների նախատեսմամբ, ինչպես նաև առանձին մարմիններում կապի ծախսերի կանոնակարգմամբ:

3.5. **Ապահովագրական ծախսերը** ծրագրավորվել են 45.8 մլն դրամի չափով՝ ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակին համապատասխան:

3.6. **Գույքի և սարքավորումների վարձակալության** գծով ծախսերը ծրագրավորվել են ներկայացված պայմանագրերին համապատասխան:

3.7. **Գործուղումների և ծառայողական ուղևորությունների** ծախսերը ծրագրավորվել են 2,377.9 մլն դրամի չափով, որը 2015թ. ծրագրավորվածից պակաս է 10.9 մլն դրամով :

3.8. **Պայմանագրային ծառայությունների** ձեռք բերման ծախսերը ծրագրավորվել են 2,342.7 մլն դրամի չափով, որը 2015 թվականի մակարդակից ավելի է 29.6 մլն դրամով: Պայմանագրային ծառայությունները ներառում են վարչական ծառայությունները, համակարգչային ծառայությունները, աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունները, տեղեկատվական ծառայությունները, կառավարչական ծառայությունները, կենցաղային և հանրային սննդի ծառայությունները, ներկայացուցչական ծախսերը և ընդհանուր բնույթի այլ ծառայությունները: Ծախսերի աճը պայմանավորված է նշված ծախսերի կանոնակարգմամբ:

3.9. **Նյութեր** - ծախսերը ծրագրավորվել են 1,144.2 մլն դրամի չափով, որը 2015 թվականի ծրագրավորվածից պակաս է 193.8 մլն դրամով: Նյութերը ներառում են գրասենյակային պիտույքների, գյուղատնտեսական ապրանքների, կենցաղային և հանրային սննդի նյութերի և հատուկ նպատակային այլ նյութերի ձեռք բերման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ դատախազների, քննչական կոմիտեի ծառայողների, հատուկ քննչական ծառայողների, ՀՀ դատարանների դատական կարգադրիչների, հարկադիր կատարողների, հարկային և մաքսային ծառայողների մասնագիտական համազգեստների ձեռքբերման ծախսերը: Նյութերի ձեռքբերման գծով ծախսերի նվազումը հիմնականում պայմանավորված է նշված ծառայողների համազգեստների ձեռքբերման համար հատկացումների կրճատմամբ: Նշված ծախսը ծրագրավորվում է հիմք ընդունելով համազգեստները կրելու օրենսդրությամբ սահմանված ժամկետները:

3.10. **Տրանսպորտային միջոցների** պահպանման հետ կապված ծախսերը տարանջատված են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման երեք հոդվածներում՝ տրանսպորտային նյութեր (բենզին, յուղեր, այլ նյութեր տրանսպորտային միջոցների համար), մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում և պարտադիր վճարներ (տեխնիկական զննման վճարներ՝ 1 մեքենայի համար 6.0-10.0 հազ. դրամ և բնապահպանական վճարներ՝ 1 մեքենայի համար 2.5-3.0 հազ. դրամ): Ծառայողական ավտոմեքենաների պահպանման ծախսերը ծրագրավորվել են 1,569.6 մլն դրամի չափով:

3.11. **Սուբսիդիաներ** ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին - ծախսերը ծրագրավորվել են 882.4 մլն դրամի չափով՝ «Սպասարկում», «Գնումների աջակցման կենտրոն» և «Կոնդի առանձնատների տնտեսություն» պետական ոչ առևտրային կազմակերպություններին պետական աջակցության համար:

3.12. **Ընթացիկ սուբվենցիաներ** համայնքներին – ծրագրավորվել է 1092.9 մլն դրամի չափով՝ ՀՀ օրենսդրությամբ Երևանի քաղաքապետարանի կենտրոնական ապարատի պահպանման համար նախատեսված պետական աջակցություն:

3.13. **Այլ նպաստներ բյուջեից** - ծրագրավորված է 1,908.5 մլն դրամի չափով՝ ներառում է ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորների պատգամավորական գործունեության հետ կապված ծախսերը (հիմք ընդունելով «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթները, նշված ծախսը նախատեսվել է յուրաքանչյուր պատգամավորի համար ամսական 50.0 հազ. դրամի չափով), «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման ծախսերը, յուրաքանչյուր մարզպետարանին այս հոդվածով նախատեսվող գումարները, ծառայողական պարտականությունները կատարելիս հարկադիր կատարողի կողմից հասարակական տրանսպորտից օգտվելու և անձնական օգտագործման ավտոմեքենան ծառայողական նպատակներով օգտագործելու հետ կապված ծախսերի հատուցման գումարը, ինչպես նաև պետական իշխանության առանձին մարմինների առանձնահատկություններով պայմանավորված համապատասխան ծախսերը: Բացի այդ, նախատեսված են համապատասխան միջոցներ՝ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության և համայնքային ենթակայության սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորումն ապահովելու նպատակով:

3.14. **Այլ ծախսեր** - ծրագրավորվել են 10,973.6 մլն դրամի չափով: Ներառում է՝ ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների, ՀՀ ռազմական կցորդների, արտասահմանում ՀՀ առևտրային ներկայացուցչությունների պահպանման ծախսերը, ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի նախագահի և ՀՀ վարչապետի ֆոնդերը, ՀՀ Նախագահի կողմից առանձին անձանց պարգևատրելու համար անհրաժեշտ մեդալների և շքանշանների պատրաստման ծախսերը, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ դատարանների, ՀՀ դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ հատուկ քննչական ծառայության և ՀՀ վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդերը:

3.15. **Ոչ ֆինանսական ակտիվների** գծով ծախսերը նախատեսվել են 485.6 մլն դրամի չափով՝ պետական իշխանության առանձին մարմիններում կարողությունների զարգացման համար:

Միաժամանակ պետական կառավարման (ապարատի) շրջանակներում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի բարեփոխումների երկրորդ ծրագիր

Ծրագիր նպատակն է կատարելագործել հանրային հատվածի կառավարման իրականացումը և ծառայությունների մատուցումը՝ քաղաքականության մշակման ոլորտում

գերատեսչական հզորությունների ուժեղացման, մարդկային կապիտալի արդյունավետության բարձրացման և ներքին աշխատանքային հոսքերի և արտաքին հաղորդակցության համար տեղեկատվական համակարգերի ստեղծման միջոցով:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝

ա) քաղաքականության ձևավորման և ծառայությունների մատուցման ձևաչափում գերատեսչական կարողությունների զարգացում,

բ) հանրային հատվածում մարդկային ռեսուրսների գործունեության արդյունավետության բարձրացում,

գ) կատարողականի և թափանցիկության բարելավման նպատակով համակարգերի մշակում,

դ) ժամանակին պահանջվող տեխնիկական աջակցություն

ե) ծրագրի կառավարում և իրականացում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 387.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 314.0 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 73.7 մլն. դրամ:

2. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագիր

Ծրագրի նպատակն է օժանդակել Էլեկտրոնային հասարակության և ինովացիոն ծրագրի նախապատրաստմանը, որի նպատակներն են՝

ա) տնային տնտեսությունների, բիզնեսի և պետական կազմակերպությունների համար հիմնացանցի, համակարգիչների և էլ. ծառայությունների մատչելիությունը և հասանելիությունը,

բ) ավելացնել գիտելիքահեն և տեխնոլոգիահեն հատվածի ծավալները և տվյալ հատվածում զբաղվածությունը, ինչպես նաև հասանելիությունը շուկաներին, ֆինանսներին, հմտություններին:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝

ա) էլեկտրոնային հասարակության ենթակառուցվածքների զարգացում,

բ) ձեռնարկությունների ինովացիոն ենթակառուցվածքների խթանում,

գ) ծրագրի կառավարում և իրականացում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 1,242.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,008.2 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 234.2 մլն. դրամ:

3. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հարկային վարչարարության արդիականացման ծրագիր

Ծրագրի նպատակն է օժանդակել ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների վարչարարության համապարփակ արդիականացմանը: Ծրագրով կապահովվի հիմնական ՏՀՏ ենթակառուցվածքում կարևոր ներդրումների ֆինանսավորումը՝ հնարավորություն ընձեռելով արդիականացնել իր բիզնես գործընթացները, ընդլայնել էլ. կառավարման կիրարկումը, այդ թվում՝ հարկային հայտարարագրերի էլեկտրոնային եղանակով ներկայացումը, ինչպես նաև ներդնել առավել թիրախավորված, ռիսկի վրա հիմնված պարտավորությունների իրականացման ռազմավարություն՝ հիմնվելով պարտավորությունների կամավոր իրականացման վրա:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

ա) ինստիտուցիոնալ զարգացում և փոփոխության կառավարում,

բ) գործընթացի արդիականացում և պարտավորությունների կատարման կառավարում,

գ) տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքի և համակարգերի արդիականացում,

դ) ծրագրի կառավարում և իրականացում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 686.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 598.9 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 87.9 մլն. դրամ:

4. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր

Ծրագրի նպատակն է հզորացնել արտահանման խթանման, ներդրումների ներգրավման և ձեռնակություններին տրամադրվող որակի կառավարման ծառայությունների կարողությունները:

Ծրագիրը կազմված է 4 բաղադրիչից՝

ա) երկրում առևտրի խթանման և որակի համակարգի արդյունավետության բարելավում,

բ) ներդրումների և արտահանման խթանում,

գ) որակի ազգային ենթակառուցվածքի արդիականացում,

դ) ծրագրի կառավարում և մոնիթորինգի ու գնահատում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 415.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 364.2 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 51.2 մլն. դրամ:

5. ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի ընդհանուր նպատակն է գյուղական աղքատության կրճատումը՝ գյուղատնտեսական ոլորտի կայուն տնտեսական աճի միջոցով, գյուղատնտեսության ոլորտի արդյունավետության մեծացումը՝ ոռոգման համակարգերի ընդգրկումն ընդլայնելու և որակի բարելավման, համակարգը կառավարող մարմինների հզորացման և ֆերմերների արտադրանքի եկամտաբերությունն ավելացնելու հնարավորություններ ստեղծելու միջոցով:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է դրամաշնորհային միջոցներ՝ 112.9 մլն. դրամ:

6. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հանրային հատվածի վերահսկողության (Վերահսկիչ պալատի) կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի նպատակն է աջակցել պետական հատվածի արտաքին աուդիտի կողմից կարողությունների ստեղծման ռազմավարության ու գործողությունների ծրագրի ընդունմանը և աուդիտի ստանդարտացված մեթոդների մշակմանն ու կիրառմանը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

ա) կարողության գնահատում և ռազմավարության մշակում,

բ) աուդիտի համապատասխան ստանդարտների և մեթոդների մշակում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 5.9 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 4.7 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 1.2 մլն. դրամ:

7. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ ֆինանսների նախարարության կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագիր

Ծրագիր նպատակն է հզորացնել ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան վարչությունների կարողությունները, որոնք պատասխանատու են ֆինանսական շուկայի զարգացման և փողերի լվացման քաղաքականությունների համար:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

ա) ինստիտուցիոնալ զարգացման առաջխաղացում,

բ) ֆինանսական շուկայի զարգացում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 4.2 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 3.3 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 0.9 մլն. դրամ:

8. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի կառավարության կարգավորող բարեփոխումների գրասենյակի կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի նպատակն է հզորացնել ՀՀ կառավարության կարգավորիչ բարեփոխումների ստորաբաժանման կարողությունները, որը պատասխանատու է գործարարների և քաղաքացիների գործունեության վրա ազդող իրավական նորմերի գույքագրման և վերանայման և անօգուտ կամ ավելորդ հանդիսացող նորմերի վերացման կամ պարզեցման միջոցով կարգավորիչ «գիլյոտինի» ծրագրի իրականացման համար:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

ա) կարգավորիչ բարեփոխումների ստորաբաժանման կարողությունների հզորացում,

բ) մշտադիտարկման և գնահատման համակարգի մշակում և ներդրում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 5.9 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 4.7 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 1.2 մլն. դրամ:

9. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի հանրային ֆինանսական կառավարման հզորացման դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի նպատակն է քաղաքականության վրա հիմնված բյուջետավորման խորացման և Հայաստանում պետական ներդրումների կառավարման համակարգի հզորացումը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 5.9 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 4.7 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 1.2 մլն. դրամ:

10. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսաթոշակների մասին հանրային իրազեկման և գրագիտության դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի նպատակն է ուժեղացնել սոցիալական ապահովության ծառայությունների կարողությունները՝ բարելավելու լայն հասարակության և հատուկ թիրախային խմբերի իրազեկումը կենսաթոշակային բարեփոխումների մասին:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 39.2 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 31.2 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 8.0 մլն. դրամ:

11. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Քաղաքաշինական թույլտվությունների էլեկտրոնային մշակման և մեկ պատուհանից տրամադրման ծրագրի համար ԻԶՀ դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի նպատակն է բարելավել բիզնես միջավայրը՝ կրճատելով քաղաքաշինական թույլատվությունների հետ կապված ընթացակարգերի արժեքը և դրանց համար պահանջվող ժամանակը՝ այս ընթացակարգերի պարզեցման և ավտոմատացման միջոցով:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 36.6 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 29.1 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 7.4 մլն. դրամ:

12. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող երիտասարդների ներգրավվածության խթանման դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի նպատակը առաջնորդության և ապրուստի զարգացման հնարավորությունների ավելացման շնորհիվ թիրախային շրջաններում խոցելի երիտասարդների սոցիալական և տնտեսական ներգրավածության խթանումն է:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

ա) երիտասարդների առաջնորդության զարգացում,

բ) երիտասարդների ապրուստի խթանում,

գ) ծրագրի կառավարում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 189.6 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 151.5 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 38.1 մլն. դրամ:

13. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի նպատակն է հզորացնել նորաստեղծ Հայաստանի զարգացման հիմնադրամի կարողությունները՝ զբոսաշրջության խթանման և զարգացման ծրագրերի նախագծման և իրականացման և ՏՏԵԶԾ-ի համար տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունների պատրաստման և մանրամասն նախագծման մեջ մասնակցելու ուղղությամբ:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

ա) ՀԶՀ-ի Զբոսաշրջության բաժնի կարողությունների զարգացում,

բ) առաջնահերթ գերակայության ներդրումների տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություն և մանրամասն/աշխատանքային նախագծեր,

գ) բնապահպանական և սոցիալական փաստաթղթեր,

դ) ֆինանսական աուդիտ:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 88.4 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 71.0 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 17.4 մլն. դրամ:

Միաժամանակ այլ ոլորտներում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1.Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տարածքային զարգացման հիմնադրամի ծրագիր

Ծրագրի նպատակներն են՝

1.Նպաստել տարածքներում բնակչության նյութական ու ոչ նյութական բարեկեցության աճին՝ սոցիալական ու տնտեսական ենթակառուցվածքների ու հանրային ծառայությունների որակի ու հասանելիության բարձրացման միջոցով,

2.Օժանդակել տարածքների ինստիտուցիոնալ և ֆինանսական կարողությունների հզորացմանը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել մոտ 120 համայնքային մակարդակի ենթածրագիր՝ սոցիալական ենթակառուցվածքների վերականգնման և նոր օբյեկտների կառուցման ոլորտում: Ինչպես և ՀՍՆՀ նախորդ ծրագրերում, նախատեսվում է համայնքային կենտրոններին, դպրոցներին և մանկապարտեզներին գույքի տրամադրում: Բացի դրանից կիրականացվեն մոտ 30 ենթածրագրեր, որոնց նպատակն է աջակցել համայնքների խմբերի/տարածքների զարգացմանն ուղղված կառավարության քաղաքականությանը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 2,174.5 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,682.9 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 491.6 մլն. դրամ:

2. Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող Հայաստանի տարածքային զարգացման դրամաշնորհային ծրագիր

Ծրագիրն ուղղված է ՀՀ մարզերի և համայնքների տարածքայինև տեղական ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը, աջակցության և զարգացման մոդելների մշակմանը և կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 2,553.4 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 2,034.5 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 518.9 մլն. դրամ:

Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված առողջապահության բնագավառի ծախսերը կազմում են 88,441.8 մլն դրամ: Ծախսերի աճը Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի (այսուհետ՝ 2015 թվականի) համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 4,123.8 մլն դրամ կամ 4.9 տոկոս: Միաժամանակ, առանց հաշվի առնելու պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերը, վարկային և դրամաշնորհային ծրագրերը, առողջապահության ոլորտի ծախսերի աճը 2016 թվականին 2015 թվականի նկատմամբ կազմում է 1,779.4 մլն դրամ:

Բնակչության առողջության պահպանման և բարելավման նպատակով առողջապահության ոլորտում իրականացվում են՝ բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման, բնակչության առողջության առաջնային պահպանման, մոր և մանկան առողջության պահպանման, բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովման, ինչպես նաև սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների բժշկական օգնության (այդ թվում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման), դեղորայքային ապահովման նպատակային առողջապահական ծրագրեր:

Ինչպես Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով, այնպես էլ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի նախագծով առողջապահության ծախսերի ձևավորումն ունի երկու հիմնական մոտեցում.

- առողջապահական գերակայությունների պահպանում,
- սոցիալական ուղղվածության ապահովում:

Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ

Դեղագործական ապրանքներ

«Դեղագործական ապրանքներ» դասի շրջանակներում նախատեսվում է երկու ծրագրերի իրականացում: Այսպես.

1. «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» ծրագիրը, որի գծով

նախատեսվում է 4,261.8 մլն դրամ 2015 թվականի 2,984,8 մլն դրամի դիմաց կամ 1,277,0 մլն դրամով ավելի:

«Արտահիվանդանոցային ծառայություններ» խմբի «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից սույն ծրագիր է տեղափոխվել 1,192.3 մլն դրամ:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 84.7 մլն դրամ, որից 1-ին շարքի հակատուբերկուլյոզային դեղերի ձեռքբերման նպատակով՝ 56.5 մլն դրամ, իսկ հղիների ՄԻԱՎ հետազոտման թեստ հավաքածուների ձեռքբերման նպատակով՝ 28.2 մլն դրամ: 2015 թվականին այն ֆինանսավորվում էր «ՁԻԱՀ-ի տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի» Գլոբալ հիմնադրամի կողմից և ընդգրկված չէ վերջինիս կողմից նախատեսվող «Տուբերկուլոզի դեմ պայքարի» ու «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի» նոր դրամաշնորհային ծրագրերում:

2. «Դեղորայքի տրամադրում պետական պահպանության ծառայությանը» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 1.1 մլն դրամ՝ 2015 թվականի չափով:

Ծրագրերով նախատեսվում են կենտրոնացված միջոցներով դեղորայքի ձեռքբերման ծախսեր: Ծրագրի շրջանակներում ձեռք կբերվի հոգեմետ, չարորակ նորագոյացություններով հիվանդների, շաքարային և ոչ շաքարային դիաբետով հիվանդների, էպիլեպսիայով, պարբերական հիվանդությամբ հիվանդների, երիկամների փոխպատվաստում տարած հիվանդների համար դեղորայք և այլն:

Բժշկական սարքեր և սարքավորումներ

Դասը ընդգրկում է «Հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումներով համալրում» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 12.4 մլն դրամ (տեղափոխվել է «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից):

Արտահիվանդանոցային ծառայություններ

Առողջապահության բնագավառում որպես առաջնահերթություն շարունակվելու է առողջության առաջնային պահպանման ոլորտի զարգացումը, ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի դերի բարձրացմանն ուղղված միջոցառումների ապահովումը, կանխարգելիչ ուղղվածության ուժեղացումը, որակյալ բժշկական օգնություն ստանալու մատչելիության ընդլայնումը (ամբուլատոր-պոլիկլինիկական անվճար բուժօգնության իրականացման սկզբունքի պահպանմամբ):

Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի նախագծով «Արտահիվանդանոցային ծառայություններ» խմբի գծով նախատեսվում է 27,705.2 մլն դրամ 2015 թվա-

կանի 28,797,8 մլն դրամի դիմաց կամ 1,092.6 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է հետևյալով.

«Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից 1,418.9 մլն դրամ տեղափոխվել է «Առողջապահություն» բաժնի այլ խմբեր:

«Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրից 366.7 մլն դրամ տեղափոխվել է «Հիվանդանոցային ծառայություններ» խումբ:

Միևնույն ժամանակ ծախսերի աճը կազմում է 693.0 մլն դրամ:

Տարեկան աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ պայմանավորված ծախսերն աճել են 488.0 մլն դրամով, որից ծախսերի 207.0 մլն դրամով աճը պայմանավորված է 2015թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացումը տարեկան կտրվածքով հաշվարկմամբ, ծախսերի 184.0 մլն դրամով աճը՝ առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի մոտ գրանցված բնակիչների թվաքանակի ավելացմամբ, ծախսերի 12.4 մլն դրամով աճը՝ դպրոցում բուժքույրերի կողմից սպասարկվող աշակերտների թվաքանակի ավելացմամբ, իսկ ծախսերի 84.6 մլն դրամով աճը՝ «ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի» Գլոբալ հիմնադրամի կողմից ֆինանսավորվող 2015 թվականին դրամաշնորհային ծրագրերի ավարտմամբ: Վերջինիս հետ պայմանավորված «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ» ծրագրի գծով աշխատավարձի ֆոնդի ավելացման հետ մեկտեղ 61.6 մլն դրամ նախատեսվում է դեղորայքի, այլ բժշկական ապրանքների և պահպանման ծախսերի գծով:

Էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ պայմանավորված ծախսերն աճել են 129.1 մլն դրամով:

Բժշկի մոտ գրանցված բնակիչների և աշակերտների թվաքանակների փոփոխությամբ պայմանավորված դեղորայքային ծախսերը ավելացել են 6.4 մլն դրամով:

Հայաստանի Հանրապետության տարածքում տեղի ունեցող ազգային առաջնությունների ժամանակ դոպինգ ստուգումների իրականացման նպատակով «Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ծառայություններ» ծրագրի գծով ծախսերը ավելացել են 7.5 մլն դրամով:

Բացի այդ, «Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններ» ծրագրից 9.0 մլն դրամ տեղափոխվել է սույն խմբի «Մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ» ծրագիր:

2016 թվականին արտահիվանդանոցային բուժօգնության շրջանակներում նախատեսվում է տասնչորս ծրագրերի իրականացում: Այսպես.

1. «Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ» ծրագիրը ներառում է ընտանեկան բժշկի և տեղամասային թերապևտի (մանկաբույժի) կողմից բնակչության առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման, հիվանդների բժշկական օգնության և նրանց նկատմամբ շարունակական հսկողության ապահովման, անհրաժեշտության դեպքում, հիվանդանոցային բուժման կարիք ունեցողների հոսպիտալացման կազմակերպման միջոցառումների իրականացումը, գյուղական բնակավայրերում բուժակ-մանկաբարձական կետերի միջոցով բնակչության մինչբժշկական օգնության և սպասարկման իրականացումը, բուժքույրերի կողմից դպրոցներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման ապահովումը, արտոնյալ պայմաններով դեղամիջոցներ ստանալու իրավունք ունեցող անձանց տեղամասային թերապևտի (մանկաբույժի) և ընտանեկան բժշկի միջոցով, իսկ առանձին հիվանդությունների գծով՝ համապատասխան մասնագետի միջոցով անհրաժեշտ դեղորայքով ապահովումը:

«Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է 11,213.7 մլն դրամ 2015 թվականի 10,921.3 մլն դրամի դիմաց կամ 292.4 մլն դրամով ավելի: Տարեկան աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ պայմանավորված ծախսերն աճել են 179.4 մլն դրամով, էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ պայմանավորված՝ 109.7 մլն դրամով, իսկ բժշկի մոտ գրանցված բնակիչների և աշակերտների թվաքանակների փոփոխությամբ պայմանավորված դեղորայքային ծախսերը աճել են 3.3 մլն դրամով:

Ծրագրի շրջանակներում ընտանեկան բժիշկների, տեղամասային թերապևտների (մանկաբույժների), բուժքույրերի, կրտսեր բուժանձնակազմի և վարչատնտեսական անձնակազմի պահպանման, ինչպես նաև տեղամասերի աշխատանքների ապահովման տնտեսական և դեղորայքային (առաջին օգնության համար անհրաժեշտ դեղորայքի և վիրակապական նյութերի) ծախսերի գծով նախատեսվում է 9,401.2 մլն դրամ 2015 թվականի 9,135.1 մլն դրամի դիմաց կամ 266.1 մլն դրամով ավելի:

Ծրագրի շրջանակներում անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի համար նախատեսվում է 1,295.2 մլն դրամ՝ 2015 թվականի չափով:

Բացի այդ, բուժքույրերի կողմից դպրոցներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման ապահովման գծով նախատեսվում է 517.3 մլն դրամ 2015 թվականի 491.0 մլն դրամի դիմաց կամ 26.3 մլն դրամով ավելի:

Ելնելով նրանից, որ ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության ֆինանսավորումը իրականացվում է բժշկի մոտ գրանցված բնակչության մեկ շնչի հաշվով ֆինանսավորման սկզբունքով՝ հաշվարկի համար բնակչության հաշվարկային մեծությունը ընդունված է 2,980.3 հազար,

որից մեծահասակներ՝ 2,306.7 հազար, երեխաներ՝ 617.6 հազար, նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիներ՝ 56.0 հազար:

Տարվա կտրվածքով տեղամասային թերապևտի (ընտանեկան բժշկի) կողմից 18 տարին լրացած և ավելի բարձր տարիքի անձանց բժշկական օգնության և սպասարկման համար մեկ բնակչի հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվում է 2,386 դրամ՝ 2015 թվականի 2,355 դրամի դիմաց, իսկ մանկաբույժի (ընտանեկան բժշկի) կողմից մինչև 18 տարեկան երեխաների բժշկական օգնության և սպասարկման համար մեկ երեխայի (այդ թվում պատանու) հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվում է 4,790 դրամ՝ 2015 թվականի 4,721 դրամի դիմաց: Դպրոցներում իրականացվող երեխաների բժշկական օգնության և սպասարկման ծախսերը ըստ մեկ աշակերտի ֆինանսավորման նախատեսվում են տարեկան 1,434 դրամ՝ 2015 թվականի 1,397 դրամի դիմաց:

2. «Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը ներառում է ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի և դիսպանսերների նեղ մասնագետների կողմից բնակչության բուժական-խորհրդատվական մասնագիտացված օգնության ապահովումը (ուռուցքաբանական,ներզատաբանական, հոգեբուժական, մաշկավեներաբանական, հակատուբերկուլյոզային, նարկոլոգիական, ինֆեկցիոն, սրտաբանական, քիթ-կոկորդ-ականջաբանական, վիրաբուժական/վնասվածքաբանական, նյարդաբանական, ակնաբուժական և այլ կաբինետների միջոցով) ամբողջ բնակչության համար, առանց հաճախումների սահմանափակման:

«Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է 4,100.1 մլն դրամ 2015 թվականի 4,000.9 մլն դրամի դիմաց կամ 99.2 մլն դրամով ավելի: Տարեկան աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ պայմանավորված ծախսերն աճել են 90.3 մլն դրամով, էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ պայմանավորված՝ 6.3 մլն դրամով, իսկ բժշկի մոտ գրանցված բնակիչների թվաքանակի փոփոխությամբ պայմանավորված դեղորայքային ծախսերը աճել են 2.6 մլն դրամով:

Նեղ մասնագիտական բժշկական օգնության գծով ըստ նեղ մասնագետի բուժօգնության իրականացման մեկ շնչի ֆինանսավորման միջինացված գումարը նախատեսվում է 18 և բարձր տարիքի անձանց համար 674 դրամ՝ 2015 թվականի 670 դրամի դիմաց, իսկ մինչև 18 տարեկան երեխաների (այդ թվում պատանիների) համար 1121 դրամ՝ 2015 թվականի 1115 դրամի դիմաց:

3. «Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը ներառում է հղիների և գինեկոլոգիական հիվանդություններով տառապող կանանց մանկաբարձագինեկոլոգիական օգնության ապահովումը՝ կանանց կոնսուլտացիաների (կաբինետների) միջոցով, ինչպես նաև 15 տարեկան աղջիկների առողջական վիճակի գնահատումը և խորհրդատվությունը:

Ծրագրի գծով նախատեսվում է 1,632.5 մլն դրամ 2015 թվականի 1,519.8 մլն դրամի դիմաց կամ 112.7 մլն դրամով ավելի: Տարեկան աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ պայմանավորված ծախսերն աճել են 99.2 մլն դրամով, էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ պայմանավորված՝ 13.1 մլն դրամով, իսկ բժշկի մոտ գրանցված բնակիչների թվաքանակի փոփոխությամբ պայմանավորված դեղորայքային ծախսերը աճել են 0.4 մլն դրամով:

Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության գծով որպես հաշվարկային մեծություն ընդունված իգական սեռի անձանց թիվը կազմում է 1,263.8 հազար և տարվա կտրվածքով նշված մեկ անձի հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվում է 1,292 դրամ՝ 2015 թվականի 1,226 դրամի դիմաց:

4. «Անցանկալի հղիությունների կանխարգելման նպատակով հակաբեղմնավորիչ ժամանակակից միջոցների մատչելիության ապահովում» ծրագիրը նախատեսվում է բնակչության խոցելի խմբերին անհրաժեշտ ժամանակակից հակաբեղմնավորիչներով ապահովման նպատակով: Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի միացյալ նահանգների միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջև առողջապահական և սոցիալական ծառայությունների արդյունավետության բարելավման շուրջ օժանդակության համաձայնագրի 2013 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 4 փոփոխության փաստաթղթի համաձայն Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է ժամանակակից հակաբեղմնավորիչների գնման պարտավորություն: Ծրագրի գծով նախատեսվում է 45.8 մլն դրամ՝ 2015 թվականի չափով:

5. «Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններ» ծրագիրը ներառում է շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների ամբուլատոր բուժման կազմակերպումը պոլիկլինիկաներում, ամբուլատորիաներում, հիվանդանոցներում, մասնագիտացված կենտրոններում, միավորումներում, ընտանեկան բժշկի գրասենյակներում:

Ծրագրի գծով նախատեսվում է 133.0 մլն դրամ՝ 2015 թվականի 142.0 մլն դրամի դիմաց (9.0 մլն դրամ տեղափոխվել է «Մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ» ծրագիր):

6. «Մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ» ծրագիրը ներառում է մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական և շարժողական խանգարումներով երեխաների առողջական վիճակի գնահատումը և վերականգնողական բուժման ամբուլատոր կազմակերպումը:

Ծրագրի գծով նախատեսվում է 71,226 դեպքի բուժում 258.9 մլն դրամ գումարով՝ 2015 թվականի 68,863 դեպքի և 249.9 մլն դրամի դիմաց կամ 2,363 դեպքով և 9.0 մլն դրամով ավելի:

7. «Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ծառայություններ» ծրագիրը ներառում է տարբեր մարզաձևերի գծով ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված մարզիկների բժշկական հսկողության, հիվանդությունների և վնասվածքների ախտորոշման և բուժման իրականացումը, ՀՀ հավաքական թիմերի անդամներին բարձրորակ դեղորայքով, վիտամիններով և վերականգնողական միջոցներով ապահովումը և հակադոպինգային հսկողության իրականացումը:

Ծրագրի գծով նախատեսվում է 101.7 մլն դրամ 2015 թվականի 94.3 մլն դրամի դիմաց: Հայաստանի Հանրապետության տարածքում տեղի ունեցող ազգային առաջնությունների ժամանակ դոպինգ ստուգումների իրականացման նպատակով ծախսերն ավելացել են 7.5 մլն դրամով:

8. «Հեմոդիալիզի անցկացման ծառայություններ» ծրագիրը ներառում է հեմոդիալիզի կարիք ունեցող հիվանդների բժշկական օգնության համալիր միջոցառումների իրականացումը հիվանդանոցների միջոցով:

Ծրագրի գծով նախատեսվում է բուժօգնություն մատուցել 715 հիվանդներին 1,980.0 մլն դրամ գումարով՝ 2015 թվականի չափով:

9. «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 285.2 մլն դրամ 2015 թվականի 139.0 մլն դրամի դիմաց կամ 146.2 մլն դրամով ավելի, որից տարեկան աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ պայմանավորված՝ 84.6 մլն դրամ, իսկ դեղորայքի, բժշկական այլ ապրանքների և պահպանման ծախսերի նախատեսմամբ պայմանավորված՝ 61.6 մլն դրամ:

Ծրագրի շրջանակներում իրականացվում է ՄԻԱՎ վարակի տարածվածության մասին տեղեկատվության ստացում, ընտրված խմբերում վարակի միտումների ընթացիկ հսկողություն: Նախատեսվում է ՄԻԱՎ վարակով հիվանդների դիսպանսերային հսկողություն: Նախատեսվում է նաև ՄԻԱՎ հակամարմնի հայտնաբերման գծով համաճարակաբանական հետազոտություն՝ իմունոֆերմենտային անալիզի մեթոդով, արագ թեստավորման, ռեֆերենսային մեթոդով և այլն, ինչպես նաև մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում:

10. «Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը ներառում է ամբուլատոր-պոլիկլինիկական մասնագիտացված ստոմատոլոգիական օգնության իրականացումը մինչև 8 տարեկան, ինչպես նաև 12 տարեկան երեխաներին, 65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց և սոցիալապես անապահով խմբերում ընդգրկվածներին:

Ծրագրի գծով նախատեսվում է 805.3 մլն դրամ՝ 2015 թվականի չափով:

11. «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ» ծրագիրը ներառում է 6 և 12 տարեկան երեխաների բերանի խոռոչի հիգիենայի պահպանման համալիր միջոցառումների իրականացումը:

Ծրագրի գծով նախատեսվում է 87.7 մլն դրամ՝ 2015 թվականի չափով:

12. «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ» ծրագիրը ներառում է ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում ըստ բժշկական ցուցումների լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացման ապահովումը ամբողջ բնակչության համար՝ անկախ տարիքից և սոցիալական կարգավիճակից, ինչպես նաև տուբերկուլյոզով, դիաբետով, չարորակ նորագոյացություններով և սիրտ-անոթային համակարգի հիվանդների (բարձր ռիսկի խմբում ընդգրկված բնորոշիչ ախտանիշներ ունեցող անձանց) լաբորատոր-գործիքային հետազոտությունների իրականացման ապահովումը:

Ծրագրի գծով նախատեսվում է 3,202.0 մլն դրամ 2015 թվականի 3,568.7 մլն դրամի դիմաց կամ 366.7 մլն դրամով պակաս: Ծախսերի նվազեցումը պայմանավորված է «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ» ծրագրի շրջանակներում սոցիալական փաթեթի շահառուների համար իրականացվող կանխարգելիչ հետազոտություններով:

Բնակչության լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտության ծախսերը (առանց զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց) ըստ մեկ շնչի ֆինանսավորման նախատեսվում են 712 դրամ, իսկ զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց համար՝ 6,178 դրամ: Բացի դրանից, մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության շրջանակներում իրականացվող լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների գծով՝ իգական սեռի մեկ անձի հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվում է 612 դրամ:

13. «Շտապ բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը ներառում է հանրապետության տարածքում ամբողջ բնակչության համար անհետաձգելի բժշկական օգնության ապահովումը շտապ բժշկական օգնության կանչերի միջոցով:

Ծրագրի գծով նախատեսվում է 3,292.3 մլն դրամ՝ 2015 թվականի չափով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 435.4 հազար կանչերի իրականացում:

14. «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը ներառում է նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց առողջական վիճակի հետազոտումը և գնահատումը: Ծրագրի գծով նախատեսվում է 566.9 մլն դրամ 2015 թվականի 1,950.8 մլն դրամի դիմաց կամ 1,383.9 մլն դրամով պակաս: Նշյալ ծրագրից 1,418.9 մլն դրամ տեղափոխվել է «Առողջապահություն» բաժնի այլ խմբեր:

Միևնույն ժամանակ, զինկոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովներում ընդգրկված (զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննությունն անցկացնող) մասնագետների տարեկան աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ պայմանավորված ծախսերը նախատեսվում են 34.6 մլն դրամով ավելի:

Ծրագրի շրջանակներում զինկոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովներում ընդգրկված մասնագետների կողմից զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննությունն անցկացնելու համար նախատեսվում է 530.6 մլն դրամ 2015 թվականի 496.0 մլն դրամի դիմաց կամ 34.6 մլն դրամով ավելի: Փորձաքննությանն ուղեգրման ճանապարհածախսի գծով նախատեսվում է 36.3 մլն դրամ 2015 թվականի 30.8 մլն դրամի դիմաց: Ծախսերի ավելացումը հիմնականում նախատեսվում է ի հաշիվ շուրջօրյա հիվանդանոցային խնամք չպահանջող բուժման ծախսերի:

Հիվանդանոցային ծառայություններ

Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի նախագծով «Հիվանդանոցային ծառայություններ» խմբի գծով նախատեսվում է 39,818.9 մլն դրամ: Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերի աճը կազմում է 1,221.4 մլն դրամ կամ 3.2 տոկոս:

2015թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացումը տարեկան կտրվածքով հաշվարկմամբ պայմանավորված ծախսերն աճել են 278.1 մլն դրամով:

Էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ պայմանավորված ծախսերն աճել են 140.0 մլն դրամով:

«Սրտի վիրահատության ծառայություններ» նոր ծրագրի գծով ծախսերի աճը կազմում է 419.7 մլն դրամ: Հարկ է նշել, որ նշյալ ծրագրի գծով ծախսերը կազմում են 3,085.7 մլն դրամ, որից 2,666.0 մլն դրամ նախատեսվում են ծրագրային վերաբաշխումների միջոցով («Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից՝ 670.8 մլն դրամ, «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից՝ 490.0 մլն դրամ, «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ» ծրագրից՝ 734.9 մլն դրամ, «Սրտի անհետաձգելի վիրահատության ծառայություններ» ծրագրից՝ 500.0 մլն դրամ, «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից՝ 190.0 մլն դրամ և «Արտահիվանդանոցային ծառայություններ» խմբի «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրից՝ 80.3 մլն դրամ):

«Արտահիվանդանոցային ծառայություններ» խմբի «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրից 286.3 մլն դրամ տեղափոխվել է «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր դեպքերի թվաքանակի ավելացմանը:

«Արտահիվանդանոցային ծառայություններ» խմբի «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից 17.0 մին դրամ տեղափոխվել է «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր:

Բացի այդ, «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից 350.0 մլն դրամ տեղափոխվել է սույն խմբի «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր (սոցիալապես անապահով խմբերի 7-18 տարեկան երեխաներին բժշկական օգնություն և ծառայություններ մատուցելու նպատակով):

Հիվանդանոցային բուժօգնության շրջանակներում իրականացվող մեկ հիվանդի մեկ օրվա բուժման միջինացված արժեքը նախատեսվում է 14,670 դրամ՝ 2015 թվականի չափով: Նախագծով նախատեսվում է ավելի կարճաժամկետ և ցածր ծախսատարություն պահանջող դեպքերի բուժում:

Նախագծով նախատեսվում է 311,397 դեպքի բուժում 2015 թվականի 300,734 դեպքի դիմաց կամ 10,663 դեպքով ավելի, որը պայմանավորված է «Սրտի վիրահատության ծառայություններ» ծրագրի գծով 958 նոր և «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի գծով 9,705 դեպքերի ավելացմամբ, որից 146 դեպք ուղղվել է «Սրտի վիրահատության ծառայություններ» ծրագիր: Հարկ է նշել, որ «Սրտի վիրահատության ծառայություններ» ծրագիր է ուղղվել նաև «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից՝ 1,141 դեպք, «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից՝ 469 դեպք, «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ» ծրագրից՝ 371 դեպք և «Սրտի անհետաձգելի վիրահատության ծառայություններ» ծրագրից՝ 420 դեպք:

Հիվանդանոցային բուժօգնության ծառայության գծով հիվանդանոցային դեպքի դիմաց վճարումը կատարվում է ելնելով անվճար բուժօգնության համար հաստատված գներից: 2016 թվականին ևս ֆինանսավորումը կիրականացվի սահմանափակված բյուջեի սկզբունքով:

2016 թվականին հիվանդանոցային բուժօգնության շրջանակներում նախատեսվում է տասնյոթ ծրագրերի իրականացում: Այսպես.

1. «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 58,010 դեպքի բուժում 6,205.6 մլն

դրամով 2015 թվականի 62,422 դեպքի և 7,202.2 մլն դրամի դիմաց կամ 4,412 դեպքով և 996.6 մլն դրամով պակաս: Սույն ծրագրից 670.8 մլն դրամ (1,141 դեպք) տեղափոխվել է «Սրտի վիրահատության ծառայություններ» ծրագիր, իսկ 350.0 մլն դրամ (3,271 դեպք)՝ «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր:

Միևնույն ժամանակ, նշյալ ծրագրի գծով էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ պայմանավորված ծախսերը ավելացել են 24.2 մլն դրամով:

Այս ծրագիրը նպատակաուղղված է բժշկական օգնություն և ծառայություններ մատուցել բնակչության սոցիալապես անապահով խմբերին բժշկական օգնության և ծառայությունների բոլոր տեսակների համար:

2. «Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է 18,400 դեպքի բուժում 1,910.0 մլն դրամով՝ 2015 թվականի նույն դեպքի և 1,908.3 մլն դրամի դիմաց կամ 1.7 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Ծրագիրն իրականացվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված անհետաձգելի վիճակների և հիվանդությունների ցանկի (ծրագրի շրջանակներում գործում է համավճարի սկզբունքով փոխհատուցման մեխանիզմը):

3. «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի գծով սոցիալական փաթեթի շրջանակներում նախատեսվում է 14,967 դեպքի բուժում 2,201.2 մլն դրամով 2015 թվականի 15,436 դեպքի և 2,683.6 մլն դրամի դիմաց կամ 469 դեպքով և 482.3 մլն դրամով պակաս: Սույն ծրագրից 490.0 մլն դրամ (469 դեպք) տեղափոխվել է «Սրտի վիրահատության ծառայություններ» ծրագիր:

Միևնույն ժամանակ, նշյալ ծրագրի գծով էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ պայմանավորված ծախսերը ավելացել են 7.7 մլն դրամով:

Բացի այդ, «Արտահիվանդանոցային ծառայություններ» խմբի «Զորակոչային և նախա-զորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից 17.0 մլն դրամ տեղափոխվել է սույն ծրագիր: Նախատեսվում է Հայաստանի Հանրա-պետության առողջապահության նախարարության քաղաքացիական բուժկազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի համաձայն բուժման ուղեգրել Հայաստանի Հանրապետության պաշտպանության համակարգի զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին (նեղ մասնագիտական ուղղվածություններ ունեցող, ինչպես նաև թանկարժեք տեխնոլոգիաներով բուժվող հիվանդությունների դեպքում):

4. «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է 14,547 դեպքի բուժում 1,867.6 մլն դրամով 2015 թվականի 14,918 դեպքի և 2,593.5 մլն դրամի դիմաց կամ 371 դեպքով և 725.9 մլն դրամով պակաս: Սույն ծրագրից 734.9 մլն դրամ (371 դեպք) տեղափոխվել է «Սրտի վիրահատության ծառայություններ» ծրագիր:

Միևնույն ժամանակ, նշյալ ծրագրի գծով էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ պայմանավորված ծախսերը ավելացել են 9.0 մլն դրամով:

Բացի այդ, ծրագրի շրջանակներում նախատեսվում է պետական հիմնարկների և կազմակերպությունների 88,998 աշխատողների պարտադիր պրոֆիլակտիկ ստուգումներ անցկացնելու նպատակով՝ 712.0 մլն դրամ (յուրաքանչյուր անձի հաշվով նախատեսվում է 8.0 հազ. դրամ)՝ 2015 թվականի չափով:

5. «Տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է տուբերկուլյոզի 5,098 հիվանդանոցային դեպքի բուժում 1,453.3 մլն դրամ գումարով՝ 2015 թվականի նույն դեպքի և 1,425.1 մլն դրամի դիմաց կամ 28.2 մլն դրամով ավելի, որից նվազագույն աշխատավարձի հաշվարկմամբ պայմանավորված՝ 20.1 մլն դրամ, իսկ էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ պայմանավորված՝ 8.1 մլն դրամ:

Ծրագիրը ներառում է նոր հայտնաբերված տուբերկուլյոզով հիվանդների և կրկնակի հիվանդացածների բուժման կազմակերպումը հակատուբերկուլյոզային դիսպանսերներում, տուբերկուլյոզով քրոնիկ հիվանդների երկարատև բժշկական օգնության, սպասարկման և խնամքի ապահովումը հակատուբերկուլյոզային դիսպանսերներում, վերականգնողական բուժման կազմակերպումը հակատուբերկուլյոզային առողջարաններում:

6. «Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 9,542 հիվանդանոցային դեպքի բուժում 1,225.3 մլն դրամ գումարով՝ 2015 թվականի նույն դեպքի և 1,221.0 մլն դրամի դիմաց կամ 4.3 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Ինֆեկցիոն հիվանդությունների բուժումը ներառում է աղիքային, վիրուսային և միջատներով տարածվող ինֆեկցիաներով ախտահարվածների բուժում, որն ունի սոցիալական նշանակություն: Ինֆեկցիոն հիվանդություններով տառապող անձանց բուժօգնության կազմակերպումը իրականացվում է ընդհանուր և մասնագիտացված ինֆեկցիոն հիվանդանոցներում, բաժանմունքներում:

7. «Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 1,035 հիվանդանոցային դեպքի

բուժում 186.4 մլն դրամ գումարով՝ 2015 թվականի նույն դեպքի և 185.7 մլն դրամի դիմաց կամ 0.7 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Ծրագրով նախատեսվում է սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով տառապող անձանց, ինչպես նաև կոնտակտավորների մասնագիտացված բուժկանխարգելիչ օգնության իրականացումը և համապատասխան հսկողության կազմակերպումը մաշկավեներաբանական դիսպանսերներում: Ծրագրի շրջանակներում ներառվել են նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների բժշկական օգնության ծախսերը:

8. «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 6,391 հիվանդանոցային դեպքի բուժում 2,887.1 մլն դրամ գումարով՝ 2015 թվականի նույն դեպքի և 2,613.4 մլն դրամի դիմաց կամ 273.7 մլն դրամով ավելի, որից նվազագույն աշխատավարձի հաշվարկմամբ պայմանավորված՝ 249.0 մլն դրամ, իսկ էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ պայմանավորված՝ 24.7 մլն դրամ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել քրոնիկ հոգեկան հիվանդների խնամք, հիվանդների փորձաքննություն, հարկադիր և սուր վիճակների բուժում և նարկոլոգիական դիսպանսերներում թմրամոլությամբ, թունամոլությամբ, ալկոհոլամոլությամբ տառապող անձանց հիվանդանոցային բուժման ապահովում:

9. «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է հիվանդանոցային 10,912 դեպքի բուժում 1,125.4 մլն դրամ գումարով՝ 2015 թվականի նույն դեպքի և 1,121.5 մլն դրամի դիմաց կամ 3.9 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել չարորակ նորագոյացությունների համալիր, վիրահատական և ճառագայթային բուժում, չարորակ հիվանդների ճառագայթային բուժում ցերեկային ստացիոնարի պայմաններում, ինչպես նաև քիմիաթերապևտիկ և սիմպտոմատիկ բուժում:

10. «Վերականգնողական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 3,794 հիվանդանոցային դեպքի բուժում 615.5 մլն դրամ գումարով՝ 2015 թվականի նույն դեպքի և 613.3 մլն դրամի դիմաց կամ 2.2 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

11. «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային բժշկական օգնություն և փորձաքննություն» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 49,500 հիվանդանոցային դեպքի բուժում 883.4 մլն դրամ գումարով՝ 2015 թվականի նույն դեպքի և 871.1 մլն դրամի դիմաց կամ 12.3 մլն դրամով ավելի, որից նվազագույն աշխատավարձի հաշվարկմամբ

պայմանավորված՝ 9.1 մլն դրամ, իսկ էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ պայմանավորված՝ 3.2 մլն դրամ:

12. «Սրտի վիրահատության ծառայություններ» նոր ծրագրի գծով նախատեսվում է 3,505 դեպքի բուժում 3,085.7 մլն դրամով: Նշված ծրագրում նախատեսվում է համախմբել «Սրտի անհետաձգելի վիրահատության ծառայություններ», «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ», «Հինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ», «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ» և «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրերի շրջանակներում կատարվող սրտի վիրահատությունների և կորոնարոանգիոգրաֆիկ հետազոտությունների ամբողջ ծավալը:

13. «Թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 11 դեպքի բուժում 2.2 մլն դրամով՝ 2015 թվականի չափով:

14. «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 55,062 դեպքի բուժում 6,945.3 մլն դրամ գումարով՝ 2015 թվականի նույն դեպքի և 6,922.0 մլն դրամի դիմաց կամ 23.3 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Ծրագիրն ընդգրկում է ծննդաբերության հետ կապված՝ ծննդաբերության, նախածննդյան և հետծննդյան բարդությունների բուժօգնությունը:

15. «Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 4,597 հիվանդանոցային դեպքի բուժում 374.1 մլն դրամ գումարով՝ 2015 թվականի նույն դեպքի և 372.8 մլն դրամի դիմաց կամ 1.3 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

16. «Անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է 696 դեպքի բուժում 78.6 մլն դրամով՝ 2015 թվականի չափով:

Նշված ծրագիրը նախատեսվում է սոցիալապես անապահով, նպաստառու (30 միավոր և ավելի) ընտանիքների անպտուղ զույգերին՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական ծառայություններ կիրառելու համար՝ յուրաքանչյուր տարի 2 տարիքային խումբ ընդգրկելու ընթացակարգով: Անվճար բուժօգնության իրավունք ունեցող ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված 36 և ավելի միավոր ունեցող նպաստառու կանանց համար այն իրականացվում է անվճար, իսկ 30-35 միավոր ունեցողների համար՝ 50 տոկոս զեղչով:

17. «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 55,330 հիվանդանոցային դեպքի բուժում 8,043.1 մլն դրամ գումարով՝ 2015 թվականի 42,500 դեպքի և 7,570.9 մլն դրամի դիմաց կամ 12,830 դեպքով և 472.2 մլն դրամով ավելի, որից 350.0 մլն դրամ (3,271 դեպք) տեղափոխվել է «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից: «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրից սույն ծրագիր է տեղափոխվել 286.3 մլն դրամ:

էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ պայմանավորված ծախսերն աճել են 25.9 մլն դրամով:

Միևնույն ժամանակ, նշյալ ծրագրից 190.0 մլն դրամ (146 դեպք) տեղափոխվել է «Սրտի վիրահատության ծառայություններ» ծրագիր:

Ծրագրի գծով նախատեսվում է մինչև 7 տարեկան երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության իրականացում՝ անկախ երեխայի հիվանդության ախտորոշումից և սոցիալական կարգավիճակից, սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված 7-18 տարեկան երեխաների բժշկական օգնության իրականացում, ինչպես նաև, մինչև 18 տարեկան երեխաների, հիվանդանոցային բժշկական օգնություն պահանջող անհետաձգելի վիճակների և սուր հիվանդությունների դեպքերում, բուժօգնության իրականացում:

Հանրային առողջապահական ծառայություններ

Հանրային առողջապահական ծառայությունների իրականացմանն ուղղվող ֆինանսական միջոցները կապահովեն Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարա-համաճարակային անվտանգությունը, մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության բացառումը, մարդու և նրա ապագա սերունդների կենսունակության համար բարենպաստ պայմանների ապահովումը:

Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի նախագծով «Հանրային առողջապահական ծառայություններ» խմբի գծով նախատեսվում է 5,605.5 մլն դրամ: Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերի աճը կազմում է 168.5 մլն դրամ կամ 3.1 տոկոս: Հայաստանի Հանրապետության զինված ուժերում հիգիենիկ, հակահամաճարակային և կանխարգելիչ ծառայությունների կազմակերպման նպատակով «Արտահիվանդանոցային ծառայություններ» խմբի «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից 157.2 մլն դրամ տեղափոխվել է «Հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայություններ» ծրագիր:

Էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ պայմանավորված ծախսերն աճել են 10.3 մլն դրամով, իսկ 2015թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացումը տարեկան կտրվածքով հաշվարկմամբ պայմանավորված՝ 1.0 մլն դրամով:

Հանրային առողջապահական ծառայությունների շրջանակներում նախատեսվում է 5 ծրագրերի իրականացում: Այսպես.

1. «Հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 157.2 մլն դրամ (տեղափոխվել է «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից):

Ծրագրով նախատեսվում է զորամասերի սանիտարահիգիենիկ իրավիճակի մշտական հսկողության և կայուն համաճարակային իրավիճակի ապահովման նպատակով մանրեաբանական և մակաբուծաբանական հետազոտությունների իրականացում, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում հիգիենիկ, հակահամաճարակային և կանխարգելիչ ծառայությունների կազմակերպման նպատակով բժշկական և լաբորատոր քննության նյութերի ձեռքբերում և այլն:

2. «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 3,230.0 մլն դրամ՝ 2015 թվականի 3,220.9 մլն դրամի դիմաց կամ 9.1 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել համաճարակաբանական հետազոտություններ վարակային հիվանդությունների օջախներում, մանրէաբանական հետազոտությունների իրականացում, վարակիչ և ոչ վարակիչ զանգվածային հիվանդությունների, թունավորումների հաշվառում, համաճարակների, բռնկումների, արտակարգ իրավիճակների ժամանակ հատուկ հակահամաճարակային միջոցառումների իրականացում, մալարիայի դեմ պայքարի և կանխարգելման միջոցառումների իրականացում էպիզոոտոլոգիական հետազոտություն հանրապետության տարածքում ժանտախտի, տուլարեմիայի և այլ բնական օջախային վարակների էպիզոոտիաները հայտնաբերելու և մարդկանց մեջ հիվանդացությունը ժամանակին կանխելու նպատակով և այլն:

3. Իմունականխարգելման ազգային ծրագիրը, որի գծով նախատեսվում է 1,890.4 մլն դրամ՝ 2015 թվականի չափով:

Իմունականխարգելման ազգային ծրագրի շրջանակներում նախատեսվում է ինչպես ազգային օրացույցում ընդգրկված պլանային պատվաստումների, այնպես էլ նախազորակոչիկների և զորակոչիկների պատվաստումների ժամանակին և որակով իրականացումը:

4. «Վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 75.0 մլն դրամ՝ 2015 թվականի 74.8 մլն դրամի դիմաց կամ 0.2 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ավելի քան 4.7 հազար վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանում:

5. «Արյան հավաքագրման ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 252.9 մլն դրամ 2015 թվականի 251.0 մլն դրամի դիմաց կամ 1.9 մլն դրամով ավելի, որից նվազագույն աշխատավարձի հաշվարկմամբ պայմանավորված՝ 1.0 մլն դրամ, իսկ էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ պայմանավորված՝ 0.9 մլն դրամ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է արյան հավաքագրման և պաշարման հետազոտություններ, արյան հիվանդություններով տառապող հիվանդների դիսպանսեր հսկողության իրականացում, հանրապետության արյան ծառայություններին կազմակերպչամեթոդական օգնության ցուցաբերում և այլ հետազոտություններ:

Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր

«Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր» դասի գծով Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 9,087.9 մլն դրամ: Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերի աճը կազմում է 2,630.7 մլն դրամ (այդ թվում վարկային և դրամաշնորհային ծրագրերի գծով՝ 2,438.0 մլն դրամ): Միաժամանակ, առանց հաշվի առնելու վարկային և դրամաշնորհային ծրագրերը, դասի գծով ծախսերի աճը 2016 թվականին 2015 թվականի նկատմամբ կազմում է 192.7 մլն դրամ:

«Դատաբժշկական և գենետիկ ծառայություններ» ծրագրի գծով 2015թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացումը տարեկան կտրվածքով հաշվարկմամբ պայմանավորված ծախսերն աճել են 2.5 մլն դրամով:

«Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման ծառայություններ» ծրագրի գծով էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ պայմանավորված ծախսերն աճել են 0.2 մլն դրամով:

Հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումների պահպանման և շահագործման նպատակով «Արտահիվանդանոցային ծառայություններ» խմբի «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից 40.0 մլն դրամ տեղափոխվել է «Հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումների պահպանում և շահագործում» ծրագիր:

«Առողջապահական օբյեկտների շինարարություն» ծրագրի գծով Վանաձորի բժշկական կենտրոնի շինարարական աշխատանքները առաջանցիկ տեմպերով իրականացնելու նպատակով ծախսերն աճել են 150.0 մլն դրամով:

Առողջապահական հարակից ծառայությունների և ծրագրերի շրջանակներում նախատեսվում է 23 ծրագրերի (այդ թվում 7 վարկային և դրամաշնորհային ծրագրերի) իրականացում: Այսպես.

1. «Դատաբժշկական և գենետիկ ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 390.0 մլն դրամ 2015 թվականի 387.5 մլն դրամի դիմաց կամ 2.5 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է տարեկան աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ:

«Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունն իր 11 մարզային բաժիններով սպասարկում է ՀՀ դատախազությանը, ՀՀ արդարադատության և ՀՀ պաշտպանության նախարարություններին, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը և ՀՀ ոստիկանությանը, իրականացնում է դիակների, կենդանի անձանց, իրեղեն ապացույցների, դատաքիմիական, դատաբժշկաքրեագիտական, դատագենետիկ, հյուսվածքաբանական և դատակենսաբանական փորձաքննություններ, ինչպես նաև դիակների արտաշիրիմումներ:

2. «Պաթանատոմիական ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 53.2 մլն դրամ՝ 2015 թվականի չափով:

Ծրագրի միջոցով կիրականացվի հիվանդությունների ճշտված ախտորոշում՝ սեկցիոն, վիրահատական և բիոպսիոն նյութերի հետազոտության միջոցով, մանկական դիակների դիահերձում, մահվան պատճառների ճշտում:

3. «Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհածախսի փոխհատուցում» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 40.4 մլն դրամ՝ 2015 թվականի չափով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 111 ուղեգրվող հիվանդի ճանապարհածախսի փոխհատուցման գումար (նախատեսվում է նաև ուղեկցողի ճանապարհածախսը):

4. «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 514.6 մլն դրամ՝ 2015 թվականի չափով:

Ծրագրի գծով նախատեսվում է յուրահատուկ ու բացառիկ բուժսարքավորումներով և տեխնոլոգիաներով անվճար ախտորոշիչ հետազոտությունների իրականացում:

5. «Դեղաքաղաքականությունից բխող փորձագիտական և մեթոդաբանական ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 20.8 մլն դրամ՝ 2015 թվականի չափով:

Ծրագրի շրջանակներում կիրականացվի դեղագործական քաղաքականությանը վերաբերող աշխատանքներ, հիմնական և հսկվող դեղերի ցուցակների հրապարակում և այլն:

6. «Հաշմանդամ և կարիքավոր երեխաներին օրթեզներով և կորսետներով ապահովման ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 81.8 մլն դրամ՝ 2015 թվականի չափով:

7. «Առողջ ապրելակերպի խթանման և հանրային իրազեկման ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 90.0 մլն դրամ՝ 2015 թվականի չափով:

Ծրագիրը ընդգրկում է ամենամյա պետական նպատակային ծրագրերի շրջանակներում «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ կառավարության որոշման ու դրանից բխող ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված և ընդունված նորմատիվային ակտերի լուսաբանման աշխատանքներ, բնակչության առողջության պահպանման, բուժկանխարգելման, առողջապահության ոլորտի կառավարման հարցերի վերաբերյալ մեթոդական ձեռնարկների մշակում և տպագրում, օրգանիզմի կոփման և առողջ ապրելակերպի քարոզչության և այլ աշխատանքներ:

8. «Բժշկական օգնության մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 236.5 մլն դրամ՝ 2015 թվականի չափով:

Ծրագրի գծով նախատեսվում է «Ակադեմիկոս Ս. Խ. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից բուժօգնության որակի բարելավմանն ուղղված կլինիկական ու բժշկատնտեսագիտական ստանդարտների մշակման, առողջապահության ոլորտի նորմատիվային բազայի բարելավմանն ուղղված աշխատանքներ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև առողջապահության բնագավառի մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության ծառայությունների ցուցաբերում և այլն:

9. «Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման աշխատանքներ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 59.9 մլն դրամ 2015 թվականի 59.7 մլն դրամի դիմաց կամ 0.2 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մարդասիրական օգնության կարգով ստացվող, հսկվող դեղերի և դեղագործական արտադրանքի փաստաթղթային և լաբորատորային դեղագրքային փորձաքննության ու եզրակացության իրականացում:

10. «Երեխաների առողջ սնուցում» հանրային իրազեկման ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 10.2 մլն դրամ՝ 2015 թվականի չափով:

Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանում լայն տարածում գտած երեխաների թերսնուցման խնդիրը՝ իրազեկման միջոցով (գրքույկների, բուկլետների և պաստառների տպագրման, սննդի քարոզչության հետ կապված հաղորդաշարերի պատրաստման, նկարահանման և հեռարձակման միջոցով):

11. «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի համակարգման ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 62.1 մլն դրամ՝ 2015 թվականի չափով:

Ծրագրի նպատակն է բնակչությանը պահպանել տուբերկուլյոզի տարածման վտանգից՝ ապահովել հիվանդության վաղ հայտնաբերումը: Ծրագրի շրջանակներում «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը իրականացնում է ծրագրի աշխատանքների կազմակերպման, այդ թվում՝ մոնիտորինգի, եռամսյակային վիճակագրական տվյալների հավաքագրում, հակատուբերկուլյոզային բուժհաստատություններում տուբերկուլյոզի ծառայության կազմակերպման և ԱՀԿ-ի կողմից մշակված ստանդարտ ընթացակարգերի կիրառման ֆունկցիաներ, ստուգայցերի հաճախակի կազմակերպում, հիվանդներին սոցիալ-հոգեբանական աջակցության ցուցաբերում և այլն:

12. «Բժիշկ-մասնագետների ժամանակավոր ուղեգրման միջոցով ՀՀ մարզային առողջապահական կազմակերպություններում բժշկական ծառայությունների մատուցում» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 40.2 մլն դրամ՝ 2015 թվականի չափով:

13. «Արտասահմանյան առաջավոր կլինիկաների փորձի ուսումնասիրման նպատակով բժիշկների գործուղումներ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 36.0 մլն դրամ՝ 2015 թվականի չափով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերապատրաստման գործուղել սրտաբաններ, ուռուցքաբաններ, արյունաբաններ և ճառագայթային բժշկության մասնագետներ:

14. «Հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումների պահպանում և շահագործում» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 40.0 մլն դրամ (տեղափոխվել է «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից):

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումների ընթացիկ նորոգում:

15. «Արտակարգ իրավիճակներում բուժօգնության ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 10.7 մլն դրամ՝ 2015 թվականի չափով:

16. «Առողջապահական օբյեկտների շինարարություն» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 1,100.0 մլն դրամ՝ 2015 թվականի 950.0 մլն դրամի դիմաց կամ 150.0 մլն դրամով ավելի:

Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)

Դասը ընդգրկում է «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարությունների աշխատակազմերի մասով) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն» ծրագիրը, որի գծով 2016 թվականին նախատեսվում է 1,858.1 մլն դրամ 2015 թվականի 1,952.1 մլն դրամի

դիմաց (նշված ծրագրի բացատրագիրը տես պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերին վերաբերող հատվածում):

Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում Դասը ընդգրկում է «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարների աշխատակազմերի մասով) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն» ծրագիրը, որի գծով 2016 թվականին նախատեսվում է 90.9 մլն դրամ 2015 թվականի 90.6 մլն դրամի դիմաց:

Միաժամանակ առողջապահության ոլորտում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր

Ծրագրի նպատակն է 2015 թվականին մեկնարկած նոր ամբուլատորիաների (ՀՀ Արարատի մարզի Մխչյան և Լանջազատ, ՀՀ Լոռու մարզի Ուռուտ, ՀՀ Վայոց ձորի մարզի Շատին և ՀՀ Արագածոտնի մարզի Բյուրական) շինարարական աշխատանքների ավարտը, բժշկական սարքավորումների, գրասենյակային և ուսումնական կահույքի ձեռքբերումը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 54,6 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 40,9 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 13.7 մլն. դրամ:

2. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր

Ծրագրի նպատակն է հեմատոլոգիական և օնկոլոգիական ծառայությունների արդյունավետության բարձրացումը, որի ապահովման համար ծրագրով նախատեսվում է.

ա) ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման և արդյունավետ բուժմանն ուղղված սքրինինգային, ինչպես նաև ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների վերաբերյալ բնակչության իրազեկման ծրագրերի իրականացում,

բ) ուռուցքաբանական ծառայությունների արդիականացում, ճառագայթային բուժման կենտրոնի շինարարություն և հագեցում անհրաժեշտ բժշկական սարքավորումներով, պարագաներով և կահույքով,

գ) Երևան քաղաքի Ռ.Հ.Յոլյանի անվան արյունաբանության կենտրոնի արդիականացում՝ կենտրոնի հիմնական բուժական և պոլիկլինիկական մասնաշենքերի հիմնանորոգում, ժամանակակից բժշկական սարքավորումներով հագեցում, ոսկրածուծի փոխպատվաստման և բարձր դոզաներով քիմիոթերապիայի բաժանմունքի հիմնում,

դ) մարզային բժշկական կենտրոնների արդիականացում՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատի ԲԿ հիմնանորոգման և ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի ԲԿ նոր շենքի կառուցման ՆՆՓ մշակում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 3,809.9 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,379.3 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 430.6 մլն. դրամ:

3. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման դրամաշնորհային ծրագիր

Դրամաշնորհային ծրագիրն ուղղված է հիմնական վարկային ծրագրի աջակցմանը, որով նախատեսվում է.

ա) ոչ վարակիչ հիվանդությունների առկա միտումների վրա հիմնված ծրագրի հզորությունների գնահատում և մշակում,

բ) արդյունքների վրա հիմնված ֆինանսավորման առկա սխեմայի վերանայում,

գ) աշխատաժողովների կազմակերպում և ուսումնական նյութերի պատրաստում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է դրամաշնորհային միջոցներ՝ 258.5 մլն. դրամ:

4. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող <<Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի շրջանակներում Առողջապահության կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման ծրագրի նախապատրաստման համար>> դրամաշնորհային ծրագիր

Դրամաշնորհային ծրագիրն ուղղված է հիվանդությունների կանխարգելման և վերահսկման շրջանակներում հզորությունների գնահատմանը և արդյունքային, կատարողական սխեմաների վերանայմանը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 7,2 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 6,0 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 1,2 մլն. դրամ:

5. ԱՄՆ Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կենտրոնի աջակցությամբ իրականացվող «Սեզոնային գրիպի համաճարակաբանական ցանցի հիմնում և արձագանքում» դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի նպատակն է Հայաստանում սեզոնային գրիպի համաճարակաբանական հսկողության ցանցի հիմնումը, լաբորատոր ախտորոշման, դեպի արագ և ժամանակին հայտնաբերման և հսկողության կարողությունների հզորացումը, բուժօգնության և ծառայությունների որակի մատչելիության բարձրացումը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է դրամաշնորհային միջոցներ՝ 99.3 մլն. դրամ:

6. Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ուժեղացում» դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի նպատակն է տուբերկուլոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրումը, հանրության իրազեկումը, ծրագրի շրջանակներում բշժկական անձնակազմի կրթական միջոցառումների իրականացումը, տուբերկուլոզով ախտահարված հիվանդների հետ շփում ունեցող անձանց շրջանում վարակի վերահսկումը և կանխարգելումը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 1,337.7 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,232.2 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 105.5 մլն. դրամ:

7. Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի նպատակն է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ խորհրդատվության, հետազոտության կետերին և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ կատարող լաբորատորիաներին տեխնիկական աջակցության և մեթոդական օգնության տրամադրումը, սեմինար-վարժանքների կազմակերպումը, տեղեկատվական համակարգի հզորացումը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մոնիտորինգի և գնահատման ազգային միասնական համակարգի ստեղծումը և համաճարակաբանական հետազոտությունների իրականացումը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 734.6 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 658.7 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 75.9 մլն. դրամ:

Առողջապահության բնագավառի ծախսերի համեմատությունը՝ 2014 թվականի փաստացի, 2015 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 10 աղյուսակում:

Առողջապահական բնագավառի պետական ոչ առևտրային կազմակերպությունների 2016 թվականի ֆինանսատնտեսագիտական գործունեության ծրագրային ցուցանիշներն արտացոլված են սույն բացատրագրի N 20-1.1, N 20-1.2 և N 20-1.3 աղյուսակներում:

2016 թվականի Առողջապահության պետական նպատակային ծրագիրը արտացոլվում է սույն բացատրագրի N 2 հավելվածում:

<u>Հանգստի, մշակույթի և կրոնի բնագավառի</u> բնագավառի ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված հատկացումները կազմում են **26,900.8** մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված 28,282.0 մլն դրամի դիմաց, կամ ծախսերը ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի (այսուհետ՝ 2015 թվականի) նկատմամբ նվազել են 1,381.2 մլն դրամով (4.9 տոկոսով), որը հիմնականում պայմանավորված է «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների իրականացում» ծրագրի ավարտմամբ:

Պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերը, ինչպես և 2015 թվականին, կազմում են 1,421.0 մլն դրամ (բացատրությունը ներկայացված է պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերի վերաբերյալ բացատրագրի մասում):

Հիմնանորոգման և շինարարության համար նախատեսված հատկացումները կազմում են 1,419.5 մլն դրամ՝ 2015 թվականի 970.0 մլն դրամի դիմաց: Ծախսերն աճել են 449.5 մլն դրամով, կամ 46.3 տոկոսով:

Բնագավառի աշխատողների աշխատավարձերի աճը՝ 55.5 մլն դրամով, պայմանավորված է 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացումը տարեկան կտրվածքով նախատեսմամբ, որից. հանգստի և սպորտի ծառայությունների գծով՝ 1.9 մլն դրամով, մշակութային ծառայությունների գծով՝ 38.8 մլն դրամով, ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների գծով՝ 14.6 մլն դրամով, երիտասարդական ծրագրերի գծով՝ 0.2 մլն դրամով:

Էլեկտրաէներգիայի ծախսերի աճը՝ 75.6 մլն դրամով, պայմանավորված է սակագնի բարձրացմամբ, որից. հանգստի և սպորտի ծառայությունների գծով՝ 0.4 մլն դրամով, մշակութային ծառայությունների գծով՝ 61.0 մլն դրամով, ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների գծով՝ 13.6 մլն դրամով, երիտասարդական ծրագրերի գծով՝ 0.6 մլն դրամով:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված հատկացումները ներկայացված են ներքոհիշյալ խմբերում ընդգրկված սպորտային, մշակութային, ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների, երիտասարդական ծրագրերի ծախսերի տեսքով:

<u>Հանգստի և սպորտի</u> ծառայությունների համար նախատեսված հատկացումները նպատակ ունեն ապահովել ազգաբնակչության առողջության ամրապնդումը, անհատի ներդաշնակ զարգացումը, աշխատունակության բարձրացումն ու երկարակեցության ապահովումը, բարձրա-

կարգ մարզիկների պատրաստումը, միջազգային մրցասպարեզներում Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի և մարզիկների մասնակցության ապահովումը:

Հանգստի և սպորտի ծառայությունների համար նախատեսված են **1,838.2** մլն դրամ հատկացումներ՝ 2015 թվականի 1,848.8 մլն դրամի դիմաց, որոնք ուղղվելու են օլիմպիական խաղերին, միջազգային տարբեր մակարդակի միջոցառումներին, ուսումնամարզական հավաքներին, հանրապետական առաջնություններին Հայաստանի հավաքական թիմերի մասնակցության ապահովման նպատակով ՀՀ մարզական ֆեդերացիաներին աջակցմանը (32 մարզական ֆեդերացիաներ), մասսայական սպորտի զարգացմանը, Աշխարհի, Եվրոպայի առաջնություններում հաղթողների և մրցանակակիրների պարգևատրման ծախսերի իրականացմանը, հավաքական թիմերի ավագ մարզիչների վարձատրությանը և աշխարհի չեմպիոններին թոշակի հատկացմանը, շախմատիստների պատրաստմանը («Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամ), հաշմանդամային և նավամոդելային սպորտին աջակցմանը:

Հանգստի և սպորտի ծառայությունների գծով ծախսերը նվազել են՝ 10.6 մլն դրամով, կամ 0.6 տոկոսով, որը պայմանավորված է.

- Ծրագրերի ավարտմամբ՝ 175.0 մլն դրամով (Հայաստանում աշխարհի շախմատի թիմային առաջնության և Երևանում շախմատի Եվրոպայի համալսարանական առաջնության անցկացման ծախսեր, համապատասխանաբար՝ 160.0 և 15.0 մլն դրամ);

- Սպորտային միջոցառումների ծախսերի նվազմամբ՝ 62.7 մլն դրամով, կապված միջոցառումների անցկացման ժամանակացույցի հետ (Եվրոպայի երիտասարդության օլիմպիական փառատոններին մասնակցության ծախսերի նվազում՝ 44.0 մլն դրամ, ուսանողական մարզական միջոցառումների շրջանակներում Համաշխարհային ունիվերսիադայի անցկացման ծախսերի նվազում՝ 18.7 մլն դրամ, նշված միջոցառումները անց են կացվում 2 տարին մեկ անգամ);

- Երևանում կայանալիք միջազգային մարաթոնյան վազքի անցկացման ծախսերի նվազմամբ՝ 0.3 մլն դրամով, կապված ծախսերի ճշտմամբ (համաձայն հայտի):

Միաժամանակ ծախսերը աճել են 227.4 մլն դրամով, որը պայմանավորված է.

- աշխատավարձի ծախսերի աճով՝ 1.9 մլն դրամով;

- էլեկտրաէներգիայի ծախսերի աճով՝ 0.4 մլն դրամով;

- միջոցառումների ծախսերի աճով՝ 201.4 մլն դրամով, կապված միջոցառումների անցկացման ժամանակացույցի հետ (Ռիո դե Ժանեյրոյի 31-րդ Օլիմպիական և պարալիմպիկ խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության նախապատրաստման և մասնակցության ապահովման ծախսեր, համապատասխանաբար՝ 171.0 և 6.4 մլն դրամով, 2016 թվականի Լիլլեհամերի երկրորդ ձմեռային պատանեկան օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական

պատվիրակության մասնակցության ապահովման ծախսեր՝ 24.0 մլն դրամ, նշված միջոցառումները անց են կացվում 4 տարին մեկ անգամ);

- տարադրամի և տարադրամով արտահայտված գումարի փոփոխությամբ պայմանավորված ծախսերի աճով՝ 0.6 մլն դրամով (Եվրախորհրդի սպորտի մասին համաձայնագրին անդամակցության ծախսեր՝ 0.1 մլն դրամով, Հակադոպինգային համաշխարհային գործակալությանը անդամակցության ծախսեր՝ 0.5 մլն դրամով);

- «2016 թվականին Թեհրանում կայանալիք խուլերի ըմբշամարտի աշխարհի առաջնությանը Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովում» և «2016 թվականին Երևանում խուլերի շախմատի աշխարհի առաջնության անցկացման ապահովում» ծրագրերի նախատեսմամբ, համապատասխանաբար՝ 11.9 և 11.2 մլն դրամի չափով:

Հանգստի և սպորտի ոլորտի 86 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2016 թվականին կկազմի 100.1 հազ. դրամ, 2015 թվականի՝ 98.3 հազ. դրամի դիմաց:

<u>Մշակութային ծառայությունների</u> համար 2016 թվականին նախատեսված են **14,211.8** մլն դրամ հատկացումներ՝ 2015 թվականի 15,539.8 մլն դրամի դիմաց, որոնք կուղղվեն գրադարանների, թանգարանների և ցուցասրահների, մշակույթի տների, ակումբների, կենտրոնների, այլ մշակութային կազմակերպությունների, թատերահամերգային կազմակերպությունների և կինեմատոգրաֆիայի գծով ծառայությունների, մշակութային միջոցառումների, Հայաստան-սփյուռք գործակցության ծրագրերի իրականացմանը, հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնմանը և պահպանմանը և մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության աշխատանքների իրականացմանը:

Մշակութային ծառայությունների գծով ծախսերը նվազել են 1,328.0 մլն դրամով, կամ 8.5 տոկոսով:

Գրադարանների գծով 2016 թվականին նախատեսված են 1,772.5 մլն դրամ հատկացումներ՝ 2015 թվականի 1,761.1 մլն դրամի դիմաց, որոնք ուղղվելու են գրադարանային ծառայությունների (16 գրադարաններ, որից 10-ը մարզկենտրոններում), հրատարակությունների գրանցման, հաշվառման և մատենագիտական ծառայությունների իրականացմանը (Հայաստանի ազգային գրապալատ), ՀՀ հանրային գրադարանների նյութատեխնիկական բազայի զարգացմանը և գրադարանավարների վերապատրաստմանը:

Գրադարանային ծառայությունների իրականացմանն ուղղված հատկացումները նպատակ ունեն ապահովել գրադարանային հավաքածուների պահպանությունը, մշակութային ժառանգության թվանշայնացումը, տեղեկատվական շտեմարանների և միացյալ ավտոմատացված համակարգերի շարունակական զարգացումը, համալրման անընդհատության և օգտագործման

մատչելիության ապահովումը, տպագիր նյութերի ազգային անձեռնմխելի ֆոնդերի վերաբերյալ մատենագիտության, կենսամատենագիտության, տեղեկատվական ցանկերի կազմումն ու հրապարակումը:

Գրադարանների գծով ծախսերի աճը 11.4 մլն դրամով, կամ 0.6 տոկոսով պայմանավորված է.

- աշխատավարձի ծախսերի աճով՝ 4.3 մլն դրամով;
- էլեկտրաէներգիայի ծախսերի աճով՝ 8.8 մլն դրամով:

Միաժամանակ, գործուղման ծախսերը նվազել են՝ 1.7 մլն դրամով (Հայաստանի ազգային գրապալատի և ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի արտասահմանյան գործուղման ծախսեր, համապատասխանաբար՝ 1.1 և 0.6 մլն դրամ):

Գրադարանների 1151 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2016 թվականին կկազմի 109.1 հազ. դրամ, 2015 թվականի՝ 108.8 հազ. դրամի դիմաց:

Թանգարանների և ցուցասրահների գծով 2016 թվականին նախատեսված են **2,481.7** մլն դրամ հատկացումներ՝ 2015 թվականի 2,248.4 մլն դրամի դիմաց, որոնք ուղղվելու են թանգարանային ծառայությունների իրականացմանը (37 թանգարաններ, որոնցից 8-ը՝ մարզպետարանների ենթակայության) և համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրմանը (Երևանի 4 թանգարաններ), մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության աշխատանքների իրականացմանը:

Թանգարանային ծառայությունների իրականացմանն ուղղված հատկացումները նպատակ ունեն ապահովել մշակութային արժեքների և հավաքածուների հաշվառումը, գիտական ուսումնասիրությունը, համալրումը, պահպանությունը, պաշտպանությունը, հանրահռչակումը, ինչպես նաև մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի ստեղծումը:

Թանգարանների և ցուցասրահների գծով ծախսերի աճը 233.3 մլն դրամով, կամ 10.4 տոկոսով, պայմանավորված է.

- աշխատավարձի ծախսերի աճով՝ 12.8 մլն դրամով;
- էլեկտրաէներգիայի ծախսերի աճով՝ 19.8 մլն դրամով;
- Հայաստանի ազգային պատկերասրահի ծախսերի աճով՝ 12.2 մլն դրամով՝ ի հաշիվ «Մշակութային արժեքների փորձաքննության ծառայություններ» և «Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ» ծրագրերի հատկացումների (թանգարանային մարքեթինգի զարգացման նպատակով մարքեթինգային և արտաքին կապերի բաժնի ստեղծում և մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի գործարկման նպատակով մասնագետների վերապատրաստում);

- մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության ծախսերի նախատեսմամբ՝ 195.1 մլն դրամի չափով:

Միաժամանակ, ծախսերը նվազել են՝ 6.6 մլն դրամով, որը պայմանավորված է.

- Երևանի թանգարանների այլ ծառայությունների ձեռքբերման ծախսերի նվազմամբ՝ 5.0 մլն դրամով;

- Հայաստանի բնության պետական թանգարանի գծով մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի ստեղծման հետ կապված ներդրումների ավարտմամբ՝ 1.6 մլն դրամ:

Թանգարանների և ցուցասրահների 1543 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2016 թվականին կկազմի 99.8 հազ. դրամ, 2015 թվականի՝ 99.2 հազ. դրամի դիմաց:

Մշակույթի տների, ակումբների, կենտրոնների գծով 2016 թվականին նախատեսված են **204.5** մլն դրամ հատկացումներ՝ 2015 թվականի 316.6 մլն դրամի դիմաց, որոնք ուղղվելու են մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպմանը (4 կազմակերպություն, որից 3-ը մարզպետարանների ենթակայության), մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության աշխատանքների իրականացմանը**:**

Մշակույթի տների, ակումբների, կենտրոնների գծով ծախսերի նվազումը՝ 112.1 մլն դրամով, կամ 35.4 տոկոսով պայմանավորված է.

- մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության ծախսերի նվազմամբ՝ 112.6 մլն դրամով:

Միաժամանակ, ծախսերը աճել են՝ 0.5 մլն դրամով, որը պայմանավորված է.

- աշխատավարձի ծախսերի աճով՝ 0.3 մլն դրամով;

- էլեկտրաէներգիայի ծախսերի աճով՝ 0.2 մլն դրամով:

Մշակույթի տների, ակումբների, կենտրոնների 35 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2016 թվականին կկազմի 100.2 հազ. դրամ, 2015 թվականի՝ 99.6 հազ. դրամի դիմաց:

Այլ մշակութային կազմակերպությունների գծով 2016 թվականին նախատեսված են 854.5 մլն դրամ հատկացումներ՝ 2015 թվականի 845.6 մլն դրամի դիմաց, որոնք ուղղվելու են արխիվային, մշակութային արժեքների փորձաքննության ծառայությունների, Հայաստան-սփյուռք գործակցության ծրագրերի իրականացմանը (3 կազմակերպություն), համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրմանը (Երևանի կենդանաբանական այգի):

Այլ մշակութային կազմակերպությունների գծով ծախսերի աճը՝ 8.9 մլն դրամով, կամ 1.1 տոկոսով, պայմանավորված է.

- աշխատավարձի ծախսերի աճով՝ 1.0 մլն դրամով;

- էլեկտրաէներգիայի ծախսերի աճով՝ 10.2 մլն դրամով:

Միաժամանակ, «Մշակութային արժեքների փորձաքննության ծառայություններ» ծրագրի գծով ծախսերը նվազել են 2.3 մլն դրամով, պայմանավորված «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների վերապատրաստման ծախսերի վերաբաշխմամբ «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» ծրագիր:

Այլ մշակութային կազմակերպությունների 469 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2016 թվականին կկազմի 110.3 հազ. դրամ, 2015 թվականի՝ 110.1 հազ. դրամի դիմաց:

Արվեստի գծով 2016 թվականին նախատեսված են **7,766.3** մլն դրամ հատկացումներ՝ 2015 թվականի 9,236.8 մլն դրամի դիմաց, որոնք ուղղվելու են օպերային և բալետային արվեստի (Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոն), ազգային ակադեմիական թատերարվեստի (Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն), թատերական ներկայացումների (16 կազմակերպություն), երաժշտարվեստի և պարարվեստի ներկայացումների (14 կազմակերպություն), ազգային ակադեմիական խմբերգային համերգների իրականացմանը (Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ), օտարերկրյա պետություններում հայ մշակույթի զարգացմանն աջակցմանը, տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացմանը, «ժողովրդական» պատվավոր կոչումների արժանացած անձանց պատվովճարի վճարմանը և համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրմանը (Երևանի երեք թատրոններ), մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության աշխատանքների իրականացմանը:

Արվեստի գծով ծախսերը նվազել են 1,470.5 մլն դրամով, կամ 15.9 տոկոսով, որը պայմանավորված է.

- «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների իրականացում» ծրագրի ավարտմամբ՝ 2.000.0 մլն դրամի չափով:

- «Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ» ծրագրի գծով ծախսերի նվազմամբ՝ 9.9 մլն դրամով, պայմանավորված հատկացումների վերաբաշխմամբ «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» ծրագիր:

Միաժամանակ ծախսերը աճել են՝ 539.4 մլն դրամով, որը պայմանավորված է.

- աշխատավարձի ծախսերի աճով՝ 20.1 մլն դրամով;

- էլեկտրաէներգիայի ծախսերի աճով՝ 21.3 մլն դրամով;

- «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրի ծախսերի աճով՝ 110.6 մլն դրամով («Լ.Ենգիբարյանի անվան մնջախաղի միջազգային փառատոն»-ի ծախսերի աճ՝ 8.0 մլն

դրամով, «Եվրոպական կինոյի աջակցության եվրոպական հիմնադրամ» (Եվրիմաժես) կազմակերպությանն Հայաստանի անդամակցության ծախսերի նախատեսում՝ 62.6 մլն դրամի չափով և «Սփյուռք» ամառային դպրոցի կազմակերպում» միջոցառման ծախսերի աճ՝ 40.0 մլն դրամով);

- «Իմ Հայաստան» համահայկական փառատոնը երկու տարին մեկ անգամ իրականացմամբ՝ 84.0 մլն դրամի չափով;

- «Աջակցություն հայ մշակույթի միջազգային կենտրոններին» ծրագրի ծախսերի աճով՝ 0.4 մլն դրամով, կապված տարադրամի փոփոխության հետ;

- «Ակունք» ազգագրական համույթը ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության «Ժողովրդական երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կազմում ընդգրկմամբ՝ 21.0 մլն դրամի չափով;

- մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության ծախսերի աճով՝ 282.0 մլն դրամով:

Արվեստի ոլորտի 3662 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2016 թվականին կկազմի 111.8 հազ. դրամ, 2015 թվականի՝ 111.7 հազ. դրամի դիմաց:

Կինեմատոգրաֆիային ուղղված հատկացումները նպատակ ունեն ապահովել միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ հայրենական կինոարտադրության, մանուկների և պատանիների համար հայկական կինոնկարների արտադրության և հասարակական-քաղաքական իրադարձությունների, կինոտարեգրության վավերագրման խթանումը:

Կինեմատոգրաֆիայի գծով 2016 թվականի համար նախատեսված են **658.7** մլն դրամ հատկացումներ՝ 2015 թվականի 658.0 մլն դրամի դիմաց, որոնք ուղղվելու են կինոարտադրության կազմակերպմանը (17 խաղարկային, 5 մուլտիպլիկացիոն, 10 վավերագրական ֆիլմեր), կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանմանն ու թվայնացմանը, ազգային և փաստավավերագրական կինոծրագրերի իրականացմանը («Հայաստանի ազգային կինոկենտրոն», «Փաստավավերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիա», «Ռոբերտ Սահակյանցի անվան անիմացիոն արվեստանոց»):

Կինեմատոգրաֆիայի գծով ծախսերի աճը՝ 0.7 մլն դրամով, կամ 0.1 տոկոսով, պայմանավորված է.

- աշխատավարձի ծախսերի աճով՝ 0.2 մլն դրամով;

- էլեկտրաէներգիայի ծախսերի աճով՝ 0.5 մլն դրամով:

Կինեմատոգրաֆիայի ոլորտի 109 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2016 թվականին կկազմի 127.7 հազ. դրամ, 2015 թվականի՝ 126.9 հազ. դրամի դիմաց:

Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման գծով 2016 թվականի համար նախատեսված են **473.4** մլն դրամ հատկացումներ՝ 2015 թվականի 473.1 մլն դրամի դիմաց, որոնք ուղղվելու են պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական աշխատանքների, հուշարձանների տեխնիկական վիճակի մոնիտորինգի իրականացմանը («Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» և «Հուշարձանների վերականգնման կենտրոն»), հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների իրականացմանը («Հուշարձանների վերականգնման կենտրոն»), արտերկրում գտնվող հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը («Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» հիմնադրամ) և Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանմանը:

Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման գծով ծախսերի աճը՝ 0.3 մլն դրամով, կամ 0.1 տոկոսով, պայմանավորված է.

- աշխատավարձի ծախսերի աճով՝ 0.1 մլն դրամով;
- էլեկտրաէներգիայի ծախսերի աճով՝ 0.2 մլն դրամով:

Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի 50 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2016 թվականին կկազմի 111.8 հազ. դրամ, 2015 թվականի՝ 111.5 հազ. դրամի դիմաց:

Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների իրականացման համար 2016 թվականին նախատեսված են **8,709.5** մլն դրամ հատկացումներ՝ ՀՀ 2015 թվականի 8,748.4 մլն դրամի դիմաց, որոնք ուղղվելու են հեռուստառադիոհաղորդումների պատրաստմանն ու հեռարձակմանը, հրատարակչական և տեղեկատվական ծառայությունների իրականացմանը:

Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների գծով ծախսերը նվազել են՝ 38.9 մլն դրամով, կամ 0.4 տոկոսով:

Հեռուստառադիոհաղորդումների գծով 2016 թվականին նախատեսված են **7,126.0** մլն դրամ հատկացումներ՝ 2015 թվականի 7,229.0 մլն դրամի դիմաց, որոնք ուղղվելու են Հայաստանի Հանրապետության տարածքում թվային հեռուստահեռարձակման ապահովմանը, հանրային հեռուստառադիոհաղորդումների պատրաստմանն ու հեռարձակմանը և հասարակական կարծիքի ուսումնասիրմանը (5 ընկերություն), ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակմանը («Միր» միջպետական հեռուստառադիո-ընկերություն» փակ բաժնետիրական ընկերության Հայաստանի մասնաճյուղ), տնտեսական վերլուծությունների իրականացմանը («Տեղեկատվության և վերլուծության կենտրոն» ՊՈԱԿ) և գնումների գործընթացի հրապարակայնության ապահովմանը:

Հեռուստառադիոհաղորդումների գծով ծախսերի նվազումը՝ 103.0 մլն դրամով, կամ 1.4 տոկոսով պայմանավորված է.

- Հայաստանի Հանրապետության տարածքում վերգետնյա թվային հեռուստահեռարձակման ապահովման շրջանակներում հանրապետական սփռման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալության ծախսերի նվազմամբ՝ 135.3 մլն դրամով, պայմանավորված արբանյակային ունակության վարձակալման մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ընկերության հետ 2015 թվականին կնքված պայմանագրով;

- Տեխնիկական վերազինման ծախսերի նվազմամբ՝ 96.1 մլն դրամով (Հայաստանի հանրային հեռուստաընկերության գծով՝ 79.2 մլն դրամով, Շիրակի հանրային հեռուստառադիոյի գծով՝ 8.9 մլն դրամով, «Հոգևոր-մշակութային» հանրային հեռուստաընկերության գծով՝ 7.6 մլն դրամով և Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնի գծով՝ 0.4 մլն դրամով);

- հեռուստատեսային ծառայությունների արբանյակային հեռարձակման ծախսերի նվազմամբ՝ 24.8 մլն դրամով, կապված տարադրամի և տարադրամով արտահայտված գումարի փոփոխության հետ:

Միաժամանակ ծախսերը աճել են 153.2 մլն դրամով, որը պայմանավորված է.

- աշխատավարձի ծախսերի աճով՝ 9.5 մլն դրամով;

- էլեկտրաէներգիայի ծախսերի աճով՝ 11.0 մլն դրամով;

- Հեռուստատեսային ծառայությունների ծախսերի աճով՝ 30.0 մլն դրամով, կապված Հայաստանի հանրային հեռուստաընկերության «Առաջին» լրատվական ծառայության մարզային թղթակցական կետերի զարգացման հետ:

- ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակման ծախսերի աճով՝ 13.2 մլն դրամով (ՀՀ Նախագահի 03.07.2007թ. N Ղ-1212 հանձնարարականի համաձայն՝ յուրաքանչյուր տարի մասնաբաժնի չափի ավելացում 10%-ով);

- «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգման ծախսերի աճով, համապատասխանաբար՝ 65.0 և 20.0 մլն դրամով;

- գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի աճով՝ 4.5 մլն դրամով:

Հեռուստառադիոհաղորդումների ոլորտի 894 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2016 թվականին կկազմի 198.2 հազ. դրամ՝ 2015 թվականի 195.5 հազ. դրամի դիմաց:

Հրատարակչությունների, խմբագրությունների գծով 2016 թվականին նախատեսված են **1,195.3** մլն դրամ հատկացումներ՝ 2015 թվականի 1,151.4 մլն դրամի դիմաց, որոնք ուղղվելու են

գրականության, ոչ պետական մամուլի, մանկական, մանկապատանեկան թերթերի, ամսագրերի, պետական մամուլի հրատարակմանը (7 մանկական, մանկապատանեկան ՍՊԸ-ներ, 17 գիտական ամսագրեր, «Էկոնոմիկա հանդես» ՓԲԸ-ը, «Հանրապետություն» և «Հայաստանի Հանրապետություն-Ռեսպուբլիկա Արմենիա» ՓԲԸ-ներ), թարգմանչական աշխատանքների իրականացմանը («ՀՀ արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ), գրական ժառանգության պահպանմանը և տարածմանը («Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ), պաշտոնական տեղեկագրերի, միջազգային պայմանագրերի տպագրմանը, ինչպես նաև սփյուռքի համայնքների հանրակրթական հաստատություններին ուսումնական և հանրամատչելի գրականության առաքման աշխատանքների կազմակերպմանը:

Հրատարակչությունների, խմբագրությունների գծով ծախսերի աճը՝ 43.9 մլն դրամով, կամ 3.8 տոկոսով պայմանավորված է.

- աշխատավարձի ծախսերի աճով՝ 3.2 մլն դրամով;

- էլեկտրաէներգիայի ծախսերի աճով՝ 0.9 մլն դրամով;

- թարգմանչական ծառայությունների ծախսերի աճով՝ 31.3 մլն դրամով, կապված թարգմանվող էջերի ծավալների ավելացման և թարգմանական չափորոշիչների մշակման հետ;

- Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի («Արլիս») ծախսերի աճով՝ 7.5 մլն դրամով, կապված հակերության դեմ պայքարի ծրագրի իրականացման հետ;

- Տնտեսագիտական հրապարակումների ծախսերի աճով՝ 60.0 մլն դրամով, կապված «Էկոնոմիկա հանդես» ՓԲԸ-ի կայքի (www.armef.com) զարգացման հետ (տեղեկատվական-վերլուծական բնույթի էլեկտրոնային հրապարակումներից բացի կայքում տեսահրապարակումների և տեսատեղեկատվության զետեղում):

Միաժամանակ, ծախսերը նվազել են 59.0 մլն դրամով, որը պայմանավորված է ՀՀ արտաքին գործերի նախարարության հրատարակչական ծախսերի նվազմամբ, կապված ՀՀ մուտքի վիզաների և դեսպանությունում օգտագործվող պաշտպանված ձևաթղթերի տպագրվող քանակի հետ:

Հրատարակչությունների, խմբագրությունների ոլորտի 256 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2016 թվականին կկազմի 143.1 հազ. դրամ՝ 2015 թվականի 137.5 հազ. դրամի դիմաց:

Տեղեկատվության ձեռքբերման գծով 2016 թվականին նախատեսված են **388.3** մլն դրամ հատկացումներ՝ 2015 թվականի 368.1 մլն դրամի դիմաց, որոնք ուղղվելու են տեղեկատվության պահպանմանը, արխիվացմանը, պետական կառավարման մարմիններին, զանգվածային լրատվական միջոցներին և օտարերկրյա դեսպանատներին պաշտոնական ինֆորմացիայի հաղորդ-

ման նպատակով տեղեկատվության ձեռքբերմանը («Արմենպրես» ՓԲԸ-ը) և հանրային իրազեկման ապահովմանը («Հանրային կապերի տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ):

Տեղեկատվության ձեռքբերման գծով ծախսերի աճը՝ 20.2 մլն դրամով, կամ 5.5 տոկոսով պայմանավորված է.

- աշխատավարձի ծախսերի աճով՝ 1.9 մլն դրամով;
- էլեկտրաէներգիայի ծախսերի աճով՝ 1.8 մլն դրամով;
- «Հանրային իրազեկման ապահովում» ծրագրի գծով ծախսերի աճով՝ 16.4 մլն դրամով («Հանրային կապերի տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ին Օրբելի 23 հասցեում նոր շենքի հատկացման հետ կապված պահպանման ծախսերի աճ՝ 11.4 մլն դրամով, ինչպես նաև լրատվական, տեղեկատվական դաշտի ուսումնասիրության նպատակով 3 մասնագետների վարձատրության ծախսեր՝ 5.0 մլն դրամ):

Տեղեկատվության ոլորտի 193 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2016 թվականին կկազմի 129.1 հազ. դրամ՝ 2015 թվականի 128.3 հազ. դրամի դիմաց:

Կրոնական և հասարակական այլ ծառայությունների գծով 2016 թվականին նախատեսված են **1,123.1** մլն դրամ հատկացումներ՝ 2015 թվականի 1,122.4 մլն դրամի դիմաց, որոնք նպատակ ունեն ապահովել երիտասարդական ծրագրերի իրականացումը և քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, արհմիություններին և ազգային փոքրամասնություններին աջակցության տրամադրումը:

Կրոնական և հասարակական այլ ծառայությունների գծով ծախսերն աճել են 0.7 մլն դրամով կամ 0.1 տոկոսով:

Երիտասարդական ծրագրերի իրականացման համար 2016 թվականին նախատեսված են **827.4** մլն դրամ հատկացումներ՝ 2015 թվականի 826.7 մլն դրամի դիմաց, որոնք ուղղվելու են հասարակական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցության խթանմանը, երիտասարդների զբաղվածության հնարավորությունների մեծացմանը, երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի խթանմանը, պետական երիտասարդական քաղաքականության իրականացման համագործակցության մակարդակի բարձրացմանը, հայրենասիրական դաստիարակությանը («Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ), Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և մարզային երիտասարդական կենտրոնների գործունեության ապահովմանը, Հայաստանի և սփյուռքի երիտասարդության միջև կապերի ամրապնդմանը («Հայրենիք-սփյուռք» կենտրոն» ՊՈԱԿ), Հայաստանում ինտելեկտուալ խաղերի զարգացմանն աջակցմանը և «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորմանը:

Երիտասարդական ծրագրերի գծով ծախսերի աճը՝ 0.7 մլն դրամով, կամ 0.1 տոկոսով պայմանավորված է.

- աշխատավարձի ծախսերի աճով՝ 0.2 մլն դրամով;

- էլեկտրաէներգիայի ծախսերի աճով՝ 0.5 մլն դրամով:

Երիտասարդության ոլորտի 59 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2016 թվականին կկազմի 130.1 հազ. դրամ՝ 2015 թվականի 129.8 հազ. դրամի դիմաց:

Քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, արհմիություններին, ազգային փոքրամասնություններին աջակցություն տրամադրելու նպատակով 2016 թվականին, ինչպես և 2015 թվականին նախատեսված են 295.7 մլն դրամ հատկացումներ, որոնք ուղղվելու են ազգային փոքրամասնություններին, հասարակական կազմակերպություններին պետական աջակցությանը և, «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի պահանջի համաձայն, ՀՀ Ազգային Ժողովի ընտրություններում 3 և ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին նյութական աջակցության տրամադրմանը, համապատասխանաբար՝ 20.0 մլն, 200.0 մլն և 75.7 մլն դրամ:

Հանգստի, մշակույթի և կրոնի բնագավառի ծախսերի համեմատությունը՝ 2014 թվականի փաստացի և 2015 թվականի բյուջետային տարվա հաստատված համապատասխան ցուցանիշների հետ, արտացոլված է սույն բացատրագրի N 11 աղյուսակում:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի 2016 թվականի տարեկան ծրագիրն արտացոլված է սույն բացատրագրի N 3 հավելվածում:

Հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառի պետական ոչ առևտրային կազմակերպությունների 2015 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ծրագրային ցուցանիշներն արտացոլված են սույն բացատրագրի N 20-2 աղյուսակում:

<u>ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված կրթության բնագավառի</u> ծախսերը (առանց գիտության գծով ծախսերի) կազմում են 128,563.3 մլն դրամ: Ծախսերը ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ (այսուհետ՝ 2015 թվականի) աճել են 3,047.4 մլն դրամով կամ 2.4 տոկոսով, այդ թվում՝ պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերն աճել են 38.2 մլն դրամով (բացատրությունը ներկայացված է պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերի վերաբերյալ բացատրագրի մասում):

Նախագծով զգալի միջոցներ են նախատեսվել աշխատավարձերի գծով, պայմանավորված 2016 թվականին՝ 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացումը տարեկան կտրվածքով հաշվարկմամբ, ինչպես նաև սովորողների թվաքանակների փոփոխություններով: Միաժամանակ, Նախագծով 2,039.4 մլն դրամ է նախատեսվել Ասիական զարգաց-

ման բանկի աջակցությամբ իրականացվող Դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի գծով (2015 թվականին նշված ծրագիրը նախատեսված չի եղել): Հաշվարկներում հաշվի են առնվել նաև էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխությունները:

Կրթության ոլորտի ծախսերի հիմնական մասը կուղղվի հանրակրթության ոլորտին, որի գծով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 76,959.6 մլն դրամ: Ծախսերի աճը 2015 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմել է 2,576.8 մլն դրամ կամ 3.5 տոկոս՝ պայմանավորված հետևյալով.

ա) աշխատավարձերի գծով ծախսերն աճել են 1,641.1 մլն դրամով, որից 251.1 մլն դրամը պայմանավորված է 2016 թվականին՝ 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացումը տարեկան կտրվածքով հաշվարկմամբ, 1,365.0 մլն դրամը՝ ավագ դպրոցների գծով լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ, 25.0 մլն դրամը՝ սովորողների թվաքանակների փոփոխությամբ:

բ) Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցման գծով նախատեսվել է 114.7 մլն դրամ, տարրական դասարաններում սովորողների և նախակրթարանների երեխաներին սննդով ապահովման գծով՝ 550.6 մլն դրամ (նշված գումարի շրջանակներում սննդով կապահովվեն ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության Ջերմուկի կրթահամալիրի և Գորիսի Ա.Բակունցի անվան N1 ավագ դպրոցի, ՀՀ Արարատի, Սյունիքի և Վայոց ձորի մարզպետարանների ենթակայության հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում և դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված, միջին տարեկան հաշվարկով, 23.4 հազար երեխաները, որոնցից 0.4 հազարը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության, 14.5 հազարը՝ ՀՀ Արարատի, 6.1 հազարը՝ ՀՀ Սյունիքի, 2.4 հազարը՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանների ենթակայության հանրակրթական դպրոցներում): Նշված ծրագրերի գծով գումարները նախատեսվել են հանրակրթության ծախսերում, համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ի N749-Ն որոշման:

գ) ջեռուցման և էներգետիկ ծառայությունների գծով ծախսերն աճել են, համապատասխանաբար՝ 147.5 և 106.9 մլն դրամով: Ընդ որում, սեփական կաթսայատների միջոցով ջեռուցվող հիմնարկների թվի 10-ով ավելացման և կաթսայատների հաշվարկում դոլարի փոխարժեքի փոփոխության հետ կապված՝ ծախսերն աճել են 173.7 մլն դրամով (2016 թվականի համար 1 դոլարի փոխարժեքը նախատեսվել է 473.4 դրամ՝ 2015 թվականի 411.21 դրամի դիմաց), միաժամանակ, հեղուկ վառելիքով ջեռուցման ծախսերը նվազել են 26.2 մլն դրամով: Էներգետիկ ծառայությունների գծով (ներառյալ էլեկտրական ջեռուցիչներով ջեռուցումը) ծախսերում հաշվի է

առնվել էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխությունը (հաշվարկներում 1 կվտ/ժ-ն հաշվարկվել է 48.78 դրամով՝ 2015 թվականի 41.85 դրամի դիմաց):

Նախագծով ծախսերը հաշվարկվել են 1357 հանրակրթական դպրոցների, միջին տարեկան հաշվարկով, 357.8 հազար աշակերտի ուսուցման գծով՝ 2015 թվականի 355.0 հազարի դիմաց կամ՝ աշակերտների թվի ավելացումը կազմում է շուրջ 2.8 հազար (հաշվարկներում նախադպրոցական կրթության մեջ ընդգրկվածների թվաքանակը նախատեսվել է 5.5 հազար՝ 2015 թվականի 5.2 հազարի դիմաց կամ՝ ավելացումը կազմում է 0.3 հազ. երեխա, իսկ հանրակրթական դպրոցների սովորողների թիվը՝ 352.3 հազար աշակերտ՝ 2015 թվականի 349.8 հազարի դիմաց կամ՝ ավելացումը կազմում է 2.5 հազար աշակերտ): Միաժամանակ, «Հանրակրթական ուսուցում» ծրագրով միջոցներ են նախատեսվել Տավուշի մարզի 14 հանրակրթական դպրոցներում ներառական կրթության մեջ ընդգրկված 301 երեխաների ուսուցման գծով՝ փորձնական կարգի իրականացման հետ կապված:

Հանրակրթության գծով ծախսերի հաշվարկներում աշակերտ/ ուսուցչական դրույք հարաբերակցությունը նախատեսվել է 14.1: Աշակերտների թվաքանակից ելնելով՝ ոչ ուսուցչական անձնակազմի հաստիքների թվաքանակը կազմել է՝ մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 9, 101-ից մինչև 300 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 12, 301 և ավելի աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 15.5:

Մանկավարժական անձնակազմի (25377.7 դրույք՝ ներառյալ զինղեկների, ֆիզղեկների և մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպիչների դրույքները) միջին ամսական հաշվարկային աշխատավարձը մեկ դրույքի հաշվով, ներառյալ լրացուցիչ վարձատրությունները, 2016 թվականին կկազմի շուրջ 153.3 հազար դրամ, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձը՝ շուրջ 79.4 հազար դրամ:

Հանրապետության բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը կիրականացվի ըստ աշակերտների թվի՝ հետևյալ բանաձևով.

ԸգՍթ x Սգ + Պգ + ՏՍթ x ԱՕք x ՍՆգ + ՀՈՒՀՍթ x 0.1 x ՍԱդգ

որտեղ՝

Ընդ՝ մեկ տարվա համար հաստատությանը հատկացվող ընդամենը գումարն է,

Սթ՝ հաստատության սովորողների թիվը,

Սգ՝ մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը, որը 2016 թվականին կազմում է 124000 դրամ,

Պգ՝ հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը, 2016 թվականին մինչև 100 աշակերտ ունեցող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների համար կազմում է 19000.0 հազ.դրամ (ներառյալ ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի

տարեկան ֆոնդը): 101-ից մինչև 300 աշակերտ ու 301 և ավելի աշակերտ ունեցող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների համար հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը բաղկացած է 2 մասից՝ հաստատության պահպանման ծախսերից՝ 3727.5 հազ. դրամ՝ 2015 թվականի 3481.5 հազ. դրամի դիմաց և, աշակերտների թվաքանակից ելնելով, ըստ դպրոցների հաշվարկված ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդից:

ՏՍթ՝ հաստատություններում տարրական դասարաններում սովորողների և նախակրթարանների երեխաների թվի հանրագումարը,

ԱՕք՝ աշխատանքային օրերի քանակը,

ՍՆգ՝ տարրական դասարանների և նախակրթարանների երեխաներին սննդով ապահովման մեկ օրվա գումարը, որը 2016 թվականին կազմում է 140 դրամ,

ՀՈՒՀՍթ - հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների (բացառությամբ տարրական դասարանների) թիվը,

ՍԱդգ՝ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարի փոխհատուցվող գումարը, որը 2016 թվականին միջին մակարդակում սովորողների մասով կազմում է 5342.3 դրամ, ավագ մակարդակում սովորողների մասով՝ 6059.9 դրամ:

Հաշվարկը կատարելիս՝ կիրառվում են գործակիցներ հանրակրթական դպրոցի տարրական, միջին և ավագ մակարդակների համար, մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը բազմապատկելով՝ տարրական մակարդակի համար՝ 0.8075 գործակցով, միջին մակարդակի համար՝ 1.1224 գործակցով, ավագ մակարդակի համար՝ 1.1628 գործակցով: Միաժամանակ, կիրառվում են լրացուցիչ գործակիցներ բարձր լեռնային, լեռնային բնակավայրերի և միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող, ինչպես նաև ավագ դպրոցների համար, մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը բազմապատկելով բարձր լեռնային բնակավայրերի դպրոցների համար՝ 1.13 գործակցով, լեռնային բնակավայրերի դպրոցների համար՝ 1.04 գործակցով, միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 1.2 գործակցով, ավագ դպրոցների համար՝ 1.6083 գործակցով:

Ընդ որում, բանաձևի կիրառման արդյունքում, հանրակրթական հաստատություններին հատկացվող բյուջետային ծախսերի համաչափությունն ապահովելու նպատակով, թույլատրվում է պետական կառավարման մարմիններին՝ իրենց ենթակայության հաստատությունների ծախսերում կատարել վերաբաշխումներ:

Նախադպրոցական կրթության գծով ծախսերը հաշվարկվել են, ելնելով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևով մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի չափից՝ վերջինիս նկատմամբ կիրառելով տարրական մակարդակի համար հաշվարկված գործակիցը,

ինչպես նաև բարձր լեռնային, լեռնային բնակավայրերի և միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցների համար նախատեսված լրացուցիչ գործակիցները:

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման համաձայն՝ նախադպրոցական կրթության գծով ծախսերը նախատեսվել են «01. Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն» խմբի «01. Նախադպրոցական կրթություն» դասում՝ 657.4 մլն դրամի չափով, իսկ հանրակրթության գծով ծախսերը նախատեսվել են «01. Նախադպրոցական և տարրական ընդ-հանուր կրթություն» խմբի «02. Տարրական ընդհանուր կրթություն» դասում՝ 26,477.7 մլն դրամի չափով, ինչպես նաև «02. Միջնակարգ ընդհանուր կրթություն» խմբի «01. Հիմնական ընդհանուր կրթություն» և «02. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն» դասերում, համապատաս-խանաբար՝ 35,051.1 և 14,773.4 մլն դրամի չափով:

Հատուկ կրթության բնագավառում կարևորվում է կրթության առանձնահատուկ պայ-մանների կարիք ունեցող երեխաների՝ հանրակրթական դպրոցում կրթության կազմակերպումը:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով «Ներառական կրթություն» ծրագրի գծով նախատեսվել է 3,054.9 մլն դրամ՝ հանրապետության 167 հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 4.9 հազար երեխաների ուսուցման կազմակերպման գծով (2015 թվականին ներառական կրթություն իրականացվել է 127 հանրակր-թական դպրոցներում, որտեղ ընդգրկված են եղել շուրջ 3.5 հազար երեխաներ):

Ծախսերի աճը 2015 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմել է 892.8 մլն դրամ կամ 41.3 տոկոս՝ պայմանավորված աշխատավարձերի գծով լրացուցիչ միջոցների նախատեսմամբ, ինչպես նաև հիմնարկների թվի՝ 40-ով և երեխաների թվաքանակի՝ շուրջ 1.4 հազարով ավելացման հետ կապված ծախսերի աճով:

Մասնավորապես. հաշվարկներում աշխատավարձերի գծով ծախսերն աճել են 589.2 մլն դրամով, որից 5.1 մլն դրամը պայմանավորված է 2016 թվականին՝ 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացումը տարեկան կտրվածքով հաշվարկմամբ, 584.1 մլն դրամը՝ սովորողների թվաքանակների ավելացմամբ:

Սննդամթերքի ձեռքբերման գծով ծախսերն աճել են 209.6 մլն դրամով, տրանսպորտային ծախսերը՝ 53.0 մլն դրամով, էներգետիկ ծառայությունների գծով ծախսերը՝ 32.0 մլն դրամով, մնացած ծախսերը՝ 9.0 մլն դրամով:

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման համաձայն՝ ներառական կրթու-թյան գծով ծախսերը նախատեսվել են «01. Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթու-թյուն» խմբի «02. Տարրական ընդհանուր կրթություն» դասում՝ 1293.1 մլն դրամի չափով, ինչպես նաև «02. Միջնակարգ ընդհանուր կրթություն» խմբի «01. Հիմնական ընդհանուր կրթություն» և

«02. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն» դասերում, համապատասխանաբար՝ 1646.4 և 115.4 մլն դրամի չափով:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով հատուկ կրթության և մասնագիտացված հանրակրթական ուսուցման գծով նախատեսվել է 5638.0 մլն դրամ՝ 30 հատուկ և մասնագիտացված հանրակրթական դպրոցներում 4.7 հազար սաների ուսուցման կազմակերպման գծով՝ 2015 թվականի 4.8 հազարի դիմաց:

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերը նվազել են 58.4 մլն դրամով կամ 1.0 տոկոսով՝ պայմանավորված հետևյալով.

հաշվարկներում աշխատավարձերի գծով ծախսերը նվազել են 31.1 մլն դրամով, ընդ որում, սովորողների թվաքանակների նվազմամբ պայմանավորված՝ ծախսերը պակասել են 57.1 մլն դրամով, միաժամանակ, 26.0 մլն դրամ է նախատեսվել 2016 թվականին՝ 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացումը տարեկան կտրվածքով հաշվարկման հետ կապված:

Էներգետիկ ծառայությունների գծով ծախսերն աճել են 10.1 մլն դրամով, կաթսայատների միջոցով ջեռուցման ծախսերը՝ 9.1 մլն դրամով, միաժամանակ, սննդամթերքի ձեռքբերման գծով ծախսերը նվազել են 44.8 մլն դրամով, մնացած ծախսերը՝ 1.7 մլն դրամով:

Մանկավարժական 1404.0 դրույքների (ներառյալ զինղեկների, ֆիզղեկների և մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպիչների դրույքները) միջին ամսական հաշվարկային աշխատավարձը մեկ դրույքի հաշվով, ներառյալ լրացուցիչ վարձատրությունները, 2016 թվականին կկազմի շուրջ 152.2 հազար դրամ, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձը՝ շուրջ 79.4 հազար դրամ:

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման համաձայն՝ հատուկ կրթության և մասնագիտացված հանրակրթական ուսուցման գծով ծախսերը նախատեսվել են «01. Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն» խմբի «02. Տարրական ընդհանուր կրթություն» դասում՝ 1201.5 մլն դրամի չափով, ինչպես նաև «02. Միջնակարգ ընդհանուր կրթություն» խմբի «01. Հիմնական ընդհանուր կրթություն» և «02. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն» դասերում, համապատասխանաբար՝ 2774.4 և 1662.1 մլն դրամի չափով:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն» դասի գծով նախատեսվել է 2627.1 մլն դրամ, որը ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ նվազել է 249.6 մլն դրամով կամ 8.7 տոկոսով:

Նախագծով ծախսերը նախատեսվել են հանրապետության 25 արհեստագործական ուսումնարաններում արհեստագործական կրթության մեջ ընդգրկված 6684 սովորողների ուսուց-

ման գծով՝ 2015 թվականի 7774-ի դիմաց, կամ՝ սովորողների թվաքանակը 2016 թվականին կնվազի 1090-ով:

Նախագծի հաշվարկներում աշխատավարձերի գծով ծախսերը նվազել են 188.3 մլն դրամով, ընդ որում, սովորողների թվաքանակների նվազմամբ պայմանավորված՝ ծախսերը պակասել են 201.0 մլն դրամով, միաժամանակ, 12.7 մլն դրամ է նախատեսվել 2016 թվականին՝ 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացումը տարեկան կտրվածքով հաշվարկման հետ կապված:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) հաստատությունների (առանց ուժայինների) մանկավարժական 783.2 դրույքների (ներառյալ զինղեկների, ֆիզղեկների և մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպիչների դրույքները) միջին ամսական հաշվարկային աշխատավարձը մեկ դրույքի հաշվով, ներառյալ լրացուցիչ վարձատրությունները, 2016 թվականին կկազմի շուրջ 132.3 հազար դրամ, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձը՝ շուրջ 79.4 հազար դրամ:

Էներգետիկ ծառայությունների գծով ծախսերն աճել են 1.2 մլն դրամով, միաժամանակ, սովորողների թվաքանակների նվազմամբ պայմանավորված, կրթաթոշակի ֆոնդի գծով ծախսերը պակասել են 60.8 մլն դրամով, մնացած ծախսերը՝ 1.7 մլն դրամով:

«Միջին մասնագիտական կրթություն» դասի գծով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 7791.5 մլն դրամ, որը ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ նվազել է 697.4 մլն դրամով կամ 8.2 տոկոսով:

Նախագծով ծախսերը նախատեսվել են միջին մասնագիտական կրթության մեջ ընդգրկված 14719 սովորողների ուսուցման գծով՝ 2015 թվականի 16589-ի դիմաց, կամ՝ սովորողների թվաքանակը 2016 թվականին կնվազի 1870-ով:

Նախագծի հաշվարկներում աշխատավարձերի գծով ծախսերը նվազել են 629.3 մլն դրամով, ընդ որում, սովորողների թվաքանակների նվազմամբ պայմանավորված՝ ծախսերը պակասել են 669.3 մլն դրամով, միաժամանակ, 40.0 մլն դրամ է նախատեսվել 2016 թվականին՝ 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացումը տարեկան կտրվածքով հաշվարկման հետ կապված:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (առանց ուժայինների) մանկավարժական անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2016 թվականին կկազմի շուրջ 133.8 հազար դրամ, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձը՝ շուրջ 79.6 հազար դրամ:

Էներգետիկ ծառայությունների գծով ծախսերն աճել են 8.5 մլն դրամով, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության քոլեջների գծով սննդամթերքի

ձեռքբերման գծով ծախսերը՝ 11.0 մլն դրամով, Պարարվեստի ուսումնարանի ջեռուցման գծով ծախսերը՝ 0.5 մլն դրամով: Միաժամանակ, սովորողների թվաքանակների նվազմամբ պայմանավորված, կրթաթոշակի ֆոնդի գծով ծախսերը պակասել են 74.6 մլն դրամով, մնացած ծախսերը՝ 13.5 մլն դրամով:

Բարձրագույն կրթության գծով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 12233.8 մլն դրամ, որը ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել է 796.1 մլն դրամով կամ 7.0 տոկոսով:

Նախագծի հաշվարկներում ծախսերը հաշվարկվել են 13.2 հազար ուսանողի հաշվով՝ 2015 թվականի 13.1 հազարի դիմաց: Բուհական կրթության գծով հաշվարկներում (առանց արտոնություն ունեցող ուսանողների վարձավճարի փոխհատուցման գծով ծախսերի) մեկ ուսանողի գծով ծախսը կհասցվի 637.7 հազար դրամի՝ 2015 թվականի 604.4 հազար դրամի դիմաց: ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1323-Ն որոշման համաձայն՝ պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում է տրամադրում յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը հաղթահարած և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ընտանիքների անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 50-ից 100 տոկոսի չափով, իսկ բարձրագույն ուսումնական հաստատություններ սահմանված կարգով 1-ին կուրս ընդունված և ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողներին ուսանողական նպաստները, համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1094-Ն որոշման, տրվում են ընդունելության մրցութային քննությունների արդյունքում համապատասխան միավորի շեմը հաղթահարելու դեպքում: Նշված նպատակներով նախագծով ՀՀ կրթության և գիտության նախարարությանը «Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրով նախատեսվել է 1024.6 մլն դրամ՝ 2015 թվականի 705.5 մլն դրամի դիմաց կամ՝ ծախսերի աճը կազմել է 319.1 մլն դրամ (ծախսերը հաշվարկվել են 2500 հոգու հաշվով):

Նախագծի հաշվարկներում աշխատավարձերի գծով ծախսերն աճել են 446.1 մլն դրամով, որից 298.4 մլն դրամը պայմանավորված է 2016 թվականին՝ 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացումը տարեկան կտրվածքով հաշվարկմամբ, 133.0 մլն դրամը՝ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի և Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի գծով 2015 թվականի սեպտեմբերից նախատեսվող լրացուցիչ 228.6 դասախո-

սական դրույքի գծով ծախսի հաշվարկմամբ, 14.7 մլն դրամը՝ ուսանողների թվաքանակի 0.1 հազարով ավելացման հետ կապված ծախսի նախատեսմամբ:

Մնացած ծախսերը, ուսանողների թվաքանակի ավելացման և էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխության հետ կապված, աճել են 30.9 մլն դրամով, որից 26.1 մլն դրամը՝ Էներգետիկ ծառայությունների գծով:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով «Արտադպրոցական դաստիարակություն» դասի գծով նախատեսվել է 4700.1 մլն դրամ, որը ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ նվազել է 14.7 մլն դրամով կամ 0.3 տոկոսով:

Նախագծով 100.0 մլն դրամ է նախատեսվել Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովման գծով՝ 2015 թվականի 170.0 մլն դրամի դիմաց, կամ՝ ծախսերի նվազումը կազմում է 70.0 մլն դրամ:

Միաժամանակ, Նախագծով լրացուցիչ միջոցներ են նախատեսվել աշխատավարձերի գծով, մասնավորապես, 24.3 մլն դրամ է նախատեսվել 2016 թվականին՝ 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացումը տարեկան կտրվածքով հաշվարկման հետ կապված, 12.3 մլն դրամ էլ նախատեսվել է ՀՀ Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Եղվարդի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի գծով (վերջինիս գծով լրացուցիչ ծախս է նախատեսվել նաև ջեռուցման և այլ ծախսերի գծով):

Էներգետիկ ծառայությունների գծով ծախսերն ավելացել են 7.5 մլն դրամով՝ պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխությամբ, 3.8 մլն դրամի չափով էլ ավելացել են սպորտային միջոցառումների գծով «Սևան» գյուղական մարզական ընկերությանը նախատեսված ծախսերը:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով «Լրացուցիչ կրթություն» դասի գծով նախատեսվել է 1468.4 մլն դրամ, որը ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել է 176.9 մլն դրամով կամ 13.7 տոկոսով: Աճը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի գծով լրացուցիչ միջոցների նախատեսմամբ, պայմանավորված 2016 թվականին՝ 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացումը տարեկան կտրվածքով հաշվարկմամբ, դասախոսական 1 ժամի արժեքի՝ 3038 դրամ նախատեսմամբ՝ 2015 թվականի 2900 դրամի դիմաց, վերապատրաստվողների թվաքանակների փոփոխություններով: Հաշվարկներում հաշվի է առնվել նաև էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխությունը:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով զգալի միջոցներ են նախատեսվել «Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ» դասում ներառված ներքոհիշյալ ծրագրերի գծով, այսպես.

- տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում ու ավագ դպրոցների դասագրքերի հրատարակում՝ 969.0 մլն դրամ: Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցման գծով, ընդհանուր առմամբ, նախատեսվել է 117.9 մլն դրամ, նշված գումարից 114.7 մլն դրամը վերաբաշխվել է հանրակրթության ծախսերին, համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ի N749-Ն որոշման:

- դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում՝ 480.2 մլն դրամ՝ 2015 թվականի 449.7 մլն դրամի դիմաց (նշված ծրագրի շրջանակներում 2016 թվականին կկազմակերպվի 4800 դպրոցահասակ երեխաների ամառային հանգիստը՝ 2015 թվականի 4500-ի դիմաց),

- համակարգչային և ինտերնետային կապի ծառայություններ՝ 860.9 մլն դրամ (հաշվարկներում միջոցներ են նախատեսվել հանրապետության 1391 դպրոցների ինտերնետային ցանցի սպասարկման և համակարգչային սարքավորումների պահպանման, շարժական ինտերնետային կայանի շահագործման, Մայքրոսոֆթի համակարգչային ծրագրերի արտոնագրման նպատակով),

- «Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում»՝ 120.5 մլն դրամ՝ 2015 թվականի 52.0 մլն դրամի դիմաց (2016 թվականին հավելավճար կտրամադրվի 660 ուսուցչի՝ 2015 թվականի 285-ի դիմաց):

- ավարտական փաստաթղթերի, գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ձեռքբերում՝ 287.1 մլն դրամ,

- դպրոցականների սպարտակիադայի և օլիմպիադաների անցկացում, համապատասխանաբար՝ 35.0 և 64.7 մլն դրամ,

- փոխհատուցում ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին՝ 41.0 մլն դրամ,

- կրթության բովանդակային և մեթոդական սպասարկում ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում՝ 507.9 մլն դրամ (նշված գումարի շրջանակներում կվերապատրաստվի 10.0 հազ. ուսուցիչ),

- գնահատման և թեստավորման ծառայություններ՝ 405.3 մլն դրամ (հաշվարկներում միջոցներ են նախատեսվել 2016 թվականին 23.3 հազար շրջանավարտի հաշվով ավարտական քննությունների անցկացման գծով՝ 2015 թվականի 24.7 հազար շրջանավարտի դիմաց: Միաժամանակ, միջոցներ են նախատեսվել TIMSS միջազգային ստուգատես-հետազոտությանը Հայաս-

տանի Հանրապետության մասնակցության վճարի գծով՝ 37,5 հազար դոլարին և 37,5 հազար եվրոյին համարժեք դրամ): Նախագծով չի նախատեսվել 2015 թվականին TIMSS-ի հիմնական փուլի անցկացման հետ կապված ծախսը՝ 10.6 մլն դրամի չափով,

- «Կրթության գերազանցության ազգային ծրագրի իրականացում» և «Հայ ասպետ» հեռուստամրցաշարի անցկացում», համապատասխանաբար՝ 587.8 և 69.3 մլն դրամ,

- սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակում և տրամադրում՝ 100.0 մլն դրամ,

- հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում՝ 71.9 մլն դրամ,

- «Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովում»՝ 49.1 մլն դրամ, նշված ծախսը նախատեսվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության գծով՝ սննդամթերքի ցամաքային տեղափոխման համար: ՀՀ Արարատի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում և դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված երեխաներին սննդով ապահովման գծով ծախսերը, համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ի N749-Ն որոշման, նախատեսվել են հանրակրթության ծախսերում:

Նախագծով 13.0 մլն դրամ է նախատեսվել «Համահայկական կրթական խորհրդաժողովի անցկացում» ծրագրի գծով (նշված խորհրդաժողովն անցկացվում է 2 տարին մեկ):

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով միջոցներ են նախատեսվել նաև մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող մի շարք ծրագրերի գծով, մասնավորապես.

- բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումներ՝ 90.0 մլն դրամ,

- մասնագիտական կրթության որակի ապահովման ծառայություններ՝ 68.2 մլն դրամ,

- նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումներ՝ 166.4 մլն դրամ,

- Բուխարեստի և Պրահայի Կարլովի համալսարաններում հայոց լեզվի դասավանդման կազմակերպում, համապատասխանաբար՝ 3.6 և 5.7 մլն դրամ: 3.6 մլն դրամ էլ նախատեսվել է Ավստրիայի Զալցբուրգի համալսարանում հայագիտության ամբիոնին աջակցման գծով:

- Աջակցություն արտասահմանում սովորող ուսանողներին՝ 100.0 մլն դրամ,

- Հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորում՝ 60.0 մլն դրամ,

- «Ուսանողներին ուսումնական վարկերի տրամադրում» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորում՝ 57.6 մլն դրամ:

Նախագծով 11.4 մլն դրամ է նախատեսվել Վենետիկի Կա՛Ֆոսկարի համալսարանում հայոց լեզվի դասավանդման կազմակերպման գծով (2015 թվականին նշված ծրագիրը նախատեսված չի եղել): Վենետիկի համալսարանի հայագիտության ամբիոնում դասավանդվել են «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաները՝ բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի մակարդակներում, իրականացվել են բազմաթիվ հայագիտական հրատարակություններ և գիտաժողովներ:

Մինչև վերջերս Իտալիայում համալսարաններն ամբողջովին ֆինանսավորվում էին Իտալիայի կրթության և գիտության նախարարության կողմից: Սակայն վերջին ժամանակներում դրանք անցել են մասնակի ինքնաֆինանսավորման և խնդիր է առաջացել՝ արտաքին աղբյուրի հաշվին ֆինանսավորել հայերենի դասընթացները: Ներկայումս համալսարանում գործում է երկու խումբ և նախատեսվում է ավելացնել ևս մեկը:

Միաժամանակ, ծախսեր չեն նախատեսվել 2015 թվականին իրականացվող՝ «Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխման շարունակություն և զբաղվածության հայեցակարգի մշակում» ծրագրի շրջանակներում նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների համար գույքի և սարքավորումների ձեռքբերում» ծրագրի գծով՝ 200.0 մլն դրամի չափով:

Կրթության բնագավառի ծախսերի համեմատությունը՝ նախորդ տարվա (2014 թվական) փաստացի և ընթացիկ (2015 թվական) բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 12 աղյուսակում:

Կրթության բնագավառի պետական ոչ առևտրային կազմակերպությունների 2016 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ծրագրային ցուցանիշներն արտացոլված են սույն բացատրագրի N 20-3 աղյուսակում:

Միաժամանակ կրթության ոլորտում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության բարելավման ծրագիր

Ծրագրի նպատակներն են՝

1. Հանրակրթության ոլորտի հետագա բարելավում,
2. Մասնագիտական կրթության ուղղությամբ նորարարությունների խթանում:

Ծրագիրը կազմված է հետևյալ բաղադրիչներից.

Առաջին բաղադրիչ՝ - «Հանրակրթության որակի բարելավում», որը կազմված է չորս ենթաբաղադրիչներից.

1. Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում:
2. Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը:
3. Հիմնական կրթական կազմակերպությունների կարողությունների հզորացումը՝ ապահովելով սովորողների ուսման և կրթական վերջնարդյունքի մշտադիտարկումը:
4. Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով

Երկրորդ բաղադրիչ՝ - Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը:

Երրորդ բաղադրիչ՝ - Ծրագրի կառավարում, մշտադիտարկում և գնահատում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 2,794.0 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,211.8 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 582.2 մլն. դրամ:

2. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության որակի և համապատասխանության երկրորդ ծրագիր

Ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի կրթական համակարգի զարգացման ուղղորդումն է գիտելիքահեն տնտեսության պահանջները՝ ապահովելով հասարակության սոցիալ-տնտեսական պահանջներին համապատասխան հանրակրթության և բարձրագույն մասնագիտական կրթության որակի աճ: Ծրագրով իրականացվող բարեփոխումները նպատակաուղղված են մի կողմից կրթության որակի շարունակական բարձրացման միջոցով հանրակրթության բնագավառում առկա ձեռքբերումների պահպանմանն ու զարգացմանը՝ ներառելով նաև նախադպրոցական կրթության հիմնախնդիրները, մյուս կողմից՝ աջակցելու բարձրագույն կրթության մատչելիության, որակի և համապատասխանության ապահովման խնդիրների լուծմանը:

Ծրագրի ավատը սահմանված է 2015 թվականի նոյեմբերի 30-ը: 2016 թվականի առաջին եռամսյակում նախատեսված է իրականացնել ծրագրի աուդիտ:

Ծրագրով նախատեսված աշխատանքների աուդիտի իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 3,1 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,5 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 0.6 մլն. դրամ:

3. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագիր

Ծրագիրը կօժանդակի Աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության իրականացմանը: Ծրագրի նպատակներն են.

1. Դպրոցների շենքերի սեյսմակայունության բարձրացում,
2. Սեյսմիկ աղետների պատրաստվածության և արձագանքման կարողությունների հզորացում,
3. Սեյսմիկ ռիսկերի կառավարման և նվազեցման օժանդակող քաղաքականությունների և համակարգերի բարելավում,
4. Սեյսմիկ անվտանգության ներդրումային ծրագրի գործադիր և իրականացնող մարմինների կարողությունների զարգացում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 2,039.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,749.8 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 289.6 մլն. դրամ:

Գիտությունը, որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն, գտնվում է պետության հովանավորության ներքո: Հիմք ընդունելով 2007 թվականի հուլիսի 11-ի ՀՀ վարչապետի կողմից վավերացված «Գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթները», 2016 թվականին ՀՀ պետական բյուջեի նախագծով նախատեսված գիտության ծախսերը կուղղվեն ոլորտում առկա հետևյալ առաջնահերթ խնդիրներին.

- գիտության ոլորտի պետական կառավարման արդյունավետ համակարգի ձևավորմանը,
- գիտության ոլորտում համապատասխան ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացմանը,
- գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը,
- գիտության ոլորտի ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիակա-նացմանը,
- գիտական ոլորտի գիտական փորձաքննության անկախ համակարգի ստեղծմանը,
- գիտության և տեխնոլոգիաների զարգացման գերակա ուղղությունների հստակեցմանը,
- գիտության և կրթության ինտեգրման ապահովմանը,
- գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինան-սավորման վերածմանը իրական դրամաշնորհային համակարգի,
- գիտական ներուժի վերարտադրությանը և երիտասարդացմանը,
- գիտական արդյունքի ապրանքայնացմանն ու դուրսբերմանը ներքին և արտաքին շուկա:

Գիտության ոլորտի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման մեջ գիտության գործուն դեր ունենալը, գիտական հետազոտությունների արդյունքները տնտեսության մեջ արդյունավետ օգտագործելը:

Գիտության զարգացումն ուղղորդվելու է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի և գիտության ու գիտատեխնիկական քաղաքականության հիմնադրույթներով, ըստ որի պետության կողմից գիտության ֆինանսավորումը կիրականացվի.

- բազային,
- պայմանագրային (թեմատիկ) ,
- նպատակային-ծրագրային ֆինանսավորման ձևերով:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով գիտության բնագավառի ծախսերը կազմում են շուրջ **14313.8** մլն դրամ:

Գիտության ծախսերն ամբողջովին արտացոլված են «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի NN 22-2, 22-3 աղյուսակներում:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ապարատի պահպանման համար նախատեսվել է **160.3** մլն դրամ՝ 2015 թվականի հաստատված բյուջեի 161. 4 մլն դրամի դիմաց (բացատրությունը ներկայացված է պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերի վերաբերյալ բացատրագրի մասում):

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով գիտատեխնիկական գործունեության համար նախատեսվել է շուրջ **14153.5** մլն դրամ՝ 2015 թվականի **13922.1** մլն դրամի դիմաց, կամ՝ **231.4** մլն դրամով ավել, որը բաշխվելու է հետևյալ ուղղություններով.

- **<u>Բազային ֆինանսավորում</u>** ստացող կազմակերպությունների համար ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է **10,004.6** մլն դրամ՝ 2015 թվականի հաստատված բյուջեի **9,811.0** մլն դրամի դիմաց, կամ աճը կազմում է **<u>193.5</u>** մլն դրամ: Այդ թվում՝

- Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերի իրականացման համար նախատեսվել է 7979.1 մլն դրամ՝ 2015 թվականի հաստատված բյուջեի 7806.6 մլն դրամի դիմաց, կամ՝ <u>172.5</u> մլն դրամով ավել, որը և ծրագրում ներառված միջոցառումների գծով ծախսերի տնտեսումները հիմնականում կուղղվեն միջազգային գիտական կառույցների անդամակցություն գծով մեկ նոր՝ գիտության և ինովացիայի բնագավառում Եվրոպական Միության Հորիզոն 2020 ծրագրին Հայաստանի ասոցացված անդամակցության վարձավճարի հատկացմանը /474.0 մլն դրամի չափով/, որի արդյունքում հանրապետության գիտական կազմակերպություններն ու բուհերն իրավունք կունենան Հորիզոն 2020

ծրագրի շրջանակներում իրականացվող մրցույթներին մասնակցել որպես համակարգող կազմակերպություններ, ձևավորել միջազգային գիտական կամ գիտակրթական համագործակցություններ:

- ՀՀ կառավարության 01.09.2011թ. N 1301-Ն որոշմամբ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» ՊՈԱԿ-ը վերակազմավորվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կազմում հիմնադրամի և 2012 թվականից առանձնանալով գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրից, ՀՀ պետական բյուջեի նախագծում ներկայացվում է առանձին՝ ««Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և ֆիզիկայի բնագավառում գիտական ներուժի արդիականացում» ծրագրով, 749.6 մլն դրամ գումարով՝ 2015 թվականի հաստատված բյուջեի 742.2 մլն դրամի դիմաց:

- ՀՀ կառավարության 24.05.2012թ. N 675-Ն որոշմամբ ստեղծվել է «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամը և պետական կառավարման լիազոր մարմին է սահմանվել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն: ՀՀ 2013 թվականի պետական բյուջեում առանձնանալով գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերից, ներկայացվել է առանձին ծրագրով, որի համար ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել է 293.2 մլն դրամ՝ 2015 թվականի հաստատված բյուջեի 290.3 մլն դրամի դիմաց:

- Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրի գծով նախատեսվել է 876.4 մլն դրամ՝ 2015 թվականի 865.7 մլն դրամի դիմաց:

- Գիտական կադրերի պատրաստման պետական ծրագրի գծով նախատեսվել է 91.8 մլն դրամ՝ 2015 թվականի հաստատված բյուջեի չափով:

- Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման գծով պահպանվել է 2015 թվականի մակարդակը, այսինքն նախատեսվել է 14.4 մլն դրամ, որը կհատկացվի Սփյուռքի գաղթօջախների պատմության ուսումնասիրման, հետազոտությունների անցկացման համար:

- **<u>Պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման</u>** համար նախատեսվում է **1,848.0** մլն դրամ՝ 2015 թվականին **1,839.4** մլն դրամի դիմաց: **<u>8.6</u>** մլն դրամի աճը պայմանավորված է ծրագրի շրջանակներում կատարվող Հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների ավելացմամբ՝ 25.8 մլն դրամի չափով, և «ՀՀ ԳԱԱ Պատ-

մության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին «Հայոց պատմություն բազմահատորյակի հատոր 1-ի գիրք II-ի տպագրություն» ավարտվող ծրագրի արժեքի՝ 17.2 մլն դրամի, տարբերությամբ:

• **<u>Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման</u>** համար նախատեսվել է **1359.2** մլն դրամ՝ 2015 թվականի **1333.0** մլն դրամի դիմաց: **<u>26.2</u>** մլն դրամի աճը պայմանավորված է նոր մրցույթում հաղթած թեմաների ֆինանսավորմամբ: Քանի որ գիտական թեմաների մրցույթն անցկացվում է երկամյա պարբերականությամբ, վերջին մրցույթն անցկացվել է 2015 թվականին և մրցույթում հաղթած թեմաների ֆինանսավորման նպատակով նախատեսվում է 872.4 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվող մյուս միջոցառումները նորից կշարունակվեն: Դրանք են՝ երիտասարդ գիտաշխատողների աջակցություն /154.7 մլն դրամի չափով/, Արցախի հետ համագործակցության գիտական թեմաների ֆինանսավորում /27.0 մլն դրամի չափով/, կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների ֆինանսավորում /91.4 մլն դրամի չափով/, բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարների տրամադրում /94.2 մլն դրամի չափով/, «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի «AREAL» գծային արագացուցչի վրա իրականացվող գիտական թեմաների ֆինանսավորում /28.0 մլն դրամի չափով/, Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական թեմաների ֆինանսավորում /22.5 մլն դրամի չափով/, բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարների տրամադրում /16.9 մլն դրամի չափով/, բարձր արդյունավետությամբ աշխատող լաբորատորիաներին աջակցություն /28.1 մլն դրամի չափով/: Միաժամանակ՝ ավելացել է «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ «CYCLONE 18/18» ցիկլոտրոնի վրա իրականացվող գիտական թեմաների ֆինանսավորումը /24.0 մլն դրամի չափով/:

• ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով, **<u>գիտաշխատողների գիտական աստիճանների</u>** համար հավելավճարներ տրամադրելու համար, նախատեսվել է **941.7** մլն դրամ՝ ընթացիկ տարվա **938.7** մլն դրամի դիմաց և **<u>3.0</u>** մլն դրամի աճը պայմանավորված է ՀՀ պետական բյուջեի միջոցով իրականացվող գիտական ծրագրերում ընդգրկված գիտական աստիճաններ ունեցող գիտաշխատողների թվի աճով:

Գիտության բնագավառի ծախսերի համեմատությունը՝ նախորդ տարվա (2014 թվական) փաստացի և ընթացիկ (2015 թվական) բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 13 աղյուսակում:

Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեում ընդգրկելու նպատակով գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական-նպատակային ծրագրերի ցանկը ներկայացված է սույն բացատրագրի N 7 հավելվածում:

Սոցիալական պաշտպանության ոլորտի համար նախատեսվող միջոցառումներն ուղղվելու են բնակչության սոցիալական պաշտպանության քաղաքականության հիմնական և գերակա ուղղությունների՝ պետական կենսաթոշակային ապահովության, սոցիալական աջակցության, աշխատանքի, բնակչության զբաղվածության, ընտանիքի, հաշմանդամների և տարեցների սոցիալական պաշտպանության, փախստականների սոցիալական խնդիրների լուծման, օրենսդրության կատարելագործման ու դրա իրականացման ապահովմանը:

2016 թվականին սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը կկազմեն 405 163.2 մլն դրամ կամ 2016 թվականի պետական բյուջեի ծախսերը 2015 թվականի հաստատված պետական բյուջեի նկատմամբ աճում են 14 554.0 մլն դրամով (2015 թվականին՝ 390 609.2 մլն դրամ) (ստորև ներկայացված տեքստում համեմատությունը կատարվում է 2015 թվականի հաստատված պետական բյուջեի նկատմամբ):

2016 թվականի կտրվածքով սոցիալական պաշտպանության ոլորտի կազմակերպությունների (ներառյալ հասարակական և բարեգործական կազմակերպությունների) աշխատողների աշխատավարձի ֆոնդի հաշվարկը կատարվել է հետևյալ կերպ.

2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացումը (այսուհետ՝ նվազագույն աշխատավարձ) (55.0 հազ. դրամ, ներառյալ եկամտային հարկը 72.8 հազ. դրամ) տարածվել է տարվա կտրվածով և հաշվի է առնվել կուտակային կենսաթոշակի հետ կապված սոցիալական վճարի գումարը (բացառությամբ հասարակական և բարեգործական կազմակերպությունների):

Էլեկտրաէներգիայի գծով հաշվարկը կատարվել է 6.93 դրամով ավելի կամ 48.78 դրամ 2015 թվականի 41.85 դրամի դիմաց:

Սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը ըստ դասերի բնութագրվում են հետևյալ կերպ.

Վարչարարություն

-«Աշխատողների աշխատանքային պարտավորությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում» ծրագրի գծով նախատեսվում է 97.9 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին՝ 101.1 մլն դրամ): Ծախսերի նվազումը կազմում է 3.2 մլն դրամ, որը պայմանավորված է շահառուների թվի նվազմամբ կամ 489 մարդ 2015 թվականի 528 մարդու դիմաց՝ նվազագույն աշխատավարձի տարածմամբ տարվա կտրվածքով:

-«Բժշկա-սոցիալական վերականգնման ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է 111.5 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին՝ 111.4 մլն դրամ): Ծախսերի աճը կազմում

է 0.1 մլն դրամ, որը պայմանավորված է հաշվարկների ճշտմամբ՝ անվճար բուժօգնություն ստացողների թվի պահպանման պայմաններում կամ 500 մարդ:

Անաշխատունակություն

-«Հոգեկան առողջության վերականգնման ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է 70.1 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին՝ 70.9 մլն դրամ): Ծախսերի նվազումը կազմում է 0.8 մլն դրամ, որը պայմանավորված է հաշվարկների ճշտմամբ՝ անվճար բուժօգնություն ստացողների թվի պահպանման պայմաններում կամ 318 մարդ:

-«Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում» ծրագրի գծով ծախսը կազմում է 856.3 մլն դրամ (պահպանվել է 2015 թվականի համար նախատեսված չափը) (պրոթեզաօրթոպեդիկ, վերականգնման և վերանորոգման պարագաները տրվում են ՀՀ կառավարության 10.09.2015 թվականի N 1035-Ն որոշմամբ սահմանված ժամկետները լրացած, ինչպես նաև առաջին անգամ դրանց կարիքը ունեցող անձանց):

2016 թվականի համար նախատեսվում է ձեռքբերել և բաշխել.

ա/ աչքի պրոթեզ 200 հատ՝ 13.0 մլն դրամ,

բ/ ձայնաստեղծ սարքեր 80 հատ՝ 27.7 մլն դրամ,

գ/ պրոթեզաօրթոպեդիկ և վերականգողական պարագաներ 13600 հատ՝ 815.6 մլն դրամ:

Այսպիսով, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների ընդհանուր թիվը կանխատեսվում է 13 880 2015 թվականին նախատեսված 13 367 դիմաց:

-«Հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովում» ծրագրի գծով նախատեսվում է 89.6 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին՝ 85.7 մլն դրամ): Ծախսերի աճը կազմում է 3.9 մլն դրամ, որը պայմանավորված է լսողական սարքերի թվաքանակի փոփոխությամբ (տրվում է ՀՀ կառավարության 10.09.2015 թվականի N 1035-Ն որոշմամբ սահմանված ժամկետները լրացած, ինչպես նաև առաջին անգամ դրանց կարիքը ունեցող անձանց): Այսպիսով, 2016 թվականին նախատեսվում է.

ա/ ԱՊՀ երկրների արտադրության լսողական սարքերի թվի աճ կամ 1100 սարք՝ 42.9 մլն դրամ 2015 թվականի 1000 սարքի դիմաց (39.0 մլն դրամ) կամ 3.9 մլն դրամով ավելի,

բ/ սայլակների (450 հատ) գումարի՝ 41.9 մլն դրամ պահպանման պայմաններում,

գ/ լսողական սարքերի ներդիրների (400 հատ) գումարի՝ 4.8 մլն դրամ պահպանման պայմաններում:

-«Դպրոցն ավարտած, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատ-

ռաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայություններ» ծրագրի գծով ծախսը կազմում է 10.5 մլն դրամ (պահպանվել է 2015 թվականի համար նախատեսված չափը):

-«Մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասների և երիտասարդների ցերեկային խնամքի սոցիալ-վերականգնողական ծառայություններ» ծրագրի ծախսը կազմում է 28.0 մլն դրամ (2015 թվականին՝ 23.2 մլն դրամ): Ծախսերի աճը 4.8 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ նվազագույն աշխատավարձը տարվա կտրվածքով հաշվարկելու հետ՝ 1.0 մլն դրամ,

բ/ էլեկտրաէներգիայի սակագնի աճի հետ կապված լրացուցիչ ծախսերի նախաատեսմամբ՝ 1.3 մլն դրամ,

գ/ կոմունալ ծախսերի ավելացմամբ՝ 2.5 մլն դրամ:

2016 թվականին «Փրկություն» ՀԿ կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 50 մարդ, պահպանելով 2015 թվականի համար նախատեսված մակարդակը:

-«Եվրոպական արտադրության լսողական սարքերի ձեռքբերման համար հավաստագրերի տրամադրում» ծրագրի ծախսը կազմում է 16.0 մլն դրամ (պահպանվել է 2015 թվականի համար նախատեսված չափը): 2016 թվականին նախատեսվում է լսողության խնդիրներ ունեցող 12-18 տարեկան երեխաների և 18-30 տարեկան հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրել 200 հավաստագիր (ՀՀ կառավարության 10.09.2015 թվականի N 1035-Ն որոշմամբ տրվում է հինգ տարին մեկ անգամ):

-«Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 11.4 մլն դրամի չափով ծախս 13 աշխատողի աշխատավարձի գծով, ներառյալ եկամտային հարկը:

2016 թվականին «Լիարժեք կյանք» ՀԿ կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 160 մարդ:

Ծերություն

-«Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ» ծրագրով նախատեսվում է 23 089.1 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին՝ 20 918.4 մլն դրամ): Ծախսերի աճը 2 170.7 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ կենսաթոշակառուների թվաքանակի 1 862 մարդով նվազմամբ կամ 2016 թվականին կկազմի 28 363 մարդ (հաշվարկներում հաշվի է առնվել 2015 թվականի հուլիս ամսվա կենսաթոշակառուների ցուցակային թվաքանակը (27 806 մարդ), որի նկատմամբ կիրառվել է 2% աճ),

բ/ ճշտվել է 01.07.2015 թվականի կենսաթոշակի միջին ամսական չափը (67 838.2 դրամ), որը դրվել է 2016 թվականի հաշվարկի հիմքում 01.07.2015 թվականի պետական բյուջեի հաշվարկային 61 447 դրամի դիմաց:

2016 թվականին նախատեսվում է պահպանել 2015 թվականի հուլիսի 1-ից նախատեսված կենսաթոշակի հիմնական չափը՝ 16.0 հազ. դրամ և զինծառայության ստաժի մեկ տարվա արժեքը՝ 1 500 դրամ:

-**«Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ»** ծրագրով նախատեսվում է 655.1 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին՝ 766.7 մլն դրամ): Ծախսերի նվազումը 111.6 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ կենսաթոշակառուների թվաքանակի նվազմամբ կամ 2 197 մարդ 2015 թվականի 2 553 մարդու դիմաց,

բ/ ճշտվել է 01.07.2015 թվականի կենսաթոշակի միջին ամսական չափը (24 846.8 դրամ), որը դրվել է 2016 թվականի հաշվարկի հիմքում 01.07.2015 թվականի պետական բյուջեի հաշվարկային 25 025.5 դրամի դիմաց:

-**«Աշխատանքային կենսաթոշակներ»** ծրագրով նախատեսվում է 223 769.5 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին՝ 225 626.9 մլն դրամ): Ծախսերի նվազումը 1 857.5 մլն դրամով պայմանավորված է.

ա/ կենսաթոշակառուների թվաքանակի նվազմամբ կամ 456 960 մարդ (01.07.2015 թվականի ցուցակային թվաքանակից պակասեցվել է նախորդող մեկ տարվա ժամանակատահվածում կենսաթոշակ չստացող կենսաթոշակառուների միջին թիվը՝ 5579 մարդ) 2015 թվականի համար նախատեսված 458 497 մարդու դիմաց:

բ/ կենսաթոշակի միջին ամսական չափի փոփոխության պայմաններում կամ 40807.6 դրամ 2015 թվականի 41 008 դրամի դիմաց (կենսաթոշակի միջին ամսական չափի փոփոխությունը պայմանավորված է աշխատանքային կենսաթոշակի առանձին տեսակների գծով կենսաթոշակառուների և միջին չափերի տեսակարար կշիռների փոփոխությամբ):

2016 թվականին նախատեսվում է պահպանել 2015 թվականին նախատեսված կենսաթոշակի հիմնական չափը՝ 16.0 հազ. դրամ և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը մինչև 10 տարվա ստաժ ունեցողների համար՝ 800 դրամ, իսկ 10 տարուց ավելի ստաժ ունեցողների համար՝ 500 դրամ:

-**«ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակներ»** ծրագրով նախատեսվում է շուրջ 2 724.0 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին՝ 2 582.1 մլն դրամ): Ծախսերը աճում են 141.9 մլն դրամով, որը պայմանավորված է.

ա/ կենսաթոշակառուների թվաքանակի աճով կամ 625 մարդ 2015 թվականի համար նախատեսված 566 մարդու դիմաց,

բ/ օրենսդրական փոփոխությամբ, կապված պաշտոնաթող Նախագահների կենսաթոշակի հաշվարկի փոփոխությամբ (հիմք՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահի վարձատրության, սպասարկման և անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը, հաշվարկը կատարվում է ՀՀ Նախագահի՝ օրենքով սահմանված աշխատավարձի 70 տոկոսի չափով):

գ/ կենսաթոշակի միջին ամսական չափի փոփոխության պայմաններում կամ 363 199 դրամ 2015 թվականի 380 169.4 դրամի դիմաց:

2016 թվականին նախատեսվում է պահպանել 2015 թվականին նախատեսված կենսաթոշակի հիմնական չափը՝ 14.0 հազ. դրամ և մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը՝ 5 000 դրամ:

Այսպիսով, 2016 թվականին նախատեսվում է ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակներ հատկացնել. ՀՀ պաշտոնաթող Նախագահներին (2), նախկին դատավորներին (72), նախկին ՀՀ ՍԴ անդամներին (3), նախկին դատախազներին (437), նախկին պատգամավորներին (72), «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի N1 հավելվածով սահմանված պաշտոններում պաշտոնավարած անձանց (28) և պաշտոնեական պարտականությունները կատարելիս զոհված պաշտոնատար անձի ընտանիքների անդամներին (11):

-«Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդնում» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 26 760.4 մլն դրամի չափով 2015 թվականի 18 267.4 մլն դրամի դիմաց: Ծախսերը 2015 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճում են շուրջ 8 493.0 մլն դրամով, որը պայմանավորված է մասնակիցների թվաքանակի աճով շուրջ 18.8 հազ. մարդով կամ 137.5 հազ. մարդ 2015 թվականի 118.7 հազ. մարդու դիմաց՝ մասնակիցների միջին աշխատավարձի չափի աճի պայմաններում:

-«Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստներ» ծրագրով նախատեսվում է 14 108.5 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին՝ 13 376.1 մլն դրամ): Ծախսերը աճում են 732.4 մլն դրամով, որը պայմանավորված է.

ա/ նպաստ ստացողների թվաքանակի աճով կամ 65 799 մարդ 2015 թվականի 62 741 մարդու դիմաց (01.07.2015 թվականի ցուցակային թվաքանակի (62 666) նկատմամբ կիրառվել է շուրջ 5% չափով աճ),

բ/ նպաստի միջին ամսական չափի փոփոխության պայմաններում կամ 17 868.2 դրամ 2015 թվականի 17 776 դրամի դիմաց:

-**«Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 2 186.3 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 1 894.2 մլն դրամ): Ծախսերի աճը 292.0 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ նվազագույն աշխատավարձը տարվա կտրվածքով հաշվարկելու հետ՝ 11.2 մլն դրամ: Արդյունքում հաշվարկային միջին ամսական աշխատավարձը կկազմի 123.1 հազ. դրամ 2015 թվականի 119.5 հազ. դրամի դիմաց,

բ/ էլեկտրաէներգիայի սակագնի աճի հետ կապված լրացուցիչ ծախսերի նախաատեսմամբ՝ 12.2 մլն դրամ,

գ/ 120 շահառուների աճով և հաստիքային միավորների թվի ավելացմամբ 109.1 (2015 թվականին՝ 686.5)՝ 268.6 մլն դրամ,

դ/ 2 նոր հեռախոսակետի ավելացմամբ, որոնց տարեկան սպասարկման գումարը կկազմի 0.2 մլն դրամ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի չորս տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում 2016 թվականին կխնամվեն տարեկան 1210 միայնակ ծեր և հաշմանդամ կենսաթոշակառու, իսկ մեկ օրվա սննդի գումարը մեկ շահառուի հաշվով կկազմի 1300 դրամ՝ պահպանելով 2015 թվականի մակարդակը:

-**«Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 142.9 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 140.6 մլն դրամ): Ծախսերի աճը 2.3 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ նվազագույն աշխատավարձը տարվա կտրվածքով հաշվարկելու հետ՝ 1.8 մլն դրամ: Արդյունքում հաշվարկային միջին ամսական աշխատավարձը կկազմի 88.7 հազ. դրամ 2015 թվականի 87.4 հազ. դրամի դիմաց,

բ/ էլեկտրաէներգիայի սակագնի աճի հետ կապված լրացուցիչ ծախսերի նախաատեսմամբ՝ 0.5 մլն դրամ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի «Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Երևան քաղաքում 2016 թվականին կսպասարկվի տարեկան 1500 միայնակ ծեր ու հաշմանդամ կենսաթոշակառու՝ պահպանելով 2015 թվականի մակարդակը:

-**«Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 17.9 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 17.8

մլն դրամ): Ծախսերի աճը 0.1 մլն դրամի չափով պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի աճի հետ կապված լրացուցիչ ծախսերի նախաատեսմամբ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից 2016 թվականին կսպասարկվի տարեկան 30 մարդ՝ պահպանելով 2015 թվականի մակարդակը:

-«ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 215.4 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 189.3 մլն դրամ): Ծախսերի աճը 26.0 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ նվազագույն աշխատավարձը տարվա կտրվածքով հաշվարկելու հետ՝ 8.4 մլն դրամ,

բ/ 17.6 մլն դրամի աճը՝ 1 748 սոցիալապես անապահով միայնակ տարեցների մեկանգամյա սննդի գումարի չափի փոփոխմամբ, որը 01.09.2016 թվականից նախատեսվում է մեկ շահառուի մեկ օրվա սննդի գումարը 27 դրամի փոխարեն հատկացնել 144 դրամ:

2016 թվականին "Առաքելություն Հայաստան" ԲՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 4200 մարդ՝ պահպանելով 2015 թվականի մակարդակը:

-"Վանաձորի տարեցների տանը խնամվողներին շուրջօրյա խնամք և սոցիալական սպասարկում" ծրագրի գծով նախատեսվում է ծախս 23.6 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 22.5 մլն դրամ): Ծախսերի աճը 1.1 մլն դրամի չափով պայմանավորված է նվազագույն աշխատավարձը տարվա կտրվածքով հաշվարկելու հետ:

2016 թվականին "Վանաձորի տարեցների տուն" հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 55 մարդ՝ պահպանելով 2015 թվականի մակարդակը:

Հարազատին կորցրած անձինք

-"Զոհված՝ հետմահու Հայաստանի ազգային հերոսների և Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի անդամներին տրվող պարգևավճար" ծրագրի ծախսը կազմում է 154.2 մլն դրամ (2015 թվականին՝ 156.0 մլն դրամ): Ծախսերի նվազումը 1.8 մլն դրամի չափով պայմանավորված է Առաջին աստիճանի Մարտական խաչ շքանշան ունեցող ընտանիքի թվի նվազմամբ կամ 34 (2015 թվականի 35 դիմաց), արդյունքում նախատեսվում է պարգևավճար տրամադրել 98 մարդու (2015 թվականի 99 մարդու դիմաց), այդ թվում Հայաստանի ազգային հերոսի ընտանիքին՝ 9, 250.0 հազ. դրամ նպաստի չափով, Առաջին աստիճանի Մարտական խաչ շքանշան ունեցող ընտանիքին՝ 34, 150.0 հազ. դրամ նպաստի

չափով և Երկրորդ աստիճանի Մարտական խաչ շքանշան ունեցող ընտանիքին՝ 55, 100.0 հազ. դրամ նպաստի չափով:

-**“Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ”** ծրագրով նախատեսվում է 4 969.2 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին՝ 4 944.0 մլն դրամ): Ծախսերի աճը 25.2 մլն դրամի չափով պայմանավորված է շահառուների թվի աճով կամ 24 846 2015 թվականի 24 720 դիմաց (2014 թվականի փաստացի 23 961 մարդու նկատմամբ կիրառվել է շուրջ 3.7% աճ)՝ պահպանելով հուղարկավորությունը կատարող անձանց տրվող թաղման նպաստի չափը՝ 200.0 հազ. դրամ:

-**“Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում հրաժեշտի ծիսակատարության և թաղման կազմակերպում, գերեզմանի բարեկարգման, մահարձանի և հուշատախտակի պատրաստման ու տեղադրման աշխատանքներին աջակցություն”** ծրագրով 2016 թվականին նախատեսվում է ծախս 59.7 մլն դրամի չափով (պահպանվել է 2015 թվականի համար նախատեսված չափը):

Ընտանիքի անդամներ և զավակներ

-**”Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ”** ծրագրի ծախսը կազմում է շուրջ 38 362.0 մլն դրամ (պահպանվել է 2015 թվականի համար նախատեսված չափը): 2016 թվականին նախատեսվում է նպաստ հատկացնել 104 685 ընտանիքի, իսկ նպաստի միջին ամսական չափը կկազմի 30 537.6 դրամ:

-**”Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ”** ծրագրով նախատեսվում է 2 808.0 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին՝ 2 419.2 մլն դրամ): Ծախսերը աճում են 388.8 մլն դրամով, որը պայմանավորված է նպաստ ստացողների թվի աճով կամ 13 000 ընտանիք (2015 թվականի 11 200 ընտանիքի դիմաց)՝ նպաստի ամսական չափի պահպանման պայմաններում՝ 18 000 դրամ:

-**”Երեխայի ծննդյան միանվագ նպաստ”** ծրագրով նախատեսվում է շուրջ 9 280.0 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին՝ 8 738.0 մլն դրամ): Ծախսերը աճում են շուրջ 542.0 մլն դրամով, որը պայմանավորված է.

կանխատեսվող ծնունդների թվի աճով՝ 735 երեխա (2016 թվականի հաշվարկներում հաշվի է առնվել ըստ ՀՀ ԱՎԾ 2014 / 2013 թվականների փաստացի ծնունդների բացարձակ աճը 2.97%, պակասեցնելով 2015 թվականի հունվար-հունիս ամիսների ծնունդների շարժի նվազման թիվը՝ 530 երեխա), արդյունքում երեխաների ընդհանուր թվաքանակը կանխատեսվում է 43 779 2015 թվականի 43 044 դիմաց: Վերջինիս նկատմամբ կիրառվել է

2013-2014 թվականներին փաստացի ընդհանուր ծնված երեխաների նկատմամբ երրորդ և ավելի՝ 7 280 մարդ կամ 16.63%, այդ թվում երրորդ և չորրորդ (15.83%) կամ 6 930 ու հինգ և ավելի (0.8%) կամ 350 երեխաների տեսակարար կշիռները (2015 թվականին՝ 43 044 մարդ, որից երրորդ և ավելի երեխաների թիվը՝ 6 754 մարդ):

2016 թվականին կպահպանվի 2015 թվականի համար նախատեսված երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափերը՝ առաջին և երկրորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 50.0 հազ. դրամ, երրորդ և չորրորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1.0 մլն դրամ, իսկ հինգ և ավելի երեխայի ծննդյան դեպքում՝ 1.5 մլն դրամ (երրորդ և ավելի երեխայի ծննդյան դեպքում նաև ընտանեկան դրամագլխի (կապիտալ) համակարգը):

-"Մայրության նպաստի վճարում" ծրագրով նախատեսվում է 9 794.8 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին՝ 5 887.3 մլն դրամ): Ծախսերը աճում են 3 907.5 մլն դրամով, որը պայմանավորված է.

ա/ օրենսդրական փոփոխությամբ, կապված չաշխատող անձանց (30 004 անձ) տրվելիք մայրության նպաստի (միանվագ շուրջ 127.0 հազ. դրամ) համար նախատեսված 3.8 մլրդ դրամով,

բ/ միջին օրական նպաստի չափի աճով (միջին տարեկան 5.1% ավելի) կամ 4 042 դրամ (հաշվարկներում հաշվի է առնվել 2015 թվականի առաջին կիսամյակի փաստացի կատարողականը):

-"Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ" ծրագրով նախատեսվում է 2 075.7 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին՝ 2 248.5 մլն դրամ): Ծախսերը նվազում են 173.1 մլն դրամով, որը պայմանավորված է.

ա/ ՀՀ ԱՍՀՆ «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի վերանվանմամբ "Ձորակ" հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի (հիմք՝ ՀՀ կառավարության 02.04.2015 թվականի N 381-Ն որոշումը), արդյունքում "Խարբերդի մասնագիտացված մանկատուն" ՊՈԱԿ-ից պակասեցվել է 60 խնամվող, 66.5 հաստիքային միավոր և դրանց հետ կապված փոխկապակցված ծախսերը նվազում են 162.0 մլն դրամի չափով,

բ/ շահառուների թվի նվազմամբ 15 մարդով՝ համապատասխան հաստիքային միավորների և այլ փոխկապակցված ծախսերի նվազմամբ՝ 18.9 մլն դրամ: Արդյունքում 2016 թվականին շահառուների ընդհանուր թիվը կկազմի 660 մարդ, իսկ հաստիքային միավորների թիվը՝ 795.75:

գ/ նվազագույն աշխատավարձի տարածմամբ տարվա կտրվածքով՝ 5.3 մլն դրամ: Արդյունքում հաշվարկային միջին ամսական աշխատավարձը կկազմի 160.7 հազ. դրամ 2015 թվականի 158.8 հազ. դրամի դիմաց,

դ/ էլեկտրաէներգիայի սակագնի աճի հետ կապված լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ՝ 2.5 մլն դրամ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի վեց երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում 2016 թվականին կխնամվեն տարեկան 660 երեխա 2015 թվականի 735 դիմաց՝ պահպանելով 2015 թվականի համար նախատեսված մեկ օրվա սննդի գումարը մեկ շահառուի հաշվով՝ 1 300 դրամ:

-«Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրում» ծրագրով նախատեսվում է 5.8 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2015 թվականի համար նախատեսված չափը): 2016 թվականին նախատեսվում է անձնական մանր ծախսերի համար գումար տրամադրել 195 երեխայի (7-12 տարեկան 100 երեխայի համար ամսական 2000 դրամ և 13-18 տարեկան 95 երեխայի համար ամսական 3000 դրամ) 2015 թվականի 194 դիմաց:

-«Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն» ծրագրի ծախսը կազմում է 16.1 մլն դրամ (2015 թվականին՝ 16.4 մլն դրամ): Ծախսերը նվազում են 0.3 մլն դրամով, որը պայմանավորված է հաշվարկների ճշտմամբ՝ էլեկտրաէներգիայի սակագնի աճի պայմաններում: Ծրագրով նախատեսվում է իրականացնել շահառուների ուսումնասիրություն, անհատական ծրագրերի կազմում, ժամանակավոր կացարանով ապահովում և այլն:

-«Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին միանվագ դրամական օգնության տրամադրում» ծրագրի ծախսը կազմում է 0.4 մլն դրամ (2015 թվականին՝ 0.6 մլն դրամ): Ծրագրի շրջանակներում երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտների միանվագ դրամական օգնություն ստացողների թվաքանակը կկազմի 8 շահառու (50.0 հազ. դրամ) 2015 թվականի 13 շահառուի դիմաց:

-«ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու ծառայություններ (բեռնաթափում)» ծրագրով նախատեսվում է 22.6 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին՝

22.5 մլն դրամ): Ծախսերը աճում են 0.1 մլն դրամով, որը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի տարածմամբ տարվա կտրվածքով և էլեկտրաէներգիայի սակագնի աճով:

-«**Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին բնաիրային օգնության փաթեթի տրամադրում»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 20.4 մլն դրամի չափով (պահպանվել է 2015 թվականի համար նախատեսված չափը): 2016 թվականին նախատեսվում է Լոռու և Շիրակի մարզերում, յուրաքանչյուրում 50 երեխայի համար բնաիրային օգնության փաթեթ տրամադրել 12 ամսվա կտրվածքով:

-«**Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների երեխաներին սոցիալական ծառայությունների տրամադրում»** ծրագրով նախատեսվում է 238.8 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին՝ 237.1 մլն դրամ): Ծախսերը աճում են 1.7 մլն դրամով, որը պայմանավորված է.

ա/ նվազագույն աշխատավարձի տարածմամբ տարվա կտրվածքով՝ 1.1 մլն դրամ: Արդյունքում հաշվարկային միջին ամսական աշխատավարձը կկազմի 97.6 հազ. դրամ 2015 թվականի 96.9 հազ. դրամի դիմաց,

բ/ էլեկտրաէներգիայի սակագնի աճի հետ կապված լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ՝ 0.6 մլն դրամ:

2016 թվականին երեք երեխաների սոցիալական հոգածության կենտրոնների ծառայություններից օգտվողների թիվը կկազմի 300 երեխա, իսկ մեկ օրվա սննդի գումարը մեկ շահառուի հաշվով՝ 580.0 դրամ՝ պահպանելով 2015 թվականի մակարդակը:

-«**Երեխաների գիշերօթիկ խնամքի ծառայություններ»** ծրագրով նախատեսվում է 996.3 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին՝ 1 092.1 մլն դրամ): Ծախսերը նվազում են 95.8 մլն դրամով, որը պայմանավորված է.

ա/ ՀՀ ԱՍՀՆ «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի վերանվանմամբ «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի (հիմք՝ ՀՀ կառավարության 02.04.2015 թվականի N 381-Ն որոշումը), արդյունքում շահառուների թիվը նվազում է 70 մարդով 2015 թվականի 800 դիմաց, համապատասխան հաստիքային միավորների և փոխկապակցված ծախսերի նվազմամբ 101.1 մլն դրամով: Արդյունքում 2016 թվականին շահառուների ընդհանուր թիվը կկազմի 730 մարդ, իսկ հաստիքային միավորների թիվը՝ 550:

բ/ նվազագույն աշխատավարձի տարածմամբ տարվա կտրվածքով՝ 4.4 մլն դրամ: Արդյունքում հաշվարկային միջին ամսական աշխատավարձը կկազմի շուրջ 95.0 հազ. դրամ 2015 թվականի 93.5 հազ. դրամի դիմաց,

գ/ էլեկտրաէներգիայի սակագնի աճի հետ կապված լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ՝ 0.9 մլն դրամ:

2016 թվականին նախատեսվում է 7 գիշերօթիկ խնամքի հաստատություններում խնամել 730 երեխա 2015 թվականի 8 գիշերօթիկ խնամքի և պաշտպանության հաստատությունների և 800 երեխայի դիմաց, իսկ սննդի մեկ օրվա ծախսը մեկ շահառուի հաշվով կկազմի 1300.0 դրամ՝ պահպանելով 2015 թվականի մակարդակը:

-«Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 73.4 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 70.0 մլն դրամ): Ծախսերի աճը 3.4 մլն դրամի չափով պայմանավորված է նվազագույն ամսական աշխատավարձի աճով, որը պայմանավորված է նվազագույն աշխատավարձը տարվա կտրվածքով հաշվարկելու հետ:

2016 թվականին «Հույսի կամուրջ» ՀԿ կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 250 մարդ, պահպանելով 2015 թվականի մակարդակը:

-«Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրում» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 39.4 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 38.1 մլն դրամ): Ծախսերի աճը 1.2 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ նվազագույն աշխատավարձի տարածմամբ տարվա կտրվածքով (ծրագրի գծով խնամատար ծնողների վարձատրությունը կատարվում է ամսական նվազագույն աշխատավարձի չափով)՝ 0.9 մլն դրամ,

բ/ մեկ երեխայի հաշվով տրվող օժանդակության փաթեթի գումարի չափի աճով կամ 771.5 հազ. դրամ 2015 թվականի 759.1 հազ. դրամի դիմաց՝ 0.3 մլն դրամ:

2016 թվականին նախատեսվում է պահպանել 2015 թվականի մակարդակը՝ խնամատար ընտանիքների թիվը (23 ընտանիք), ընտանիքներ տեղափոխվող երեխաների թիվը (25 երեխա):

-«Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 39.6 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 39.4 մլն դրամ): Ծախսերի աճը 0.2 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ նվազագույն աշխատավարձի տարածմամբ տարվա կտրվածքով՝ 0.03 մլն դրամ: Արդյունքում հաշվարկային միջին ամսական աշխատավարձը կկազմի 95.4 հազ. դրամ 2015 թվականի 95.2 հազ. դրամի դիմաց,

բ/ էլեկտրաէներգիայի սակագնի աճի հետ կապված լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ՝ 0.2 մլն դրամ:

2016 թվականին նախատեսվում է ծառայություն մատուցել Երևանի «Զատիկ» երեխաներին աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով՝ պահպանելով 2015 թվականի համար նախատեսված շահառուների թիվը՝ 20 մարդ, ինչպես նաև սննդի մեկ օրվա ծախսը մեկ շահառուի հաշվով՝ 1 300.0 դրամ:

-«Հաշմանդամ երեխաների ցերեկային խնամքի ծառայությունների մատուցում Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի N 92 ներառական մանկապարտեզում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 26.4 մլն դրամի չափով ծախս: Ծրագրով նախատեսվում է 18 աշխատողի համար ծախս աշխատավարձի մասով, ներառյալ եկամտային հարկը (հաշվարկներում հաշվի է առնվել նվազագույն աշխատավարձի տարածումը տարվա կտրվածքով):

2016 թվականին "Երևանի քաղաքապետարանի N 92 մանկապարտեզ" համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 24 մարդ:

-«ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 07-3832 գործով 03.11.2007թ. վճռի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողը կորցնելու կապակցությամբ կրած վնասի հատուցում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 3.2 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին՝ 3.0 մլն դրամ): Ծախսերի աճը 0.2 մլն դրամի չափով պայմանավորված է նվազագույն աշխատավարձը տարվա կտրվածքով հաշվարկելու հետ:

-«ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 05-1680 գործով 15.07.2005թ. վճռի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողը կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 1.1 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2015 թվականի մակարդակը):

-«Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության 1-ին ատյանի դատարանի 08.06.2012թ. Գործ N ԵԴԿ /1247/02/10/ վճռի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողը կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 0.4 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2015 թվականի մակարդակը):

-«ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի գործով վճիռների համաձայն կրած վնասների փոխհատուցում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 7.2 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին՝ 6.3 մլն դրամ): Ծախսերի աճը 0.9 մլն դրամի չափով պայմանավորված է նվազագույն աշխատավարձի տարածմամբ տարվա կտրվածքով:

Գործազրկություն

-**«Մասնագիտական կողմնորոշման, համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 30.0 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 31.2 մլն դրամ): Ծախսերի նվազումը 1.2 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ նվազագույն աշխատավարձը տարվա կտրվածքով հաշվարկելու հետ՝ 0.2 մլն դրամ: Արդյունքում հաշվարկային միջին ամսական աշխատավարձը կկազմի 101.7 հազ. դրամ 2015 թվականի 100.8 հազ. դրամի դիմաց,

բ/ էլեկտրաէներգիայի փաստացի ծախսերի նվազմամբ՝ սակագնի աճի պայմաններում՝ 1.3 մլն դրամ,

գ/ վերապատրաստվողների գծով 1 ժամվա արժեքի աճով կամ 3 038 դրամ 2015 թվականի 2 900 դրամի դիմաց՝ 0.4 մլն դրամ,

դ/ առանձին տնտեսագիտական դասակարգման հոդվածների գծով ծախսերի նվազմամբ՝ փաստացի կատարողականից ելնելով՝ 0.5 մլն դրամ:

2016 թվականին նախատեսվում է ծառայություն մատուցել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով:

-**«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 81.0 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 77.3 մլն դրամ): Ծախսերի աճը 3.8 մլն դրամի չափով պայմանավորված է շահառուների թվի աճով՝ 81 (2015 թվականին՝ 77 շահառու):

-**«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 269.0 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 301.2 մլն դրամ): Ծախսերի նվազումը 32.2 մլն դրամի չափով պայմանավորված է շահառուների թվի կրճատմամբ՝ 400 շահառու և 30 հաշմանդամություն ունեցող անձանց համար ուղեկցող 2015 թվականի 450 շահառուի և 112 հաշմանդամություն ունեցող անձանց համար ուղեկցողի դիմաց: Հաշվարկներում հաշվի է առնվել նաև նվազագույն աշխատավարձի տարածումը տարվա կտրվածքով:

-**«Գործազուրկների և աշխատանաքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 146.0 մլն դրամի չափով (2015 թվականին 155.2 մլն դրամ): Ծախսերի նվազումը 9.2 մլն դրամի չափով պայմանավորված է շահառուների թվաքանակի նվազմամբ կամ 1 600 անձ 2015 թվականի համար նախատեսված 1 700 շահառուի դիմաց:

-**«Գործազուրկներին այլ վայրում աշխատանքի տեղավորմանն աջակցության տրամադրում»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 58.7 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 77.8 մլն դրամ): Ծախսերի նվազումը 19.1 մլն դրամի չափով պայմանավորված է մեկ շահառուի հաշվով ծախսերի փոփոխությամբ (42 շահառու): Հաշվարկներում հաշվի է առնվել նաև նվազագույն աշխատավարձի տարածումը տարվա կտրվածքով:

-**«Աշխատաշուկայի հետազոտման աշխատանքների կազմակերպում»** ծրագրով նախատեսվում է հատկացնել 5.0 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2015 թվականի համար նախատեսված չափը):

-**«Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 7.7 մլն դրամի չափով (պահպանվել է 2015 թվականի համար նախատեսված չափը):

2016 թվականին նախատեսվում է կազմակերպել բոլոր մարզերում և Երևան քաղաքում թվով 11 տոնավաճառներ:

-**«Աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 18.7 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 19.9 մլն դրամ): Ծախսերի նվազումը 1.2 մլն դրամի չափով պայմանավորված է հաշմանդամների աշխատատեղի հարմարեցման համար փաստացի կատարողականով՝ գործուղման, էլեկտրաէներգիայի և վառելիքի գծով ծախսերի պակասեցմամբ՝ էլեկտրաէներգիայի սակագնի աճի պայմաններում:

Միաժամանակ հաշվարկներում հաշվի է առնվել նաև նվազագույն աշխատավարձի տարածումը տարվա կտրվածքով: Արդյունքում հաշվարկային միջին ամսական աշխատավարձը կկազմի 89.6 հազ. դրամ 2015 թվականի 86.9 հազ. դրամի դիմաց:

2016 թվականին նախատեսվում է ծառայություն մատուցել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի «Հաշմանդամների աշխատանքային վերականգնման Գյումրու կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով:

-**«Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 160.3 մլն դրամի չափով (2015 թվականին՝ շուրջ 114.4 մլն դրամ): Ծախսերի աճը 45.9 մլն դրամի չափով պայմանավորված է շահառուների թվաքանակի ավելացմամբ՝ 477 շահառու 2015 թվականի 350 շահառուի դիմաց: Հաշվարկներում հաշվի է առնվել նաև նվազագույն աշխատավարձի տարածումը տարվա կտրվածքով:

-**«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում»** ծրագրով նախատեսվում է հատկացնել 178.5 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին 153.5 մլն դրամ): Ծախսերի աճը 25 մլն դրամի

չափով պայմանավորված է շահառուների թվաքանակի ավելացմամբ՝ 789 շահառու 2015 թվականի 583 շահառուի դիմաց:

-**«Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում»** ծրագրով նախատեսվում է հատկացնել 1 126.0 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2015 թվականի մակարդակը):

Ծրագրով նախատեսվում է 3 217 միջոցառում (մեկ միջոցառման համար նախատեսվում է 350.0 հազ. դրամ):

-**«Աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար աջակցության տրամադրում»** ծրագրով նախատեսվում է հատկացնել 2.0 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին 10.0 մլն դրամ): Ծախսերի նվազումը 8.0 մլն դրամի չափով պայմանավորված է շահառուների թվի կրճատմամբ՝ 20 շահառու 2015 թվականի 100 շահառուի դիմաց:

-**«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում»** ծրագրով նախատեսվում է հատկացնել 65.1 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին 124.3 մլն դրամ): Ծախսերի նվազումը 59.2 մլն դրամի չափով պայմանավորված է շահառուների թվաքանակի կրճատմամբ՝ 1206 շահառու 2015 թվականի 2 301 շահառուի դիմաց:

-**«Գործազուրկների և աշխատանաքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի տրամադրում»** ծրագրով նախատեսվում է հատկացնել 132.0 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին 133.9 մլն դրամ): Ծախսերի նվազումը 1.9 մլն դրամի չափով պայմանավորված է շահառուների թվաքանակի նվազմամբ կամ 1 600 անձ 2015 թվականի համար նախատեսված 1 700 շահառուի դիմաց:

-**“Վարձատրվող հասարակական աշխատանքների կամակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում”** ծրագրով նախատեսվում է հատկացնել 45.0 մլն դրամի չափով ծախս:

2016 թվականին ծրագրով նախատեսվում է գործազուրկների համար կազմակերպել 30 միջոցառում (մեկ միջոցառման արժեքը 1.5 մլն դրամ):

-**“Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրում”** ծրագրով նախատեսվում է հատկացնել 50.0 մլն դրամի չափով ծախս:

2016 թվականին ծրագրով նախատեսվում է 50 միջոցառում (մեկ միջոցառման արժեքը 1.0 մլն դրամ):

Բնակարանային ապահովում

-**«Զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովման և բակարանային պայմանների բարելավում»** ծրագրով 2016 թվականին նախատեսված ծախսը կազմում է 500.0 մլն դրամ (պահպանվել է 2015 թվականի մակարդակը) (նշված ծրագրի բացատրագիրը տես քաղաքաշինության ոլորտի հատվածում):

-**«Վարձատրվող հասարակական աշխատանքների կամակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում»** ծրագրով նախատեսվում է հատկացնել 45.0 մլն դրամի չափով ծախս:

2016 թվականին ծրագրով նախատեսվում է գործազուրկների համար կազմակերպել 30 միջոցառում (մեկ միջոցառման արժեքը 1.5 մլն դրամ):

-**«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրում»** ծրագրով նախատեսվում է հատկացնել 50.0 մլն դրամի չափով ծախս:

2016 թվականին ծրագրով նախատեսվում է 50 միջոցառում (մեկ միջոցառման արժեքը 1.0 մլն դրամ):

Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)

-**«Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 61.5 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 59.0 մլն դրամ): Ծախսերի աճը շուրջ 2.5 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ նվազագույն աշխատավարձը տարվա կտրվածքով հաշվարկելու հետ՝ 1.2 մլն դրամ,

բ/ էլեկտրաէներգիայի սակագնի աճի հետ կապված լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ՝ 1.3 մլն դրամ:

2016 թվականին «Հանս Քրիստիան Կոֆոեդ» ՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 100 մարդ, իսկ մեկ շահառուի գծով մեկ օրվա սննդի գծով ծախսը՝ 760.0 դրամ (սնունդը կտրվի օրական երկու անգամ)՝ պահպանելով 2015 թվականի մակարդակը:

-**«ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում»** ծրագրի գծով ծախսը կազմում է 1 485.1 մլն դրամ (պահպանվել է 2015 թվականի մակարդակը): 2016 թվականին նախատեսվում է փոխհատուցում տրամադրել «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի N 8 հավելվածի 4-րդ կետով սահմանված սանդղակին համապատասխան՝ մինչև 1931 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ

ծնված, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակից և մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող՝ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված անձանց, ինչպես նաև կառավարության սահմանած այլ սոցիալական խմբերին՝ կառավարության սահմանած կարգով:

-«Փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներ» ծրագրի գծով նախատեսվում է ծախս շուրջ 35.2 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 34.0 մլն դրամ): Ծախսերի աճը 1.2 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ նվազագույն աշխատավարձը տարվա կտրվածքով հաշվարկելու հետ՝ շուրջ 1.1 մլն դրամ: Արդյունքում հաշվարկային միջին ամսական աշխատավարձը կկազմի 91.5 հազ. դրամ 2015 թվականի 88.4 հազ. դրամի դիմաց,

բ/ էլեկտրաէներգիայի սակագնի աճի հետ կապված լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ՝ 0.08 մլն դրամ:

-«Փախստականների կեցության խնդիրների լուծման միջոցառումներ» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 22.9 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 22.0 մլն դրամ): Ծախսերի աճը 0.9 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ նվազագույն աշխատավարձը տարվա կտրվածքով հաշվարկելու հետ՝ 0.4 մլն դրամ: Արդյունքում հաշվարկային միջին ամսական աշխատավարձը կկազմի 101.7 հազ. դրամ 2015 թվականի 98.3 հազ. դրամի դիմաց,

բ/ էլեկտրաէներգիայի սակագնի աճի հետ կապված լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ՝ 0.5 մլն դրամ:

-«Վետերանների պատվովճարներ» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 570.6 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 338.4 մլն դրամ): Ծախսերի աճը 232.2 մլն դրամի չափով պայմանավորված է պատվովճար ստացողների թվի նվազման պայմաններում կամ 951 մարդ (2015 թվականին՝ 1 128 մարդ)՝ պատվովճարի ամսական չափի աճով կամ 50.0 հազ. դրամ (համաձայն ՀՀ կառավարության 26.03.2015 թվականի N 357-Ն որոշման, 2015 թվականի մայիսի 1-ից պատվովճարի ամսական չափը սահմանվել է 50 հազ. դրամ տարեսկզբի 25.0 հազ. դրամի դիմաց):

-«ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998 թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածի 1-ին մասով սահմանված պարգևավճարների տրամադրում» ծրագրի գծով ծախսը կազմում է 11 645.9 մլն դրամ (2015 թվականին՝ 10 409.5 մլն դրամ): Ծախսերի աճը

1 236.4 մլն դրամի չափով պայմանավորված է պարգևավճար ստացողների թվի փոփոխությամբ կամ 37 917 մարդ 2015 թվականի 39 194 դիմաց (հաշվարկներում հաշվի է առնվել 2015 թվականի հուլիս ամսվա ցուցակային թվաքանակը (37 728), որի նկատմամբ կիրառվել է աճ 0.5% չափով) և պարգևավճարի միջին ամսական չափի փոփոխությամբ կամ 25.6 հազ. դրամ 2015 թվականի 22.1 հազ. դրամի դիմաց:

-«Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 49.8 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 47.8 մլն դրամ): Ծախսերի աճը 2.0 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ նվազագույն աշխատավարձը տարվա կտրվածքով հաշվարկելու հետ՝ 1.0 մլն դրամ: Արդյունքում հաշվարկային միջին ամսական աշխատավարձը կկազմի 92.4 հազ. դրամ 2015 թվականի 89.8 հազ. դրամի դիմաց,

բ/ էլեկտրաէներգիայի սակագնի աճի հետ կապված լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ՝ 1.0 մլն դրամ:

2016 թվականին նախատեսվում է ծառայություն մատուցել «Հանգրվան» ՊՈԱԿ-ի միջոցով:

Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)

-«Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարությունների աշխատակազմերի մասով) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության միգրացիոն պետական ծառայության», «Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում», ինչպես նաև «Համալիր սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների աշխատողների այցելության ծախսերի փոխհատուցում» ծրագրերով ծախսերը կազմում են 5 102.8 մլն դրամ 2015 թվականի 5 105.6 մլն դրամի դիմաց (նշված ծրագրերի բացատրագրերը տես պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերին վերաբերող հատվածում):

-«Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ ծրագիր» ծրագրով ծախսը կազմում է 607.8 մլն դրամ 2015 թվականի 294.5 մլն դրամի դիմաց (նշված ծրագրի բացատրագիրը տես նպատակային վարկային ծրագրերին վերաբերող հատվածում):

Սոցիալական ապշտպանությանը տրամադրող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)

-**«ԲՍՓ ձևաթղթի տպագրության ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 4.2 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 4.2 մլն դրամ): 2016 թվականին նախատեսվում է ձեռք բերել 364 638 հատ ձևաթուղթ 2015 թվականի 361 638 դիմաց:

-**«Սոցիալական ապահովության առանձին ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 562.4 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 596.3 մլն դրամ): Ծախսերի նվազումը 33.9 մլն դրամի չափով պայմանավորված է նպաստներին ուղղվող ծախսերի փոփոխությամբ:

-**«Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 2 816.3 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 2 790.6 մլն դրամ): Ծախսերի աճը 25.7 մլն դրամի չափով պայմանավորված է կենսաթոշակներին, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստներին, պարգևավճարներին, պատվովճարներին և այլ ծրագրերին ուղղվող ծախսերի փոփոխությամբ:

-**«Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների տրամադրման հետ կապված վարչարարական ծառայություններ»** ծրագրի ծախսը կազմում է 19.0 մլն դրամ (պահպանվել է 2015 թվականի համար նախատեսված չափը):

-**«ՍԾՏԳ ձևաթղթի տպագրության ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 13.9 մլն դրամի չափով (պահպանվել է 2015 թվականի համար նախատեսված չափը): 2016 թվականին նախատեսվում է ձեռք բերել 877 110 հատ ձևաթուղթ:

-**«Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 90.1 մլն դրամի չափով (2015 թվականին 89.4 մլն դրամ): Ծախսերի աճը 0.7 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ նվազագույն աշխատավարձը տարվա կտրվածքով հաշվարկելու հետ՝ 0.3 մլն դրամ: Արդյունքում հաշվարկային միջին ամսական աշխատավարձը կկազմի 114.9 հազ. դրամ 2015 թվականի 114.2 հազ. դրամի դիմաց,

բ/ էլեկտրաէներգիայի սակագնի աճի հետ կապված լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ՝ 0.4 մլն դրամ:

2016 թվականին նախատեսվում է ծառայություն մատուցել «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի միջոցով:

-**«Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում»** ծրագրի ծախսը կազմում է 26.1 մլն դրամ (պահպանվել է 2015 թվականի համար նախատեսված չափը):

-**«Փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվության կուտակում»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 38.9 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 38.5 մլն դրամ): Ծախսերի աճը շուրջ 0.4 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ նվազագույն աշխատավարձը տարվա կտրվածքով հաշվարկելու հետ՝ 0.2 մլն դրամ: Արդյունքում հաշվարկային միջին ամսական աշխատավարձը կկազմի 132.9 հազ. դրամ 2015 թվականի 131.8 հազ. դրամի դիմաց,

բ/ էլեկտրաէներգիայի սակագնի աճի հետ կապված լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ՝ 0.2 մլն դրամ:

-**"Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարում"** ծրագրի գծով նախատեսվում է ծախս շուրջ 2 616.0 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 4 492.0 մլն դրամ): Ծախսերի նվազումը 1 876.0 մլն դրամի չափով պայմանավորված է 2015 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությամբ՝ միջին օրական նպաստի չափի աճի պայմաններում (միջին տարեկան 5.1% ավելի) կամ 2 125 դրամ (հաշվարկներում հաշվի է առնվել 2015 թվականի առաջին կիսամյակի փաստացի կատարողականը):

-**«Ժամանակավոր անաշխատունակության թերթիկների տպագրություն»** ծրագրի ծախսը կազմում է 21.6 մլն դրամ (պահպանվել է 2015 թվականի համար նախատեսված չափը):

-**«Կենսաթոշակի նշանակման և վճարման համար անհրաժեշտ ձևաթղթերի տպագրություն»** ծրագրի ծախսը կազմում է 2.0 մլն դրամ (պահպանվել է 2015 թվականի համար նախատեսված չափը):

- **«Թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 18.9 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 18.3 մլն դրամ): Ծախսերի աճը 0.6 մլն դրամի չափով պայմանավորված է նվազագույն աշխատավարձը տարվա կտրվածքով հաշվարկելու հետ:

2016 թվականին «Ամքոր» միջազգային ՀԿ կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 32 մարդ, պահպանելով 2015 թվականի համար նախատեսված մակարդակը:

-**"Զինվորական կենսաթոշակառուների տեղեկատվական համակարգի ներդրման, վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ"** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 7.0 մլն դրամի չափով (պահպանվել է 2015 թվականի համար նախատեսված չափը):

-**"Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում"** ծրագրի ծախսը կազմում է 10 923.9 մլն դրամ (պահպանվել է 2015 թվականի համար նախատեսված չափը): 2016 թվականին նախատեսվում է սոցիալական

փաթեթով ապահովել պետական հիմնարկների և կազմակերպությունների շուրջ 151.7 հազ. աշխատողի:

-"Կենսաթոշակառուների հաշվառման միասնական տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայություններ" ծրագրի ծախսը կազմում է 42.0 մլն դրամ (պահպանվել է 2015 թվականի համար նախատեսված չափը):

-"Սոցիալական ապահովության պետական ծառայության տեղեկատվական ներքին պորտալի սպասարկում" ծրագրի ծախսը կազմում է 18.2 մլն դրամ (պահպանվել է 2015 թվականի համար նախատեսված չափը):

-"Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ" ծրագրի գծով նախատեսվում է ծախս 319.0 մլն դրամի չափով (2015 թվականին՝ 317.7 մլն դրամ): Ծախսերի աճը 1.3 մլն դրամի չափով պայմանավորված է.

ա/ նվազագույն աշխատավարձը տարվա կտրվածքով հաշվարկելու հետ՝ 0.2 մլն դրամ,

բ/ էլեկտրաէներգիայի սակագնի աճի հետ կապված լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ՝ 1.1 մլն դրամ:

2016 թվականին նախատեսվում է ծառայություն մատուցել «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն" ՓԲԸ-ի միջոցով:

-"Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության իրականացման ապահովում" ծրագրով նախատեսվում է հատկացնել 22.5 մլն դրամի չափով ծախս (2015 թվականին՝ 16.9 մլն դրամ): Ծախսերի աճը 5.6 մլն դրամի չափով պայմանավորված է «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում» ծրագրի նկատմամբ 2 % չափով ուղեկցման ծախսերի սահմանմամբ (հիմք՝ ՀՀ կառավարության 26.03.2015 թ. N 366-Ն որոշումը) 2015 թվականի 1.5% դիմաց:

«Վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացման ապահովում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 0.5 մլն դրամի չափով ծախս, որը կազմում է «Վարձատրվող հասարակական աշխատանքների կամակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում» ծրագրի 1%, որը ողղվում է ծրագրի իրականացման ապահովման համար:

-«Չաշխատող անձին մայրության նպաստի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրով, համաձայն ՀՀ կառավարության 08.10.2015 թ. «Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» N 1179-Ն որոշման, նախատեսվում է չաշխատող անձին տրամադրել մայրության նպաստի վճարման հետ կապված ծառայություններ

(ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ միջոցով) (հաշվարկներում այն հաշվարկվել է առավելագույն չափով (1%) 3 975.5 մլն դրամի նկատմամբ 30004 երեխայի համար):

-«Կենսաթոշակային համակարգի հանրային իրազեկման աշխատանքներ» ծրագրով նախատեսվում է ապահովել.

ա/ սոցիալական պաշտպանության համակարգի 114 թեժ գիծ ծառայության սպասարկումը (միջինում սպասարկում է ամսական շուրջ 3000 զանգ),

բ/ ՀԲ գրանտային ծրագրի շրջանակներում ներդրված՝ epension.am տեղեկատվական պորտալը (կայքէջի վարումը),

գ/ կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում ուսումնական ծրագրերի և հանրային իրազեկման աշխատանքների իրականացումը:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ոլորտ

Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում

-«Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարությունների աշխատակազմերի մասով) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» ծրագրի ծախսը կազմում է շուրջ 105.0 մլն դրամ (պահպանվել է 2015 թվականի համար նախատեսված չափը) (նշված ծրագրի բացատրագիրը տես պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերին վերաբերող հատվածում):

Սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերի համեմատությունը՝ 2014 թվականի փաստացի, 2015 թվականի հաստատված պետական բյուջեի նկատմամբ և 2016 թվականի բյուջետային տարվա հաստատված համապատասխան ցուցանիշների հետ, արտացոլված են սույն բացատրագրի N 14 աղյուսակում:

Զբաղվածության կարգավորման 2016 թվականի պետական ծրագիրը, երեխայի իրավունքների պաշտպանության 2016 թվականի տարեկան ծրագիրը, հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2016 թվականի տարեկան ծրագիրը արտացոլված են սույն բացատրագրի համապատասխանաբար NN 4-րդ, 5-րդ և 6-րդ հավելվածներում:

Սոցիալական պաշտպանության ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների 2016 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ծրագրային ցուցանիշներն արտացոլված են սույն բացատրագրի NN 20-4.1 և 20-4.2 աղյուսակներում:

Միաժամանակսոցիալականապահովությանոլորտումնախատեսվում է շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագիրը.

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ ծրագիր

Ծրագրի նպատակներն են՝

1. Բարելավել սոցիալական պաշտպանության ծառայությունների տրամադրումը,
2. Հզորացնել սոցիալական պաշտպանության նպաստներ վճարող և ծառայություններ տրամադրող մարմինների վերլուծական, մշտադիտարկման և գնահատման գործառույթները:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

1. Համալիր սոցիալական պաշտպանության ծառայությունների տրամադրման ընդլայնում:
2. Աջակցությունզբաղվածությաննորռազմավարությանիրականացմանը:
3. Կենսաթոշակային համակարգի արդիականացում:
4. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վերլուծական կարողությունների և մշտադիտարկման ու գնահատման համակարգերի հզորացում:
5. Ծրագրի կառավարում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 607.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 473.8 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 134.0 մլն. դրամ:

Գյուղատնտեսության ոլորտի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 15,581.6 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 16,560.5 մլն դրամի դիմաց: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերի նվազումը կազմում է 978.9 մլն դրամ կամ 5.9 տոկոս:

Ընթացիկ ծախսերի գծով հատկացված միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

«Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 71.3 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 70.2 մլն դրամի դիմաց կամ 1.1 մլն դրամով ավելի: Աճը պայմանավորված է հանրապետությունում 2015թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացման ազդեցության և էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում առաջացող լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Ծրագրի իրականացումն ուղղված է հողերի բերրիության պահպանման և բարձրացման ընդհանուր նպատակի կատարմանը՝ պարարտանյութերի խնայողաբար, արդյունավետ և էկոլոգիապես անվտանգ օգտագործման միջոցով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել գյուղատնտեսական նշանակության հողատարածությունների ագրոքիմիական դաշտային հետազոտություններ, հողանմուշների և պարարտանյութերի լաբորատոր փորձաքննություններ, 170 համայնքներում ագրոքիմիական քարտեզների և մշակաբույսերի պարարտացման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերի կազմման աշխատանքներ:

«Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտներում ծառայությունների մատուցում» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 135.2 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 134.1 մլն դրամի դիմաց կամ 1.1 մլն դրամով ավելի: Աճը պայմանավորված է հանրապետությունում 2015թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացման ազդեցության և էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում առաջացող լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Ծրագիրը նպատակաուղղված է 251650 հեկտարի վրա բույսերի առավել վնասակար և գրանցված սահմանափակ տարածում ունեցող կարանտին օրգանիզմների տարածման արեալը ճշտելու և նոր օջախներ հայտնաբերելու հետազոտությունների ու թվով 915 համայնքներում գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը:

«Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում» ծրագրի համար Նախատեսվում է հատկացնել 150.0 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հանրապետությունում առավել զանգվածային տարածված և վնասակար օրգանիզմների դեմ բույսերի պաշտպանության միջոցառումներ, այդ թվում պայքար մկնանման կրծողների դեմ՝ 70005.8 հեկտար տարածության վրա, պայքար մորեխների դեմ՝ 3500 հեկտար տարածության վրա, պայքար անտառի վնասակար օրգանիզմների դեմ՝ 9128 հեկտար տարածության վրա:

«Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի, բույսերի կարանտինի, գյուղմշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննությունների իրականացում» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 347.9 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 339.4 մլն դրամի դիմաց կամ 8.5 մլն դրամով ավելի: Աճը պայմանավորված է հանրապետությունում 2015թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացման ազդեցության և էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում առաջացող լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշիչ միջոցառումներ, կենդանական հումքին ու մթերքին վերաբերվող լաբորատոր փորձաքննություններ, դաբաղի և խոզերի ժանտախտի սերոմոնիտորինգ, ինչպես նաև բույսերի կարանտին վտանգավոր վնասակար օրգանիզմների, թաքնված վարակի հայտնաբերման և թունանյութերի ազդող նյութի որոշման լաբորատոր փորձաքննություններ:

«Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման միջոցառումներ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 59.1 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 58,9 մլն դրամի դիմաց կամ 0,2 մլն դրամով ավելի: Աճը պայմանավորված է հանրապետությունում 2015թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացման ազդեցության և էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում առաջացող լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա բարձրակարգ սերմերով ապահովելու գյուղացիական տնտեսություններին ու անհատներին: Նշված գումարների հաշվին նախատեսվում է իրականացնել բույսերի նոր սորտերի արտոնագրման և օգտագործման գործընթացի կանոնակարգում, սելեկցիոն նվաճումների պաշտպանության ապահովում, բույսերի սորտային կազմի ընդլայնում, ցանքատարածությունների ֆիտոսանիտարական վիճակի վատթարացման, հիվանդությունների, մոլախոտերի և վնասատուների զանգվածային բազմացման կանխարգելում:

«Գյուղական խորհրդատվական ծառայությունների իրականացում» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 397.3 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 395.8 մլն դրամի դիմաց կամ 1.5 մլն դրամով ավելի: Աճը պայմանավորված է հանրապետությունում 2015թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացման ազդեցության և էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում առաջացող լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգում գործող թվով 10 ԳԱՄԿ-երի և 1 ԳԱՀԿ-ի միջոցով ծրագրի իրականացումը կնպաստի գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացմանը, գյուղատնտեսության վարման արդյունավետության բարձրացմանը:

«Սննդամթերքի լաբորատոր փորձաքննությունների իրականացում» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 10.0 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի նպատակն է տեսչական ստուգումների միջոցով կատարել սննդամթերքի, սննդային հավելումների, սննդամթերքի հետ շփվող նյութերի նմուշառում և լաբորատոր փորձաքննություններ:

«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,214.5 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 1,188.6 մլն դրամի դիմաց կամ 25.9 մլն դրամով ավելի: Աճը պայմանավորված է հանրապետությունում 2015թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացման ազդեցության արդյունքում առաջացող լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Ծրագիրն ուղղված է անասնահամաճարակային կայուն իրավիճակ ստեղծելու և պահպանելու նպատակով կենդանիների վարակիչ հիվանդությունների, այդ թվում կենդանիների և մարդու համար ընդհանուր առավել վտանգավոր հիվանդությունների (դաբաղ, սիբիրախտ, լեպտոսպիրոզ, խոզերի ժանտախտ, բրուցելյոզ, տուբերկուլյոզ, պաստերելյոզ, խշխշան պալար (էմկար), կեղծ ժանտախտ և մեղուների վարոատոզ) կանխարգելմանն ու վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման համար կենսապատրաստուկների ձեռքբերմանը և անասնաբուժական մասնագետների վարձատրությանը:

«Բուսասանիտարական համակարգի բարելավման և մասնագիտական գիտելիքների բարձրացմանն աջակցում» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 5.8 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագիրն ուղղված է բուսասանիտարական վերահսկողության կատարելագործմանը, կարանտին վնասակար օրգանիզմների ներթափանցման կանխարգելմանը, արտադրվող բուսական մթերքի որակի բարձրացմանը: Նախատեսվում է 20 կարանտին վնասակար օրգանիզմների մեթոդական ուղեցույցների մշակում և տպագրություն, մասնագիտական վերապատրաստման ամենամյա դասընթացների կազմակերպում:

«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,163.0 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագիրն ուղղված է գյուղական համայնքներում գյուղատնտեսության համար առաջնահերթ համարվող ոլորտներում զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացմանը:

Նախատեսվում է սուբսիդավորել գյուղացիական տնտեսությունների տրամադրված վարկերի տոկոսադրույքները 6 տոկոսային կետի չափով:

«Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 2,760.0 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 1,829.4 մլն դրամի դիմաց կամ 930.6 մլն դրամով ավելի:

Հողօգտագործողներին մատչելի գնով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրի հիմնական նպատակն է գյուղատնտեսության մեջ օգտագործվող հիմնական նյութական միջոցների գների սուբսիդավորման միջոցով հողօգտագործողներին մատչելի գնով անհրաժեշտ պարարտանյութերի ձեռքբերման հարցում աջակցելը և հողերի արդյունավետ օգտագործման ու գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացման միջոցով գյուղացիական տնտեսությունների եկամուտների բարձրացմանը նպաստելը:

«Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերման համար» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 330.0 մլն դրամ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 1,260.6 մլն դրամի դիմաց կամ 930.6 մլն դրամով պակաս:

Հողօգտագործողներին մատչելի գնով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրի հիմնական նպատակն է գյուղատնտեսության մեջ օգտագործվող հիմնական նյութական միջոցների գների սուբսիդավորման միջոցով հողօգտագործողներին մատչելի գնով անհրաժեշտ դիզելային վառելանյութի ձեռքբերման հարցում աջակցելը և հողերի արդյունավետ օգտագործման ու գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացման միջոցով գյուղացիական տնտեսությունների եկամուտների բարձրացմանը նպաստելը:

«Անտառպահպանական ծառայություններ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,201.5 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 1,201.2 մլն դրամի դիմաց կամ 0.3 մլն դրամով ավելի: Աճը պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում առաջացող լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Ծրագրի նպատակն է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրինությանը հանձնված 344.2 հազ. հեկտար տարածքի վրա 20 անտառտնտեսության մասնաճյուղերի միջոցով իրականացնել անտառտնտեսվարում:

«Անտառային պետական մոնիտորինգի իրականացում» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 54.7 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 54.6 մլն դրամի դիմաց կամ 0.1 մլն դրամով ավելի: Աճը պայմանավորված է էլեկտրա-

էներգիայի սակագնի փոփոխման արդյունքում առաջացող լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Ծրագիրն ուղղված է ապօրինի հատումների ու բնափայտի տեղափոխման, իրացման, անտառածածկ տարածքների և բնափայտի պաշարների քանակական ու որակական փոփոխությունների և այլ բացասական գործողությունների կանխարգելման աշխատանքներին:

«ԵՄ-ի փորձարկման ռեֆերենս մեթոդներով մեղրի և ձկան փորձաքննությունների ծառայություններ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 30.0 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Նախատեսվում է հանրապետությունում արտադրված մեղրում և ձկնամթերքում մնացորդների (դեղամիջոցներ, պեստիցիդներ և այլն) մոնիթորինգային ծրագրի իրականացում:

«Գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստական աշխատանքների կազմակերպում և անցկացում» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 107.4 մլն դրամ:

Ծրագիրն ուղղված է 2014թ. հանրապետությունում իրականացված գյուղատնտեսության համատարած հաշվառման աշխատանքների ամփոփմանը:

Միաժամանակ գյուղատնտեսության ոլորտում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիր

Ծրագրի նպատակն է աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքներին արոտօգտագործման/անասնապահական առավել մրցունակ և կայուն համակարգերի ստեղծման հարցում:

Ըստ բաղադրիչների նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

ա) համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ- նախատեսվում է նախնական ընտրված համայնքների դրամաշնորհային ծրագրերի իրականացում,

բ) գյուղատնտեսությանն աջակցող ծառայությունների հզորացում-գյուղմթերքների արտադրողականության բարձրացում և կենդանիների առողջության ապահովման ծառայություններ, ուսուցումների կազմակերպում, ԳԱՄԿ-երի (գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոն) և ԳԱՀԿ-երի (գյուղատնտեսական աջակցության հանրապետական կենտրոն) տեխնիկական աջակցություն,

գ) մրցակցային դրամաշնորհների ծրագիր-գյուղմթերքի որակի բարձրացում, իրացման խնդրի լուծում, կոոպերացիայի ստեղծում, ՀՀ մարզերում նոր արտադրանքների և նոր տեխնոլոգիաների ներդրում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 648.2 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 473.9 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 174.2 մլն. դրամ:

2. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր

Ծրագրի նպատակն է աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքներին արոտօգտագործման/անասնապահական առավել մրցունակ և կայուն համակարգերի ստեղծման հարցում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 2,005.9 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,897.2 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 108.67 մլն. դրամ:

3. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի կողմից տրամադրված Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության դրամաշնորհային ծրագիր

Ծրագիրը փոխկապակցված է համանուն վարկային ծրագրեի հետ և ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 138.1 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 108.8 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 29.3 մլն. դրամ:

4. Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Գյուղական կարողությունների ստեղծում» ծրագիր

Ծրագրի նպատակն է նվազեցնել գյուղական աղքատությունը Հայաստանում, ինչպես նաև ստեղծել պտղի և ընկուզեղենի արտադրության համար անհրաժեշտ ծառայությունների մատուցման նպատակով կառույց, որը գյուղաբնակների համար կապահովի ավելի բարեկարգ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքներից օգտվելու հնարավորություն:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- ա) «Հայկական միրգ» բաժնետիրական ընկերության միջոցով աջակցություն պտղի և ընկուզեղենի արտադրությանը: Այս բաղադրիչով նախատեսվում է նաև աջակցություն արտահանման և ստանդարտների ոլորտին, որի իրականացման պարագայում կբարելավվի միջազգային շուկաներում հայկական մրգի համբավը:

բ) գյուղական ենթակառուցվածքներ, գյուղերում կենսամակարդակի բարձրացում, ենթակառուցվածքներում նեդրումներ (ջրագծերի կառուցում, վերականգնում, գազաֆիկացում, հեղեղատարեր և այլն) և գյուղական տրանսպորտային ներդրումներ (ճանապարհների, կամուրջների կառուցում և վերականգնում):

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 674.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 571.9 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 102.8 մլն. դրամ:

5. Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագիր

Նախորդ ծրագրի շարունակությունն է, ծրագրի նպատակն է նվազեցնել գյուղական աղքատությունը Հայաստանում, ինչպես նաև ստեղծել ավելի բարեկարգ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքներ:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 228.5 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 165.6 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 62.7 մլն. դրամ:

6. ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Գյուղական կարողությունների ստեղծում» ծրագիր

Ծրագրի նպատակն է նվազեցնել գյուղական աղքատությունը, որի համար նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

ա) այգեգործական արտադրության հավելյալ արժեքի շղթայի ստեղծում՝

- պայմանագրային այգեգործություն և տեխնոլոգիաների փոխանցում,
- արտահանման խթանում, ստանդարտների, որակի փորձաքննության և սերտիֆիկացիա,
- այգեգործության ֆինանսավորում:

բ) գյուղական վայրերի ֆինանսավորում- փոքր և միջին ծավալի արտադրության համար ֆինանսավորման մատչելիություն, այգեգործական վարկեր: Այդ փաթեթները կառաջարկվեն բանկերին և ունիվերսալ վարկային հաստատություններին գյուղական ֆինանսավորման կառույցի կողմից:

գ) գյուղական ենթակառուցվածքներ, գյուղերում կենսամակարդակի բարձրացում, ենթակառուցվածքներում նեդրումներ (ջրագծերի կառուցում, վերականգնում, գազաֆիկացում, հեղեղատարեր և այլն) և գյուղական տրանսպորտային ներդրումներ (ճանապարհների, կամուրջների կառուցում և վերականգնում):

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 1,129.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 945.8 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 184.0 մլն. դրամ:

7. ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագիր

Նախորդ ծրագրի շարունակությունն է, ծրագրի նպատակն է նվազեցնել գյուղական աղքատությունը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 106.3 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 95.6 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 10.6 մլն. դրամ:

8. Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող <<Գյուղական կարողությունների ստեղծում>> դրամաշնորհային ծրագիր

Նշված ծրագիրը փոխկապակցված է համանուն վարկային ծրագրի հետ, իրականացվում է վարկային ծրագրի ժամկետներում՝ նույն ուղղվածությամբ:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 103.2 մլն. դրամ դրամաշնորհային միջոցներ:

9. Դանիական թագավորության աջակցությամբ իրականացվող «Գյուղական կարողությունների ստեղծում» դրամաշնորհային ծրագիր

Նշված ծրագիրը փոխկապակցված է համանուն վարկային ծրագրի հետ, իրականացվում է վարկային ծրագրի ուղղվածությամբ:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 131.0 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 111.7 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 19.3 մլն. դրամ:

Ծրագրի շրջանակներում նախատեսված են նաև 814.2 մլն. դրամի չափով վարկավորմանն ուղղվող միջոցներ:

Այս ոլորտում Նախագծով նախատեսվող բյուջետային ծախսերի համեմատությունը ՀՀ 2014 թվականի բյուջետային տարվա փաստացի և ՀՀ 2015 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N4 աղյուսակում:

<u>Ջրային տնտեսության ոլորտի</u> համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 40,151.5 մլն դրամ՝ 2015 թվականի հաստատված պետական բյուջեի 38,503.1 մլն դրամի դիմաց: Ծախսերի աճը ՀՀ 2015 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 1,648.4 մլն դրամ կամ 4.3 տոկոս:

Ընթացիկ ծախսերի գծով հատկացված միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

«Ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություններին ֆինանսական աջակցության տրամադրում» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,250.7 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 949.0 մլն դրամի դիմաց կամ 301.7 մլն դրամի չափով ավել: Աճը պայմանավորված է հանրապետությունում էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Ծրագրով նախատեսվում է ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպությունների ընթացիկ ֆինանսական ճեղքվածքի ծածկման նպատակով պետական աջակցության տրամադրում՝ վերջիններիս համար հաստատված սակագնի և նվազագույն շահավետ գնի տարբերության չափով:

Գումարի հաշվարկման համար հիմք են հանդիսացել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2007թ. սահմանված ոռոգման ջրի սակագների հաշվարկները և 2010թ. վերանայված տարբերակները:

«Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 5,837.7 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 5,035.6 մլն դրամի դիմաց կամ 802.1 մլն դրամի չափով ավել: Աճը հիմնականում պայմանավորված է ոռոգման ջրի սակագինը նախորդ տարիների համեմատ անփոփոխ թողնելու հանգամանքով, էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ և ՀՀ կառավարության 30.09.2010թ. «2012-2016 թվականներին ջրօգտագործողների ընկերություններին պետական աջակցության միջնաժամկետ ռազմավարությանը հավանություն տալու և ռազմավարությունից բխող առանձին միջոցառումների իրականացումն ապահովելու գործողությունների մասին» N1291-

Ն որոշմամբ 2016թ. համար լրացուցիչ հավաքագրման մակարդակի (2.5 տոկոսային կետ) նախատեսմամբ:

«Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքներ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 321.7 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 119.7 մլն դրամի դիմաց կամ 202.0 մլն դրամի չափով ավել, որը պայմանավորված է «Կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքներ» և «Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և ընթացիկ նորոգում» ծրագրերի միավորմամբ, հանրապետությունում 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացման ազդեցության և էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ: Ծրագրով նախատեսվում է.

- մաքրել և վերանորոգել 141.3 կմ երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանց,
- հանրապետության գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշում,
- կոլեկտորադրենաժային ցանցերի տեխնիկական վիճակի պահպանում և շահագործում,
- ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկման աշխատանքներ:

«Ջրատեխնիկական կառույցների ուսումնասիրություններ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 11.8 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 11.75 մլն դրամի դիմաց կամ 0.05 մլն դրամի չափով ավել: Աճը պայմանավորված է հանրապետությունում էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Ծրագրով հատկացվող գումարը նախատեսվում է ուղղել ՀՀ ջրային օրենսգրքի 86-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 08.05.03թ. «Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հսկողության և զննման կարգը հաստատելու մասին» N 686 որոշման համաձայն՝ ՀՏԿ-ների զննման, ջրային համակարգերի անվտանգության ապահովման, արդյունավետ օգտագործման և պահպանության ծրագրերի ուսումնասիրության, ինչպես նաև տվյալ ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ մասնագիտական եզրակացություններ տալու նպատակով, որպես մշտապես գործող մարմին ստեղծված հանձնաժողովի գործունեության ապահովման ծախսերի ֆինանսավորմանը:

Խմելու ջրի ոլորտ

ՀՀ կառավարության 05.12.2013թ. ««Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների մասնավոր կառավարման շարունակությունն ապահովելու մասին» N 1366-Ա որոշման հիման վրա «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի»,

«Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների (այսուհետ՝ Ընկերություններ) մասնավոր կառավարման շարունակականության ապահովման նպատակով «SAUR S.A.S» կազմակերպության հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր, որի համաձայն ջրամատակարարման և ջրահեռացման մասնավոր կառավարման պայմանագրի գործողության ժամկետը սահմանվել է մինչև 2016թ. մայիսի 31-ը:

Միաժամանակ ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) Գերմանիայի զարգացման վարկերի բանկի, Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության և Համաշխարհային բանկի հետ համատեղ ներկայում իրականացնում է Հայաստանի ջրային ոլորտի ուսումնասիրություններ: Ընդ որում ՀՀ կառավարության 13.08.2015թ. նիստի N38 արձանագրության 17-րդ կետով հավանության է արժանացել «Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարությանը և ֆինանսավորման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշումը:

2016թ. ակնկալվում է, որ Ընկերությունները կանցնեն կառավարման նոր ձևի և տեղի կունենան որոշակի փոփոխություններ, ինչը և կենթադրի ոլորտի ֆինանսական կառավարման գծով նոր նպատակների սահմանում:

Հաշվի առնելով նախորդ տարիների մոտեցումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ 2016 թվականին նախատեսվում է ավարտել Ընկերությունների կառավարման պայմանագիրը և համաձայն ՀՀ կառավարության 2014թ. օգոստոսի 14-ի N 883-Ն և N 888-Ն որոշումների Ընկերությունները կանցնեն կառավարման նոր ձևի՝ վարձակալության, ուստի 2016թ. նախատեսվում է շարունակել գործառնական սուբսիդիայի տրամադրումը:

Միաժամանակ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 14.08.2014թ. N 883-Ն որոշմամբ հաստատված պետական-մասնավոր գործունեության հետագա զարգացմանն ուղղված՝ Հայաստանի խմելու ջրի ոլորտի բարեփոխումների գործողությունների ծրագրի 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն նախատեսվում է Ընկերությունների վարկային պարտավորությունները (կամ դրա մի մասը) կատարել վարձակալի կողմից՝ վարձավճարի տեսքով, ուստի մինչև հարցի վերջնական լուծումը ՀՀ կառավարության կողմից 2016թ. կշարունակվի Ընկերություններին տրամադրված վարկերի մայր գումարների մարման համար ՀՀ պետական բյուջեից Ընկերությունների սուբսիդավորման քաղաքականությունը:

Ջրամատակարարման ոլորտում ներկայում վարվող ֆինանսական քաղաքականությունը չի սահմանափակվում միայն սուբսիդավորմամբ: Պետության կողմից իրականացվում են մի շարք ֆինանսական ուղղակի և անուղղակի աջակցության միջոցառումներ, որոնց ամբողջությունը ապահովում է ոլորտային նպատակների (ներառյալ ստորև բերված կատարողական ցուցանիշ-

ների ապահովումը, Աղյուսակ 3) իրականացումը: Մասնավորապես, Ընկերությունների կողմից գանձվող սակագների հաշվարկում ներառված չեն ամորտիզացիոն հաշվարկները, ինչպես նաև արտաքին վարկերի գծով վճարվող տոկոսագումարները: Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ոլորտի ֆինանսական հարաբերությունների ամփոփ պատկերը.

Աղյուսակ 1. Ջրամատակարարման ոլորտի ֆինանսական ուղղակի և անուղղակի հոսքերի կանխատեսվող դինամիկա՝ առանց «Երևան Ջուր» ՓԲԸ-ի տվյալների (մլն դրամ)

Ֆինանսավորման տեսակ	Ֆինանսավորում	2013թ. փաստացի	2014թ. փաստացի	2015թ. սպասողական	2016թ. կանխատեսում
Հասույթ	Սպառողներ	5593.6	6814.1	7070.3	7083.2
Գանձման տոկոս		95.6	93.4	96.2	96.5
Տոկոսավճարների ներում (չստացված եկամուտ)	ՀՀ պետական բյուջե	812.6	1027.4	1046.0	1218.6
Սուբսիդիա ընկերություններին	ՀՀ պետական բյուջե	1764.8	1808.3	4145.2	5553.4
Այդ թվում՝ վարկերի մայր գումարների վերադարձման համար	ՀՀ պետական բյուջե	601.3	881.2	2965.8	3858.6
Նվիրատվություններ	ՄԱԶԾ	137.4	0	0	0
Կառավարման վճար	ՀՀ պետական բյուջե	1674.5	2324.6	1665.8	1625.3
Ներգրավված վարկեր	ՀԲ, ԱԶԲ, ՎԶԵԲ, ԵՆԲ, ԿՖՎ	10886.2	15071.1	8134.7	14962.2
ՀՀ կառավարության համաֆինանսավորում	ՀՀ պետական բյուջե	5155.4	4199.0	2930.5	3412.3
Տրամադրված դրամաշնորհներ	ԵՄ, ՎԶԵԲ, ԿՖՎ	563.4	3396.1	2486.7	2469.6
ՀՀ կառավարության համաֆինանսավորում	ՀՀ պետական բյուջե	-	519.3	590.0	558.6
Տրամադրված դրամաշնորհներ	Քարակերտ, Մայիսյան համայնքներ	3.0	3.0	-	-
Այլ		7.5	3.8	4.6	3.2

Վարվող ոլորտային քաղաքականության (ներառյալ սակագների գծով) արդյունքում միջնաժամկետ հատվածում ոլորտի ջրամատակարար կազմակերպությունների գծով (բացառությամբ «Երևան Ջուր» ՓԲԸ) շարունակվել է նախորդ տարիներին արձանագրված կուտակային շահույթ/վնաս ցուցանիշի աճ, որի առաջացման հիմնական պատճառներից է ամորտիզացիոն հատկացումները սակագներում չներառելու հանգամանքը: Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է Ընկերությունների (որոնց հիմնական բաժնետերը ՀՀ կառավարությունն է) ֆինան-

սական դիրքի ամփոփ պատկերը:

Աղյուսակ 2. Ֆինանսական դիրքի ամփոփ պատկերը (առանց «Երևան Ջուր» ՓԲԸ-ի տվյալների)

մլն դրամ

	2013թ. փաստացի	2014թ. փաստացի	2015թ. սպասողական	2016թ. կանխատեսում
Հասույթ	5317.65	5561.8	6888.55	5903.0
Այլ եկամուտ	2561.4	2354.8	2429.03	2275.0
Ընդամենը ծախսեր	13132.8	12485.4	12805.18	14518.0
Տարեկան շահույթ/վնաս	-5426	-4568.8	-3487.60	-5622.0
Կուտակված շահույթ/վնաս	-41327.8	-45896.6	-48913.23	-67432.0

Ծանոթություն՝ Ցուցանիշների համար հիմք է ընդունվել հաշվապահական ստանդարտներին համապատասխան հաշվարկվող տվյալները:

Վերը նշված վարվող ֆինանսական կառավարման քաղաքականության արդյունքում ոլորտում շարունակվելու են բարեփոխումները և ներդրումները: Խմելու ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներն առավել ամբողջական կառավարելու նպատակով մշակվել են ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող 4 ընկերությունների սպասարկման տարածքների կատարողական հիմնական որոշ ցուցանիշներ, որոնք ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 3. Կատարողական հիմնական որոշ ցուցանիշների ամփոփ պատկերը (առանց «Երևան Ջուր» ՓԲԸ-ի տվյալների)

Տիրույթ	Ցուցանիշ	Միավոր	2016թ.
Ջրամատակարարում			
Ջրամատակարարման ծառայության ծածկույթը	1.1. Կենտրոնացված ջրամատակարարման համակարգին միացված համայնքների քանակը	համայնք	388
	1.2. Կենտրոնացված ջրամատակարարման համակարգին միացված բնակչության քանակ	մարդ	505,719
	1.3. Կենտրոնացված ջրամատակարարման համակարգին միացված բնակչության մասնաբաժինը	%	93

Ջրամատակարարման անընդհատություն	Խմելու ջրի մատակարարման օրական միջին կշռված տևողություն	Ժամ/օր	21.0
Ջրի որակ	3.1. Ազգային ստանդարտներին համապատասխանող նմուշների քանակ	հատ	69,242
	3.2. Ազգային ստանդարտներին համապատասխանող նմուշների %	%	99.7
Ծառայության մատուցման արդյունավետություն	Ջրի կորուստ	%	65
Կայունություն*	Ջրային օպերատորի կողմից՝ եկամտի հաշվին ընթացիկ ծախսերի ծախսածածկման մակարդակը	%	93
Ջրահեռացում			
Ծառայության ծածկույթը	Կենտրոնացված ջրահեռացման համակարգին միացած բնակչության մասնաբաժինը	%	72

Ընթացիկ ծախսերի գծով խմելու ջրի ոլորտին հատկացված միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

«Խմելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում՝ («Հայջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածք)» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 3,308.9 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 2,088.9 մլն դրամի դիմաց կամ 1,220.0 մլն դրամով ավել:

Ընկերությանը տրամադրվող սուբսիդիան նախատեսվում է ուղղել Ընկերության գործառնական գործունեության արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի ծածկմանը՝ 1,596.3 մլն դրամ (այդ թվում էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում պահանջվող լրացուցիչ գումարը՝ 245.5 մլն դրամ) և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի, Ասիական զարգացման բանկի և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացված վարկային ծրագրերի շրջանակներում տրամադրված վարկերի մայր գումարների մարմանը՝ 1,712.6 մլն դրամ:

«Խմելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում՝ («Նոր Ակունք» ՓԲԸ-ի սպասարկման տարածք)» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 331.8 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 267.6 մլն դրամի դիմաց կամ 64.2 մլն դրամով ավելի:

Ծրագրով նախատեսվող 331.8 մլն դրամ սուբսիդիայից 233.3 մլն դրամը կուղղվի Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացված «Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնում» ծրագրի գծով 28.02.2010թ. կնքված «Ենթավարկային պայմանագրում փոփոխություններ

կատարելու մասին» ենթավարկային պայմանագրով տրամադրված վարկի մայր գումարի մարմանը և Ընկերության գործառնական գործունեության արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի ծածկմանը՝ 98.5 մլն դրամը:

«Խմելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում՝ («Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածք)» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 765.5 մլն դրամ (Գերմանիայի զարգացման բանկի վարկային ծրագրի 1-ին փուլի ենթավարկի մայր գումարի մարման համար՝ 109.3 մլն դրամ, 2-րդ փուլի ենթավարկի մայր գումարի մարման համար՝ 656.2 մլն դրամ):

«Խմելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում՝ («Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածք)» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,043.7 մլն դրամ (Գերմանիայի զարգացման բանկի վարկային ծրագրի 1-ին փուլի ենթավարկի մայր գումարի մարման համար՝ 137.5 մլն դրամ, 2-րդ փուլի ենթավարկի մայր գումարի մարման համար՝ 906.2 մլն դրամ):

«**Ոռոգման համակարգերի հիմնանորոգում»** ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 1,000.0 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի գծով նախատեսվում է ոռոգման ոլորտի կազմակերպությունների (ջրօգտագործողների ընկերություններ, ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություններ) կողմից շահագործվող ջրային համակարգերում իրականացնել կապիտալ նորոգման աշխատանքներ:

Միաժամանակ ջրային տնտեսության ոլորտում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման ծրագիր

Ծրագրի նպատակն է ոռոգման նոր համակարգերի կառուցումը՝ նվազեցնելով ոռոգման կախվածությունը հոսանքատար մեխանիկական ոռոգումից, դարձնելով այն տնտեսապես շահավետ և կայուն: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝

ա/ Ոռոգման համակարգի բարելավում, այդ թվում՝ մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոսով, մեխանիկական ոռոգման ջուր տեղափոխող հեռացնող և այլ ջրանցքների վիճակի բարելավում: Կֆինանսավորի ոռոգման համակարգերի կառուցումը Մեղրի, Գեղարդալիճ, Բաղրամյան-Նորակերտ և Քաղցրաշեն համակարգերում:

բ/ Կառավարման տեղեկատվություն, այդ թվում՝ տեխնիկական հետազոտություններ, կարգավարական հսկողության և տվյալների ձեռքբերման (SCADA) համակարգի տեղադրում:

Մայր ջրանցքների և մի քանի այլ ջրընդունիչ կետերի 71 դիտակետում կտեղադրվի ջրաչափման և ջրի հոսքի կառավարման սարքի ժամանակակից մոդել:

գ/ Ծրագրի կառավարում և ՋՕԸ-ների աջակցման թիմ, այդ թվում՝ նախնական նախագծային փաստաթղթերի պատրաստումը, շինարարական աշխատանքների համակարգումն ու մոնիտորինգը, մրցութային փաստաթղթերի պատրաստումը և գնումային գործընթացի կառավարումը, ծրագրի գործողությունների մոնիտորինգը և ծրագրի իրականացման ընթացքի մասին հաշվետվությունների պատրաստումը, ՋՕԸ-ների ամրապնդմանն ուղղված գործողությունների իրականացումը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 3,003.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,654.2 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 349.6 մլն. դրամ:

2. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագիր

Ծրագրի նպատակն է Շիրակի մարզում՝ Ախուրյան գետի վրա, գյուղատնտեսական նպատակներով արդյունավետ ոռոգման համակարգի ստեղծում, որը կհանդիսանա գետի ամբողջ ավազանի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման մաս:

Ծրագրով նախատեսվում է ավարտին հասցնել կիսակառույց պատվարը, օժանդակ կառույցները և վերականգնել թունելները, ինչը կապահովի ստորին բիեֆում տարաժաշրջանների անվտանգությունը: Կապսի ջրամբարի կառուցման առաջին փուլով նախատեսվում է վերականգնել և կառուցել Կապսի ջրամբարը ընդհանուր 25 մլն մ^3 ծավալով, ինչպես նաև կանոնավոր մոնիթորինգի գործընթացի ստեղծում, այդ թվում գոյություն ունեցող ջրաչափական կետերի վերակառուցում և նոր/լրացուցիչ ջրաչափական կետերի կառուցում Ախուրյան գետի վերին հոսանքի երկայնքով: Կապսի ջրամբարի պատվարային հանգույցը 1-ին փուլում նախատեսվում է կառուցել այնպես, որ հետագայում հնարավոր լինի պատվարը բարձրացնել՝ հասցնելով ջրամբարի ծավալը 60 մլն մ^3-ի:

Երկրորդ փուլում հնարավոր կլինի իրականացնել առաջին փուլում մշակվելիք ջրային համակարգի ինտեգրված կառավարման պլանը և վերականգնել կամ արդիականացնել գյուղատնտեսական տարածքների ոռոգման համակարգերը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 286.3 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 233.0 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 53.3 մլն. դրամ:

3. Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վերդու ջրամբարի կառուցման ծրագիր

Ծրագրի նպատակն է Վեդու ջրամբարի և ինքնահոս ոռոգման համակարգի կառուցումը, ինչը կբարձրացնի ջրապահովման մակարդակը և կնպաստի գյուղատնտեսության զարգացմանը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել պատվարը, օժանդակ կառուցվածքները, փոխադրող համակարգը՝ գետից մինչև ջրամբար և հեռացնող խողովակաշարը (ինքնահոս): Վեդու 29 մլն մ^3 ընդհանուր ծավալով ջրամբարի կառուցումը կբարձրացնի Վեդի և Արարատ ՋՕԸ-ների շուրջ 3200 հա հողատարածքների ջրապահովման մակարդակը, շահագործումից կհանվեն թվով 11 պոմպակայաններ՝ տարեկան կտնտեսելով շուրջ 19մլն կվտ/ժամ էլեկտրաէներգիա: Բացի այդ, երկրորդ/երրորդ կարգի ջրանցքների վերակառուցման և ցանցի արդիականացման արդյունքում կկրճատվեն ոռոգման ջրի կորուստները, ինչպես նաև շահագործման և պահպանման ծախսերը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 2,370.5 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,229.8 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 140.7 մլն. դրամ:

4. Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր

Ծրագիրը կնպաստի բարելավել և արդիականացնել Հայաստանի ոռոգման համակարգերը՝ կրճատելով շահագործման և պահպանման ծախսերը, ոռոգման համակարգերում կրճատել բարձր ջրակորուստները, նվազեցնել էլեկտրաէներգիայի ծախսումները կամ բարձրացնել էներգածախսատար համակարգերի արդյունավետությունը, վերանախագծել ներտնտեսային ցանցերը՝ գոյություն ունեցող հողօգտագործման մեթոդներին համապատասխան: Զարգացման նպատակի իրականացմանը ենթադրվում է հասնել հետևյալ միջոցառումների միջոցով.

ա) մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոս համակարգերով,

բ) որոշ մայր և երկրորդ կարգի ջրանցքների վերականգնում,

գ) ՋՕԸ-ների ներտնտեսային ոռոգման ցանցերի արդիականացում,

դ) ՋՕԸ-ների կառավարչական ներուժի ամրապնդում և Ծրագրի կառավարում, շինարարական փաթեթների նախապատրաստում, խորհրդատվական ծառայություններ և այլն:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 916.9 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 728.4 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 188.5 մլն. դրամ:

5. Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծրագիր

Ծրագրով նախատեսված է նաև Արփա-Սևան թունելի հիմնանորոգման աշխատանքներ, «Որոտան-Արփա-Սևան» ջրային համակարգի պահպանում ու շահագործում՝ ապահովելով

հիդրոհանգույցի (որի կազմի մեջ մտնում են՝ գլխային հանգույցը՝ 21.6 կմ երկարությամբ, ոչ ճնշումային թունելը, թունելի վերջնամասում 766 մ երկարությամբ արագահոսը) համակարգի անվտանգ, անխափան շահագործումն և պահպանումը, ինչը թույլ է տալիս առավելագույն քանակի ջուր տեղափոխել Սևանա լիճ:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 1,727,4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 449.2 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 1,278.2 մլն. դրամ:

6. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր՝ երկրորդ փուլ

Ծրագիրը ԱԶԲ աջակցությամբ իրականացված ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի վարկային ծրագրի շարունակությունն է (սկսված դեռևս 2008թ.): Ծրագրի նպատակը ջրամատակարարման և ջրահեռացման բարելավումն է, որի իրականացման արդյունքում էապես կբարելավվի «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ սպասարկման տարածքում ջրամատակարարումը և ջրահեռացումը, կընդլայնվեն «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի տեխնիկական և կազմակերպական կարողությունները:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 4,251.0 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,581.3 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 669.7 մլն. դրամ:

7. Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է բարելավել՝

- «Աէրացիա» կեղտաջրերի մաքրման կայանը՝ հատկապես առաջնային մաքրումը և տիղմի մշակումը,
- Խմելու ջրի օբյեկտների մատակարարման արդյունավետությունը և անվտանգությունը Երևան քաղաքի հյուսիսային շրջաններում
- Խմելու ջրի ցանցի և հիմնական կեղտաջրերի կոլեկտորները:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 3,195.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,841.5 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 353.9 մլն. դրամ:

8. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Ծրագրի նպատակն է աջակցել Երևան քաղաքի ջրամատակարարման բարելավմանը՝ վերակառուցելով ջրամատակարարման ցանցը, փոխարինելով ճնշման պոմպերը և բնակարանների առանձին միացումները: Այս ծրագրով Երևան քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցում նախատեսվում է վերականգնել շուրջ 152 կմ ընդհանուր երկարությամբ ջրագծեր և մասնավոր 39000 միացումներ՝ մոտ 22 կմ ընդհանուր երկարությամբ և կառուցել շուրջ 30 նոր բակային պոմպակայաններ:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 390.5 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 312.4 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 78.1 մլն. դրամ:

9. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Ծրագրի նպատակն է աջակցել Երևան քաղաքի ջրամատակարարման բարելավմանը՝ ջրամատակարարման ցանցի վերակառուցման, ջրահեռացման համակարգերի բարելավման միջոցով և համարվում է նախորդ ծրագրի մասնաբաժին ԵՆԲ-ի աջակցությամբ:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 390.5 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 312.4 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 78.1 մլն. դրամ:

10. Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Ծրագրի նպատակն է աջակցել Երևան քաղաքի ջրամատակարարման բարելավմանը և համարվում է նախորդող վարկային ծրագրերի դրամաշնորհային մասնաբաժին:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 978.4 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 779.6 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 198.8 մլն. դրամ:

11. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականցվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Ծրագրի նպատակն է Երևան քաղաքի ջրամատակարարման համակարգի բարելավում, հոսակորուստների կրճատում, ինչպես նաև ծառայության մակարդակի բարձրացում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 148.5 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 118.3 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 30.2 մլն. դրամ:

12. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայջրմուղկոյուղի» ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ,

13. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ

Ծրագրերի նպատակն է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ սպասարկման տարածքում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնումը: Ծրագրի շրջանակներում նախատեսված է 6 քաղաքներում և 37 գյուղական բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հատվածների հրատապ վերականգնման աշխատանքների իրականացում:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայջրմուղկոյուղի» ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 652.2 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 522.1 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 130.1 մլն դրամ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 652.2 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 522.1 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 130.1 մլն դրամ:

14. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Շիրակ-ջրմուղկոյուղի» ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ,

15. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ

Ծրագրերի շրջանակներում նախատեսվում է իրականցնել Գյումրի քաղաքի 2-րդ գոտու հյուսիսային մաս, Սավոյան փողոցից դեպի հյուսիս, Օդանավակայանի բնակելի թաղամասերի, Շիրակացի փողոցի հարակից թաղամասերի, Սևերսի թաղամասի և Ե/գ թաղամասից մինչև Սելեկցիոն կայան ընկած հատվածի բաշխիչ ցանցերի վերականգնման, Գյումրի քաղաքի առավել ռիսկային կետերի (Աթոյան, Շիրակացի, Ղուկասյան փողոցների) կոյուղու համակարգի և այլ բաշխիչ ցանցերի վերականգնման աշխատանքներ:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Շիրակ-ջրմուղկոյուղի» ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 798.8 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 570.5 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 228.2 մլն դրամ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 702.1 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 570.5 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 131.6 մլն դրամ:

16. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Լոռի-ջրմուղկոյուղի» ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ,

17. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ

Ծրագրերով ամբողջությամբ կավարտվի Վանաձոր քաղաքի ջրամատակարարման համակարգի նորացումը: Ծրագրված է նաև կառուցել Վանաձոր համայքնի թիվ 8 (Դիմաց, Լագեր թաղամասեր) ճնշումային գոտու բաշխիչ ցանցը, Նովոսելցովո ջրատարի երկայնքով ձգվող 12 գյուղական համայնքների բաշխիչ ցանցերը, նաև թվով 3 ջրամբարներ: Վանաձոր քաղաքում կփոխարինվեն կոյուղու որոշ հատվածներ: Այս փուլի ավարտից հետո Վանաձորի օղակաձև համակարգն ամբողջությամբ կգործի, ինչն էլ թույլ կտա հարավային և հյուսիսային ջրաղբյուրները կապակցել միմյանց, արդյունքում համակարգում կապահովվի ջրամատակարարման անընդհատություն՝ շուրջօրյա ջրի մատակարարում «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկան ողջ տարածքում:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Լոռի-ջրմուղկոյուղի» ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ

փուլով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 132.6 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 104.1 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 28.5 մլն դրամ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երկրորդ փուլով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 132.6 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 104.1 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 28.5 մլն դրամ:

18. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Նոր ակունք» ՓԲԸ ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ,

19. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Նոր Ակունք» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ

Ծրագրերի նպատակն է կեղտաջրերի մաքրման կայանի կառուցումը, կոյուղու, պոմպակայանի, կոլեկտրի, կոյուղու ցանցի վերականգնումը, ինչպես նաև Արմավիր քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցի առավել վթարային ճանաչված հատվածների վերականգնումը, ինչը կնպաստի Արմավիր և Մեծամոր քաղաքների և Նորապատ համայնքի կեղտաջրերի մաքրման իրականացմանը: Աշխատանքներ կիրականացվեն նաև Արմավիր քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցի առավել վթարային ճանաչված հատվածների վերականգնման համար: Արմավիր քաղաքի ջրամատակարարման համակարգի բարեփոխումները նպատակ են հետապնդելու բարձրացնելու այդ համակարգի շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը, ինչպես նաև կրճատելու ջրի կորուստները և բարձրացնելու այդ համակարգի շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Նոր ակունք» ՓԲԸ ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 168.8 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 120.6 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 48.2 մլն դրամ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Նոր Ակունք» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 168.8 մլն դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 120.6 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 48.2 մլն դրամ:

20. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Հայջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-

ների մասնավոր կառավարման շարունակականության ապահովման դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի նպատակն է ապահովել «Հայջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների մասնավոր կառավարման շարունակականությունը: Ծրագրով շարունակվելու է ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավման և խմելու ջրի ջրամատակարարման ցանցերի արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքները:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 1,618.4 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,047.3 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 571.1 մլն. դրամ:

21. Գերմանիայի զարգացման և Եվրոպական միության հարևանության ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման դրամաշնորհային ծրագրի երրորդ փուլ

Ծրագրի նպատակն է ջրամատակարար ընկերությունների կողմից դուրս մնացած 560 գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 2,533.9 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 2,078.1 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 455.8 մլն դրամ:

22. Գերմանիայի զարգացման և Եվրոպական միության հարևանության ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Նոր Ակունք» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման դրամաշնորհային ծրագրի երրորդ փուլ

Ծրագրի նպատակն է կեղտաջրերի մաքրման կայանի կառուցումը, կոյուղու, պոմպակայանի, կոլեկտորի, կոյուղու ցանցի վերականգնումը, ինչը թույլ կտա Արմավիր, Մեծամոր քաղաքների ու Նորապատ համայանքի կեղտաջրերի մաքրման աշխատանքներ իրականացնել: Աշխատանքներ կիրականացվեն նաև Արմավիր քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցի առավել վթարային ճանաչված հատվածների վերականգնման համար: Արմավիր քաղաքի ջրամատակարարման համակարգի բարեփոխումները նպատակ են հետապնդելու բարձրացնելու այդ համակարգի շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը, ինչպես նաև կրճատելու ջրի կորուստները և բարձրացնելու այդ համակարգի շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 471.3 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 363.7 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 107.6 մլն դրամ:

23. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի ջրային ոլորտի ներդրումային ծրագրի անցումային խորհրդատուի ընտրության դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի իրականացման նպատակն է՝ մշակել ջրային համակարգի օգտագործման թույլտվության նախագիծը, պետական և մասնավոր գործընկերության (ՊՄԳ) գնման ռազմավարությունը և պլանը, առաջարկների ներկայացման հրավերը, կազմակերպել ՊՄԳ գնումը, մրցութային գործընթացների կառավարումը, կազմել ավարտական հաշվետվությունը և ֆինանսական հարցերի ամփոփումը և իրականացնել ծրագրի հետ կապված այլ աշխատանքներ:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 321.5 մլն դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 228.3 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 93.2 մլն դրամ:

Ջրային տնտեսության ոլորտի Նախագծով նախատեսվող ծախսերի համեմատությունը՝ ՀՀ 2014 թվականի բյուջետային տարվա փաստացի, ՀՀ 2015 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 5 աղյուսակում:

<u>Էներգետիկայի և բնական պաշարների ոլորտների</u> գծով Նախագծով նախատեսվում է հատկացնել **32,510.7** մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված **7,307.1** մլն դրամի դիմաց: Ծախսերի աճը ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 25,203.6 մլն դրամ (գերազանցում է 4.4 անգամ):

Ընթացիկ ծախսերի գծով հատկացված միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը:

➡ **<u>«Ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայություններ»</u>** ծրագրի Նախագծով նախատեսվում է հատկացնել **35.2 մլն** դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված **34.7** մլն դրամի դիմաց, կամ 0.5 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացման ազդեցության և էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Ծրագրի նպատակն է միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրման, ուսումնասիրման, պահպանման, վնասազերծման և թաղման ապահովումը՝ մարդկանց և շրջակա միջավայրի իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից պաշտպանելու համար:

➡ **«Ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայություն»** ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել **20.6** մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված **12.8** մլն դրամի դիմաց կամ 7.8 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի այլ եկամուտների նվազման արդյունքում աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ («Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 13-րդ հոդվածով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի կողմից երկրաբանական տեղեկությունները տրամադրվում են անվճար) և էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում ընդերքի վերաբերյալ երկրաբանական տեղեկությունների ընդունումը և պահպանումը, հանքավայրերի ու օգտակար հանածոների երևակումների պետական կադաստրի վարումը, երկրաբանական տեղեկության միասնական համակարգի ստեղծումը, վարումը, տնօրինումը, տրամադրումը, միասնական կոորդինատային համակարգով տրամադրված ընդերքի տեղամասերի ծայրակետային կոորդի-նատների համադրումը ֆոնդային նյութերի հետ, ընդերքօգտագործման ֆոնդի ստեղծումը և վարումը:

Միաժամանակ էներգետիկայի ոլորտում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. **Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր.**

Ծրագրի նպատակն է բարելավել հաղորդիչ ցանցի հուսալիության բարձրացումը, թողունակության մեծացումը և նվազեցնել էլեկտրաէներգիայի կորուստները: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերակառուցել Հրազդան ՋԷԿ-ից մինչ Շինուհայր 220 կՎ ենթակայան ընկած Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1 էլեկտրահաղորդման 220 կՎ օդային գծերի շուրջ 230 կմ հատվածը,: Նշված գիծը միացնում է էլեկտրահամակարգի երկու հիմնական էլեկտրաէներգիա արտադրող կայանները (Հրազդան ՋԷԿ, Որոտան կասկադ):

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 4,766.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 4,196.2 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 570.2 մլն. դրամ:

2. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում նախատեսվում է փոխարինել «Հաղթանակ» 220 կՎ, «Չարենցավան-3» և «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանների 30 և ավելի տարիներ շահագործման մեջ գտնվող ֆիզիկապես և բարոյապես մաշված սարքավորումները:

Վերականգնման արդյունքում կբարձրանա ենթակայանների, ինչպես նաև էներգահամակարգի աշխատանքի հուսալիությունը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 3,561.2 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,260.4 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 300.8 մլն. դրամ:

3. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման շրջանակներում 220 կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցման ծրագիր

Ծրագրի նպատակն է նպաստել էներգետիկ անվտանգության և սպառողների էլեկտրամատակարարման հուսալիության բարձրացմանը, էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացմանը:

Նախորդ տարիների ընթացքում Համաշխարհային բանկի աջակցությամբ 220 կՎ «Շինուհայր» ենթակայանը մասնակիորեն վերակառուցվել է: Ենթակայանում փոխարինվել են առաջնային լարման 220 կՎ լարման սարքվածքները, սակայն երկրորդային շղթաները, ռելեական պաշտպանության և ավտոմատիկայի սարքվածքները հնացած են և չեն բավարարում հուսալի և անվտանգ էլեկտրաէներգիայի հաղորդման պահանջները:

«Ագարակ-2» ենթակայանում, որն անմիջականորեն կապված է իրանական 230 կՎ լարման ցանցի հետ, նախատեսվում է տեղադրել լրացուցիչ 220/110 կՎ ավտոտրանսֆորմատոր, որն էներգահամակարգի տվյալ հատվածում կապ կստեղծի 220 և 110 կՎ լարման էլեկտրահաղորդման գծերի միջև և հնարավորություն կտա 110 կՎ «Ագարակ-1» ենթակայանից սնվող սպառողներին ապահովել էլեկտրաէներգիայի պահուստային սնուցմամբ:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 2,970.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,870.5 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 100.2 մլն. դրամ:

4. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման շրջանակներում կարգավորման կառավարման ավտոմատացված համակարգի (SCADA) ընդլայնման ծրագիր

Համակարգում արդեն իսկ ներդրված SCADA համակարգը լիարժեք գործող ու արդյունավետ դառնալու համար անհրաժեշտ է ընդլայնել և արդիականացնել համակարգը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է լրացուցիչ տեղադրել շուրջ 200 կմ օպտիկամանրաթելքային մալուխ, զգալիորեն ավելացնել SCADA համակարգից օգտվողների քանակը, արդիականացնել գոյություն ունեցող ծրագրային փաթեթը և ստեղծել հարևան երկրների SCADA համակարգերի հետ տվյալների միջսերվերային փոխանակման հնարավորություն:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 1,160.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,034.0 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 126.7 մլն. դրամ:

5. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականցվող<<Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I>> Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայանների ծրագիր

Ծրագրի նպատակն է միացնել հայկական և վրացական էներգահամակարգերը՝ վրացական սահմանին մոտ՝ Այրումում (Հայաստան) տեղակայվող 500/400/220 կՎ բարձր լարման հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանով (վերջնական հզորությունը 1050 ՄՎտ): Վրացական կողմից միացումը կլինի «Մառնեուլի» ենթակայանից 500 կՎ գծի միջոցով, հայկական կողմից միացումը կլինի Հրազդանից 400 կՎ գծի միջոցով (առաջին փուլում՝ «Ալավերդի» 220 կՎ գոյություն ունեցող գծի միջոցով):

Էլեկտրահաղորդման գծի կառուցմամբ զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացումը, ինչպես նաև կստեղծվի նախապայման՝ ԱՊՀ երկրների էլեկտրաէներգետիկական համակարգի հետ զուգահեռ աշխատանք կազմակերպելու համար:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 6,681.1 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 6,429.5 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 251.6 մլն. դրամ:

6. ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման ծրագիր

Հայկական ատոմային էլեկտրակայանի (ՀԱԷԿ) գործող էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետը՝ համաձայն ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից տրամադրված շահագործման լիցենզիայի ավարտվում է 2016թ.:

ՀԱԷԿ-ի անվտանգ շահագործումն ապահովելու և լրացուցիչ ժամկետում շահագործման լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է իրականացնել ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի

շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագրում նշված աշխատանքները՝ ամբողջ ծավալով և համապատասխան ժամկետներում:

ՀԱԷԿ-ի շահագործման լրացուցիչ ժամկետում անվտանգ շահագործումը կապահովի ՀՀ-ում սպառման համար արտադրվող էլեկտրական էներգիայի շուրջ 40%-ը, ինչպես նաև այն կտա լրացուցիչ ժամանակ ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրի համար շարունակել բանակցությունները այլ ներդրողների հետ:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 4,242.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,864.1 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 378.7 մլն. դրամ:

7. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման ցանցի բարելավման շրջանակներում Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի վերակառուցման ծրագիր

Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունը, բարելավել համակարգի կառավարումը և աջակցել բավարար էլեկտրամատակարարում ապահովելուն ուղղված ջանքերին:

Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի հիմնանորոգմամբ կկրճատվի Երևանի ՋԷԿ-ի 220/110/35 կՎ ենթակայանի սարքավորումների խափանումների հաճախականությունը: Նախատեսվում է նաև Երևանի ՋԷԿ-ի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական վերահսկման աջակցություն:

Ծրագրի շրջանակներում նախատեսված է նաև համակցված ցիկլով նոր էներգաբլոկի ծրագրի նախապատրաստման աշխատանքներ: Էլեկտրաէներգետիկ համակարգին պահանջվում է գազով էլէկտրաէներգիայի արտադրության նոր հզորություն՝ մատակարարման կարողության ճեղքվածքը մինչև 2020թ. կանխելու համար: ՀՀ կառավարությունը նախատեսում է կառուցել նոր ՀՑԷ՝ մասնավոր հատվածի ներգրավմամբ, ինչը կպահանջի մի շարք նախապատրաստական գործողություններ: Այն կներառի տեխնիկատնտեսական ուսումնասիրություն, բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում, գործառնությունների խորհրդատվություն և նոր ՀՑԷ համար պահանջվող այլ տեխնիկական աջակցություն:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 1,203.9 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,104.2 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 99.7 մլն. դրամ:

8. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման ցանցի բարելավման շրջանակներում <<Աշնակ>> ենթակայանի վերակառուցման և էլեկտրաէներգետիկական համակարգի կառավարման բարելավման ծրագիր:

Աշնակ 220/110/10 կՎ ենթակայանը կարևոր նշանակություն ունի Հայաստանի արևմտյան և հյուսիս-արևմտյան հատվածների սպառողներին հուսալի էլեկտրաէներգիա մատակարարելու տեսանկյունից: Ծրագրով նախատեսվում է վերոհիշյալ ենթակայանի վերակառուցումն ու համակարգի կառավարման բարելավման աշխատանքներ, որոնց արդյունքում կկրճատվեն սարքավորումների տեխնիկական պատճառներով առաջացող խափանումները և կբարելավվի էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունը:

Նախատեսված է նաև պահուստային կարգավարական կենտրոնի հիմնում, որը կնպաստի էլեկտրաէներգետիկական համակարգի կառավարման բարելավմանը, ինչպես նաև անհրաժեշտ մեքենաների և սարքավորումների ձեռքբերում էլեկտրահաղորդման ցանցի պահպանության համար:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 715.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 628.2 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 87.5 մլն. դրամ:

9. ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N2 էներգաբլոկի շահագործման նախագային ժամկետի երկարացման դրամաշնորհային ծրագիր

Ծրագիրն ուղղված է համանուն վարկային ծրագրի գծով իրականացվող աշխատանքների պայմանագրային կանխավճարների ֆինանսավորմանը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 3,925.9 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 3,783.8 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 142.1 մլն. դրամ:

10. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Էներգախնայողության դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի նպատակն է էներգախնայողության միջոցառումների իրականացումը՝ ապահովելով բնակարանային, հասարակական, արտադրական տարածքների ջեռուցման, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ծրագրերի իրականացումը ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 111.4 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 88.7 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 22.7 մլն. դրամ:

11. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երկրաջերմային հետախուզական հորատման դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի միջոցները կուղղվեն Քարքար տեղամասում երկրաջերմային աղբյուրների հորատման համար, որից հետո ներդրողներին կառաջարկվի ամբողջական հետազոտված տեղամաս երկրաջերմային էլեկտրակայանի կառուցման համար:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 1,631.9 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,423.1 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 208.8 մլն. դրամ:

12. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող <<Դրամաշնորհ արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման համար>> դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել արտադրական մասշտաբի արեգակնային ֆոտոէլեկտրական կայանների զարգացման ծրագրի նախապատրաստական աշխատանքները: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել արևային էներգիայի ռեսուրսի գնահատում, արևային ՖՎ պանելների գնում, թեստավորում և արևային էներգիայի ռեսուրսի գնահատման սարքավորումների գնում: Նախապես ընտրված տեղանքներում կիրականացվեն արեգակնային ճառագայթման չափումներ ու եղանակային պայմանների գրանցումներ, ինչպես և իրագործելիության նախնական ուսումնասիրություններ:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 342.4 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 272.8 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 69.6 մլն. դրամ:

Այս ոլորտում Նախագծով նախատեսված ծախսերի համեմատությունը ՀՀ 2014 թվականի բյուջետային տարվա փաստացի, ինչպես նաև ՀՀ 2015 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 6 աղյուսակում:

<u>Տրանսպորտի և կապի ոլորտների</u> գծով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 57,700.8 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 52,428.1 մլն դրամի դիմաց: Ծախսերի աճը ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 5,272.7 մլն դրամ կամ 10.1 տոկոս:

Ընթացիկ ծախսերի գծով հատկացված միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

«Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում».

Ծրագրի նպատակն է ապահովել անվտանգ և անխափան երթևեկության համար ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների և դրանց վրա գտնվող արհեստական կառույցների պահպանվածությունը:

Ծրագրի համար ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 6,256.7 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 5,958.8 մլն դրամի դիմաց, կամ ավել 297.9 մլն դրամով՝ պայմանավորված Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի վարկային համաձայնագրով ստանձնած պարտավորություններով (սկսած 2014թ.-ից և յուրաքանչյուր ֆիսկալ տարվա համար հանրապետական և միջպետական ճանապարհների շահագործման/պահպանման տարեկան բյուջեն ավելացվում է առնվազն 5%-ով):

Նշված ծրագրով նախատեսվում է իրականացնել 2930 կմ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ամառային պահպանման և 3510 կմ ձմեռային պահպանման, ինչպես նաև երեք թունելների և հինգ կամուրջների պահպանման ու շահագործման աշխատանքներ:

«Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում».

Նշված ծրագրի նպատակն է ապահովել անվտանգ և անխափան երթևեկության համար ՀՀ ընդհանուր օգտագործման մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանվածությունը:

Ծրագրով նախատեսվում է 837.9 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 798.0 մլն դրամի դիմաց, կամ ավել 39.9 մլն դրամով՝ պայմանավորված Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման վարկային ծրագրով ստանձնած պարտավորություններով (Փոխառուն պետք է մինչև Ծրագրի ավարտն ապահովի, որ Ծրագրի շրջանակում կենսական նշանակության ճանապարհային ցանցի հիմնանորոգված ճանապարհային հատվածների պահպանության համար հատկացվեն բավարար բյուջետային միջոցներ):

Ծրագրով նախատեսվում է իրականացնել 577.2 կմ մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ նորոգման և 1770.9 կմ ձմեռային պահպանման աշխատանքներ:

«Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆի) համակարգի պահպանում (սպասարկում)».

Նշված ծրագրի նպատակն է միջպետական բեռնափոխադրումներ իրականացնող բեռնատար տրանսպորտային միջոցների վրա հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆի) կիրառումը, որը հանդիսանում է միջպետական բեռնափոխադրումներ իրականացնելու համար պարտադիր

պայման: Հսկիչ սարքը նախատեսված է արձանագրելու բեռնատար տրանսպորտային միջոցի արագությունը, անցած ճանապարհը և վարորդի վարելու և հանգստի ռեժիմները:

Ծրագրով տախոնետ համակարգի անընդհատ և անխափան աշխատանքն ապահովելու համար ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 27.6 մլն դրամ:

«Պետական աջակցություն «Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ին ծրագրի գծով կազմակերպության կանոնադրական խնդիրների իրագործման նպատակով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 26.4 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Նշված ծրագրով նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության միասնական երթուղային ցանցի մշակման և զարգացման, միջպետական և միջմարզային երթուղիների չվացուցակների և սխեմաների նախագծերի մշակման և կատարելագործման աշխատանքներ:

Պետական աջակցություն «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ին ծրագրի գծով նշված կազմակերպության կանոնադրական խնդիրների իրագործման նպատակով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 210.6 մլն դրամ՝ ՀՀ 2015թ. պետական բյուջեով հաստատված 188.7 մլն դրամի դիմաց կամ ավել 21.9 մլն դրամով:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել ՀՀ ավտոմոբիլային ճանապարհային ցանցի զարգացման ու դրա նպատակային օգտագործման, պահպանման և հեռանկարային զարգացման ծրագրերի գծով ճանապարհների շինարարության ընթացքում տեխնիկական չափանիշների ստուգման և աշխատանքների արդյունքների ընդունման, ավտոմոբիլային ճանապարհների ու դրանց ինժեներական կառույցների վիճակի պարբերական ուսումնասիրության, նախագծային փաստաթղթերի իրականացված փորձաքննության, միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ու դրանց ինժեներական կառույցների պահպանման և շահագործման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման, ՀՀ պետական նշանակության ավտոճանապարհների ցանցի անձնագրավորման, ավտոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների ծածկի վիճակի տեխնիկական տվյալների հավաքագրման աշխատանքներ:

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի համեմատ ծախսի ավելացումը պայմանավորված է ՀՀ կառավարության 18.06.2015թ. N 666-Ա որոշմամբ վերը նշված ՊՈԱԿ-ին ամրակցված ճանապարհային անհարթությունը չափող լազերային սարքավորման (պրոֆայլեր) և Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 3-ի շրջանակներում ձեռքբերվելիք լաբորատոր սարքավորումներով կահավորված 2 ավտոմեքենաների ապահովագրության

անհրաժեշտությամբ և հանրապետությունում էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

«Հեռահաղորդակցության և կապի կանոնակարգման ծառայություններ» ծրագրով «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրական խնդիրների իրագործման համար ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 394.5 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 391.3 մլն դրամի դիմաց:

Ծրագրի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում հեռահաղորդակցության և կապի ծառայությունների որակի կանոնակարգումն ու բարելավումը, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության հաճախականությունների բաշխումների աղյուսակի կազմումը, ռադիոեթերի մոնիթորինգի և ազդանշանների տեխնիկական պարամետրերի չափումների անցկացումը, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախության սարքավորումների տեղորոշումը:

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի համեմատ 3.2 մլն դրամ ծախսի ավելացումը պայմանավորված է հանրապետությունում 2015թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացման ազդեցության և էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

«Ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին սուբսիդիայի տրամադրում» ծրագրով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 349.9 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 588.4 մլն դրամի դիմաց:

Ծրագրի նպատակն է ՀՀ կառավարության 07.02.2008թ. N 83-Ա որոշմամբ հաստատված Կոնցեսիոն պայմանագրի համաձայն սուբսիդավորել համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումներից «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի նախորդ տարվա արդյունքներով առաջացած տարեկան վնասը:

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի համեմատ 238.5 մլն դրամի ծախսի նվազումը պայմանավորված է 2015 թվականին՝ ոչ միայն 2014 թվականի, այլ նաև նախորդ տարիների գծով առաջացած պարտավորությունների փոխհատուցմամբ:

«Երկաթուղու շինարարության տնօրինություն» ՓԲԸ-ին սուբսիդիայի տրամադրում» ծրագրով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 39.2 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 39.1 մլն դրամի դիմաց:

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի համեմատ 0.1 մլն դրամի ավելացումը պայմանավորված է հանրապետությունում էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Ընկերությունը ստեղծվել է Հայաստան-Իրան երկաթուղու շինարարության նախագծի իրականացման նպատակով:

«Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում» ծրագրով մետրոպոլիտենով ուղևորափոխադրումների սպասարկման որակի բարելավման և երթևեկության անվտանգության ապահովման նպատակով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 2,717.1 մլն դրամ, որից.

- 2,018.5 մլն դրամը՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող ուղևորափոխադրման ծառայությունների սուբսիդավորման համար, որը ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված սուբսիդավորման գումարից ավել է 172.2 մլն դրամով՝ պայմանավորված հանրապետությունում 2015թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացման ազդեցության և էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

- 698.6 մլն դրամը՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Եվրոպական ներդրումային բանկի նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների գծով տոկոսների և մայր գումարի մարման համար:

«Համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների, սուբվենցիաների տրամադրում» ծրագրով վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների սպասարկման որակի բարելավման և երթևեկության անվտանգության ապահովման նպատակով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 629.6 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 576.4 մլն դրամի դիմաց, որը կուղղվի «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի կողմից ուղևորափոխադրման ծառայությունների մատուցման արդյունքում կրած վնասի փոխհատուցմանը:

Ծրագրի նպատակն է աջակցել Երևանի քաղաքապետարանին՝ վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայությունների սուբսիդավորման նպատակով:

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի համեմատ 53.3 մլն դրամ ծախսի ավելացումը պայմանավորված է հանրապետությունում 2015թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացման ազդեցության և էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

«Պետական աջակցություն Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ճաքալցման աշխատանքների իրականացման համար» և «Պետական աջակցություն Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների իրականացման համար» ծրագրերի գծով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է համապատասխանաբար 3,284.0 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված գումարների չափով և 2,361.0 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 2,122.0 մլն դրամի դիմաց:

Նշված ծրագրերի նպատակն է աջակցել Երևանի քաղաքապետարանին՝ Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և արտաքին լուսավորության ցանցի շահագործման ու պահպանման աշխատանքների իրականացման նպատակով:

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի համեմատ «Պետական աջակցություն Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների իրականացման համար» ծրագրի 239.1 մլն դրամ ծախսի ավելացումը պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

«ՀՀ օդանավակայաններում ՌԴ զորամիավորումների օդանավերի սպասարկման և մատուցվող ծառայությունների ծախսերի փոխհատուցում» ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև կնքված համաձայնագրերի համաձայն Հայաստանի Հանրապետությունում տեղակայված ՌԴ զորամիավորումների հասցեով ռազմական փոխադրումներ իրականացնող օդանավերի սպասարկումներն իրականացնող և ծառայությունները մատուցող կազմակերպություններին փոխհատուցելու նպատակով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 100.0 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

«Մարդասիրական բեռներ փոխադրող օտարերկրյա օդանավերի աերոնավիգացիոն սպասարկման, թռիչք-վայրէջքի, օդանավերի կանգառի և վերգետնյա սպասարկումների ու մատուցված ծառայությունների փոխհատուցում».

ԱՄՆ-ի միացյալ հայկական հիմնադրամի միջոցով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հասցեով առաքվող՝ մարդասիրական օգնության բեռներ տեղափոխող և «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության ու Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության կողմից համատեղ իրականացվող բարեգործական ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ չվերթների աերոնավիգացիոն վերգետնյա սպասարկումների ու մատուցված ծառայությունների փոխհատուցման նպատակով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի

նախագծով նախատեսվում է 10.0 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

«Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» ծրագրի իրակա-նացման նպատակով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 3060.0 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 3,792.5 մլն դրամի դիմաց::

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել աշխատանքներ թվով 34 ճանապարհահատվածներում, որից՝ 25 ճանապարհահատվածների (50.6 կմ) հիմնանորոգման, ասֆալտապատման, անցանելիության ապահովման և հողային պաստառի վերականգնման և կառուցման, 5 ճանապարհահատվածներում սողանքային ու փլուզված հատվածների վերականգնման աշխատանքներ:

«Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» ծրագրի իրականացման նպատակով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 940.0 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 207.5 մլն դրամի դիմաց:

Ծրագրի շրջանակներում իրականացվելու են աշխատանքներ թվով 7 տրանսպորտային օբյեկտի գծով, այդ թվում՝ 2 թունելի հիմնանորոգման (Դիլիջանի և Պուշլինի թունելների), 4 կամրջի հիմնանորոգման և 1 կամրջի կառուցման աշխատանքներ:

Միաժամանակ տրանսպորտի ոլորտում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի <<Բագրատաշեն>> անցման կետի կամրջի վերակառուցման ծրագիր

Ծրագրի հիմնական նպատակն է Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետի տարածքում նոր կամրջի կառուցումը, որը կնպաստի միջազգային ստանդարտներին համապատասխան Հայաստանի և Վրաստանի միջև գտնվող տվյալ անցակետով ատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 713.5 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 616.6 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 96.9 մլն. դրամ:

2. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր

Ծրագրի նպատակն է բարելավել գյուղական համայնքների շուկաների և ծառայությունների հասանելիությունը, ինչպես նաև ամրապնդել կենսական նշանակության ճանապարհային ցանցը կառավարելու կարողությունները: Ծրագիրն ուղղված է կենսական նշանակության ճանապարհային ցանցի ընտրված հատվածների վերականգնմանը: Մասնավորապես, նախատեսված է կենսական նշանակության ճանապարհային ցանցի՝ մոտ 170 կմ երկարությամբ ընտրված ճանապարհների բարելավման աշխատանքներ (որից մոտ 23 կմ երկարությամբ ընտրված կենսական նշանակության ճանապարհների հիմնանորոգում և ընթացիկ պահպանություն), ճանապարհային ակտիվների կառավարման համակարգի տվյալների բազայի ձեռքբերում և ներդրում, ճանապարհային երթևկության անվտանգության ծրագրի իրականացում: Ծրագրի ընթացքում առաջացած տնտեսումների հաշվին նախատեսված են նաև լրացուցիչ ճանապարհահատվածներ վերականգնել:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 3,115.5 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,608.3 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 507.2 մլն. դրամ:

3. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհացանցի լրացուցիչ ծրագիր

Ծրագրի նպատակն է վերականգնել կենսական նշանակության ճանապարհների ընտրված հատվածները՝ շուրջ 155 կմ ընդհանուր երկարությամբ:

Հաշվի առնելով Կենսական նշանակության ճանապարհացանցի վերականգնման խիստ անհրաժեշտությունը, նախատեսվում է շարունակել «Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավում» ծրագիրը՝ Համաշխարհային Բանկի կողմից տրամադրվող լրացուցիչ ֆինանսավորման հաշվին:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 3,545.6 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,146.4 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 399.2 մլն. դրամ:

4. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագիր

Ծրագրի հիմնական նպատակն է՝ հիմնանորոգել և վերակառուցել Հայաստանի Հանրապետության կենտրոնը Վրաստանի Հանրապետության հետ կապող՝ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման 92 կմ ընդհանուր երկարությամբ հիմնական տարանցիկ մայրուղին:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 970.3 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 881.0 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 89.3 մլն. դրամ:

5. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագիր

Ծրագրի հիմնական նպատակն է՝ հիմնանորոգել և վերակառուցել Հայաստանի Հանրապետության կենտրոնը Վրաստանի Հանրապետության հետ կապող՝ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման 92 կմ ընդհանուր երկարությամբ հիմնական տարանցիկ մայրուղին:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 2,264.0 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,055.7 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 208.3 մլն. դրամ:

6. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր

Ծրագրի նպատակն է Երևան-Աշտարակ և Երևան-Արարատ ճանապարհների վարակառուցումը և անվտանգության բարձրացումը, որի շրջանակներում ապահովվելու է նաև վերահսկողության վերաբերյալ խորհրդատվությունը, ինչպես նաև տրանսպորտային ոլորտի ռազմավարության ներքո ճանապարհային ենթասեկտորային ծրագրին օժանդակության տարամադրումը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում են իրականացնել հետևյալ աշխատանքները.

ա) Երևան-Աշտարակ 11.4 կմ երկարությամբ հատվածի վերակառուցում, ասֆալտե ծածկի ապամոնտաժում, բետոնե ծածկի տեղադրում, հիմնական հատվածներում և ուղեանցերում լուսավորության բարելավում,

բ) Երևան-Արարատ 37.9 կմ երկարությամբ հատվածի ճանապարհային անվտանգության բարձրացում, բետոնե շերտի տեղադրում, ջրահեռացման համակարգի կառուցում, երթևեկության անվտանգության բարելավում, երթևեկության և ուղղությունների նշանների տեղադրում, հիմնական հատվածներում և ուղեանցերում լուսավորության բարելավում,

գ) Արտաշատ-Արարատ հատվածում երթևեկության անվտանգության բարելավման աշխատանքներ՝ գծանշումներ և ճանապարհային նշանների և ուղղությունների ցուցանակների տեղադրում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 267.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 214.2 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 53.2 մլն. դրամ:

7. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր (Տրանշ 2)

Ծրագրի նպատակն է Աշտարակ-Թալին 41.9 կմ հատվածի վերակառուցումը և ներկայումս երկշարք ճանապարհի լայնացումը մինչև քառաշարք ճանապարհի:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում են իրականացնել հետևյալ աշխատանքները.

ա) ներկայումս երկշարք ճանապարհի լայնացումը մինչև քառաշարք ճանապարհի,

բ) ստորգետնյա և վերգետնյա անցումների և փոխհատումների վերակառուցում,

գ) Տ-աձև հատումների կառուցում՝ տեղական ճանապարհների համայնքների հետ կապ ապահովելու նպատակով:

Ծրագրի շրջանակներում իրականացվելու են նաև ներդրումային ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող հետագա ծրագրերի մանրամասն նախագծերի ուսումնասիրություններ, շինարարության վերահսկողություն, գնումների և կարողությունների հզորացման աշխատանքներ:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 6,485.0 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 5,877.7 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 607.3 մլն. դրամ:

8. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր (Տրանշ 3)

Ծրագիրը հանդիսանում է հիմնական ծրագրի մասնաբաժին՝ Թալին-Գյումրի հատվածում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 1,672.0 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,530.8 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 141.2 մլն. դրամ:

9. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր (Տրանշ 3)

Ծրագիրը հանդիսանում է հիմնական ծրագրի մասնաբաժին՝ Թալին-Գյումրի հատվածում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 1,957.0 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,643.2 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 313.7 մլն. դրամ:

10. Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի ծրագիր

Ծրագիրը հանդիսանում է հիմնական ծրագրի մասնաբաժին՝ Քաջարան-Ագարակ հատվածում, որի շրջանակներում իրականացվելու է մոտ 50 կմ ճանապարհահատվածի ուսումնասիրությունը, հսկողությունը և վերակառուցումը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 2,121.1 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,945.2 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 175.9 մլն. դրամ:

11. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման դրամաշնորհային ծրագիր (Տրանշ 3):

Փոխկապակցված է համանուն վարկային ծրագրի հետ, իրականացվում է վարկային ծրագրի ժամկետներում նույն ուղղվածությամբ:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 1,470.0 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,220.9 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 249.1 մլն. դրամ:

12. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Ծրագրի նպատակն է վերականգնել և բարելավել Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքները, որի շրջանակներում նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

ա) ուղևորների սպասարկման որակի բարելավում,

բ) մետրոպոլիտենի գծերի, կայարանների, շենքերի, կառույցների, էլեկտրամատակարարման և կապի համակարգերի, շարժակազմերի և տեխնոլոգիական սարքավորումների անխափան շահագործման հուսալիության բարձրացում,

գ) մետրոպոլիտենի օբյեկտներում սանիտարատեխնիկական վիճակի և աղտոտումից շրջակա միջավայրի պահպանության ապահովում,

դ) էլեկտրամատակարարման հուսալիության բարձրացում, թունելային ջրատարի և շարժասանդուղքների վերանորոգում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 1,596.1 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,260.8 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 335.3 մլն. դրամ:

13. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Նշված ծրագիրը հանդիսանում է մետրոպոլիտենի վերակառուցման հիմնական ծրագրային փաթեթի մասնաբաժին, որի նպատակն է վերականգնել և բարելավել Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքները:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 704.9 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 579.1 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 125.8 մլն. դրամ:

14. Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ դրամաշնորհային ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Նշված դրամաշնորհային ծրագիրը հանդիսանում է մետրոպոլիտենի վերակառուցման հիմնական ծրագրային փաթեթի մասնաբաժին, որի նպատակն է վերականգնել և բարելավել Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքները:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 1,964.2 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,485.6 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 478.6 մլն. դրամ:

15. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Ծրագրի նպատակն է բարելավել Երևանի քաղաքային տրանսպորտի ենթակառուցվածքը և ծառայությունները:

Նշված վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

ա) Արտաշատի մայրուղի-Շիրակ փող. -Թամանցիներ- ճանապարհահատվածի բարելավում,

բ) Տրանշ 2-ի նախապատրաստական աշխատանքների իրականացում:

Նախատեսվում է նաև իրականացնել ծրագրի կառավարման և կարողությունների զարգացման, մանրամասն նախագծման և շինարարության վերահսկման, շրջակա միջավայրի ազդեցության գնահատման, վերահսկման և այլ խորհրդատվական աշխատանքներ:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 2,357.3 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,989.8 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 367.5 մլն. դրամ:

16. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող Քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագիր

Ծրագրի նպատակն է բարելավել քաղաքային ենթակառուցվածքները, այդ թվում՝ Արգավանդի խճուղի-Շիրակ ճանապարհահատվածի կառուցումը (ներառյալ Հրազդան գետի վրա կամուրջը):

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2016թ. ծրագրված է 4,286.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,477.7 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 809.1 մլն. դրամ:

Այս ոլորտում ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի համեմատությունը ՀՀ 2014 թվականի բյուջետային տարվա փաստացի, ինչպես նաև ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլ-ված է սույն բացատրագրի N 7 աղյուսակում, իսկ ճանապարհային ոլորտի կատարողական հիմնական ցուցանիշները՝ N 7 ա աղյուսակում::

<u>Բնապահպանության ոլորտի գծով</u> Նախագծով նախատեսվում է հատկացնել 2,924.6 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 3,217.9 մլն. դրամի դիմաց: Ծախ-սերի նվազումը ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 293.3 մլն դրամ՝ կամ 9.1 տոկոս:

Ընթացիկ ծախսերի գծով հատկացված միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

«Թափոնների ուսումնասիրության ծառայություններ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 16.59 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաս-տատված 16.65 մլն դրամի դիմաց, կամ 0.06 մլն դրամով ավելի: Աճը պայմանավորված է հանրապետությունում էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախ-սերի փոխհատուցմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ներկայացված վարչական վիճակագրական հաշվետվությունների ուսումնասիրություն և վերլուծություն, առաջացած թափոն-

ների հաշվառում և դասակարգում, ինչպես նաև շրջակա միջավայրի օբյեկտներում (հող, ջուր) և կենսամիջավայրում կայուն օրգանական աղտոտիչների (ԿՕԱ) պարունակության անալիտիկ հետազոտություններ և փաստացի մակարդակների ուսումնասիրում:

«Հանրապետության ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի իրականացում» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 160.7 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 154.3 մլն դրամի դիմաց, կամ 6.4 մլն դրամով ավելի: Աճը պայմանավորված է հանրապետությունում 2015թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացման ազդեցության և էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի իրականացման աշխատանքներ: Իրականացվելու են մակերևութային ջրերի մոնիտորինգային աշխատանքներ հանրապետության 55 ջրային օբյեկտներում, Ախուրյանի, Արփի լճի, Ապարանի, Ազատի, Կեչուտի ջրամբարների, Երևանյան լճի և Սևանա լճի 131 դիտակետերում: Բացի այդ, իրականացվելու են մթնոլորտային օդի մոնիտորինգային աշխատանքներ, մասնավորապես, առնվազն 6 քաղաքների 16 դիտակետերում կատարվելու են աղտոտվածության դիտարկումներ՝ 40 աղտոտիչների վերաբերյալ:

«Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրում» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 125.4 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մաքրել Սևանա լճի շրջակայքի 93 հա ջրածածկ անտառտնկարկներ:

«Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծառայություններ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 7.6 մլն դրամ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Սևանա լճի ջրահավաք ավազանի կենդանական ռեսուրսների (ձկան և խեցգետնի) պաշարների հաշվառման աշխատանքներ, այդ թվում ներկա վիճակի, տարածական տեղաբաշխման, կենսաբանական և էկոլոգիական հատկանիշների բացահայտում:

Բնության հատուկ պահպանվող տարածքների գործունեության ապահովմանն ուղղված ծրագրերի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 856.9 մլն դրամ՝ ՀՀ 2015թ. պետական բյուջեով հաստատված 850.3 մլն դրամի դիմաց, կամ 6.6 մլն դրամով ավելի: Աճը պայմանավորված է հանրապետությունում 2015թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի

բարձրացման ազդեցության և էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Վերոգրյալ հատկացումների շրջանակներում «Սևան», «Դիլիջան», «Արևիկ» և «Արփի լիճ» ազգային պարկերում, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետական արգելոցներում, «Սոսու պուրակ», «Զանգեզուր» և «Զիկատար» արգելավայրերում, ինչպես նաև «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում կատարվելու են բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման դիտանցի ապահովումը, ինչպես նաև տնկարկների պահպանության և պաշտպանության իրականացումը:

«Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական-տեղեկատվական ծառայություններ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 20.52 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 20.50 մլն դրամի դիմաց, կամ 0.02 մլն դրամով ավելի: Աճը պայմանավորված է հանրապետությունում 2015թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացման ազդեցության արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել՝

- ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության կողմից օգտագործվող տվյալների շտեմարանի շահագործման ընթացքում առաջացած խնդիրների վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում և տվյալների ամփոփում,

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական մարմիններին, հասարակական կազմակերպություններին ու հասարակությանը ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքի միջոցով բնապահպանական ոլորտի տեղեկատվության տրամադրում, ինչպես նաև «Բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոն» (Օրհուս կենտրոնի) սպասարկում,

- համակարգչային ցանցերի և առկա համակարգչային տեխնիկայի ծրագրային և տեխնիկական սպասարկում և վերանորոգում, էլեկտրոնային փոստի, ինտերնետ կապի տեխնիկական սպասարկում:

«ՀՀ տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիտորինգի վարում» ծրագրի գծով Նախագծով նախատեսվում է հատկացնել 45.5 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 44.8 մլն դրամի դիմաց, կամ 0.7 մլն դրամով ավելի: Աճը պայմանավորված է հանրապետությունում 2015թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացման ազդեցության և էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիտորինգի վարում (այդ թվում՝ ռեժիմային դիտարկումներ, ջրի մակարդակի, ծախսի, ջերմաստիճանի չափում, ջրի նմուշառում և քիմիական անալիզների կատարում):

«Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հայաստանյան մասնաճյուղի գրասենյակի պահպանման» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 7.14 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 7.1 մլն դրամի դիմաց, կամ 0.04 մլն դրամով ավելի: Աճը պայմանավորված է հանրապետությունում էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Ծրագրի համար իրավական հիմք է ծառայում ՀՀ Նախագահի 2009 թվականի մայիսի 6-ի ՆԿ-68-Ա կարգադրությամբ հաստատված Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թվականների միջոցառումների ցանկը (7.Ա.7. միջոցառում):

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ծառայություններ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 45.3 մլն դրամ, ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 44.5 մլն դրամի դիմաց, կամ 0.8 մլն դրամով ավելի: Աճը պայմանավորված է հանրապետությունում 2015թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացման ազդեցության և էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության աշխատանքների իրականացում:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով Նախագծով նախատեսվել է համայնքներին սուբվենցիաների հատկացումներ՝ 94.4 մլն դրամի չափով:

Այս ոլորտում Նախագծով նախատեսվող բյուջետային ծախսերի համեմատությունը ՀՀ 2014 թվականի բյուջետային տարվա փաստացի և ՀՀ 2015 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N8 աղյուսակում:

<u>ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող ծախսային ծրագրերի</u> համար Նախագծով նախատեսվում է հատկացնել **3,012.7** մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված **2,928.3** մլն դրամի դիմաց: Ծախսերի աճը ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում **84.4** մլն դրամ կամ **2.9** տոկոս:

Ընթացիկ ծախսերի գծով հատկացված միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը:

«Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 152.6 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 152.3 մլն դրամի դիմաց: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի համեմատ 0.3 մլն դրամ ծախսի ավելացումը պայմանավորված է 2015թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացման ազդեցությամբ: Այն նախատեսվում է ուղղել ծրագիրն իրականացնող անձնակազմի և փորձագետների վարձատրությանը:

Ծրագրի նպատակն է ՓՄՁ սուբյեկտներին տեխնիկական, ֆինանսական և ներդրումային աջակցության ցուցաբերումը:

«Զբոսաշրջության աջակցության ծառայություններ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 188.4 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել զբոսաշրջային ոլորտի հետևյալ միջոցառումները.

1. «Գովազդատեղեկատվական նյութերի համակարգ» - 67.9 մլն դրամ,

2. «Մասնակցություն զբոսաշրջային ցուցահանդեսներին» - 74.5 մլն դրամ,

3. «Օտարերկրյա փորձագետների, զբոսաշրջային օպերատորների և լրագրողների Հայաստան ճանաչողական այցերի կազմակերպում» - 9.0 մլն դրամ,

4.. «Ավանդական տոնակատարությունների կազմակերպում և անցկացում» - 17.8 մլն դրամ,

5. «Զբոսաշրջային հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացում (զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացում, մարդկային ռեսուրսների զարգացում)» - 10.4 մլն դրամ,

6. «Զբոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցության ծավալում» - 8.8 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետությունը դարձնել միջազգային շուկայում հաճախելի երկրներից մեկը:

«**Ստանդարտների մշակման ծառայություններ»** ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 14.3 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. «Ազգային ստանդարտների մշակում» - 8.8 մլն դրամ,

2. «Միջազգային, եվրոպական և միջպետական ստանդարտացման կազմակերպությունների հետ համագործակցության և աշխատանքների կազմակերպում» - 1.9 մլն դրամ,

3. «Ստանդարտացման ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքների կազմակերպում» - 3.6 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության ինտեգրումը ստանդարտացման բնագավառի միջազգային և եվրոպական համակարգերին, որը կնպաստի սպառողների շահերի պաշտպանությանը անվտանգ ապրանքների ձեռքբերման հարցերում, հայրենական արտադրողների կողմից մրցունակ ապրանքների արտադրմանը և ծառայությունների մատուցմանը:

«**Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ**» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 98.7 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 88.6 մլն դրամի դիմաց կամ 11.1 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է նշված ծրագրում երկու նոր միջոցառումների ընդգրկմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. «Հայաստանի ՏՏ ոլորտի ներկայացում և խթանում Հայաստանում և արտերկրում, հետազոտություն, հասարակական իրազեկում» - 52.2 մլն դրամ,

2. «Միջազգային համագործակցություն» - 35.0 մլն դրամ:

3. «Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության գործունեության ապահովում» - 11.5 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է նպաստել տեղեկատվական և գիտելիքի վրա հիմնված առաջադեմ հասարակության ստեղծմանը:

«Պետական աջակցություն «Հայաստանի զարգացման հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացմանը» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 409.1 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 298.1 մլն դրամի դիմաց կամ 111.0 մլն դրամով ավել, որը պայմանավորված է Զարգացման հայկական գործակալության լուծարման արդյունքում վերջինիս գործառույթները Հայաստանի զարգացման հիմնադրամին վերապահելու հանգամանքով, ինչպես նաև էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել.

1. Հիմնադրամի աշխատակիցների վարձատրություն՝ 352.3 մլն դրամ,

2. Պահպանման ծախսեր՝ 56.8 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է Պետական աջակցության ցուցաբերումը ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների և զբոսաշրջության ոլորտի միջոցառումների իրականացման ծրագրերին, ինչպես նաև Հայաստանի

զարգացման հիմնադրամի բնականոն աշխատանքների ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման համար Հիմնադրամի համալրումը որակյալ մասնագետներով՝ ծրագրային միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով:

«Տեխնիկական կանոնակարգի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողություն» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 30.0 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. «Փորձանմուշների ձեռքբերման ծախսեր» - 8.4 մլն դրամ,

2. «Փորձանմուշների փորձարկման ծախսեր» - 15.6 մլն դրամ,

3. «Իրազեկմանն աշխատանքներ » - 6.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ապրանք արտադրողների և ծառայություն մատուցողների կողմից սպառողներին իրացվող արտադրանքի նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը՝ ստանդարտացման և չափագիտական նորմերի ապահովման միջոցով:

«ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցություն» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 475.0 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. «Հանրաճանաչ միջազգային արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների ներգրավման և մուտքի ապահովման միջոցառումների իրականացում» - 70.0 մլն դրամ,

2. «Արդյունաբերության ոլորտի ընկերություններին վարկավորման սուբսիդավորման և սերտիֆիկացման համաֆինանսավորման ցուցաբերում» - 105.0 մլն դրամ,

3. «Շուկայական տեղեկատվության ապահովում, հայկական ապրանքների նպատակային շուկաներում առաջմղման գործունեության իրականացում, հայկական ապրանքների ներկայացում» - 270.0 մլն դրամ,

4. Ուսուցման դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում՝ 25.0 մլն դրամ,

5. Հետազոտությունների իրականացում՝ 5.0 մլն դրամ:

Ծրագրի հիմնական նպատակն է ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ սահմանված երկարաժամկետ հեռանկարում նպաստել վերամշակող արդյունաբերության ճյուղերի և

համալիրների զարգացմանը, արտահանման զարգացման ներուժ ունեցող ոլորտների հավասարակշռված և փուլային միջոցառումների իրականացմանը:

«Պետական աջակցություն ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխմանը և Հավատարմագրման ազգային մարմնի կայացմանը» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 13.9 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի նպատակը միջազգային և եվրոպական հավատարմագրման համակարգերին ինտեգրումն է, այդ թվում հավատարմագրման ազգային մարմնի կայացումը և հավատարմագրման արդյունքների փոխճանաչման բազմակողմանի համաձայնագրերում հավատարմագրման մարմնի մասնակցությունը, ինչը կվերացնի առևտրային խոչընդոտները, կապահովի ապրանքների ազատ տեղաշարժը, կբացառի նույն ապրանքի կրկնակի փորձարկման և կրկնակի սերտիֆիկացման անհրաժեշտությունը և դրանով կնպաստի տնտեսության զարգացմանը:

«ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքո գործող տեսչական բարեփոխումների քարտուղարության պետական աջակցություն» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 15.0 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 10.0 մլն դրամի դիմաց կամ 5.0 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ:

Ծրագրի նպատակն է նախանշել Հայաստանում տեսչական բարեփոխումների հիմնական ուղղությունները, որոնց իրականացումը կնպաստի տեսչական գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Ծրագիրը ֆիսկալ նպատակ չի հետապնդում, այսինքն տեսչության արդյունավետությունը չի չափվելու գանձված տուգանքների քանակով ու մեծությամբ:

«Որակի ենթակառուցվածքների բարեփոխում» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 200.0 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ ենթածրագրերը.

1. «Տեխնիկական կանոնակարգման ոլորտի կայացման պետական աջակցության ծրագիր»՝ 35.6 մլն դրամ,

2. «ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխում և հավատարմագրման ազգային մարմնի կայացում»՝ 23.2 մլն դրամ,

3.«Պետական աջակցություն Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից Ստանդարտացման ոլորտում ծրագրերի կատարման գծով»՝ 39.6 մլն դրամ,

4. «Պետական աջակցություն Չափագիտության ազգային ինստիտուտ ՓԲԸ-ին»՝ 80.6 մլն դրամ,

5. «Շուկայի վերահսկողության համակարգի բարեփոխում և շուկայի վերահսկողության պետական տեսչության կայացում»՝ 21.0 մլն դրամ:

«Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացում» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 152.9 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 150.0 մլն դրամի դիմաց: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի համեմատ 2.9 մլն դրամի ավելացումը պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Առաջարկվող ծրագիրը մշակվել է ապահովելու Գյումրի և Վանաձոր քաղաքներում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների (ՏՏ և ԲՏ) ոլորտների հետագա զարգացումը՝ Գյումրիում և Վանաձորում ինովացիոն ենթակառուցվածքի ստեղծման և զարգացման միջոցով: Ծրագրի միջոցառումներն ուղղված են Գյումրիում և Վանաձորում ժամանակակից գիտելիքահենք և ինովացիոն ենթակառուցվածքներով հագեցած տեխնոլոգիական կենտրոնների արդյունավետ գործունեության ապահովմանը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է գումարն ուղղել հետևյալ ծրագրերի իրականացմանը.

1. «Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի գործունեության իրականացում» ՝ 102.3 մլն դրամ,

2. «Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի գործունեության իրականացում» ՝ 50.7 մլն դրամ:

«Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումներ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 16.9 մլն դրամ (երկրորդ մասնաբաժին)՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 23.9 մլն դրամի (առաջին մասնաբաժին) դիմաց կամ 7.0 մլն դրամով պակաս, համաձայն 2015թ. մարտի 18-ին ՀՀ կառավարության, Հայաստանի զարգացման հիմնադրամի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) միջև կնքված խորհրդատվական համաձայնագրի (որով նախատեսված է, որ Հայաստանի զարգացման հիմնադրամը կներդնի 61.8 մլն դրամի չափով գումար՝ երեք մասնաբաժիններով՝ առաջին մասնաբաժինը կազմում է 23.9 մլն դրամ, երկրորդը՝ 16.9 մլն դրամ և երրորդը՝ 21.0 մլն դրամ):

Ծրագրի նպատակն է Հայաստանում տեսչական և ներդրումային միջավայրի բարեփոխումների իրականացումը, որը կնպաստի տեսչական գործընթացի արդյունավետության բարձրացմանը և ներդրումային միջավայրի բարելավմանը:

«Տնտեսական հետազոտությունների կենտրոնի գործունեության» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 28.1 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 40.0 մլն դրամի դիմաց կամ 11.9 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է

2016թ. ծրագրում գրասենյակի համար նախատեսված վարչական սարքավորումների ձեռքբերման և շենքի ընթացիկ նորոգման գծով ծախսային հոդվածների չընդգրկմամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել.

1. Կենտրոնի աշխատակիցների վարձատրություն՝ 27.3 մլն դրամ,

2. Պահպանման ծախսեր՝ 0.8 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է նախանշել ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականության շրջանակի ձևավորման գործընթացի համար անհրաժեշտ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման ընթացիկ և հեռանկարային միտումների, ճյուղային համամասնությունների ու կառուցվածքային տեղաշարժերի բացահայտման, տնտեսական զարգացման ցուցանիշների կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումների իրականացման աշխատանքների հիմնական ուղղությունները:

Այս ոլորտում Նախագծով նախատեսված ծախսերի համեմատությունը ՀՀ 2014 թվականի բյուջետային տարվա փաստացի, ինչպես նաև ՀՀ 2015 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 3 աղյուսակում:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվող «Պետական կարիքների համար ապրանքների, աշխատանքների (ծառայությունների) կողմնորոշիչ գների մեթոդաբանական, վերլուծական և տեղեկատվական ծառայություններ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել **80.3** մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված **80.1** մլն դրամի դիմաց: ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի համեմատ 0.2 մլն դրամի ավելացումը պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Նշված ծրագրով նախատեսվում է իրականացնել պետական կարիքների համար ապրանքների շուկայական գների հրապարակում:

Այս ոլորտում Նախագծով նախատեսված ծախսերի համեմատությունը ՀՀ 2014 թվականի բյուջետային տարվա փաստացի, ինչպես նաև ՀՀ 2015 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 3ա աղյուսակում:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրականացվող «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» «Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ», «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» և «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» ծրագրերի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել

3,619.7 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված **3,762.6** մլն դրամի դիմաց:

Ընթացիկ ծախսերի գծով հատկացված միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

«Հիդրոօդերևութաբանական ծառայություններ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 886.7 մլն դրամ՝ ՀՀ 2015թ. պետական բյուջեով հաստատված 914.6 մլն դրամի դիմաց կամ 27.9 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է 2016թ. ծախսերի օպտիմալացմամբ:

Ծրագրի նպատակն է հանրապետության տարածքում պետական նշանակության հիդրոօդերևութաբանական աշխատանքների կատարում՝ մթնոլորտի և ջրոլորտի ուսումնասիրությունների ձևով, հանրապետության տարածքում հիդրոօդերևութաբանական երևույթների, ջրային օբյեկտների հիդրոլոգիական բնութագրերի ուսումնասիրության, ֆոնային ռադիոակտիվության վերաբերյալ դիտարկումների կատարման, այդ ոլորտների վերաբերյալ փաստացի և սպասվող փոփոխությունների, ինչպես նաև դրանց հնարավոր հետևանքների մասին անհրաժեշտ տեղեկատվության ապահովումը:

«Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 42.4 մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված գումարի չափով:

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում տեխնածին վթարների կանխարգելումը, դրանց հետևանքների վերացումը, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցումը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությունը:

«Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 302.5 մլն դրամ՝ ՀՀ 2015թ. պետական բյուջեով հաստատված 301.1 մլն դրամի դիմաց: ՀՀ 2015թ. պետական բյուջեի համեմատ 1.4 մլն դրամ ծախսի ավելացումը պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործությունը, ռադիոլոկացիոն մոնիտորինգը, ուսումնասիրությունների և հետազոտությունների իրականացումը և կարկտահարության հետևանքով գյուղատնտեսական վնասների կրճատումը:

«Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 819.2 մլն դրամ՝ ՀՀ 2015թ. պետական բյուջեով հաստատված 858.8 մլն դրամի

դիմաց կամ 39.6 մլն դրամով պակաս, որը պայմանավորված է 2016թ. ծախսերի օպտիմալացմամբ:

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատում, սեյսմիկ ռիսկի նվազեցում:

Այս ոլորտում Նախագծով նախատեսվող բյուջետային ծախսերի համեմատությունը ՀՀ 2014 թվականի բյուջետային տարվա փաստացի և ՀՀ 2015 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 3բ աղյուսակում:

<u>Պետական գույքի կառավարման բնագավառի</u> համար Նախագծով նախատեսվում է հատկացնել **734.3** մլն դրամ՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված **715.5** մլն դրամի դիմաց: Ծախսերի աճը ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 18.8 մլն դրամ կամ 2.6 տոկոս:

Ընթացիկ ծախսերի գծով հատկացված միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

«Աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքներ» ծրագրի համար Նախագծով նախատեսվել է հատկացնել 33.0 մլն դրամ՝ ՀՀ 2015թ. պետական բյուջեով սահմանված է 32.8 մլն դրամի դիմաց կամ 0.2 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Ծրագրի նպատակն է պետական կառավարչական հիմնարկներին ամրացված, պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող և դրանց ամրագրված գույքի օտարման գործընթացի կազմակերպումը:

«Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների և գնահատման աշխատանքների իրականացում» ծրագրի համար Նախագծով նախատեսվել է հատկացնել 37.2 մլն դրամ՝ ՀՀ 2015թ. պետական բյուջեով սահմանված 37.0 մլն դրամի դիմաց կամ 0.2 մլն դրամով ավելի, որը պայմանավորված է 2015 թվականի հուլիսի 1-ից հանրապետությունում նվազագույն աշխատավարձի բարձրացման ազդեցության և էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման արդյունքում լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ:

Ծրագրի նպատակն է ապահովել պետական սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման, ուսումնասիրման տեխզննման միջոցով, գնահատման, հաշվառման, գրանցամատյանի վարման աջակցող աշխատանքների իրականացման աշխատանքները:

Այս ոլորտում Նախագծով նախատեսված ծախսերի համեմատությունը ՀՀ 2014 թվականի բյուջետային տարվա փաստացի, ինչպես նաև ՀՀ 2015 թվականի հաստատված պետական

բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 3գ աղյուսակում:

ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից իրականացվող «ՀՀ պետական մարմիններին լիցենզիոն ծրագրային փաթեթներով ապահովում» ծրագրի համար Նախագծով նախատեսվում է հատկացնել 582.3 մլն դրամ:

ՀՀ կառավարության 21.05.2015թ. ««Մայքրոսոֆթ» ընկերության հետ ստորագրվելիք փաստաթղթերի կնքման առաջարկությանը հավանություն տալու, լիազորություն վերապահելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբեր 18-ի N 1515-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու ու Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմին գումար հատկացնելու մասին» N 523-Ն որոշման 4-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության կարիքների համար համակարգչային լիցենզիոն ծրագրային ապահովման փաթեթներ ձեռք բերելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմին հատկացվել են համապատասխան գումարներ:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է 2016թ. ապահովել ՀՀ պետական կառավարման մարմինների համար «Մայքրոսոֆթ» լիցենզիոն ծրագրային փաթեթների ձեռք բերումը:

Այս ոլորտում Նախագծով նախատեսված ծախսերի համեմատությունը ՀՀ 2014 թվականի բյուջետային տարվա փաստացի, ինչպես նաև ՀՀ 2015 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 3դ աղյուսակում:

Քաղաքաշինության ոլորտի գծով բյուջետային ծախսերը 2016 թվականին նախատեսվում է 9,082.6 մլն դրամ՝ 2015 թվականի համար հաստատված 11,079.7 մլն դրամի դիմաց կամ 18.0 %-ով պակաս: Այս ոլորտում 2016 թվականի ծախսերի տարբերությունները ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի հաստատված համապատասխան ցուցանիշների նկատմամբ պայմանավորված են մասնավորապես.

1. Վարչական օբյեկտների հիմնանորոգման գծով ծախսերը նվազել են 27.2 մլն դրամով,
2. Կրթական և մարզական օբյեկտների հիմնանորոգման ու շինարարության ծրագրերի գծով ծախսերը նվազել են 2,507.1 մլն դրամով, որոնք վերաբաշխվել են ոլորտի գծով ծրագրերին,
3. Բնակարանային ապահովման և շինարարության ծրագրերի գծով ծախսերը նվազել են 65.5 մլն դրամով,
4. Մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով ծախսերն ավելացել են 364.5 մլն դրամով՝ ի հաշիվ կրթական և մարզական օբյեկտների հիմնանորոգման ու շինարարության ծրագրերից վերաբաշխված գումարների,

5. Առողջապահական օբյեկտների շինարարության գծով ծախսերը, նույնպես ի կրթական և մարզական օբյեկտների հիմնանորոգման ու շինարարության ծրագրերից վերաբաշխված գումարների, ավելացել են 150.0 մլն դրամով:

6. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ների շենք-շինությունների հիմնանորոգման ծախսերն ավելացել են 85.0 մլն դրամով,

Քաղաքաշինության ոլորտի գծով 2016 թվականի ծախսերը նախատեսվել են հետևյալ ուղղություններով.

1. ՀՀ քաղաքաշինության նախարարության կառավարման ապարատի գծով ծախսերը նախատեսվել են 1,010.6 մլն դրամ, որը 2015 թվականի համար հաստատված համապատասխան ցուցանիշից ավել է ընդամենը 3.1 մլն դրամով,

2. Կրթական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության համար նախատեսվել է 1,996.3 մլն դրամ՝ թվով 37 կրթական հաստատությունների շենքերի հիմնանորոգման, կառուցման և նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների իրականացման նպատակով: Նշված 37 օբյեկտներից 2-ի (Թահիրով գյուղի և ք. Սիսիանի թիվ 1 դպրոցների) գծով միջոցները նախատեսվել են միայն նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման նպատակով, իսկ մնացած 35 օբյեկտում կիրականացնել շինարարական աշխատանքներ: Ընդ որում ծրագրային տարում նախատեսվում է աշխատանքներն ավարտել և շահագործման հանձնել թվով 31 կրթական հաստատություն կամ 2016 թվականին կրթական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության ծրագրերում ընդգրկված օբյեկտների շուրջ 89%-ը: Ըստ ծրագրերի նախատեսվում է.

- «Կրթական օբյեկտների հիմնանորոգում» ծրագիր՝ 1,663.9 մլն դրամ: Ծրագրով թվով 29 օբյեկտում կիրականացվեն հիմնանորոգման աշխատանքներ, իսկ 2 օբյեկտի գծով, ինպես վերը նշվեց, ծրագրային տարում կկազմվեն միայն նախագծանախահաշվային փաստաթղթերը: Ծրագրային տարում նախատեսվում է հիմնանորոգել և շահագործման հանձնել 25 կրթական հաստատություն կամ ծրագրում ընդգրկված հիմնանորոգվող հաստատությունների շուրջ 86%-ը և այդ նպատակին ուղղել ծրագրով նախատեսված միջոցների շուրջ 75%-ը, իսկ մնացած 4 կրթական հաստատությունների հիմնանորոգման աշխատանքները (Երևանի թիվ 191 դպրոց, Երևանի հենաշարժային համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոց, գ. Զոլաքարի թիվ 2 միջնակարգ դպրոց և Վանաձորի թիվ 18 դպրոց) 633.9 մլն դրամ մնացորդային արժեքով կփոխանցվեն հաջորդ բյուջետային տարի:

- «Կրթական օբյեկտների շինարարություն» ծրագիր՝ 66.3 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում կկառուցվեն և շահագործման կհանձնվեն ՀՀ Սյունիքի մարզի ք. Ագարակի դպրոցի նոր ուսումնական մասնաշենքը և ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի գյուղի մանկապարտեզը:

- «Ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգում» ծրագիր՝ 80.0 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում կվերանորոգվի և շահագործման կհանձնվի Ստեփանավանի ավագ դպրոցի շենքը:

- «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնանորոգում» ծրագիր՝ 115.0 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում կվերանորոգվեն շահագործման կհանձնվեն Վանաձորի գյուղատնտեսական և Սպիտակի պետական քոլեջների շենքերը, ինչպես նաև ջեռուցման համակարգ կներդրվի Գյումրի քաղաքի Կարա-Մուրզայի անվան երաժշտական քոլեջում:

3. Մարզական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության համար նախատեսվել է 471.6 մլն դրամ, որը կնպատակաուղղվի թվով 5 մարզական օբյեկտների շենքերի հիմնանորոգման և կառուցման աշխատանքներին: Մասնավորապես.

- 2016 թվականին Կապան քաղաքի Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի գծով նախատեսված միջոցներով պոլեուրետանային ծածկույթով կփոխարինվի մարզադահլիճի տախտակից կառուցված հատակը, ինչպես նաև ավարտին կհասցվեն Աշտարակի մարզադպրոցի շինարարական աշխատանքները,

- մնացած 3 մարզական հաստատությունների՝ Երևանի Օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային մասնաշենքի, ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի ու ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի մարզադպրոցի նոր մասնաշենքի շինարարական աշխատանքները 622.2 մլն դրամ մնացորդային արժեքով կփոխանցվեն հաջորդ բյուջետային տարի:

4. Մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության համար նախատեսվել է 849.5 մլն դրամ՝ թվով 4 թանգարանի, 5 մշակույթի տան և 4 թատրոնի շենքերի հիմնանորոգման և կառուցման աշխատանքների իրականացման նպատակով, որոնցից 11-ի գծով աշխատանքները կավարտվեն 2016 թվականին: Մասնավորապես.

- թանգարանների գծով նախատեսված 195.1 մլն դրամի շրջանակներում կհիմնանորոգվեն և շահագործման կհանձնվեն Դ. Դեմիրճյանի տոն-թանգարանի, Գյումրու Ս. Մերկուրովի տուն-թանգարանի և Հայաստանի ազգային պատկերասրահի Սիսիանի մասնաճյուղի շենքերը, իսկ «Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոնի շենքի կառուցման աշխատանքները 300.0 մլն դրամ մնացորդային արժեքով կփոխանցվեն հաջորդ բյուջետային տարի:

- Մշակույթի տների գծով նախատեսված 157.4 մլն դրամի շրջանակներում կհիմնանորոգվեն և շահագործման կհանձնվեն ՀՀ Արմավիրի մարզի Շենիկ համայնքի, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի, ՀՀ Լոռու մարզի Ճոճկան համայնքի և ՀՀ Շիրակի մարզի Սպանդարյան

համայնքի մշակույթի տները, իսկ ՀՀ Արագածոտնի մարզի գ. Քուչակի մշակույթի տան շինարարական աշխատանքները 138.4 մլն դրամ մնացորդային արժեքով կփոխանցվեն հաջորդ բյուջետային տարի:

- Թատրոնների գծով նախատեսված 497.0 մլն դրամի շրջանակներում շահագործման կհանձնվեն ք.Գավառի թատրոնի, Գ. Սունդուկյանի անվան պետական դրամատիկական թատրոնի Արտաշատ քաղաքի Ամո Խարազյանի անվան թատրոնի շենքերը և ավարտին կհասցվի Երևանի կամերային պետական թատրոնին հատկացված տարածքում նոր շենքի հիմնակմախքի կառուցման աշխատանքները:

5. «Հուշարձանների ամրակայում, նորոգում և վերականգնում» ծրագրի գծով ծախսերը նախատեսվել են 2015 թվականի չափով՝ 300.0 մլն դրամ, որի շրջանակներում 17 հուշարձաններում կիրականացվեն վերականգնման աշխատանքներ, 4 հուշարձանների վերականգնման համար կկազմվեն գիտանախագծային փաստաթղթեր և 3 հուշարձաններում կիրականացվեն վավերագրման և ուսումնասիրման աշխատանքներ (այդ թվում՝ հետախուզում և պեղում):

6. «Առողջապահական օբյեկտների շինարարություն» ծրագրով ծախսերը նույնպես նախատեսվել են 1,100.0 մլն դրամ, որի շրջանակներում կշարունակվեն ՀՀ Լոռու մարզի Վանաձորի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքները:

7. Հայաստանի հանրային հեռուստաընկերության և Հայաստանի հանրային ռադիոընկերության շենք-շինությունների հիմնանորոգման համար նախատեսվել է 270.0 մլն դրամ:

8. Բնակարանային ապահովման և շինարարության ծրագրերի գծով նախատեսվել է 2,434.5 մլն դրամ: Չնայած Երևան համայնքի 4-րդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածությունից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերման նպատակով Երևան քաղաքային համայնքին պետական աջակցության ծրագրի ավարտմանը՝ բնակարանային ապահովման և շինարարության գծով, ի հաշիվ կրթական և մարզական օբյեկտների հիմնանորոգման ու շինարարության ծրագրերից վերաբաշխված գումարների, 2016 թվականի նախատեսվում է միջոցներ հատկացնել բնակարանային շինարարության և երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովում ծրագրերի իրականացման համար: Ըստ ծրագրերի.

- «Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովում» ծրագրի գծով 1,849.5 մլն դրամի շրջանակներում նախատեսվում է Գյումրիում, Սպիտակում և Ախուրյանում անօթևան ընտանիքներին բնակարանների գնման վկայագրերի /ԲԳՎ/ տրամադրում, ինչպես նաև Ախուրյանում 3 անավարտ շենքերի կառուցում:

- «Բնակարանային շինարարություն» ծրագրի շրջանակներում նախատեսվում է Ապարանի Բաղրամյան 43 հասցեում գտնվող վթարային շենքի փոխարեն կառուցել նոր շենք, որի նպատակով նախատեսվել է 85.0 մլն դրամ:

- «Զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովման և բնակարանային պայմանների բարելավում» ծրագրի գծով 2016 թվականի ծախսերը ծրագրավորվել են 2015 թվականի հաստատված ցուցանիշի չափով՝ 500.0 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է լուծել 60 ընտանիքների բնակարանային ապահովման խնդիրները,

9. Վարչական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով նախատեսվել է 650.0 մլն դրամ՝ ՀՀ Նախագահի աշխատակազմի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության աշխատակազմի և ՀՀ դատական դեպարտամենտի ենթակայության շենքերի շինվերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով:

Այս ոլորտում 2016 թվականի բյուջետային ծախսերի համեմատությունը՝ 2014 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2015 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 9 աղյուսակում:

Անշարժ գույքի պետական ռեգիստրի համակարգի տարեկան ծախսերը, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջների համաձայն, պլանավորվում ու իրականացվում են սպասվելիք տարեկան եկամուտների չափով: Այս ոլորտի գծով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 4,304.8 մլն դրամի ծախսեր՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատված 4,181.8 մլն դրամի դիմաց կամ 2.9 %-ով ավել: Հատկացվող միջոցներից համակարգի պահպանման ծախսերը կկազմեն 3,791.6 մլն դրամ՝ 2015 թվականի համար հաստատված 3,611.9 մլն դրամի դիմաց, իսկ համակարգի կարողությունների զարգացմանն ուղղվող ծախսերը կկազմեն 513.3 մլն դրամ՝ 2015 թվականի համար հաստատված 569.9 մլն դրամի դիմաց: Համակարգի կարողությունների զարգացմանն ուղղվող ծախսերից գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքներին 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 451.3 մլն դրամ, ինչը 2015 թվականի համար հաստատված ցուցանիշից պակաս է 6.6%-ով:

Գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների համար 2016 թվականի ծախսերը նախատեսվել են հետևյալ ուղղություններով.

1. Սպիտակի տարածաշրջանի գեոդինամիկական պոլիգոնի ստեղծման գեոդեզիական աշխատանքների գծով նախատեսվել է 34.74 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել I դասի նիվելիրացման և GPS 48 կետերի դիտարկում և կոորդինատների հավասարակշռման ու հաշվարկման աշխատանքներ:

2. ՀՀ տարածքում WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում քվազիգեոիդի մոդելի ստեղծման, GPS դիտարկման և նիվելիրացման, տրանսֆորմացիոն նոր գործակիցներով կոորդինատների վերահաշվարկման և կատալոգների կազմման աշխատանքների գծով նախատեսվել է 13.04 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել GPS 50 կետերի դիտարկում և կոորդինատների հավասարակշռում ու հաշվարկում, II դասի 35 գծ.կմ նիվելիրացում և նյութերի մշակում:

3. Տեղագրական քարտեզագրության գծով նախատեսվել է 58.34 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է օդալուսանկարաների հիման վրա Սպիտակ քաղաքի 890.0 քառ.կմ նոր 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի ստեղծում, 102 համայնքների վարչական սահմանների արտահայտում մասշտաբային շարքի տեղագրական քարտեզների վրա, ՀՀ 10 մարզերի վարչական սահմանների տեղադրում և ճշգրտում մասշտաբային շարքի 1:10000 և 1:25000 մ-բի տեղագրական քարտեզների վրա, ՀՀ 1:10 000 և 1:25 000 մասշտաբի տեղագրական 300 թերթ էլեկտրոնային քարտեզների տեղափոխում ԵՏՀ միջավայր:

4. Աշխարհագրական անվանումների հաշվառման, պետական քարտադարանի վարման և թարմացման աշխատանքների գծով նախատեսվել է 10.4 մլն դրամ, որի շրջանակներում, բացի քարտադարանի վարման և թարմացման աշխատանքներից, նախատեսվում է իրականացնել նաև ՀՀ աշխարհագրական անվանումների 300 օրինակ պաշտոնական տեղեկատուի հրատարակում և 200 օրինակ պաշտոնական տեղեկատուի նախապատրաստում /11 մարզի գծով/ և հրատարակում:

5. ՀՀ բազային երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի ստեղծման աշխատանքների գծով նախատեսվել է 101.2 մլն դրամ: Նախատեսված միջոցների հաշվին նախատեսվում է իրականացնել Գյումրի քաղաքի 1,396.1 հա տարածքի երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքները: Աշխատանքների իրականացման արդյունքում կստեղծվի Գյումրի քաղաքային համայնքի բազային երկրատեղեկատվական համակարգի տեղեկատվական բանկ, որը հիմք կհանդիսանա գերատեսչական տարբեր ոլորտների, այդ թվում քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերական, անշարժ գույքի կադաստրի, տարածքների պլանավորման, գյուղատնտեսական հողերի հաշվառման, հողերի միավորման, հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաների կազմման, գույքահարկի և գնահատման բազաների ճշգրտման, վարչական և տնտեսական գործունեության, մելիորացիայի, երկրաբանական հետախուզական աշխատանքների, անտառտնտեսության, արտակարգ իրավիճակների ժամանակ օպտիմալ եւ օպերատիվ որոշումների կայացման, հանրապետության մարզերի, համայնքների և առանձին տարածքների զարգացման, օպտիմալ պլանավորման և այլ ոլորտների խնդիրների լուծման համար:

6. Թեմատիկ քարտեզագրության գծով նախատեսվել է 11.99 մլն դրամ: 2014 թվականին իրականացվել է Հայաստանի Ազգային ատլասի Ա հատորի (անգլերեն լեզվով տարբերակ) 100 էջի նախապատրաստման՝ (վերախմբագրում, թարմացում, արդիականացում) աշխատանքները, որը 2015 թվականին պետք է հրատարակվի: 2016 թվականին նախատեսվում է Հայաստանի Ազգային ատլասի Բ հատորի (անգլերեն լեզվով տարբերակ) 100 էջի նախապատրաստման՝ (թարմացում, խմբագրում, քարտեզների ձևավորում) աշխատանքները:

7. Կադաստրային քարտեզագրման աշխատանքների գծով նախատեսվել է 171.96 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է թարմացնել և ուղղել 16 համայնքների՝ ՀՀ Արմավիրի մարզի Մրգաշատ, Գետաշեն, Զարթոնք, Շենիկ, Ոսկեհատ, Առատաշեն ՀՀ Արարատի մարզի Արմաշ, Նոյակերտ, ՀՀ Արագածոտնի մարզի Շենավան, ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս, Ձորագյուղ, Մադինա, ՀՀ Կոտայքի մարզի Բջնի, Մրգաշեն, ՀՀ Վայոց Ձորի մարզի Գնդևազ, Արենի համայնքներ (48.9 հա) կադաստրային քարտեզները:

8. ՀՀ մարզերի վարչական սահմանների նկարագրման աշխատանքների գծով նախատեսվել է 49.61 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է « Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի համաձայն արդիականացված տեղագրական քարտեզագրական նյութերի հիման վրա հստակեցնել ՀՀ մարզերի վարչական սահմանները:

Գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված ծախսերի համեմատությունը՝ 2014 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2015 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված են սույն բացատրագրի N 19 աղյուսակում:

<u>Պաշտպանության բնագավառի</u> ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են **201,261.8 մլն դրամի** չափով, որից ռազմական կարիքների բավարարմանը՝ **193,469.8 մլն դրամ**:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով պաշտպանության բնագավառի այլ ծախսերը հաշվարկվել են **7,792.0 մլն դրամ**, որից՝

ա) «Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր» ծրագրով՝ **5,470.4 մլն դրամ**,

բ) «Հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայությունների կազմակերպում» ծրագրով՝ **264.3 մլն դրամ**,

գ) զորակոչիկներին վարորդական իրավունքի վկայականների տրման և քննությունների ընդունման ծախսեր, որի գումարը կազմում է՝ **50.4 մլն դրամ**: Նշված գումարի հաշվարկը կատարվել է 1800 զինվորների հաշվով,

դ) «Այլընտրանքային աշխատանքային ծառայություն» ծրագրով՝ **66.8 մլն դրամ**,

ե) «Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություններում ՀՀ առաքելությունում ՀՀ պահպանություն» ծրագրով՝ **47.6 մլն դրամ:**

զ) «Ռազմական նշանակության համակարգերի պահպանում» ծրագրով՝ **1,892.5 մլն դրամ:**

Հասարակական կարգի, անվտանգության, փրկարար ծառայության և կալանավայրերի պահպանության համակարգերի ծախսերի ֆինանսավորմանը 2016 թվականի պետական բյուջեից նախատեսվում է ուղղել **80,654.3 մլն դրամ**: Նշված ծախսերը ներառում են ՀՀ ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, պետական պահպանության ծառայության, փրկարար ծառայության և քրեակատարողական համակարգի ծախսերի ֆինանսավորումները: Մասնավորապես՝

ա) ՀՀ ոստիկանության 2016 թվականի պահպանման ծախսերը նախատեսվել են **36,485.6 մլն դրամի** չափով, որն ամբողջությամբ ուղղվելու է ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը: ՀՀ Ոստիկանության 2016 թվականի պահպանման ծախսերի կառուցվածքը հետևյալն է.

Աշխատողների աշխատավարձերի, հավելավճարների և քաղաքացիական ծառայողների պարգևատրումները 2016 թվականին ծրագրավորվել են **31,655.8 մլն դրամի** չափով, որը 2015 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **72,7 մլն դրամով՝** պայմանավորված 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձացումը տարեկան կտրվածքով նախատեսմամբ:

Հաշվարկը կատարվել է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 710-Ն, N 712-Ն և N 737-Ն որոշումների պահանջներին համապատասխան:

Այլ վարձատրությունները հաշվարկվել են **68.5 մլն դրամի** չափով, որն ուղղվելու է ՀՀ ոստիկանության համակարգի զինծառայողներին համազգեստի դիմաց դրամական փոխհատուցմանը:

Շարունակական ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1,443.7 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունները՝ **955.5 մլն դրամ**, կոմունալ ծառայությունները՝ **71.0 մլն դրամ**, կապի ծառայությունները՝ **297.0 մլն դրամ**, ապահովագրական ծախսերը՝ **58.5 մլն դրամ**, գույքի և սարքավորումների վարձակալության ծախսերը՝ **29.4 մլն դրամ**, ինչպես նաև արտագերատեսչական ծախսերը՝ **32.3 մլն դրամ**: Նշված ծախսերը հաշվարկվել են «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 26-ի N 643-Ն որոշման պահանջներին, ինչպես նաև ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 7-ի N 190-Ն

և 2015 թվականի հունիսի 17-ի N 173-Ա որոշումներով սահմանված սակագներին ու նորմաներին համապատասխան:

<u>Գործուղումների գծով ծախսերը</u> ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **335.0 մլն դրամի** չափով, որից ներքին գործուղումների գծով՝ **145.0 մլն դրամ**, արտասահմանյան գործուղումների գծով՝ **188.6 մլն դրամ** և այլ տրանսպորտային ծախսերի (զինծառայողների՝ ծառայության նոր վայր տեղափոխվելու) գծով՝ **1.4 մլն դրամի** չափով: Հաշվարկները կատարվել են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխան:

<u>Պայմանագրային ծառայությունների ձեռքբերման ծախսերը</u> ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **191.1 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել վարչական ծառայությունների (մշակութային միջոցառումների անցկացում, թարգմանչական ծառայություններ, թվով 2 ստորաբաժանումներում ձերբակալված անձանց պահելու վայրերում ահազանգման համակարգերի տեղադրման և այլ վարչական ծառայություններ) ֆինանսավորմանը՝ **13.6 մլն դրամ**, համակարգչային ծառայությունների (նախատեսվում է մշակել համակարգչային մի շարք ծրագրեր՝ ուղղված բնակչության պետական ռեգիստրի ներդրմանը, ԱՐԾԻՎ-2 համակարգի բոլոր բաղադրիչների և տվյալների բազաների ներդրում և այլն) ֆինանսավորմանը՝ **15.8 մլն դրամ**, տեղեկատվական ծառայությունների (գրականության, թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն, հեռուստաալիքների հեռարձակում, ավտոմատ վերահաղորդչի սպասարկում) ֆինանսավորմանը՝ **8.1 մլն դրամ**, կառավարչական ծառայությունների (արվեստաբանական և մշակութաբանական փորձաքննության ծառայություններ) ֆինանսավորմանը՝ **0.7 մլն դրամ**, կենցաղային և հանրային սննդի ծառայությունների (լվացքատների ծառայություններ) ֆինանսավորմանը՝ **10.5 մլն դրամ**, ներկայացուցչական ծախսերի ֆինանսավորմանը՝ **20.0 մլն դրամ**, ընդհանուր բնույթի այլ ծառայությունների («Երեխայի զարգացման կենտրոն» ՊՈԱԿ-ի, «Արշալույս» առողջարարական ճամբարի պահպանման, «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի համակարգի սպասարկման աշխատանքների իրականացման և հակահրդեհային անվտանգության համակարգի ծախսեր և այլն) ֆինանսավորմանը՝ **121.4 մլն դրամ,** ընդհանուր բնույթի այլ ծառայությունների ֆինանսավորմանը և մասնագիտական ծառայությունների ֆինանսավորմանը՝ **1.0 մլն դրամ** (ՀՀ ոստիկանության համակարգի շենքերի և շինությունների գրանցման ծառայությունների ձեռքբերմանը):

<u>Ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը</u> ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **36.0 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել.

- **5.0 մլն դրամը**՝ ՀՀ ոստիկանության համակարգի շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (շինանյութերի ձեռքբերում) ֆինանսավորմանը,
- **31.0 մլն դրամը**՝ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (ՀՀ ոստիկանության համակարգի մեքենաների ընթացիկ նորոգում և տեխնիկական սպասարկում, գույքի և այլ սարքավորումների վերանորոգում) ֆինանսավորմանը:

Նյութերի գծով ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1,907.5 մլն դրամի** չափով: Նշված գումարից **82.6 մլն դրամը** նախատեսվում է ուղղել գրասենյակային պիտույքների ձեռքբերմանը, **472.6 մլն դրամը**՝ ՀՀ ոստիկանության համակարգի զինծառայողների համազգեստի ձեռքբերմանը, **1,108.1 մլն դրամը**՝ տրանսպորտային նյութերի (բենզինի, դիզելային վառելիքի, յուղերի, ավտոպահեստամասերի) ձեռքբերմանը, **164.7 մլն դրամը**՝ կենցաղային և հանրային սննդի նյութերի (որից **143.3 մլն դրամը**՝ ՀՀ ոստիկանության համակարգի զինծառայողների սննդամթերքի, **11.6 մլն դրամը**՝ հիգիենիկ նյութերի և **9.8 մլն դրամը**՝ կենցաղային ապրանքների) ձեռքբերմանը, և **79.5 մլն դրամը**՝ հատուկ նպատակային այլ նյութերի՝ փորձաքննության հետ կապված անհրաժեշտ նյութերի, մեդալների ու կրծքանշանների, ամանորի տոնի կապակցությամբ նվերների և այլ ապրանքների ձեռքբերմանը:

Դրամաշնորհները ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **16.0 մլն դրամ**, որից **14.9 մլն դրամը** նախատեսվում է ուղղել «Դինամո» մարզական հասարակական կազմակերպությանը, իսկ **1.1 մլն դրամը**՝ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների մարզական միջազգային առաջնություններին մասնակցության համար անդամավճարների գծով ծախսերի ֆինանսավորմանը:

Սոցիալական նպաստները ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **643.3 մլն դրամի** չափով, որից.

- **12.5 մլն դրամ** - ՀՀ կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի N 778 որոշման համաձայն՝ հաշմանդամ զինծառայողների և զոհված զինծառայողների ընտանիքի անդամներին նյութական օգնություն վճարելու համար:
- **11.0 մլն դրամ** - ՀՀ կառավարության 2001 թվականի հունիսի 20-ի N 553 որոշման համաձայն՝ 68 հատ առողջարանային բուժման ուղեգրի ձեռքբերմանը, որից 62-ը՝ ՀՀ ոստիկանության ծառայողների, իսկ 2-ը՝ Հայրենական Մեծ պատերազմին մասնակցած հաշմանդամների համար:
- **619.8 մլն դրամ** - ՀՀ ոստիկանության համակարգի ծառայողների առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու հետ կապված արձակման նպաստների վճարման, ինչպես նաև ՀՀ ոստիկանության ծառայողների և նրանց ուղեկցող ընտանիքի

անդամների արձակուրդի վայր մեկնելու հետ կապված ճանապարհածախսի փոխհատուցման համար: Հաշվարկները կատարվել են «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

<u>Հարկերի, պարտադիր վճարների և տուրքերի</u> գծով ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **24.0 մլն դրամի** չափով, որից.

- **2.1 մլն դրամ** - ՀՀ ոստիկանության համակարգի շենք-շինությունների և փոխադրամիջոցների գույքահարկի վճարմանը:
- **4.0 մլն դրամ** - ՀՀ ոստիկանության համակարգի տրանսպորտային միջոցների գրանցման, հաշվառման, տեխնիկական անձնագրերի և պետավտոհամարանիշների հատկացման գծով տուրքերի վճարմանը:
- **17.9 մլն դրամ** աղբահանության գծով պարտադիր վճարների վճարմանը:

<u>Այլ ծախսերը</u> ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **164.6 մլն դրամ**, որն ուղվելու է մարզական միջոցառումների անցկացման և այլ ծախսերի ֆինանսավորմանը, ինչպես նաև տարբեր տեսակի ծառայությունների մատուցման ծախսերի ֆինանսավորմանը:

Բացի այդ, ՀՀ ոստիկանությանը նախատեսվել է **236.2 մլն դրամ**՝ 03 բաժնի 01 խումբի 01 դասի «Պետավտոհամարանիշների ձեռքբերում» ծրագրով, 73**.7 մլն դրամ**՝ 07 բաժնի 01 խմբի 01 դասի «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» ծրագրով, **747.9 մլն դրամ**՝ 09 բաժնի 04 խմբի 01 դասի «Բարձրագույն մասնագիտական կրթություն» ծրագրով, **176.7 մլն դրամ**՝ 09 բաժնի 03 խմբի 02 «Միջին մասնագիտական կրթություն» դասի գծով, **137.3 մլն դրամ**՝ 09 բաժնի 03 խմբի 01 «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն» դասի գծով, **2,836.3 մլն դրամ**՝ 03 բաժնի 01 խումբի 01 դասի «ՀՀ պետական կառավարման մարմինների և գերատեսչությունների շենքերի և շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանություն» ծրագրով, **130.0 մլն դրամ**՝ 01 բաժնի 06 խումբի 01 դասի «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ» ծրագրով:

<u>բ) Փրկարար ծառայության</u> ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է **7,443.7 մլն դրամ**, որն ամբողջությամբ ուղղվելու է ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը: Փրկարար ծառայության 2016 թվականի պահպանման ծախսերի կառուցվածքը հետևյալն է.

<u>Աշխատողների աշխատավարձերի, հավելավճարների և քաղաքացիական ծառայողների պարգևատրումները</u> ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **6,642.6 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել փրկարար ծառայողների, փրկարար

ծառայության համակարգի քաղաքացիական ծառայողների և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատավարձերի վճարմանը: Նախագծի աճը 2015 թվականի պետական բյուջեի նկատմամբ կազմում է **119.6 մլն դրամ**՝ պայմանավորված 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձացումը տարեկան կտրվածքով նախատեսմամբ և աշխատավարձերի բնականոն աճով:

Հաշվարկը կատարվել են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 710-Ն, N 712-Ն և N 737-Ն որոշումների պահանջներին համապատասխան:

Շարունակական ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **175.0 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունները՝ **102.2 մլն դրամ**, կոմունալ ծառայությունները՝ **19.0 մլն դրամ**, կապի ծառայությունները՝ **33.3 մլն դրամ,** ապահովագրական ծախսերը՝ **12.1 մլն դրամ** և գույքի ու սարքավորումների վարձակալության ծախսերը՝ **8.4 մլն դրամ**:

Հիշյալ ծախսերը հաշվարկվել են «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 7-ի N 190-Ն և 2015 թվականի հունիսի 17-ի N 173-Ա որոշումներով սահմանված սակագներին համապատասխան:

Գործուղումների գծով ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել է **43.9 մլն դրամ**, որն ամբողջությամբ ուղղվելու է ներքին գործուղումներին: Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխան:

Համակարգչային ծառայությունները ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել է **1.8 մլն դրամ**, որը նախատեսվում է ուղղել ՀԾ-Հաշվապահություն հաշվապահական ծրագրերի սպասարկմանը:

Ներկայացուցչական ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **5.0 մլն դրամ**, որն ուղղվելու է թվով 12 միջազգային կազմակերպություններից բնական և տեխնածին աղետների կանխարգելման և հետևանքների վերացման գծով պատվիրակությունների ընդունելության ժամանակ ծախսերի ֆինանսավորմանը:

Մասնագիտական ծառայությունները ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել է **3.0 մլն դրամ**, որն ուղղվելու է գազի սպասարկման ծախսերի, ինչպես նաև փրկարար ծառայության նոր վարչական շենքի վերելակների սպասարկման ծախսերի ֆինանսավորմանը:

<u>Մեքենաների ու սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը</u> ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **54.5 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել փրկարար ծառայության համակարգում առկա տրանսպորտային միջոցների և հրշեջ մեքենաների ընթացիկ վերանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը:

<u>Նյութերի</u> գծով ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **334.5 մլն դրամի** չափով: Նշված գումարից **12.0 մլն դրամը** նախատեսվում է ուղղել գրասենյակային պիտույքների, **82.7 մլն դրամը**՝ փրկարարական ծառայողների համազգեստի, **2.0 մլն դրամը՝** գյուղատնտեսական ապրանքների (Փրկարար ծառայության թվով 4 գերմանական հովվաշների պահպանման համար), **210.3 մլն դրամը**՝ տրանսպորտային նյութերի (բենզին, դիզելային վառելիք և յուղեր), **0.7 մլն դրամ**՝ կենցաղային և մաքրիչ նյութերի և **26.8 մլն դրամը**՝ հատուկ նպատակային այլ նյութերի (տարբեր տեսակի փրկարարական պարագաներ) ձեռքբերման ծախսերի ֆինանսավորմանը:

<u>Սոցիալական նպաստները</u> հաշվարկվել են **157.6 մլն դրամի** չափով, որն ուղղվելու է փրկարարական ծառայողներին առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու հետ կապված արձակման նպաստների վճարմանը:

<u>Հարկերի, պարտադիր վճարների և տուրքերի</u> գծով ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **25.6 մլն դրամի** չափով, որն ուղղվելու է արտասահմանից ապրանքների տեսքով ստացվող օգնությունների հետ կապված պետական գրանցման ծառայությունների և փրկարար ծառայության համակարգում առկա ավտոմեքենաների տեխնիկական ստուգատեսի, ինչպես նաև փրկարար ծառայության ստորաբաժանումների կողմից աղբահանության գծով պարտադիր վճարների, հարկերի և տուրքերի վճարմանը:

Բացի այդ, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայությանը 09 բաժնի 05 խմբի 02 դասի «Օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական ծառայողների ուսուցում» և «Կադրերի պատրաստման և վերապատրաստման ծառայություններ» ծրագրերով նախատեսվել է ընդամենը **134.5 մլն դրամ,** իսկ 09 բաժնի 04 խմբի 01 դասի «Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրով՝ **47.4 մլն դրամ և** 07 բաժնի 01 խմբի 01 դասի «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» ծրագրով՝ **1.0 մլն դրամ**:

գ) Քրեակատարողական ծառայության 2016 թվականի պահպանման ծախսերը նախատեսվել են **9,084.0 մլն դրամի** չափով, որից՝ **8,884.0 մլն դրամն** ուղղվելու է ընթացիկ ծախսերի, իսկ **200.0 մլն դրամը**՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը: Քրեակատարողական ծառայության 2016 թվականի պահպանման ծախսերի կառուցվածքը հետևյալն է.

Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարները 2016 թվականին ծրագրավորվել են **6,327.2 մլն դրամի** չափով, որը 2015 թվականի պետական բյուջեի նկատմամբ ավել է նախատեսվել **2.2 մլն դրամի** չափով՝ պայմանավորված 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձացումը տարեկան կտրվածքով նախատեսմամբ:

Հաշվարկը կատարվել է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 710-Ն, N 712-Ն և N 737-Ն որոշումների պահանջներին համապատասխան:

Շարունակական ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **776.0 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունները՝ **695.0 մլն դրամ**, կոմունալ ծառայությունները՝ **43.6 մլն դրամ**, կապի ծառայությունները՝ **26.0 մլն դրամ**, ապահովագրական ծախսերը՝ **3.9 մլն դրամ** և գույքի և սարքավորումների վարձակալության ծախսերը՝ **7.5 մլն դրամ**:

Նշված ծախսերը հաշվարկվել են «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 7-ի N 190-Ն և 2015 թվականի հունիսի 17-ի N 173-Ա որոշումներով սահմանված սակագներին համապատասխան:

Գործուղումների գծով ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **19.0 մլն դրամի** չափով, որից ներքին գործուղումների գծով՝ **14.2 մլն դրամ** և արտասահմանյան գործուղումների համար՝ **4.8 մլն դրամ**: Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխան:

Վարչական ծառայությունների գծով ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1.0 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել կալանավայրերում լուսանկարահանման ծառայությունների իրականացմանը:

Տեղեկատվական ծառայությունները ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **13.2 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել թերթերի, ամսագրերի տեղեկագրերի ձեռքբերմանը, ինչպես նաև տպագրական աշխատանքների ֆինանսավորմանը:

Մասնագիտական ծառայությունների գծով ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1.2 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել քրեակատարողական հիմնարկներում գազաֆիկացված համակարգերի տարվա ընթացքում սպասարկման աշխատանքների ֆինանսավորմանը:

Ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **150.1 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել.

- **141.0 մլն դրամը**՝ Քրեակատարողական ծառայության շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (շինանյութերի ձեռքբերում) ֆինանսավորմանը,
- **9.1 մլն դրամը**՝ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (Քրեակատարողական ծառայության տրանսպորտային միջոցների, ինչպես նաև խոհանոցային էլեկտրական մի շարք սարքերի, էլեկտրագեներատորների, ջրի և գազի հաշվիչ-ների և այլ սարքավորումների վերանորոգման աշխատանքների) ֆինանսավորմանը:

Նյութերի գծով ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախա-տեսվել են **1,539.2 մլն դրամ** չափով, որից **12.7 մլն դրամը** նախատեսվում է ուղղել գրասեն-յակային պիտույքների ձեռքբերմանը, **266.9 մլն դրամը**՝ քրեակատարողական ծառայողների և կալանավորների համազգեստի ձեռքբերմանը, **104.0 մլն դրամը**՝ տրանսպորտային նյութերի (բենզին, դիզելային վառելիք և յուղեր) ձեռքբերմանը, **1,134.4 մլն դրամը**՝ կենցաղային և հան-րային սննդի նյութերի (որից մաքրիչ նյութեր՝ 12.0 մլն դրամ, հիգիենիկ նյութեր՝ 58.8 մլն դրամ, կալանավորների և դատապարտյալների համար սննդամթերք՝ 997.0 մլն դրամ, տնտեսական նյութեր՝ 9.4 մլն դրամ, կենցաղային այլ նյութեր՝ 57.1 մլն դրամ) ձեռքբերմանը և **21.2 մլն դրամը**՝ հատուկ նպատակային այլ նյութերի (փշալար, կրակմարիչ, կրծքանշան և այլն) ձեռքբերմանը:

Սոցիալական նպաստները հաշվարկվել են **51.1 մլն դրամի** չափով, որից

- **49.0 մլն դրամ** - քրեակատարողական ծառայողների առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու արձակման նպաստների վճարման համար,
- **2.1 մլն դրամ** - քրեակատարողական ծառայողների և նրանց ուղեկցող ընտանիքի անդամների արձակուրդի վայր մեկնելու հետ կապված ճանապարհածախսի փոխհատուցման համար:

Հաշվարկները կատարվել են «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Հարկերի, պարտադիր վճարների և տուրքերի գծով ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **4.3 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել քրեակատարողական հիմնարկների կողմից աղբահանության գումարների վճարմանը,

ինչպես նաև քրեակատարողական համակարգի ավտոմեքենաների տեխնիկական զննության ժամանակ պարտադիր վճարներին:

<u>Այլ ծախսերը</u> ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1.5 մլն դրամ** գումարի չափով, որն իր մեջ ներառում է ընթացիկ ծախսերի գծով այլ հոդվածներում չընդգրկված ծախսեր, ինչպես նաև՝ տարբեր տեսակի ծառայությունների մատուցման ծախսեր:

<u>Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը</u> 2016 թվականին նախատեսվել են **200.0 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կապիտալ շինարարական լրացուցիչ աշխատանքների ֆինանսավորմանը:

Բացի այդ, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությանը 07 բաժնի 01 խմբի 01 դասի «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» ծրագրով նախատեսվել է **43.0 մլն դրամ:**

<u>դ) Ազգային անվտանգության ծառայության</u> 2016 թվականի պահպանման ծախսերը նախատեսվել է **20,049.4 մլն դրամ**, որից՝ **19,853.8 մլն դրամն** ուղղվելու է ընթացիկ ծախսերի, իսկ **195.6 մլն դրամը**՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը: Նշված ծրագրի գծով 2016 թվականի համար ծրագրավորված գումարները 2015 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ աճել են **10.9 մլն դրամով**: Ազգային անվտանգության ծառայության 2016 թվականի պահպանման ծախսերի կառուցվածքը հետևյալն է.

<u>Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարները</u> 2016 թվականին ծրագրավորվել են **16,240.1 մլն դրամի** չափով, որը 2015 թվականի պետական բյուջեի նկատմամբ ավել է նախատեսվել **67.7 մլն դրամով**, որը պայմանավորված է 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձացումը տարեկան կտրվածքով նախատեսմամբ և աշխատավարձերի բնականոն աճով:

Հաշվարկը կատարվել են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 710-Ն, N 712-Ն և N 737-Ն որոշումների պահանջներին համապատասխան:

<u>Այլ վարձատրությունները</u> հաշվարկվել են **70.3 մլն դրամի** չափով: Նշված գումարներն ուղղվելու են ազգային անվտանգության համակարգի զինծառայողներին համազգեստի դիմաց դրամական փոխհատուցմանը:

<u>Շարունակական ծախսերը</u> ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1,054.6 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունները՝ **739.1 մլն դրամ**, կոմունալ ծառայությունները՝ **96.3 մլն դրամ**, կապի ծառայությունները՝ **197.2 մլն դրամ** և ապահովագրական ծախսերը **22.0 մլն դրամ:**

Նշված ծախսերը հաշվարկվել են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 7-ի N 190-Ն և 2015 թվականի հունիսի 17-ի N 173-Ա որոշումներով սահմանված սակագներին և «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Գործուղումների գծով ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **400.0 մլն դրամի** չափով, որից ներքին գործուղումների գծով՝ **150.0 մլն դրամ**, իսկ արտասահմանյան գործուղումների գծով՝ **250.0 մլն դրամ**: Հաշվարկները կատարվել են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխան:

Համակարգչային ծառայությունների գծով ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **104.8 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի սպասարկման ծախսերի ֆինանսավորմանը:

Ներկայացուցչական ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **22.5 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել տարբեր երկրների հատուկ ծառայությունների ղեկավարների և պատվիրակությունների ընդունելությունների ծախսերի ֆինանսավորմանը:

Մասնագիտական ծառայությունների գծով ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **30.0 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել թարգմանչական ծառայությունների ձեռքբերմանը:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների գծով ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **12.0 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել շենքերի-շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ֆինանսավորմանը:

Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **14.0 մլն դրամի** չափով: Նշված գումարները նախատեսվում է ուղղել ազգային անվտանգության ծառայության համակարգի շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (շինանյութերի ձեռքբերում) ֆինանսավորմանը:

Մեքենաների և սարքավորումների վնթացիկ նորոգում և պահպանման ծախսերը հաշվարկվել են **21.0 մլն դրամի** չափով: Նշված գումարներն ուղղվելու են ազգային անվտանգության համակարգի ավտոմեքենաների և սարքավորումների ընթացիկ վերանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը:

<u>Նյութերի</u> գծով ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1,297.4 մլն դրամի** չափով: Նշված գումարից **23.8 մլն դրամը** նախատեսվում է ուղղել գրասենյակային պիտույքների ձեռքբերմանը, **190.6 մլն դրամը**՝ ազգային անվտանգության համակարգի զինծառայողների համազգեստի ձեռքբերմանը, **34.3 մլն դրամը**՝ գյուղատնտեսական ապրանքների ձեռքբերմանը, **735.5 մլն դրամը**՝ տրանսպորտային նյութերի (բենզին, դիզելային վառելիք, յուղեր) ձեռքբերմանը, **274.3 մլն դրամը**՝ կենցաղային և հանրային սննդի նյութերի ձեռքբերմանը, **38.9 մլն դրամը**՝ հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերմանը:

<u>Սոցիալական նպաստները</u> հաշվարկվել են **33.4 մլն դրամի** չափով: Նշված գումարները նախատեսվում է ուղղել ազգային անվտանգության ծառայության համակարգի ծառայողների առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու արձակման նպաստների վճարմանը:

Հաշվարկները կատարվել են «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

<u>Պարտադիր վճարները</u> հաշվարկվել են **8.0 մլն դրամի** չափով: Նշված գումարները նախատեսվում է ուղղել աղբահանության գումարների վճարմանը::

<u>Այլ ծախսերը</u> ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **545.7 մլն դրամ** գումարի չափով, որն իր մեջ ներառում է ընթացիկ ծախսերի գծով այլ հոդվածներում չընդգրկված ծախսեր, ինչպես նաև՝ տարբեր տեսակի ծառայությունների մատուցման ծախսեր:

<u>Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը</u> 2016 թվականին նախատեսվել են **195.6 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել.

- **46.0 մլն դրամ**՝ Ազգային անվտանգության ծառայության Սյունիքի մարզային վարչության Գորիսի բաժանմունքի վարչական շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը,
- **25.0 մլն դրամ**՝ Ազգային անվտանգության ծառայության վետերանների խորհրդի աշխատասենյակների վերանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը,
- **80.0 մլն դրամ**՝ տրանսպորտային միջոցների (թվով 11 ՎԱԶ-21230 Շեվրոլե-Նիվա ավտոմեքենաների) ձեռքբերման ծախսերի ֆինանսավորմանը,
- **29.1 մլն դրամ**՝ վարչական սարքավորումների (համակարգչային սարքավորումների) ձեռքբերմանը,
- **8.0 մլն դրամ**՝ այլ մեքենաների և սարքավորումների (օդորակիչների, հեռուստացույցերի, ջրատաքացուցիչների և այլ սարքավորումների) ձեռքբերմանը,

- **7.5 մլն դրամ**՝ Ոչ-նյութական հիմնական միջոցների (հակավիրուսային համակարգչային ծրագրերի ձեռքբերմանը և սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի լիցենզիաների ձեռքբերմանը) գծով ծախսերի ֆինանսավորմանը,

Բացի այդ, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը նախատեսվել է **26.8 մլն դրամ**՝ 07 բաժնի 01 խմբի 01 դասի «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» ծրագրով, **272.7 մլն դրամ**՝ 09 բաժնի 04 խմբի 01 դասի «Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրով:

<u>ե) Պետական պահպանության ծառայությանը</u> 2016 թվականին նախատեսվում է **2,727.0 մլն դրամ**, որն ամբողջությամբ ուղղվելու է ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը: Նշված ծրագրի գծով 2016 թվականի համար ծրագրավորված գումարները 2015 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ աճել են **32.8 մլն դրամով**: Պետական պահպանության ծառայության 2016 թվականի պահպանման ծախսերի կառուցվածքը հետևյալն է.

<u>Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարները</u> 2016 թվականին ծրագրավորվել են **2,116.2 մլն դրամի** չափով, որը 2015 թվականի պետական բյուջեի նկատմամբ ավել է նախատեսվել **1.5 մլն դրամով՝** պայմանավորված Սևանում ծառայող զինծառայողների գծով բարձր լեռնային վայրերում ծառայության համար գումարների նախատեսմամբ:

<u>Շարունակական ծախսերը</u> ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **61.2 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունները՝ **37.4 մլն դրամ**, կոմունալ ծառայությունները՝ **3.8 մլն դրամ**, կապի ծառայությունները՝ **15.0 մլն դրամ,** ապահովագրական ծախսերը՝ **5.3 մլն դրամ**: Նշված ծախսերը հաշվարկվել են «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 7-ի N 190-Ն և 2015 թվականի հունիսի 17-ի N 173-Ա որոշումներով սահմանված սակագներին համապատասխան:

<u>Գործուղումների գծով ծախսերը</u> ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **95.3 մլն դրամի** չափով, որից ներքին գործուղումների գծով՝ **20.0 մլն դրամ**, արտասահմանյան գործուղումների գծով՝ **75.0 մլն դրամ,** իսկ այլ տրանսպորտային ծախսերի գծով՝ **0.3 մլն դրամ**: Հաշվարկները կատարվել են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխան:

Տեղեկատվական ծառայությունները ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **2.6 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել թերթերի, ամսագրերի տեղեկագրերի ձեռքբերմանը, ինչպես նաև տպագրական աշխատանքների ֆինանսավորմանը:

Պայմանագրային ծառայությունների ձեռքբերման ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **10.1 մլն դրամի** չափով, որից **3.6 մլն դրամը՝** ներկայացուցչական ծախսերի ֆինանսավորմանը, **0.5 մլն դրամը՝** լվածքատների ծառայության ֆինանսավորմանը, իսկ **6.0 մլն դրամը՝** ընդհանուր բնույթի այլ ծառայությունների (համակարգչային տեխնիկայի վերանորոգմանը, գազի սարքավորումների վերանորոգմանը և այլն) ֆինանսավորմանը:

Մասնագիտական ծառայություններ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1.5 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել գազի հաշվիչների սպասարկմանը, նոտարական ծառայությունների կատարմանը, կապի լարերի անցկացմանը և այլ աշխատանքների ֆինանսավորմանը:

Ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **78.0 մլն դրամի** չափով:

- **5.0 մլն դրամը՝** պետական պահպանության ծառայության շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի ֆինանսավորմանը,
- **73.0 մլն դրամը՝** մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (պահեստամասերի ձեռքբերում) ֆինանսավորմանը:

Նյութերի գծով ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **242.7 մլն դրամի** չափով: Նշված գումարից **71.8 մլն դրամը** նախատեսվում է ուղղել գրասենյակային պիտույքների, ինչպես նաև պետական պահպանության ծառայության համակարգի զինծառայողների համազգեստի ձեռքբերմանը, **165.2 մլն դրամը՝** տրանսպորտային նյութերի (բենզին, դիզելային վառելիք, յուղեր) ձեռքբերմանը, **4.7 մլն դրամը՝** կենցաղային և հանրային սննդի նյութերի ձեռքբերմանը և **1.0 մլն դրամը՝** հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերմանը:

Սոցիալական նպաստները հաշվարկվել են **18.1 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել պետական պահպանության ծառայության համակարգի ծառայողների առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու հետ կապված արձակման նպաստների վճարմանը: Հաշվարկները կատարվել են «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

<u>Հարկերի</u> գծով ծախսերը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1.2 մլն դրամ**, որը նախատեսվում է ուղղել պետական պահպանության ծառայության տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության և աղբահանության գումարների վճարմանը:

<u>Այլ ծախսերը</u> ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **100.0 մլն դրամ** գումարի չափով, որն իր մեջ ներառում է ընթացիկ ծախսերի գծով այլ հոդվածներում չընդգրկված ծախսեր:

Բացի այդ, ՀՀ պետական պահպանության ծառայությանը նախատեսվել է **1.1 մլն դրամ**՝ 07 բաժնի 01 խմբի 01 դասի «Դեղորայքի տրամադրում պետական պահպանության ծառայությանը» ծրագրով:

ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքներին պետական բյուջեից անհատույց և անվերադարձ հատկացումներ կարող են նախատեսվել ֆինանսական համահարթեցման և այլ դոտացիաների, սուբվենցիաների և պետական բյուջեի եկամուտներից մասհանումների տեսքով:

1. Ֆինանսական համահարթեցման և այլ դոտացիաներ.

2016 թվականին համայնքներին տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով առաջարկվում է ուղղել.

- ֆինանսական համահարթեցման դոտացիաների տրամադրմանը,
- այլ դոտացիաների տրամադրմանը:

1.1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի երկրորդ պարբերությունում բերված դրույթը սահմանում է (համանման սահմանմամբ դրույթ բերված է նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունում), որ պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տվյալ տարում տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) սահմանվում է ոչ պակաս, քան տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում ՀՀ համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի չորս տոկոսը: 2016 թվականի համար նախորդող երկրորդ բյուջետային տարին՝ 2014 թվականի բյուջետային տարին է, հետևաբար ըստ վերոհիշյալ օրենքների վերը նշված պահանջի՝ 2016 թվականին համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ «Տե-

ղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) չպետք է պակաս լինի ՀՀ 2014 թվականի համախմբված բյուջեի փաստացի եկամուտների ընդհանուր գումարի՝ 1,178.1 մլրդ դրամի 4%-ը կազմող 47,127.5 մլն դրամից:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեվում է ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրել ընդհանուր գումարով 47,127.5 մլն դրամի դոտացիաներ: Նշված դոտացիաների բաշխումն ըստ առանձին համայնքների նախատեված է իրականացնել «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքին համապատասխան, մասնավորապես.

ա) 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող յուրաքանչյուր համայնքի բյուջեին ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից առաջարկվում է ֆինանսական համահարթեցման դոտացիայի տեսքով տրամադրել 3.5 մլն դրամ (2015 թվականի համար սահմանված չափով): Այս խումբ թվով 188 համայնքներին հատկացվող ընդհանուր գումարը կկազմի՝ 658.0 մլն դրամ,

բ) մյուս համայնքներին (բացառությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն համայնքի) հասանելիք դոտացիաները հաշվարկվելու համար ֆոնդի ընդհանուր գումարի մնացորդը բաշխվել է 3 մասի՝ «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված համայնքների տնտեսական վիճակը բնութագրող (i) «ա» գործոնով դոտացիա ստանալու իրավունք ունեցող համայնքների միջև բաշխվող գումար, (ii) «բ» գործոնով դոտացիա ստանալու իրավունք ունեցող համայնքների միջև բաշխվող գումար և (iii) «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն 300-ից ավելի բնակիչ ունեցող, սակայն ծրագրավորվող տարվան նախորդող տարում «ա» և «բ» գործոններով դոտացիայի հաշվարկման արդյունքում ՀՀ պետական բյուջեի մասին տվյալ տարվա օրենքով 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքի համար սահմանված դոտացիայի գումարից տվյալ տարում պակաս չափով դոտացիա ստացած համայնքներին տրամադրվող գումար:

Հարկ է նշել, որ համաձայն «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի 2016 թվականի ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառված 2014 թվականի գույքահարկի և հողի հարկի գծով բոլոր ելակետային տվյալները տրամադրվել են համայնքների ղեկավարների կողմից: Ինչ վերաբերում է հաշվարկներում կիրառման ենթակա մյուս ցուցանիշին՝ ՀՀ համայնքներում բնակչության թվին, ապա հարկ է նշել, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության կողմից ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող օրենքների նախագծերի փաթեթի կազմում շրջանառության մեջ դրված ««Ֆինանսական համահարթեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, հաշվարկներում կիրառել է ՀՀ Ազգային վիճակագ-

րական ծառայության կողմից տրամադրված 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետության համայնքներում մշտական բնակչության թվի մասին տվյալները:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն գյուղական համայնքի համապատասխան ցուցանիշները հայտնի պատճառներով չեն կարող կիրառվել ֆինանսական համահարթեցման դոտացիաների բաշխման հաշվարկներում, նշված համայնքի ղեկավարի աշխատակազմի 2016 թվականի պահպանման ծախսերի գծով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին առանձին տողով նախատեսվել են 4.9 մլն դրամի չափով հատկացումներ:

«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն 300-ից ավելի բնակիչ ունեցող, սակայն «ա» և «բ» գործոններով դոտացիայի հաշվարկման արդյունքում ՀՀ պետական բյուջեի մասին տվյալ տարվա օրենքով 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքի համար սահմանված դոտացիայի գումարից տվյալ տարում պակաս չափով (հաշվի առած նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4.3-րդ և 4.5-րդ մասերով սահմանված դեպքում և կարգով տվյալ տարվան հաջորդող տարում կատարված տվյալ տարվա դոտացիայի վերահաշվարկի արդյունքները) դոտացիա ստացած յուրաքանչյուր համայնք տվյալ տարվան հաջորդող տարվա ՀՀ պետական բյուջեով սահմանված դոտացիայի ընդհանուր գումարի հաշվին ստանում է լրացուցիչ դոտացիա՝ 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքի համար ՀՀ պետական բյուջեի մասին տվյալ տարվա օրենքով սահմանված գումարի և լրացուցիչ դոտացիա ստացող համայնքին տվյալ տարում «ա» և «բ» գործոններով հաշվարկված դոտացիայի գումարի տարբերության չափով: Այդ կապակցությամբ, կատարվել է 3500 հազ. դրամ դոտացիայի գումարից ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով պակաս չափով դոտացիա ստացող յուրաքանչյուր համայնքի գծով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով սահմանված դոտացիայի ընդհանուր գումարի հաշվին լրացուցիչ դոտացիայի գումարների հատկացման հաշվարկներ: Արդյունքում, թվով 7 համայնքներին 2016 թվականի հատկացվող լրացուցիչ դոտացիայի ընդհանուր գումարը կազմել է շուրջ 3.9 մլն. դրամ, որն էլ նախատեսվել է «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի N 2 հավելվածում:

1.2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն ՀՀ օրենքներով համայնքների եկամուտների նվազեցման հետևանքով համայնքների բյուջեներում առաջացող եկամուտների կորուստների գումարները ենթակա են փոխհատուցման պետության կողմից: Այդ կապակցությամբ, «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» ՀՀ օրենքի պահանջներին

համապատասխան կիրառելով տեղական ինքնակառավարման մարմիններից (իրենց իրավասության շրջանակներում) ստացված տեղեկատվությունը, կատարվել են համայնքների 2014 թվականի բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ենթակա գումարների հաշվարկներ: Արդյունքում, համայնքների 2014 թվականի բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ենթակա ընդհանուր գումարը կազմել է շուրջ 53.4 մլն դրամ, որն էլ նախատեսվել է «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի N 2 հավելվածում:

1.3. ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված է նաև շուրջ 1.5 մլրդ դրամի չափով պետական աջակցության տրամադրում ՀՀ համայնքներին,

1.4. ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է պետական աջակցություն Սահմանամերձ համայնքներին շուրջ 928.9 մլն դրամի չափով:

2. Սուբվենցիաներ.

2.1. ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով նախատեսվել է համայնքներին սուբվենցիաների (այսուհետ՝ բնապահպանական սուբվենցիաների) հատկացումներ՝ 94.4 մլն դրամի չափով:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից հատկացվող բնապահպանական սուբվենցիաներ ստացող համայնքների ցանկի որոշման և նրանց տրամադրվելիք սուբվենցիաների գումարների չափերի հաշվարկման հիմքում դրվել են.

- համայնքների կողմից ներկայացված ՀՀ բյուջետային օրենսդրությամբ սահմանված 2016 թվականի համապատասխան բյուջետային ֆինանսավորման հայտերը,
- «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված համապատասխան ընկերությունների կողմից 2012-2014 թվականներին պետական բյուջե փաստացի վճարված բնապահպանական վճարների գումարները,
- նշված վճարների գումարների՝ ըստ այդ ընկերությունների գործունեությունից վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների բաշխման համամասնությունները (սահմանված են ՀՀ բնապահպանության նախարարության կողմից),
- նշված վճարների գումարներից 2014 թվականին այդ համայնքներին փաստացի տրամադրված և ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված բնապահպանական սուբվենցիաների գումարները:

Մասնավորապես, ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են սուբվենցիաների հատկացումներ՝

ա) «Արարատ-ցեմենտ» ՓԲԸ-ի և «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքային համայնքի գծով՝ 7.2 մլն դրամ,

բ) «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Լոռու մարզի Ախթալա քաղաքային համայնքի գծով՝ 4.6 մլն դրամ,

գ) «Արմենիան Քափր Փրոգրամ» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքների գծով՝ 47.9 մլն դրամ,

դ) «Չարենցավանի ձուլակենտրոն» ԲԲԸ-ի և «Ասկե-Գրուպ» ԲԲԸ-ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքային համայնքի գծով՝ 1.2 մլն դրամ,

ե) «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի և «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքային համայնքի գծով՝ 6.3 մլն դրամ,

զ) «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան քաղաքային համայնքի գծով՝ 16.5 մլն դրամ և Լեռնաձոր գյուղական համայնքի գծով՝ 6.0 մլն դրամ,

է) «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի գծով՝ 3.3 մլն դրամ և Կարճևան գյուղական համայնքի գծով՝ 1.4 մլն դրամ:

2.2. ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է շուրջ 8.5 մլրդ դրամ ընդհանուր գումարով սուբվենցիաների հատկացում Երևանի քաղաքային համայնքի ծրագրերի իրականացմանը աջակցելու համար:

3. Մասհանումներ պետական բյուջեի եկամուտներից.

ՀՀ 2016 թվականին պետական բյուջեից եկամտային հարկի և շահութահարկի գծով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածով սահմանված մասհանումների իրականացում ՀՀ համայնքների բյուջեներին չի նախատեսված՝ հաշվի առնելով համայնքների միջև այդ հարկերի ոչ համամասնորեն ձևավորումը, պայմանավորված հանրապետությունում տնտեսաարտադրական կարողությունների ու ազգաբնակչության, ըստ համայնքների, տարիներ ի վեր ձևավորվող խիստ անհամաչափ տեղաբաշխման հանգամանքներով: Նման պայմաններում մասհանումների համակարգը միտված կլինի սակավաթիվ, հիմնականում Երևան քաղաքի ֆինանսական բազայի ամրապնդմանը՝ էլ ավելի մեծացնելով համայնքների միջև առկա ֆինանսական անհավասարության աստիճանը:

Վերը նշված մասհանումների գործընթացը էականորեն կդժվարացնի և անարդյունավետ կդարձնի հարկ վճարողի եկամուտների ձևավորման վայրի վերաբերյալ հստակ պատկերացում կազմելու անհնարինությունը, քանի որ շատ դեպքերում հարկ վճարողի գրանցման վայրը չի համընկնում հարկ վճարողի գործունեության իրականացման վայրերի հետ: Հարկ է նշել, որ դեռևս 1998-1999 թվականներին օրենքի պահանջի համապատասխան համայնքների բյուջեներին կատարվում էին եկամտահարկի գումարների մասհանումներ: Սակայն վերը նշված հիմնախնդիրների առկայությունը ցույց տվեց մասհանումների իրականացման բացարձակ անարդյունավետությունը, որից ելնելով էլ օրենքում կատարվեցին համապատասխան փոփոխություններ, որոնց համաձայն՝ համայնքների բյուջեներին եկամտահարկից մասհանումների կատարումը 2000 թվականից դադարեցվեց:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, ինչպես նաև համայնքների բյուջեներին շահութահարկի ու եկամտային հարկի գումարներից մասհանումների գործընթացն ի սկզբանե չվարկաբեկելու նկատառումով, գտնում ենք, որ մասհանումների կատարման հարցին նպատակահարմար է անդրադառնալ վերը նշված հիմնախնդիրների կարգավորման հստակ մեխանիզմների մշակումից հետո:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսվող ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի ծավալը նախատեսված է շուրջ 8.0 մլրդ դրամ (ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի ընդհանուր ծավալի 0.58 %-ը):

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են նաև հատկացումներ նյութական ռեսուրսների պետական պահուստի պահպանման և ձևավորման, ինչպես նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալության համակարգի ստորաբաժանումների պահպանման համար, համապատասխանաբար 25,96 մլն դրամի և 281,28 մլն դրամի չափով:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ԴԵՖԻՑԻՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի գումարը ծրագրավորվում է 190.7 մլրդ դրամի չափով: Դեֆիցիտի ֆինանսավորումը նախատես-

վում է իրականացնել ներքին և արտաքին աղբյուրների զուտ մուտքերի (զուտ մուտքերը՝ դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցների մուտքերի ընդհանուր գումարի և փոխառու միջոցների տրամադրման կամ մարման ընդհանուր գումարի տարբերությունն է) հաշվին, համապատասխանաբար՝ 68.1 մլրդ դրամի և 122.6 մլրդ դրամի չափով:

Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները դասակարգվում են ներքին և արտաքին աղբյուրներից փոխառու միջոցների և ֆինանսական ակտիվների տեսքով ներգրավվող միջոցների:

Փոխառու միջոցների ներգրավումը իրականացվում է պետական արժեթղթերի թողարկման և վարկերի ու փոխատվությունների ստացման եղանակով (որոնք հետևապես հետագայում ենթակա են մարման): Ֆինանսական ակտիվներից միջոցների ներգրավումը իրականացվում է արդեն ձեռք բերված՝ սեփականության իրավունքով պետությանը պատկանող բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության, ինչպես նաև տնտեսվարող և այլ սուբյեկտներին պետական բյուջեից տրամադրված վարկերի և փոխատվությունների դիմաց այդ սուբյեկտներից ձեռք բերված պարտավորությունների իրացման եղանակով:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներքին աղբյուրներից ներգրավվող փոխառու զուտ միջոցների ընդհանուր գումարը ծրագրավորվում է շուրջ 42.0 մլրդ դրամի չափով, ընդ որում, փոխառու միջոցների մուտքերի ներգրավումը ամբողջությամբ նախատեսվում է ապահովել պետական արժեթղթերի թողարկումից: Ֆինանսական ակտիվներից 2016 թվականի զուտ մուտքերը ծրագրավորվում են շուրջ 26.1 մլրդ դրամ, ընդ որում, տարեսկզբի ազատ մնացորդի միջոցների հաշվին՝ 6.0 մլրդ դրամ և տնտեսվարող և այլ սուբյեկտներին տրամադրված բյուջետային վարկերի և փոխատվությունների գծով զուտ մուտքերին՝ 20.1 մլրդ դրամ (տեղեկատվությունը ներկայացված է սույն բացատրագրի «Բյուջետային վարկեր» բաժնում):

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով արտաքին աղբյուրներից ներգրավվող փոխառու զուտ միջոցների ծրագրված ընդհանուր գումարը (141.1 մլրդ դրամ) հաշվարկվել է որպես միջազգային կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից Հայաստանի Հանրապետությանը 2016 թվականին տրամադրվելիք արտոնյալ վարկերի (որոնց գերակշռող մասն ունի հստակ ծրագրային ուղղվածություն) և մինչ այդ արդեն ստացված վարկերի, ըստ վարկային պայմանագրերով նախատեսված ժամկետների, մարման գումարների տարբերություն (նշված զուտ մուտքերի վերաբերյալ մանրամասն համապատասխան տեղեկատվությունը բերված է սույն բացատրագրի N 1 հավելվածում, NN 15-18 աղյուսակներում և «ՀՀ պետական պարտքը» բաժնում): Դրա հետ մեկտեղ նախագծով նախատեսվել է շուրջ 1,7 մլրդ դրամ՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կապիտալում

մասնակցության գծով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորություններ-ի կատարման համար:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով զուտ վարկավորման ընդհանուր ծավալը ծրագրավորված է 26.7 մլրդ դրամի չափով: Նշված գումարն իրենից ներկայացնում է ՀՀ պետական բյուջեից տրամադրվելիք բյուջետային վարկերի ընդհանուր գումարի և նախկինում տրամադրված բյուջետային վարկերի մարումներից ստացվելիք մուտքերի ընդհանուր գումարի տարբերությունը:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից տրամադրվելիք վարկերի ընդհանուր գումարը նախագծով նախատեսվում է սահմանել 60.7 մլրդ դրամի չափով: Մասնավորապես.

ա) Հայաստանի Հանրապետության կողմից ցուցաբերվող արտաքին տնտեսական աջակցության շրջանակներում բյուջետային վարկեր տրամադրելու համար առանձնացվել են 47.3 մլրդ դրամի չափով հատկացումներ՝ դրանք ամբողջությամբ ԼՂՀ-ին բյուջետային վարկի տրամադրմանն ուղղելու նպատակով,

բ) Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրամատակարարման հուսալիության», Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման, ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման վարկային ծրագրերի, և Դանիական թագավորության աջակցությամբ իրականացվող Գյուղական կարողությունների ստեղծում դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում նախատեսվում է տրամադրել շուրջ 13.4 մլրդ դրամի բյուջետային վարկեր:

Դրա հետ մեկտեղ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են մուտքեր Վրաստանից, ինչպես նաև մի շարք տնտեսվարող սուբյեկտներից՝ պետության կողմից նախորդ տարիներին իրենց տրամադրված բյուջետային վարկերի մարումների գծով պետական բյուջե կատարվելիք վճարումներից՝ շուրջ 34.0 մլրդ դրամի չափով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Ներքին պետական պարտքը «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով պետական արժեթղթերով նախատեսվում էր ապահովել 40.0 մլրդ դրամ դեֆիցիտի ֆինանսավորում և կատարել 35,155.06 մլն դրամ (ճշտված պլան

33,025.06 մլն դրամ) սպասարկման ծախս: ՀՀ կառավարության 2015թ-ի մարտի N 305–Ն որոշման հիման վրա, պետական արտարժութային պարտատոմսերից ստացված միջոցների հաշվին, գանձապետական պարտատոմսերի թողարկումից և տեղաբաշխումից զուտ մուտքը կրճատվել է 40 մլրդ դրամով:

2015 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ թողարկվել է 138,000.0 մլն դրամ անվանական արժեքով պարտատոմսեր, որից տեղաբաշխվել է 132,932.0 մլն դրամը: Պարտատոմսերի տեղաբաշխումից հասույթը կազմել է 116,450.9 մլն դրամ: 2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին տեղաբաշխվել է 790.8 մլն դրամի խնայողական պարտատոմսեր: Այս պարտատոմսերը տեղաբաշխվում են գանձապետական պահառու համակարգի միջոցով: 2015 թվականի ընթացքում կիրականացվի մոտ 111.9 մլրդ դրամի պարտատոմսերի մարում և մոտ 32.2 մլրդ դրամի սպասարկման ծախս:

2015 թվականի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության ներքին պետական պարտքի ծավալն անվանական արժեքով կկազմի մոտ 319.0 մլրդ դրամ, որից շրջանառելի պարտատոմսերի ծավալը՝ 318.1 մլրդ դրամ, ՀՀ ներքին պետական երաշխիքները՝ 0.9 մլրդ դրամ: 2014 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության ներքին պետական պարտքի ընդհանուր ծավալն անվանական արժեքով կազմել էր 311.7 մլրդ դրամ, որից ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսերի ծավալը՝ 289.4 մլրդ դրամ, ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային գանձապետական պարտատոմսերի ծավալը՝ 19.4 մլրդ դրամ, ՀՀ ռեզիդենտից ստացված վարկի ծավալը՝ 1.9 մլրդ դրամ, իսկ ՀՀ ներքին պետական երաշխիքները՝ 1.0 մլրդ դրամ: Պարտքի միջին ժամկետայնությունը 2015 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել է 2083 օր (2014 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ նույն ցուցանիշը եղել է 2003 օր), միջին կշռված եկամտաբերությունը՝ 13.97% (2014 թվականի տարեվերջին նույն ցուցանիշը եղել է 13.49%):

2014 թվականի վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի 4.7%-ը կարճաժամկետ, 52.0%-ը միջնաժամկետ և 43.3%-ը երկարաժամկետ պարտատոմսերն էին: 2015 թվականի վերջի դրությամբ նախատեսվում է, որ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի 6.5%-ը կլինեն կարճաժամկետ, 48.1%-ը՝ միջնաժամկետ և 45.4%-ը՝ երկարաժամկետ պարտատոմսեր:

2011 թվականից սկսած ՀՀ կառավարությունը հրապարակում է պետական պարտատոմսերի թողարկման կանոնները և տեղաբաշխումների տարեկան օրացույցը:

2016 թվականի ընթացքում շարունակվելու են միջնաժամկետ և երկարաժամկետ ուղենշային պարտատոմսերի թողարկումները: 2016 թվականին կիրականացվեն նոր 3,5 և 20 տարի մարման ժամկետով պարտատոմսերի թողարկումներ: Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսա-

վորման ծրագրի իրագործման շրջանակներում կշարունակվի նախկինում թողարկած երկարաժամկետ պարտատոմսերի փոքրաձավալ թողարկումների, ինչպես նաև 2008-2014թթ. թողարկման արդեն նախկին ուղենշային համարվող պարտատոմսերի շրջանառությունից դուրս բերելու գործընթացը՝ հիմնականում հետգնումների միջոցով:

2016 թվականին ՀՀ կառավարությունը շարունակելու է Հայաստանի Հանրապետության ներքին պարտքի կառավարման բնագավառում ձեռնարկված բարեփոխումները: Պարտատոմսերը տեղաբաշխվելու են պարբերական վերաբացումների միջոցով: Պարբերաբար կիրականացվեն նաև հետգնումներ:

2016թ. պետական պարտատոմսերի հետգնումներ կիրականացվեն առավելապես մարման ժամկետին մոտ պարտատոմսերի գծով՝ վերաֆինանսավորման ռիսկը կրճատելու և մարումների գրաֆիկը հարթեցնելու նպատակով:

Շրջանառության մեջ գտնվող պետական (գանձապետական) պարտատոմսերի սպասարկման գծով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով անհրաժեշտ է նախատեսել շուրջ 38.2 մլրդ դրամ սպասարկման ծախս: Պետական (գանձապետական) պարտատոմսերի հաշվին ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի դեֆիցիտը կֆինանսավորվի 42.0 մլրդ դրամով: 2016 թվականի վերջին Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով կկազմի մոտ 370.0 մլրդ դրամ, միջին ժամկետայնությունը՝ մոտ 5 տարի:

Արտաքին պետական պարտքը 2014 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը (ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորություններ) կազմել է 3,785 մլն ԱՄՆ դոլար և կանխատեսումների համաձայն՝ 2015 թվականի տարեվերջին այն կկազմի մոտ 4,483 մլն ԱՄՆ դոլար:

2015 թվականի ընթացքում արտաքին պարտավորությունների գծով՝

- կստացվի մոտ 1,037 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝ ՀՀ կառավարության պարտավորությունների գծով 931 մլն ԱՄՆ դոլար (որից 487.8 մլն ԱՄՆ դոլարը՝ արտարժութային պետական պարտատոմսերի տեղաբաշխումից) և ԿԲ-ի պարտավորությունների գծով՝ մոտ 106 մլն ԱՄՆ դոլար,
- կկատարվի մոտ 286 մլն ԱՄՆ դոլարի հիմնական գումարի մարում, որից 257 մլն ԱՄՆ դոլար ՀՀ կառավարության պարտավորությունների գծով (որից 199.9 մլն ԱՄՆ դոլարը կկազմի 2020 թվականին մարման ենթակա արտարժութային պետական պարտատոմսերի հետգնումը):

2014 թվականի տարեվերջի համեմատ ՀՀ արտաքին պետական պարտքը (ՀՀ ԱՊՊ) կաճի 698 մլն ԱՄՆ դոլարով[1]:

[1] Տարեկան կտրվածքով ստացումների և մարումների արդյունքում ստացվող պարտքի հաշվարկային գումարի և տեքստում ներկայացված պարտքի

2015 թվականի ընթացքում ՀՀ արտաքին պետական պարտքի գծով ընդհանուր սպասարկումը կկազմի մոտ 391 մլն ԱՄՆ դոլար: Միայն ՀՀ կառավարության գծով 2015 թվականին այն կկազմի մոտ 357 մլն ԱՄՆ դոլար, որից 257 մլն ԱՄՆ դոլար՝ մարում և 100 մլն ԱՄՆ դոլար՝ տոկոսավճար:

2016 թվականի ընթացքում, ՀՀ ԱՊՊ գծով նախատեսվում է ստանալ մոտ 456 մլն ԱՄՆ դոլար՝ այդ թվում ՀՀ կառավարության պարտավորությունների գծով 3722 մլն ԱՄՆ դոլարի արտաքին միջոցներ:

2016 թվականի ընթացքում նախատեսվում է, որ ՀՀ ԱՊՊ գծով սպասարկումը կկազմի 253.4 մլն ԱՄՆ դոլար, որից 113.7 մլն ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարման գծով և 139.7 մլն ԱՄՆ դոլար որպես տոկոսավճար, այդ թվում՝ ՀՀ կառավարության պարտավորությունների գծով3 մոտ 74.6 մլն ԱՄՆ դոլարի հիմնական գումարի մարում և 131.9 մլն ԱՄՆ դոլարի տոկոսավճար:

Հաշվի առնելով վերը նշվածը, 2016 թվականի տարեվերջին ՀՀ ԱՊՊ կկազմի 4,826 մլն ԱՄՆ դոլար:

ենթակառուցվածքային (էներգետիկա, տրանսպորտ և ջրային տնտեսություն) ոլորտներում գործող կազմակերպությունների գործունեությանն առնչվող հարկաբյուջետային ռիսկերի գնահատականը

1. Ներածություն

Բյուջետային ուղերձի այս հատվածը ներկայացնում է հանրապետության ենթակառուցվածքային ոլորտներում, մասնավորապես, էներգետիկայի, տրանսպորտի և ջրային տնտեսության ոլորտների թվով 28 կազմակերպությունների (Ընկերություններ) գործունեությանն առնչվող հարկաբյուջետային ռիսկերի գնահատականը:

2. Հարկաբյուջետային ռիսկերի գնահատման նպատակը

Հարկաբյուջետային ռիսկերի այս գնահատման նպատակն է ֆինանսական վիճակի վերլուծության միջոցով գնահատել Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման հավանականությունը, որը կարող է հանգեցնել պետական բյուջեից Ընկերություններին չնախատեսված փոխառություններ տրամադրելու կամ սեփական կապիտալը համալրելու, սուբսիդիաներ տրամադրելու կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտության, ինչպես նաև Ընկերություն-

---

գումարի տարբերությունը պայմանավորված է տարեսկզբին և տարեվերջին արժույթների փոխարժեքների (հիմնականում SDR/ USD և EUR/USD) տարբերություններով.

31.12.2014թ. դրությամբ 1SDR= 1.449 USD և 1EUR= 1.216 USD

31.12.2015թ. դրությամբ 1SDR= 1.398 USD և 1EUR= 1.100 USD (02.11.2015թ. դրությամբ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեք (աղբյուր՝ ՀՀ կենտրոնական բանկ))

ՀՀ արտաքին պարտքի զամբյուղի մեջ SDR-ով և EURO-ով տրամադրված վարկերը 2014 թվականի տարեվերջի դրությամբ կազմել են շուրջ 74%:

[2] Մասհանումների 2016 թվականի կանխատեսումային ցուցանիշների և 2016 թվականի պետական բյուջեով արտաքին վարկային ծրագրերի գծով նախատեսված ծախսային ցուցանիշների տարբերությունը պայմանավորված է համապատասխան վարկային ծրագրերի շրջանակներում բացված հատուկ հաշիվներում առկա դրամական միջոցների մնացորդներով:

[3] Սպասարկման կանխատեսումները կատարվել են հիմք ընդունելով 01.09.2015թ. դրությամբ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքները (աղբյուր՝ ՀՀ կենտրոնական բանկ), ԱՄՆ դոլարի 6-ամսյա LIBOR՝ 1.7%, 6-ամսյա EURIBOR՝ 0.5%, SDR-ի տոկոսադրույք՝ 1.1%:

ների կողմից պետական բյուջե կանխատեսված շահաբաժինների, ստացված վարկերային միջոցների օգտագործման դիմաց հաշվարկված տոկոսների չվճարման և մայր գումարների չմարման:

Ընկերությունների կողմից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառվել են ֆինանսական գործակիցներ՝ շահութաբերության, իրացվելիության, լևերիջի (ընդհանուր պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերություն, բաժնեմասնակցության, սնանկացման կանխատեսման Է. Ալթմանի գործակիցներ), որոնք հստակ արտացոլում են կապը Ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների տարբեր հոդվածների միջև:

3. Առկա իրավիճակը և դրանից բխող հարկաբյուջետային ռիսկերը

Գնահատման այս բաժնում ներկայացվում են պետական մասնակցությամբ ընկերությունների, մասնավոր ընկերությունների գործունեության և պետական-մասնավոր գործընկերության հարկաբյուջետային ռիսկերը:

3.1 Պետական մասնակցությամբ ընկերություններ

Պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեության արդյունքում հարկաբյուջետային ռիսկերն են.

1. Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում որպես ժամանակավոր օգնություն չնախատեսված բյուջետային վարկերի տրամադրման կամ սեփական կապիտալի համալրման համար բյուջետային հատկացումների անհրաժեշտության առաջացում,

2. Ընկերություններին սուբսիդիաների չնախատեսված գումարների տրամադրում կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտություն,

3. Ընկերություններից պետական բյուջեի մուտքերի կազմում նախատեսված շահաբաժինների չստացում,

4. ՀՀ պետական բյուջեից Ընկերություններին տրամադրված վարկերային միջոցների օգտագործման դիմաց հաշվարկված տոկոսների չվճարում և մայր գումարների չմարում:

2014թ. ընթացքում (այսուհետ՝ հաշվետու ժամանակաշրջան) էներգետիկայի, տրանսպորտի և ջրային տնտեսության ոլորտների թվով 21 պետական մասնակցությամբ ընկերությունների հիմնական գործունեությունից ստացված հանրագումարային եկամուտները կազմել են 151.6 մլրդ դրամ՝ 2013թ. 135.3 մլրդ դրամի դիմաց կամ 16.2 մլրդ դրամով (12%-ով) ավելի: Հաշվետու ժամանակաշրջանում այդ Ընկերությունների հանրագումարային ծախսերը կազմել են 158.8 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 170.6 մլրդ դրամի դիմաց՝ նվազելով 11.7 մլրդ դրամով (7%-ով):

2014թ. հանրագումարային շահույթի առկայության պայմաններում Ընկերությունները տարին ավարտել են 12.9 մլրդ դրամ վնասով (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային շահույթն ըստ ոլորտների

	2013թ.	2014թ.	2015թ.
	Փաստ.	Փաստ.	Սպասող.
Պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային շահույթը հարկումից հետո	(29,686,150.2)	(12,872,925.3)	873,410.0
Էներգետիկա	(28,656,065.0)	2,663,236.0	399,900.0
Տրանսպորտ	(334,497.0)	622,332.0	1,153,800.0
Ջրային տնտեսություն	(695,588.2)	(16,158,493.3)	(680.3)

2015 թվականին սպասվող հանրագումարային շահույթի առկայության պայմաններում վնաս ծրագրավորվել է միայն ջրային տնտեսության ոլորտի մասով, որի առաջացման պատճառները հիմնականում պայմանավորված են Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից դեռևս 2009թ. և 2010թ. հաստատված սակագներով, որոնց հաշվարկների մեջ ներառված չեն ամորտիզացիոն մասհանումները, քանի որ ջրային տնտեսության ոլորտում պետության կողմից իրականացվում են մի շարք վարկային և դրամաշնորհային ծրագրեր (թվով 29 ծրագիր), որոնք հիմնականում նպատակաուղղված են ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնմանը, ոռոգման համակարգերի կապիտալ նորոգմանը:

Բացի այդ, ջրային տնտեսության Ընկերությունների ընթացիկ ակտիվների կազմում մեծ տեսակարար կշիռ ունեն դեբիտորական պարտավորությունները (42.9%), որը պայմանավորված է մատուցված ծառայությունների դիմաց սպառողների կողմից փոխհատուցման ցածր մակարդակով:

Ընկերությունների ֆինանսական գործունեության վերլուծության արդյունքում պարզվել է, որ շահութաբերության, իրացվելության, լևերիջի, բաժնեմասնակցության և ֆինանսական ծանր վիճակի կանխատեսման գործակիցների գրեթե բոլոր ցուցանիշները հաշվետու տարվա ընթացքում ցուցաբերել են հիմնականում աճի դինամիկա:

Ընկերությունների հաշվեկշռի վերլուծությունից (աղյուսակ 2) ակնհայտ է դառնում, որ ընթացիկ իրացվելիության ցուցանիշի տեսակարար կշիռը հաշվետու ժամանակաշրջանում չնայած աճել է 13.2 տոկոսային կետով (2013թ.՝ 46.7 %, իսկ 2014թ.՝ 59.9 %), սակայն այն դեռ բավականին ցածր է միջազգային պրակտիկայում ընդունված ընթացիկ իրացվելիության նվազագույն շեմի ցուցանիշից՝ 100%-ից, որը փաստում է այն մասին, որ Ընկերությունները (հիմնականում էներգետիկայի ոլորտ) կարող են ունենալ իրացվելիության հետ կապված խնդիրներ:

Միաժամանակ լևերիջի ցուցանիշը հաշվետու ժամանակաշրջանում կազմում է 218.8 տոկոս՝ 2013թ. համեմատ աճելով 68.8 տոկոսային կետով, որը բարձր է միջազգային պրակտիկայում ընդունված ցուցանիշներից (էներգետիկայի ոլորտում՝ 130%, իսկ ջրային տնտեսության ոլորտում 120%), որի պարագայում Ընկերությունների կողմից կրեդիտորների հանդեպ ունեցած պարտավորությունների չկատարման հետ կապված ևս կարող են առաջանալ խնդիրներ:

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունները չունեն ժամկետանց վարկային պարտավորություններ, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից բյուջետային երաշխիքներ չեն ստացել:

Հարկ է նաև նշել, որ խմելու ջրի ոլորտի թվով 4 ընկերություններին, ինչպես նաև «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ին ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիայի հաշվարկներում ներառված են նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի շրջանակներում այդ ընկերություններին ենթավարկային պայմանագրերով տրամադրված վարկի մայր գումարների մարումները:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ Ընկերությունների դեմ դատական վարույթում գտնվող էական իրավական հայցեր չկան՝ Ընկերությունների գործունեության արդյունքում ֆիսկալ ռիսկերի առաջացումն ընդհանուր առմամբ գնահատվում է որպես միջին (ՀՀ պետական բյուջեից Ընկերություններին չնախատեսված փոխառությունների, սուբսիդիաների չնախատեսված գումարների տրամադրման, սեփական կապիտալի համալրման, ՀՀ պետական բյուջեից տրամադրված վարկերի տոկոսների և մայր գումարների մարումների չստացման կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտություն):

Աղյուսակ 2. Պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային հաշվապահական հաշվեկշիռը 2014թ. դեկտեմբերի դրությամբ ըստ ոլորտների

(հազ. դրամ)

Հաշվեկշռային հոդվածներ	Պետական մասնակցությամբ ընկերություններ			
	Էներգետիկա	Տրանսպորտ	Ջրային տնտեսություն	Ընդամենը
1.Ընդամենը ակտիվներ	473,722,406.0	23,848,365.0	201,841,510.0	699,412,281.0
- Ընթացիկ ակտիվներ	85,243,952.0	4,265,460.0	13,227,507.0	102,736,919.0
- Ոչ ընթացիկ ակտիվներ	388,478,454.0	20,805,096.0	188,614,003.0	597,897,553.0
2. Ընդամենը պարտավորություններ	369,652,828.0	15,398,766.0	94,255,601.0	479,307,195.0
- Ընթացիկ պարտավորություններ	162,205,476.0	2,271,812.0	7,108,803.0	171,586,091.0
- Ոչ ընթացիկ պարտավորություններ	207,447,352.0	13,126,954.0	87,146,798.0	307,721,104.0
3.Սեփական կապիտալ (զուտ ակտիվներ)	104,069,578.0	8,449,599.0	106,585,909.0	219,105,086.0

Ինչ վերաբերում է Ընկերությունների կողմից կանխատեսված շահաբաժինների չստացման ռիսկայնության գնահատմանը, ապա հաշվի առնելով, որ պետական բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների 2014թ. ծրագրավորված և ՀՀ պետական բյուջե փաստացի վճարված շահաբաժինների չափերի ոչ էական շեղումները, ինպես նաև 2015թ. համար ծրագրավորված տարեկան ցուցանիշները (2014թ. կանխատեսվել էր 129.6 մլն դրամ, մինչդեռ փաստացի մուտքագրվել է 167.4 մլն դրամ, իսկ 2015թ. կանխատեսվում է 220.6 մլն դրամ) ՀՀ պետական բյուջե վճարվող կանխատեսված շահաբաժինների չստացման ռիսկը նույնպես գնահատվում է ցածր:

Միաժամանակ 2014թ. դրությամբ ստացվել է 45,1 մլրդ ՀՀ դրամի զուտ բացասական հոսքեր պետական մասնակցությամբ ընկերություններից (տես աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Ֆինանսական հոսքեր կառավարության և պետական մասնակցությամբ ընկերությունների միջև

հազ.դրամ

Հոսքեր	2014թ.	2015թ.
	Փաստ.	բյուջե
Հոսքեր պետական մասնակցությամբ ընկերություններից	**47708505.6**	**7838594.54**
Շահաբաժիններ	**133518.5**	**215842.4**
Վճարվող տոկոսներ	**5648573.30.0**	**3121499.8**
Մայր գումարի մարումներ	**18563017.8**	**3493297.3**
Սեփական կապիտալի նվազեցումներ	**23363396.0**	**1007955.0**
Հոսքեր պետական բյուջեից	**92847210.6**	**103767461.6**
Սուբսիդիաներ	**5420665.2**	**7525729.0**
Ներարկումներ սեփական կապիտալում	**0**	**0**
Տրամադրված վարկեր	**87426545.4**	**96241732.6**
Զուտ հոսքեր	**(45138705.0)**	**(95928867.1)**

3.2 ***Մասնավոր ներդրումներ***

Մասնավոր ընկերությունների հարկաբյուջետային ռիսկերը բնութագրվում են հետևյալ ուղղություններով.

1. ՀՀ պետական բյուջեից մասնավոր Ընկերություններին չնախատեսված փոխառություն-ների տրամադրում կամ սեփական կապիտալի համալրում,

2. Մասնավոր Ընկերություններին սուբսիդիաների տրամադրում կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտություն,

3. ՀՀ պետական բյուջեից մասնավոր Ընկերություններին տրամադրված վարկերի դիմաց տոկոսների չվճարում և մայր գումարների չմարում:

2014թ. ընթացքում վերոգրյալ 3 ոլորտներից մասնավոր ընկերություններ (թվով 5) գործում են միայն էներգետիկայի ոլորտում, որոնց հիմնական գործունեությունից ստացված հանրագումարային եկամուտները կազմել են շուրջ 503.0 մլրդ դրամ՝ 2013թ. 371.9 մլրդ դրամի դիմաց կամ ավել 131.1 մլրդ դրամով (35.2%-ով): Հաշվետու ժամանակաշրջանում թվով 5 Ընկերությունների հանրագումարային ծախսերը կազմել են 478.0 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 416.4 մլրդ դրամի դիմաց՝ ավելանալով 61.6 մլրդ դրամով (14.8%-ով):

Հաշվետու ժամանակաշրջանում թվով 5 Ընկերությունների 503.0 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 478.0 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում զուտ շահույթը կազմել է 24.3 մլրդ դրամ (տես աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Էներգետիկայի ոլորտի մասնավոր ընկերությունների հանրագումարային շահույթը

հազ.դրամ

	2013թ.	2014թ.	2015թ.
	Փաստ.	Փաստ.	Սպասողական
Մասնավոր ընկերությունների հանրագումարային շահույթը հարկումից հետո	(33,763,317.0)	24,351,453.0	7,915,033.4
«Հրազդան ՋԷԿ » ԲԲԸ	1,404,898.0	2,164,780.0	257,000.0
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	(24,749,000.0)	34,974,000.0	(5,935,100.0)
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ	(525,820.0)	(2,055,460.0)	(196,672.6)
«Տրանսգազ» ՍՊԸ	(6,491.0)	(54,940.0)	148,906.0
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ*	(9,886,904.0)	(10,676,927.0)	13,640,900.0

* «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի շահութի ցուցանիշի աղբյուրը՝ 2013-2014թթ. համար հիմք է ընդունվել աուդիտի հաշվետվությունների ցուցանիշները, իսկ 2015թ. համար Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից իրականացված սակագնային մարժայի հաշվարկները:

Ընկերություններիցերկուսի(«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ,«Տրանսգազ» ՍՊԸ) մոտ 2014թ-ին 2013թ-ի համեմատ նկատվել է շահութաբերության նվազման միտում, իսկ «Գազպրոմ Արմենիա» և «Հրազդանի ՋԷԿ» ՓԲԸ-ների շահույթն աճել է կրկնակի անգամ:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի իրացվելիության ցուցանիշի տեսակարար կշիռը հաշվետու ժամանակշրջանում աճել է 41,8 տոկոսային կետով (Ընկերության ընթացիկ գործակիցը կազմում է 340.8 % և բարձր է միջազգային պրակտիկայում ընդունված իրացվելիության նորմայի ցուցանիշից՝ 200 %-ից, իսկ լևերիջի ցուցանիշը նույնպես աճել է 389,2 տոկոսային կետով՝ կազմելով 548,9% (որը նույնպես բավականին բարձր է միջազգային պրակտիկայում

էներգետիկայի ոլորտի համար ընդունված ցուցանիշնից՝ 130%,), որի արդյունքում բարձրացել է Ընկերության կողմից կրեդիտորների հանդեպ ունեցած պարտավորությունների չկատարման ռիսկը:

«Տրանսգազ» ՍՊԸ-ի դեպքում իրացվելիության ցուցանիշի տեսակարար կշիռը հաշվետու ժամանակշրջանում նվազել 3,3 տոկոսային կետով, այնուամենայնիվ այն դեռևս բարձր է նվազագույն շեմից՝ 100%-ից և կազմում է 154,5%, իսկ լևերիջի գործակիցը աճել է 8,4 տոկոսային կետով՝ կազմելով 46,9% (միջազգային պրակտիկայում էներգետիկայի ոլորտի համար ընդունված ցուցանիշնից (130%) դեռևս ցածր է 83.1 տոկոսային կետով), որի արդյունքում կրեդիտորների հանդեպ ունեցած պարտավորությունների չկատարման ռիսկը գնահատվում է ցածր և Ընկերությունը գտնվում է ֆինանսական կայունության վիճակում:

«Հրազդան ՋԷԿ » ԲԲԸ-ի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի դեպքում իրացվելիության և լևերիջի ցուցանիշներն աճել են համապատասխանաբար՝ 45,4 և 19,9 տոկոսային կետերով (կազմելով համապատասխանաբար՝ 208.9%, 62.8%), իսկ լևերիջի ցուցանիշները նվազել են համապատասխանաբար՝ 51,3 և 32,9 տոկոսային կետերով (կազմելով համապատասխանաբար՝ 63%, 93.9%):

Միաժամանակ էներգետիկայի ոլորտի մասնավոր ընկերությունների համար կիրառելով Ալտմանի բանաձևը (թեև մոդելն առաջարկված է զարգացած տնտեսություն ունեցող երկրների համար) պարզվում է, որ Ընկերությունների սննկացման հավանականությունը նախորդ և հաշվետու տարիներին փոքր է և սնանկության գործակիցը գտնվում է սահմանված գորշ (միջին) գոտում՝ $1.23 < Z < 2.90$:

Ընդ որում մասնավոր ընկերություններից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ն գտնվում է վերոնշյալ բանաձևի ծանր վիճակի գոտու միջակայքում ($Z=0.5$; $Z<1.23$), «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն՝ գորշ (միջին) գոտու միջակայքում ($Z=2.3$; $Z<2,90$) , իսկ «Տրանսգազ» ՍՊԸ և «Հրազդանի ՋԷԿ» ՓԲԸ ունեն բանաձևի ապահով գոտու միջակայքի համար սահմանված առավելագույն չափից բարձր ցուցանիշներ (2014թ. համար համապատասխանաբար՝ $Z=9,8$ և $Z=10.4$):

Միաժամանակ հարկ է նշել, որ Եվրասիական տնտեսական միության Հայաստանի անդամագրմամբ պայմանավորված՝ Ռուսաստանից Հայաստան ներկրվող գազի սակագինը 1000 խորանարդ մետրի դիմաց 189 դոլարից սահմանվել է 165 դոլար, որը իր դրական անդրադարձը կարող է ունենալ ընկերությունների ֆինանսական կենսունակության վրա (փոխարժեքային տարբերության վնասների մեղմում):

Ինչ վերաբերում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն, ապա հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 31.08.2015թ. N1030-Ն որոշմամբ սահմանվել է էլեկտրաէներգիա սպառողների որոշ խմբերին 01.08.2015թ-ից մինչև էներգետիկայի բնագավառում կարգավորման խորհրդատ-

վական ծառայության կողմից արդյունքների ստացումը սպառվող էլեկտրաէներգիայի դիմաց նշված ՓԲԸ-ին սուբսիդիայի կարգով գների տարբերության փոխհատուցում:

Հետևաբար «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ցուցանիշների լիարժեք և ամբողջական գնահատումը կարող է իրականացվել համապատասխան խորհրդատվական ծառայությունների արդյունքների առկայության պարագայում:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունների արդյունքները (բացառությամբ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի) ՀՀ պետական բյուջեից մասնավոր Ընկերությունների գործունեության արդյունքում ֆիսկալ ռիսկերի առաջացումն ընդհանուր առմամբ գնահատվում է որպես ցածր (չնախատեսված փոխառությունների տրամադրման կամ սեփական կապիտալի համալրման, սուբսիդիաների տրամադրման կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտություն, ՀՀ պետական բյուջեից տրամադրված վարկերի դիմաց տոկոսների և մայր գումարների մարումների չստացում):

3.3 Պետական-մասնավոր գործընկերություն (ՊՄԳ)

Տրանսպորտի և ջրային տնտեսություն ոլորտներում ՊՄԳ սխեմայի ներքո գործում են «Հարավկովկասյան երկաթուղի» և «Երևան-ջուր» ՓԲԸ-ները:

Ա. «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ

ՀՀ կառավարության 07.02.2008թ. N 83-Ա որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի և «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի միջև 13.02.2008թ. կնքվել է «Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին փոխանցելու մասին» կոնցեսիոն պայմանագիրը:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության ընդամենը եկամուտները կազմել են 23.5 մլրդ դրամ նախորդ ժամանակաշրջանի 24.8 մլրդ դրամի դիմաց կամ պակաս 5.6%-ով (1.4 մլրդ դրամ), որը հիմնականում պայմանավորված է բեռնափոխադրումների, ուղեևորափոխադրումների և այլ մատուցվող ծառայությունների ծավալների նվազման հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության 23.5 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 22.5 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում զուտ շահույթը կազմել է 983.6 մլն դրամ:

Ընկերության ֆինանսական գործունեության վերլուծության արդյունքում պարզվել է, որ շահութաբերության գրեթե բոլոր ցուցանիշները հաշվետու տարվա ընթացքում ցուցաբերել են հիմնականում աճի դինամիկա:

Չնայած իրացվելիության ցուցանիշը հաշվետու ժամանակշրջանում նվազել է 76.5 տոկոսային կետով, այնուամենայնիվ Ընկերության ընթացիկ գործակիցը բարձր է նորմայից՝ 200 %-ից և կազմում է 242.1 %, հետևաբար Ընկերության մոտ ընթացիկ իրացվելիության դժվարություններ առկա չեն:

Լևերիջի տեսակարար կշիռը հաշվետու ժամանակշրջանում աճել է 0.8 տոկոսային կետով և կազմում է 4.7%, որը փաստում է այն մասին, որ կրեդիտորների հանդեպ ունեցած պարտավորությունների չկատարման ռիսկը ցածր է:

Ընկերության հաշվեկշռի ընթացիկ ակտիվների կառուցվածքում դեբիտորական պարտավորությունները հաշվետու ժամանակաշրջանում աճել են 32.5%-ով (551.4 մլն դրամով)՝ կազմելով 2,250.7 մլն դրամ:

Ընկերության հաշվեկշռի ընթացիկ պարտավորությունների մեծությունը հաշվետու ժամանակաշրջանում աճել է 425,5 մլն դրամով (11,5%-ով) կազմելով 4492,1 մլն դրամ (հատկապես աճել են առևտրային կրեդիտորական պարտավորությունները՝ 32.5%-ով):

Միաժամանակ համաձայն Ալտմանի բանաձևի, Ընկերության սնանկացման հավանականություն գոյություն չունի: Մասնավորապես՝ Ընկերության սննկացման հավանականությունը նախորդ և հաշվետու տարիների ցուցանիշների հիման վրա բացառվում է և սնանկության գործակիցը (Z=9.9) ունի սահմանված ապահով գոտու համար առավելագույն չափից բավականին բարձր ցուցանիշ:

Հարկ է նաև նշել, որ կոնցեսիոն պայմանագրով նախատեսված է, որ կոնցեդենտը (Հայաստանի Հանրապետությունը) սուբսիդավորում է (մասնակի փոխհատուցում է) համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումների կոնցեսիոների տարեկան վնասը անկախ աուդիտորի կողմից այդ վնասների հաստատված հաշվարկների ներկայացման պարագայում (տարեկան սուբսիդիայի գումարը չի կարող գերազանցել կամ հավասար լինել տվյալ տարվա համար հայտարարված կոնցեսիոն փոփոխական տարեկան վճարի գումարին): Սուբսիդիայի համաձայնեցված չափը կազմում է արձանագրված վնասի 2015թ. 25%, 2016թ. մինչև 2038թ. 30 տոկոս (2014թ. և 2015թ. համար 328.8 մլն դրամ, իսկ 2016թ. նախատեսվել է 349.9 մլն դրամ):

Միաժամանակ կոնցեսիոն պայմանագրով նախատեսված է նաև, որ կոնցեսիոները կոնցեդենտին պետք է վճարի տարեկան կոնցեսիոն վճար՝ համախառն հասույթի 2%-ի չափով (2014թ. 351.6 մլն դրամ, 2015թ. 344.9 մլն դրամ, իսկ 2016թ. ենթադրվում է 377.2 մլն դրամ): Հետևաբար հաշվի առնելով, որ ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիայի և Ընկերության կողմից վճարվող կոնցեսիոն վճարի չափերը գրեթե համեմատելի են, ուստի Ընկերության կողմից ՀՀ

պետական բյուջե վճարվող կոնցեսիոն վճարի չվճարման ռիսկը գնահատվում է բավականին ցածր:

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունը չունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ որևէ վարկային պարտավորություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծության արդյունքները՝ ՀՀ պետական բյուջեից Ընկերությանը չնախատեսված փոխառությունների, սուբսիդիաների չնախատեսված գումարների տրամադրման, սեփական կապիտալի համալրման կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտության, ինչպես նաև Ընկերության կողմից ՀՀ պետական բյուջե վճարվող կոնցեսիոն վճարի չվճարման ռիսկը գնահատվում է բավականին ցածր:

Բ. «Երևան Ջուր» ՓԲԸ

2005 թվականի դեկտեմբերի 14-ին ՀՀ կառավարության, «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերության և «Ժեներալ դեզ Օ» կազմակերպության միջև ստորագրվել է «Երևանի «Ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության սպասարկման տարածքի ջրային համակարգերի վարձակալության մասին» պայմանագիր՝ 10 տարի ժամկետով:

Պայմանագրի համաձայն Ընկերության կողմից մատուցվող ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայությունների սակագները կարգավորվում և հաստատվում են Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության 9.5 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 8.3 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում զուտ շահույթը կազմել է 1.2 մլրդ դրամ:

Ընկերության ֆինանսական գործունեության վերլուծության արդյունքում պարզվել է, որ շահութաբերության, իրացվելիության, լևերիջի, ֆինանսական ծանր վիճակի կանխատեսման գործակիցների գրեթե բոլոր ցուցանիշները հաշվետու տարվա ընթացքում ցուցաբերել են հիմնականում աճի դինամիկա:

Իրացվելիության ցուցանիշը հաշվետու ժամանակշրջանում աճել է 183.4 տոկոսային կետով՝ կազմելով 397.8%, որը բարձր է նորմայից՝ 200%-ից, հետևաբար Ընկերության մոտ ընթացիկ իրացվելիության դժվարություններ առկա չեն:

Լևերիջի տեսակարար կշիռը հաշվետու ժամանակշրջանում նվազել է 67.8 տոկոսային կետով և միջազգային պրակտիկայում ջրային տնտեսության ոլորտում ընդունված ցուցանիշից (120%) ցածր է 6.5 տոկոսային կետով), որի պարագայում կրեդիտորների հանդեպ ունեցած պարտավորությունների չկատարման ռիսկը գնահատվում է ցածր և Ընկերությունը գտնվում է ֆինանսական կայունության վիճակում:

Ընկերության հաշվեկշռի ընթացիկ ակտիվների կառուցվածքում դեբիտորական պարտավորությունները հաշվետու ժամանակաշրջանում աճել են 7.5%-ով (112.6 մլն դրամով)՝ կազմելով 1.6 մլրդ դրամ:

Ընկերության հաշվեկշռի ընթացիկ պարտավորությունների կառուցվածքում կրեդիտորական պարտավորությունները հաշվետու ժամանակաշրջանում աճել են ընդամենը 60.0 մլն դրամով կազմելով 677.8 մլն դրամ:

Միաժամանակ համաձայն Ալտմանի բանաձևի, Ընկերության սնանկացման հավանականություն գոյություն չունի: Մասնավորապես, Ընկերության սննկացման հավանականությունը նախորդ և հաշվետու տարիների տվյալների հիման վրա բացառվում է և սնանկության գործակիցը (Z=6,3) ունի սահմանված ապահով գոտու համար առավելագույն նորմայից ավելի քան կրկնակի բարձր ցուցանիշ:

Հարկ է նաև նշել, որ պայմանագրով նախատեսված է, որ Ընկերությունը պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում պետք է վճարի ֆիքսված վճարներ՝ 2013թ.-471,0 մլն դրամ, 2014թ.-470,9 մլն դրամ, 2015թ. 316,9 մլն դրամ:

Միաժամանակ անհրաժեշտ է նաև նշել, որ Ընկերությունն ապահովել է վարձակալության պայմանագրով սահմանված կատարողական և պայմանագրային այլ ցուցանիշների կատարումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունների արդյունքները՝ ՀՀ պետական բյուջեից Ընկերությանը չնախատեսված փոխառությունների, սուբսիդիաների, տրամադրման, սեփական կապիտալի համալրման կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտության, ինչպես նաև Ընկերության կողմից ՀՀ պետական բյուջեի վճարվող վարձակալական վճարի չվճարման ռիսկը գնահատվում է ցածր: